

Յ Ե Ղ Ա

ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ  
ՀԱՆԳԻՍՏԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Փ Ո Խ ՈՒ

Կ Է Ր Ի Ք Ի Ս Ի

Թ Ի Է Ն Ը

Սիրելի բարեկամ Քրիստոսով,

Մեր աղօթքն է, որ այս ուսուցումի աղբիւրը օրհնութիւնն եւ քաջալերանք ըլլայ քեզի: Ազատ զգայ այս նիւթերը կիսուելու քու բարեկամներուդ, ընտանիքիդ եւ եկեղեցիիդ անդամներուն հետ: Նաեւ կրնաս այցելել [FLNFree.com](http://FLNFree.com) կայքէջը եւ ներբեռնել յաւելեալ պատճեններ եւ յաւելեալ ձրի ուսուցումներ քու լեզուովդ: Աստուած կը սիրէ քեզ եւ Ան հիանալի ծրագիր մը ունի կեանքիդ համար: Աստուծոյ Թագաւորութեան գործելաձեւը սորվիլը մեր կեանքը դէպի լաւը փոխեց, եւ վստահ ենք, որ անիկա նոյնը պիտի ընէ քեզի համար:

Քրիստոսի սիրով,

Կերի եւ Տրենտա Քիսի



Յ.Գ. Մի մոռնար այցելելու մեր ձրի ներբեռնման կայքէջը՝ [FLNFree.com](http://FLNFree.com)՝ ներբեռնելու համար յաւելեալ ձրի ուսուցումներ քու լեզուովդ:

Յ

Ե

Ղ

Ա

ՁԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ  
ՀԱՆԳԻՍՏԻՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Փ

Ո

Խ

ՈՒ

Կ Է Ր Ի ք Ի Ս Ի

Թ

Ի

Ի

Ն

Ը

**Your Financial Revolution:**  
***The Power of Rest***, Western Armenian  
Copyright © 2021 by Gary Keesee

Originally published in English  
Copyright © 2015 by Gary Keesee  
ISBN: 978-1-945930-03-4

Gary Keesee Ministries,  
P. O. Box 779, New Albany,  
OH 43054, USA

GaryKeesee.com

This book is a FREE GIFT from Gary Keesee Ministries and is  
NOT FOR SALE

**Ձեր Ֆինանսական Յեղափոխութիւնը.**  
***Հանգիստին Զօրութիւնը***, Արեւմտահայերէն  
Հեղինակային իրաւունք © 2021 Կերի Քիսի

Բնագիրը հրատարակուած է անգլերէնով  
Հեղինակային իրաւունք © 2015 Կերի Քիսի  
ISBN: 978-1-945930-03-4

Կերի Քիսի Ծառայութիւններ  
Նամակատուի՝ 779, Նիւ Ալպանի,  
Օհայօ 43054, ԱՄՆ

GaryKeesee.com

Այս գիրքը ձՐԻ ՆՈՒԷՐ է Կերի Քիսի Ծառայութիւններուն կողմէ եւ ԾԱՄՈՒ ՉԷ

Այս գիրքին մէջ Կերի Քիսի կը խօսի այն մասին, որ բոլորս, զինուած  
Աստուծոյ Խօսքով եւ գործնական գիտելիքներով, կրնանք յաղթել  
աղքատութեան եւ մտնել այն հանգիստը, որ Տէրը խոստացած է  
յուրաքանչիւրիս:

Կ'ուզեմ այս գիրքը նուիրել կնոջս՝ Տրենտային,  
որովհետեւ անոր քաջալերանքը, եռանդը՝  
Աստուծոյ վերաբերող բաներուն նկատմամբ եւ  
իր սէրը իր ընտանիքին ու ինձի հանդէպ զիս  
ներշնչած են այս բոլոր տարիներուն ընթացքին:  
Միասին մենք փաստած ենք, թէ երազները  
իսկապէս կ'իրականանան:

Կէրի Քիսի



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

<b>ՆԱԽԱԲԱՆ</b> . . . . .	7
<b>ԳԼՈՒԽ 1.</b> Հանգիստ – Հիմնական Սկզբունքներ. . . . .	13
<b>ԳԼՈՒԽ 2.</b> Օրինական Իրաւունքներ . . . . .	29
<b>ԳԼՈՒԽ 3.</b> Թագաւորութիւնն է Քու . . . . . Պատասխանդ . . . . .	51
<b>ԳԼՈՒԽ 4.</b> Ես Գտայ Թագաւորութեան մէջ Գլխաւոր Բանալի մը. . . . .	75
<b>ԳԼՈՒԽ 5.</b> Թռչիլը Աւելի Լաւ է Քան Քալելը . . . . .	91
<b>ԳԼՈՒԽ 6.</b> Կեանքը Աւելին է Քան Պարզապէս Մտրհակներ Վճարելը . . . . .	113
<b>ԳԼՈՒԽ 7.</b> Ասիկա Անկարելի՛ է. . . . .	127
<b>ԳԼՈՒԽ 8.</b> Կրկնապատիկ Բաժինը . . . . .	141
<b>ԳԼՈՒԽ 9.</b> Բաւարարէն Աւելի . . . . .	157
<b>ԳԼՈՒԽ 10.</b> Կրկնապատիկ Բաժինին Խորհուրդը . . . . .	183





# ՆԱԽԱԲԱՆ

Այն օրը, որ մեր ազարակատունը ձգեցինք՝ դառն, բայց միեւնոյն ատեն քաղցր օր մըն էր: Մենք այդ հին, փոքրիկ ու քանդուած ազարակատան մէջ ապրեցանք մօտ ինը տարիներ, իսկ հիմա ես տուփերու վերջին խումբը կը փոխադրէի մեր բեռնակառքին մէջ: Կ'ուղղուէինք դէպի մեր նոր տունը, որ մենք անձամբ շինած էինք. 7,700 քառակուսի ոտք (square foot) տարածութեամբ ճորճիական ոճով շինուած տուն մը, 55 արտավար (acre) Օհայոյի գեղեցիկ հողատարածքի մը վրայ, 20 արտավար անտառներով եւ ճահիճներով շրջապատուած: Ասիկա երազ մըն էր, որ նոյնիսկ քանի մը տարի առաջ դժուար էր պատկերացնել:

Հակառակ անոր որ կը հեռանայինք ազարակատունէն, ես կը սիրէի այդ հին տունը. այո, նոյնիսկ իր կոտորուած պատուհաններով, իր հողէ մառանով եւ մեղուներու մնայուն յարձակումներով, զորս կը կրէինք երբ հոն կը բնակէինք: Շատ յիշատակներ ունինք հոն: Հինգ զաւակներէս երկուքը հոն ծնած են՝ նստասենեակին մէջ:

Մենք հոն շատ լաւ ժամանակներ անցուցած ենք, բայց նաեւ՝ ֆինանսական ճնշումի տակ յուսահատական ժամանակներ: Սորվելիք շատ բան ունէինք: Թէեւ հիմա դժուար է պատկերացնել, երբ ինը տարի առաջ այդ հին ազարակատունը փոխադրուեցանք, հազիւ կրնայինք վճարել ամսական երեք հարիւր տոլար վարձքը: Մեր երկու ինքնաշարժներն ալ հին էին, հարիւր հազարաւոր մղոններ քշուած էին եւ տակաւին անոնց վճարումները չէինք ամբողջացուցած ու պարտքեր ունէինք: Այդ ժամանակ կարծես բոլորին դրամ պարտական էինք: Մենք ունէինք տասը վարկաքարտեր, որոնց մէջի

ամբողջ գումարը գործածուած եւ քարտերը չեղարկուած էին, երկու ֆինանսական ընկերութիւններէ փոխառութիւններ, անշուշտ մեր երկու ինքնաշարժներուն պարտքերը, «Այ. Ար. Էս. »-ի արգելանքները («Այ. Ար. Էս. » ԱՄՆ ներքին տուրքերու ծառայութիւն), այն տասնեակ հազարները, զորս պարտական էինք մեր ազգականներուն եւ ցանկը կը շարունակուի: Մենք կ'ապրէինք ֆինանսական գոյատեւման կեանք մը՝ մեր ունեցած բոլոր բաները գրաւի տակ դնելով երբեմն միայն մթերք գնելու համար: Մեր ինչքերը, զորս արդէն հին վիճակի մէջ գնած էինք շատ հին եւ կոտորուած էի:

Այդ ժամանակուան մեր ծանր ֆինանսական կացութիւնը քիչ յոյս կու տար պայծառ ապագայի մը համար: Անկեղծօրէն ես յոյս չունէի, որ ամէն բան կրնար փոխուիլ: Ես կը սիրէի իմ ընտանիքս, ունէի գեղեցիկ կին մը, բայց զիրենք կը քաջքէի ֆինանսական դժոխքի մէջէն:

Ես ընկճուածութեան դեղեր կ'առնէի, խուճապի յարձակումներ կ'ունենայի եւ վախը կը սպառէր իմ ամէնօրեայ կեանքս: Պարզապէս ըսեմ, որ շատ ուրախ մէկը չէի: Կեանքի ապահովագրութիւն կը ծախէի, միջնորդավճարով կ'ապրէի եւ բացի ֆինանսական անդունդէն ոչ մէկ տեղ չէի հասներ: Կամաց-կամաց մենք աւելի եւ աւելի պարտքներու տակ կը մտնէինք մինչեւ որ այլեւս չմնացին պարտքի տարբերակներ: Այն ատեն ես ջիղերու խանգարում ունեցայ: Խուճապը եւ վախը պատեցին իմ միտքս: Նոյնիսկ տունէս դուրս ելլելու կը վախնայի, բան մը, որ օգտակար չէ միջնորդավճարի համար:

Կհնս կարծեց, թէ պիտի կորսնցնէ իր ամուսինը եւ այդ ժամանակ մեր ունեցած չորս զաւակները առանձին մեծցնելու գաղափարը կը տանջէր զինք: Բայց ինք աղօթքին զօրութեան հաւատացող է եւ երբեք յոյսը չկորսնցուց: Մենք միասին կ'աղօթէինք եւ սկսանք յայտնաբերել Աստուծոյ Թագաւորութեան սկզբունքները: Երբ սկսանք Աստուծոյ դիմել՝ պատասխաններ եւ սկզբունքներ ստանալու համար, յոյսը սկսաւ բարձրանալ մեր սիրտերուն մէջ եւ սկսանք ետեւ ետեւի հրաշքներ տեսնել մինչ կը կիրարկէինք այն, ինչ որ Աստուած ցոյց կու տար մեզի:

Գիշեր մը յատկանշական պահ մը ունեցայ, երբ Աստուած ինձի ցոյց տուաւ, թէ ես պիտի հիմնէի իմ սեփական ընկերութիւնս ֆինանսական մարզին մէջ՝ օգնելով մարդոց, որ պարտքէն դուրս գան եւ անոնց սորվեցնելով այն սկզբունքները, զորս հինք ցոյց կու տար ինձի: Այդ ժամանակ ընկերութիւն մը հիմնելը, որ մարդոց ցոյց պիտի տար, թէ ինչպէս պիտի ձերբազատուին իրենց պարտքերէն, բաւական տարօրինակ կը թուէր՝ քանի որ մենք տակաւին շատ պարտք ունէինք: Մենք աղօթեցինք այդ մասին, բայց Տէրը մեզի ըսաւ, որ երբ մենք քայլ առնենք եւ սկսինք սորվեցնել իր սկզբունքները, մենք ալ մեր ազատութիւնը պիտի գտնենք: Ընկերութիւնը սկսիլը հաւատքի քայլ էր, որովհետեւ մենք գաղափար չունէինք, թէ ինչպէս պէտք էր ընէինք այդ մէկը, բայց մենք յարատեւեցինք: Ընկերութիւնը մեծցաւ եւ անկէ եկած դրամական շահը երկուփուկէս տարուան մէջ մեր ընտանիքը ամբողջութեամբ պարտքէն ազատեց: Ես քիչ մը աւելի պիտի խօսիմ մեր ընկերութեան մասին յաջորդ գլուխին մէջ, բայց առ այժմ միայն գիտցիր, որ մեր կեանքը արմատապէս փոխուեցաւ: Չեմ կրնար բացատրել մեր ազատութեան զգացումը, թէ ինչ զգացինք երբ զացինք ինքնաշարժի ընկերութեան նեկայացուցիչներէն մէկուն քով եւ կանխիկ վճարեցինք նոր ինքնաշարժի մը գումարը: Ինչ զգացինք երբ մեր տունը գեղակառուցեցինք, շինեցինք եւ վճարեցինք անոր համար: Այն ինչ որ մենք կը վայելէինք վեր էր այն բոլոր բաներէն, զորս կրնայինք պատկերացնել:

Այո, բաւական յիշատակներ ունէինք ազարակատան մէջ: Երբ զացի վերջին տուփը առնելու տունէն, կնոջս քովէն անցայ մինչ

**ԵՐԲ ՍԿՍԱՆՔ  
ԱՍՏՈՒԾՈՅ ԴԻՄԵԼ,  
ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ  
ԵՒ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ  
ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ,  
ՅՈՅԱՐ ՍԿՍԱԻ  
ԲԱՐՁՐԱՆԱԼ ՄԵՐ  
ՍԻՐՏԵՐՈՒՆ ՄԷՋ  
ԵՒ ԵՏԵՒ-ԵՏԵՒԻ  
ՀՐԱՇՔՆԵՐ ՏԵՍԱՆՔ  
ՄԻՆՉ ՍԿՍԱՆՔ  
ԿԻՐԱՐԿԵԼ ԱՅՆ, ԻՆՉ  
ՈՐ ԱՍՏՈՒԱԾ ՅՈՅՑ  
ՏՈՒԱԾ ԷՐ ՄԵՋԻ:**

ան կեցած էր փոքր ճաշասենեակին մէջ: Ան արցունքոտ աչքերով նայեցաւ ինծի: Տխրութեան արցունքներ չէին, այլ՝ ուրախութեան եւ նաեւ յուզումի: Ան կը յիշէր այն ամէնը, զոր Աստուած սորվեցուցած էր մեզի այդտեղ: Ես նոյնպէս զսպեցի իմ արցունքներս երբ վերջին նայուածք մը նետեցի սենեակներուն՝ խառն զգացումներով յիշելով այն ամէնը, որ պատահեր էր այդտեղ: Մեր կեանքէն հատուած մը կը փակէինք եւ դէպի նոր տարածք մը կ'ուղղուէինք: Ինչ կար մեր առջեւ հիմա: Ճամբորդութիւնը մեզ տարաւ ընկճուածութենէն, անյուսութենէն դէպի յոյսով լեցուն ապագայ մը: Երբ վերջին տուփով դուրս ելայ, կանգ առի եւ դէպի ետեւ՝ տան նայեցայ ժպիտով. «Ո՛հ, ես քեզ պիտի չկարօտնամ: Ես հիմա աւելի լաւ տեղ մը ունիմ»:

Անկասկած շատ խանդավառ էինք նոր տուն փոխադրուելով: Բայց մեր ճամբորդութեան լաւագոյն բանը այն էր, որ վերջապէս պիտի հանգստանայինք: Այլեւս ես կրնայի մտածել իմ ապագայիս մասին եւ ոչ միայն հաշիւներ վճարելու մասին: Տարիներու ընթացքին Աստուծոյ հանգիստին մէջ բնակիլը բացարձակ երազանք մը եղած է: Մեր ինքնաշարժներուն գինը վճարուած ըլլալը հանգիստ է: Պարտքէ ազատ ըլլալը հանգիստ է: Յիսունհինգ արտավար հողատարածքի վրայ իմ երազանքի տանս գինը վճարուած ըլլալը հանգիստ է: Կնոջս դէմքին ժպիտը տեսնելը երբ ան գնում ընելու կ'երթայ՝ առանց դրամի մասին մտահոգուելու, հանգիստ է: Մեր բոլոր պէտքերը ունենալէն անդին բաւարար դրամ ունենալով ուրիշներուն հարիւր հազարաւոր տղարներ տալու կարողութիւնը ունենալը եւ Աւետարանին աջակցիլը հանգիստ է: Բայց հաւանաբար իմ կեանքիս ամենամեծ փոփոխութիւնը ամէն օր ճնշումի եւ վախի տակ չարթննալն էր, որ կը շրջապատէր կեանքս սկիզբի տարիներուն: Վերստին լաւ բաներու մասին երազել կարենալը փոխանակ պարզապէս շաբաթ մը եւս գոյատեւելու մասին երազելու՝ հանգիստ է:

Այո, այն օրը, երբ վերջին տուփերը բեռնակառքին մէջ կը տեղաւորէի՝ մեր նոր տունը երթալու համար, միաժամանակ դառն եւ քաղցր էր: Բայց հաւատացէք, որ այդ հանգիստին քաղցրութիւնը, զոր Տրեւտան եւ ես յայտնաբերեցինք, այնպէս յաղթահարեց մեր ետին յիշատակներ ձգելու դառն միտքերը, որ անգամ մը եւս մենք

մեզ զգացինք երկու դպրոցական փոքրիկ մանուկներու պէս, որոնք միասին կը խնդային եւ կ'երազէին:

Գիտեմ ինչ կը մտածես: Երանի եւ այդ մէկը ունենայի: Երանի եւ այդ փորձառութիւնը ունենայի եւ խնդայի, երազէի, եւ կարենայի կեդրոնանալ իմ վճարելիք մուրհակներէս զատ ուրիշ բանի մը վրայ: Թէեւ ասիկա կրնայ անհաւատալի թուիլ քեզի գիրքին այս հանգրուանին մէջ, բայց քեզի կը վստահեցնեմ, որ այն, ինչ որ Տրենտան եւ ես յայտնաբերեցինք, նոյնքան հասանելի է քեզի համար որքան, որ էր մեզի համար: Կ'աղօթեմ, որ մինչ մենք կը բաժնեկցինք մեր պատմութիւնը, դուն քաջալերուիս Աստուծոյ օրէնքները եւ սկզբունքները կիրարկելու քու սեփական կեանքիդ մէջ եւս:

**ԱՅՆ ԻՆՉ, ՈՐ  
ՏՐԵՆՏԱՆ ԵՒ ԵՍ  
ՅԱՅՏՆԱԲԵՐԵՑԻՆՔ,  
ՆՈՅՆՔԱՆ ՀԱՍԱՆԵԼԻ  
Է ՁԵԶԻ ՀԱՄԱՐ  
ՈՐՔԱՆ, ՈՐ ԷՐ ՄԵԶԻ  
ՀԱՄԱՐ:**

Իսկապէս ասիկա այդքան ալ դժուար չէ. դուն պարզապէս պետք է յայտնաբերես հանգիստին ուժը:

*Եկէ՛ք ինձի, բոլոր յոգնած ու բեռնաւորուածներ եւ ես ձեզ պիտի հանգչեցնեմ: Իմ լուծս ձեր վրայ առէք եւ ինձմէ սորվեցէ՛ք՝ որ հեզ եմ ու սրտով խոնարհ եւ ձեր անձերուն հանգստութիւն պիտի գտնէք: Վասնզի իմ լուծս քաղցր է եւ իմ բեռս թեթեւ:*

– Մատթէոս 11. 28-30



## ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

# ՀԱՆԳԻՍՏ – ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

**ՀԱՆԳԻՍՏ** – տեղադրուիլ կամ յենիլ մնալով յատկացուած դիրքի մը մէջ: Պահ մը կամ ժամանակաշրջան մը, երբ կը հանգստանաս կամ կը դադրիս ծանր կամ ճնշող գործերէ (Կուկըլ):

Յոգնամծ ես: Ընդհանրապէս ծանրաբեռնուամծ ես եւ երբեք չե՛ս հասնիր: Արդե՛ծք դրամի պէտքդ կ'առաջնորդէ քու որոշումներդ, թէ ո՛ր պիտի աշխատիս կամ ի՛նչպէս պիտի աշխատիս կամ ի՛նչքան ժամանակ պիտի աշխատիս: Քեզի այնպէս կը թուի՛, թէ դուն երբեք պիտի չձերբազատուիս պարտքէն: Քեզի այնպէս կը թուի՛, թէ քու կեանքդ կարծես դարձած է առնետավազք մը (անվերջ եւ անիմաստ հետապնդում մը): Եթէ դուն այս անձն ես, դուն առանձին չես:

Երբեք արջամուկի անիւ տեսամծ ես: Վստահ եմ, որ տեսած ես: Բայց եթէ տեսած չես, անիկա անիւ մըն է, որ կը դրուի արջամուկի վանդակին մէջ: Արջամուկը կրնայ այդ անիւին վրայ ելլել եւ վազել ու վազել ու վազել մինչեւ որ ուժասպառ ըլլայ: Բայց այդ անիւը միայն մէկ հարց ունի: Ինչքան ալ արագ կամ ինչքան ալ երկար ժամանակ վազէ այդ արջամուկը, երբ լաւ մը յոգնի եւ անիւէն վար իջնէ, անիկա պիտի գտնուի ճիշդ նոյն տեղը, ուրկէ սկսեր էր: Ոչինչ փոխուած է: Անիկա կրնայ սրբել իր մուշտակէ փոքրիկ դէմքին քրտինքը բաւարարուած զգալով, բայց ոչինչ իրագործուեցաւ՝ կեանքի մէջ իր

դիրքը բարելաւելու համար. անիկա տակաւին իր վանդակին մէջ բանտարկուած է՝ ազատութենէն զրկուած: Ասիկա կը վերաբերի մեծ թիւով մարդոց եթէ ոչ մեծամասնութեան եւ իրենց ֆինանսական կեանքին: Անոնք ամբողջ շաբաթը տքնաջան կ'աշխատին եւ շաբաթավերջին ուժասպառ՝ կարճ ժամանց մը կ'ունենան, բայց երբ Երկուշաբթի առաւօտ կ'ըլլայ, իրենք զիրենք կը գտնեն նոյն տեղը, ուր կը գտնուէին շաբաթ մը առաջ: Միակ բանը, որ ըրին, շաբաթ մը եւս գոյատեւեցին:

Ինը երկար տարիներու ընթացքին այս էր իմ կեանքիս պատկերը: Ես օրական տասնըհինգէն տասնըութ ժամ կ'աշխատէի, ջանասէր էի եւ շատ կ'աշխատէի, բայց տասանորդս, վճարելիքներս եւ տուրքերս վճարելէ ետք, ոչինչ կը մնար: Ընդհանրապէս չէի կրնար ձեռք բերել անհրաժեշտ պէտքերս եւ կամաց-կամաց պարտք առնելու սովորութեան սկսայ՝ գոյատեւելու համար: Երբ ֆինանսական ճնշումը կ'աւելնար աւելի կը վազէի, բայց ի գուր: Երբ կանգ առի եւ քննեցի յառաջդիմութիւնս՝ տեսայ, որ տակաւին կը յետադիմէի:

Այս մէկը անշուշտ հոգեկան ծանր հետեւանքներ ունեցաւ: Յուսահատութիւնն ու վախը, որոնց դէմ ամէն օր կը պայքարէի, դանդաղօրէն կ'ազդէին իմ միտքիս եւ ֆիզիքական մարմնիս վրայ: Տագնապը, սաստիկ վախը եւ անշարժութիւնը սկսան տիրել մարմնիս վրայ: Բժիշկները չէին կրնար յայտնաբերել, թէ ինչ էր հարցս: Վախը այնքան կը սպառէր միտքերս, որ չէի գիտեր, թէ պիտի ապրիմ կամ մեռնիմ: Գրեթէ ինը տարի ապրեցայ գրաւափոխի խանութներ երթալով եւ ազգականներէս պարտքի դրամ փոխ առնելով մինչեւ որ այլեւս գրաւի դնելու ոչինչ ունէի եւ շատ վատ ինքնապատկերացում ունէի: Իմ վերջս կը տեսնէի: Կարծես կրնայիր ինքնապատկերացումս փոշեմանով մը վերցնել ինչպէս նաեւ որեւէ ուրախութիւն, որ մնացած էր կեանքիս մէջ:

Պարտատէրերը շարքի կեցած էին՝ իմ դէմն դատ բանալու համար եւ այդ ժամանակ էր, որ հետեւեալը պատահեցաւ: Երբ ամէն մէկ շունչս յուսահատութեամբ պատուած էր, այդ հեռաձայնը եկաւ: Այդ հեռաձայնը գրեթէ բոլոր միւս առաւօտեան հեռաձայներուն պէս էր. «Պարոն Քիսի, ինչպէս գիտէք, դուք մեր յաճախորդին գումար



պարտական էք: Երբ կը կարծէք, թէ կրնաք այս գումարը մեզի փոխանցել: Պարոն Քիսի, դուք այս մէկը ըսած էք վերջին երեք անգամներուն ալ, որ ձեզի հեռաձայնած եմ: Եթէ երեք օրուան մէջ այդ գումարը մեզի չբերէք, իմ յաճախորդս այս պարտքին համար դատ պիտի բանայ ձեզի դէմ: Կը հասկնամք, պարոն Քիսի: Երեք օր: Յտեսութիւն»:

Երբ այդ հեռաձայնը առի, մէկ թոն աղիւսի ծանրութիւն զգացի: Ես արդէն գիտէի, որ որքան ծանր էր մեր ֆինանսական կացութիւնը: Ես դրամ չունէի: Բոլոր ինչքերս կոտորած էին: Սառնարանս պարապ էր: Իմ գեղեցիկ ընտանիքս տաքնալու համար կրակարանին մօտ կը քնանանար, որովհետեւ վառելանիւթի դրամ չունէինք: Մէկու մը չէի կրնար դիմել: Բարեկամներս եւ ազգականներս յոգնած էին իմ ծախսերուս հոգալէն: Շփոթած, ես կամաց-կամաց աստիճաններէն վեր ննջարանս բարձրացայ եւ մահճակալիս վրայ փռուեցայ: Բարձրաձայն լացի եւ Տիրոջ աղաղակեցի՝ օգնութեան համար:

Կարծեմ զարմացայ, որ ճիշտն արագ Տէրը խօսեցաւ ինծի: Լսելի ձայնով չէր, հապա ձայն մը, որ յանկարծ հոգիէս ելաւ եւ զօրութեամբ միտքիս հասաւ: Առաջին բանը, որ Տէրը ըսաւ ինծի՝ այն էր, որ այն խառնաշփոթ վիճակը, որուն մէջ կը գտնուէի կապ չունէր Իրեն հետ: Կ'ենթադրեմ, որ այդ մէկը ըսաւ, որովհետեւ ես քիչ մը շփոթած էի, թէ ինչն է ինք, իմ տեսանկիւնէս՝ չէր օգնած մեզի: Մենք հիանալի եկեղեցի մը կը յաճախէինք, առատածեռն էինք երբ կրնայինք տալ եւ ընդհանրապէս մեր տասանորդները կու տայինք: Հակառակ այս բոլորին՝ Ան ըսաւ, որ ես այս խառնաշփոթ վիճակին մէջ էի, որովհետեւ երբեք չէի սորված, թէ ինչպէս կը գործէ Իր Թագաւորութիւնը: Ան ինծի ըսաւ, որ գալով դրամին՝ Իր Թագաւորութիւնը չի գործեր աշխարհային դրամական չափանիշներով եւ եթէ կ'ուզէի ազատ ըլլալ՝ պէտք էր սորվէի, որ ինչ է Իր Թագաւորութեան դրամական գործունէութեան համակարգը:

Կը յիշեմ, որ աստիճաններէն վար վազեցի եւ բռնեցի Տրենտան եւ ըսի, որ Տէրը ինծի հետ խօսած էր եւ թէ լուծումը Իր Թագաւորութիւնն էր: Անշուշտ քիչ մը շփոթած էինք, որովհետեւ կը կածէինք, թէ մենք հասկցած էինք Իր Թագաւորութիւնը: Ի վերջոյ, ինչպէս ըսի,

մենք հիանալի եկեղեցի մը կը յաճախէինք, երկուքս ալ կը սիրէինք զԱստուած եւ գիտէինք, որ դրախտ պիտի երթանք: Բայց ինչպէս շուտով յայտնաբերեցինք՝ մենք իրապէս շատ քիչ բան գիտէինք Իր Թագաւորութեան եւ անոր գործելակերպին մասին:

Ես շատ խանդավառ էի, որ Աստուած ինձի հետ խօսած էր եւ յայտնած էր լուծումը՝ Իր Թագաւորութիւնը: Տակաւին պէտք էր ըմբռնէի, թէ ինչ կը նշանակէ այդ մէկը, բայց քաջալերուած էի: Իրականութեան մէջ, ես գաղափար չունէի, թէ Աստուած ինչ ըսել կ'որզէր «թագաւորութիւն» բառով: Յետագային պիտի հասկնայի, թէ այդ մէկ բառը իսկապէս այն պատասխանն էր, զոր ես եւ Տրենտան կը փնտռէինք:

Այդ օրը Տրենտան եւ ես ձեռք-ձեռքի բռնած՝ աղօթեցինք: Նախ Տրենտան եւ ես զղջացինք Տիրոջ առջեւ, որ Իր խօսքը եւ Իր Թագաւորութեան դրամական գործունէութիւնը իրապէս սորվելու համար ժամանակ չէինք յատկացուցած: Երկրորդ՝ ես՝ իբրեւ տան գլուխը, զղջումս յայտնեցի Տրենտային՝ մեզ այս խառնաշփոթ վիճակին մատնելուս համար: Երկուքս ալ աղօթեցինք եւ համաձայնեցանք, որ մենք վճռած ենք սորվիլ Թագաւորութեան գործելաձեւը եւ ապրիլ կեանք մը, որ տարբեր է այն կեանքէն, զոր վերջին ինը տարիներուն ապրեցանք:

Անկէ ետք պատահածը նկարագրելու լաւագոյն ձեւը լոյսի անջատիչին նայիլն է: Մութ սենեակ մը մտիր եւ լոյսը վառէ: Պիտի տեսնես: Ճիշդ այդ էր մեր զգացումը երբ Աստուած սկսաւ մեզի սորվեցնել Իր Թագաւորութիւնը: Կարծես մէկը լոյսը վառեց եւ մենք սկսանք տեսնել այն, ինչ որ անկէ առաջ երբեք չէինք տեսած: Մենք սկսանք հասկնալ, որ Աստուծոյ Թագաւորութիւնը կառավարութիւն մըն է, որ ունի իր օրէնքները, որոնք չեն փոխուիր: Մենք անդրադարձանք, որ կրնանք սորվիլ այդ օրէնքները եւ հասնիլ Աստուծոյ զօրութեան եւ իմաստութեան՝ մեզի համար անհրաժեշտ հարստութիւնը ստեղծելու համար:

Շատ խանդավառ էինք, բայց տակաւին շատ շփոթած: Շատ հիանալի պատմութիւններ տեղի ունեցան երբ Աստուած սկսաւ

մեզի սորվեցնել, որ Իր Թագաւորութիւնը ինչպէս կը գործէ: Այդ պատմութիւններէն շատերուն մասին հոս պիտի չխօսիմ, քանի որ անոնց մասին արդէն խօսած եմ այս շարքին պատկանող առաջին գիրքին մէջ՝ «Ձեր Ֆինանսական Յեղափոխութիւնը՝ Հաւաւարմութեան Զօրութիւնը» (*Your Financial Revolution: The Power of Allegiance*): Այս գիրքը կրնաս ձեռք բերել [garykeese.com](http://garykeese.com)-էն կամ [Amazon.com](http://Amazon.com)-էն: Պէտք է նաեւ կարդաս «Հաւաւորքի Որսորդութիւն» (*Faith Hunt*) խորագիրով գիրքս, որ քեզ կը տանի առաջին օրերուն, երբ Աստուած սկսաւ ինծի սորվեցնել ինչպէս ապրուստ ապահովել եղինկ որսալու միջոցին: Բայց կրճատելու համար քեզի օրինակ մը տամ:

Ինչպէս նախապէս ըսի, մենք պարտքերու մէջ թաղուած էինք եւ ելք չունէինք: Կային «Այ. Ար. Էս. »-ի (ԱՄՆ ներքին տուրքերու ծառայութիւն) արգելանքները, գրաւատուները, տասը վարկաքարտեր, որոնց մէջի ամբողջ գումարը գործածուած եւ քարտերը չեղարկուած էին եւ երեք ֆինանսական ընկերութիւններէ փոխառութիւններ ըրած էինք 28% տոկոսով: Մենք պարտքեր ունէինք մեր ատամնաբուժին, արթուկիչներուն, մեր ծնողներուն եւ բարեկամներուն: Ամէն մարդու պարտք ունէինք: Բնական պայմաններով յոյս չկար: Ֆինանսական վաճառքի գործս լաւ չէր ընթանար, թէեւ շատ կ'աշխատէի: Բայց հիմա, Թագաւորութեան ըրած անհաւատալի գործերը տեսնելէ ետք (դարձեալ կ'ըսեմ, կարդա՛ վերը նշուած երկու գիրքերուն պատմութիւնները), մենք քաջալերուեցանք, որ Թագաւորութիւնն էր մեր լուծումը: Չէինք գիտեր ինչպէս, բայց մենք վստահ էինք, որ ճիշդ ճամբուն մէջ ենք:

Յետոյ գիշեր մը Աստուած երազ մը ցոյց տուաւ ինծի, որ կը յայտնէր, թէ պէտք էր ձգէի այն ընկերութիւնը, ուր վերջին ինը տարիներուն աշխատած էի եւ հիմնէի իմ սեփական ընկերութիւնս: Գիտցիր ինչու՝ մարդոց օգնելու, որպէսզի ձերբազատուին իրենց պարտքերէն: Գիտեմ: Խենթութիւն է, չէ՛: Այսինքն՝ եթէ ես գիտնայի ինչպէս պարտքէն ձերբազատուիլ, տարիներ առաջ այդ մէկը ըրած կ'ըլլայի: Բայց Ան ճիշդ այդ մէկը ըրաւ: Իրականութեան մէջ ես քիչ մը զարմացայ: Ես չէի գիտեր, որ ինչպէս պէտք է հիմնեմ իմ սեփական

ընկերությունս կամ ինչ կը ներառէ այդ մէկը ընելը: Ընկերութիւն մը, որ մարդոց պիտի օգնէ, որպէսզի իրենց պարտքերէն դուրս գան: Հէյ, ես տակաւին պէտք ունէի, որ մէկը ինծի՛ ըսէր, որ այդ մէկը ինչպէս ընեմ:

Երբ սկսայ ասոր մասին աղօթել, կեանք փոխող փորձառութիւն մը ունեցայ Սուրբ Հոգիին հետ այն մասին որ ինչպէս կրնար այս մէկը կատարուիլ: Այս մէկը պատահեցաւ երբ ապահովագրական գործիս մէջ յաճախորդներէս մէկուն հետ հեռաձայնով կը խօսէի: Օ՛, մոռցայ ձեզի ըսելու, որ ես ֆինանսական ծառայութիւններու մարզէն ներս ապահովագրութիւն եւ արժեթուղթեր (securities) կը ծախէի երբ այս ամէնը տեղի ունեցաւ: Գիտեմ, կացութիւնս կը նմանէր իր տան մէջ կաթկթող ծորակ ունեցող կապարագործի մը, որ ուրիշներուն հարցերը կը լուծէր, բայց իր սեփական հարցերը կ'անտեսէ: Թէեւ կամաց-կամաց իմ ֆինանսական ծառայութեան գործիս մէջ կը թերանայի, բայց նախորդ ինը տարիներուն այդ մարզին մէջ փորձառութեամբ ձեռք բերած ընդհանուր գիտելիքներս շատ կարեւոր պիտի ըլլային այն բանին համար, զոր Աստուած ինծի ցոյց պիտի տար:

Երբ յաճախորդիս եւ իր կնոջ հետ իրենց խոհանոցի սեղանին շուրջ նստած էի, այն սովորական նեկայացումը ցոյց տուի իրենց, որ իրենց դրամական կացութեան ամփոփ պատկերը կու տար, զանազան հարցումներ հարցնելով եւ լեցնելով, ինչպէս մենք կը կոչէինք, տուեալներու թերթիկ մը: Այս տուեալները հիմնականօրէն կը գործածուէին՝ որոշելու համար, թէ իրենք ինչքան կեանքի ապահովագրութիւն պէտք էր ունենային: Երբ իրենց պարտքերու ցանկը կը քննէինք, երկուքն ալ նեղացան եւ կինը սկսաւ լալ մինչ կը նկարագրէին, թէ ինչքան յուսահատ կը զգային: Երկուքն ալ ամբողջ ժամանակը կ'աշխատէին եւ ամէն ամիս իրենց ծախսերը չէին կրնար փակել:

Ես ինքս ինը տարի այդպէս ապրելէ ետք եւ Աստուծոյ մեզի սորվեցուցածէն ետք կրնաք երեւակայել, թէ ինչպէս զգացի իրենց ցաւը: Ինծի եւ Տրենտային նման, անոնք ալ քրիստոնեայ էին, բայց չէին գիտեր, թէ ինչպէս կը գործէր Թագաւորութիւնը: Այդ ժամանակ ես իրապէս չէի կրնար շատ բան բացատրել Թագաւորութեան

մասին, բացի կարգ մը սկզբնական բաներէն, զորս Աստուած արդէն մեզի ցոյց տուած էր: Իրենց հետ զանոնք բաժնեկցեցայ, եւ անշուշտ բաժնեկցեցայ այն հիանալի պատմութիւններէն քանի մը հատը, զորս տեսած էինք կը կատարուին մեր անձնական կացութեան մէջ:

Ըստ երեւոյթին, ինծի համար յստակ էր, որ կեանքի ապահովագրութիւնը իրենց գլխաւոր հարցը չէր: Ես որոշ ժամանակ տրամադրեցի բացտրելով այն ինչ, որ Աստուած կը սորվեցնէր ինծի Թագաւորութեան մասին, բայց կը փափաքէի, որ կարենայի բան մը ընել՝ նաեւ իրենց կացութեան համար իրական դրամական լուծումներ առաջարկելու համար:

Այդ գիշեր գրասենեակիս մէջ, երբ օրս կ'աւարտէի եւ կը դասաւորէի իմ սովորական թղթածրարներու կոյտս եւ նամակները, որոնց պէտք էր պատասխանէի, յանկարծ գաղափար մը ունեցայ: Ինչ կ'ըլլար եթէ կեանքի ապահովագրութեան հարցէն անդին անցնելով, մանրամասնօրէն քննէի իրենց ամբողջ դրամական իրավիճակը: Կամ բան մը, զոր կրնայի ընել: Ինչ կ'ըլլար եթէ սկսէի դրամ փնտռել: Ըսել կ'ուզեմ՝ հապա եթէ գտնէի աւելի աժան ձեւեր ընելու այն բաները, զորս իրենք արդէն կ'ընէին: Իմ նպատակս պիտի ըլլար գտնել աւելի աժան ձեւեր՝ ընելու այն բաները, զորս իրենք արդէն կ'ընէին եւ անկէ ետք գտած գումարս գործածել իրենց կանխիկ դրամի հոսքին եւ պարտքերուն համար: Ասիկա պարզ առաջարկ մը կը թուէր, բայց կեանքի ապահովագրութենէն զատ իրապէս շատ բան չէի գիտեր որեւէ ուրիշ ֆինանսական մարզի մասին: Պէտք է նշեմ, որ այս մէկը համացանցի օրերէն առաջ էր: Հետազօտութիւնը, զոր պէտք է ընէի, հին ձեւով պէտք է ընէի՝ հեռաձայնով եւ «դեղին էջեր»-ով:

Ես ամբողջ շաբաթը ասոր վրայ աշխատեցայ, որովհետեւ ժամադրուած էի յաջորդ շաբաթը կրկին այս յաճախողին հետ հանդիպելու: Երբ ժամանակ տրամադրեցի իրապէս ուսումնասիրելու իւրաքանչիւր դրամական բաժին, զարմացայ, որ ամսական ինչքան դրամ կրնայի խնայել: Երբ գործս աւարտեցի, խնայուած գումարը հասած էր ամսական հարիւրաւոր տոլարներու: Հաշուիչ մեքենայովս իրենց բոլոր պարտքերը գումարեցի եւ յետոյ խնայուած

գումարը գործածելով հաշուեցի իրենց սովորական ամսական վճարումները: Երբ հաշուելու կոճակը սեղմեցի պարզապէս աչքերս սեւեռած պաստառին վրայ երեւցող պատասխանին նայեցայ՝ 6. 2 տարի: 6. 2 տարի պատասխանը այն ընդհանուր ժամանակն էր, որ կը պահանջուէր իմ յաճախորդէս իր բոլոր պարտքերը վճարելու, ներառեալ իր տան կալուածագրաւը, առանց իր եկամուտը փոխելու: Այո, ճիշդ կարդացիք, առանց փոխելու իր ամսական եկամուտը: Ես ցնցուեցայ եւ համոզուեցայ, որ սխալած եմ, ուրեմն քանի մը անգամ եւս հաշուեցի մինչեւ որ համոզուեցայ, որ ճիշդ պատասխանը ունիմ: Ինչպէս այս մէկը կարելի էր: Ինչո՞ւ ամէն մարդ չէր գիտեր այս մէկը:

Ես շուտով առի քանի մը ուրիշ յաճախորդներու թղթածրարները, զորս քովս ունէի, արագօրէն ստուգեցի զանոնք եւ նոյն արդիւնքները յայտնաբերեցի: Բոլորը կրնային իրենց պարտքերէն ձերբագատիլ 5-էն 7 տարուան մէջ ներառեալ իրենց տան կալուածագումարը եւ առանց փոխելու իրենց ամսական եկամուտը: Երբ հաշիւներս վերջացուցի գրասենեակիս մէջ՝ արդէն ուշ էր, բայց երբ տուն կ'ուղղուէի, խանդավառուած էի: Եթէ իմ գտածս ճիշդ էր եւ բոլոր հաշիւներս ցոյց կու տային, թէ այդպէս էր, ապա ուրեմն այս մէկը մեծ բան մըն էր՝ իրապէս մեծ:

Ինծի համար հետաքրքրական էր, թէ յաճախորդս ինչպէս պիտի ընկալէր այսպիսի տեղեկութիւն մը: Իմ յառաջիկայ հանդիպումիս համար ես որոշեցի մեքենագրել թիւերը պարզ մէկ էջնոց ներկայացման մը մէջ: Իմ նպատակս էր պարզապէս յոյս տալ իրենց: Ես շահ մը չունէի անոր մէջ, որովհետեւ գիտէի, որ կեանքի ապահովագրութիւն մը ծախելը անհաւանական էր: Բայց ես նաեւ գիտէի, որ անոնք պիտի ուզէին լսել ինչ որ ես յայտնաբերեցի: Յաջորդ շաբաթը ես վերանայեցայ իմ հաշիւներուս եւ վստահ եղայ, որ ճիշդ էի:

Երբ դրան զանգը զարկի, մտահոգութեամբ կը սպասէի մեր հանդիպման: Երբ իրենց խոհանոցի սեղանին շուրջ նստայ, իրենց ըսի, թէ ամբողջ շաբաթը ինչ ըրի իրենց հաշիւներով: Կամաց-կամաց ու մանրամասնօրէն իրենց բացատրեցի իմ մեքենագրած թիւերս, իրենց բացատրելով, որ ինչպէս գտայ այդ խնայուած կանխիկ դրամը, ինչպէս նաեւ այն բոլոր ընկերութիւններուն անունները եւ

թիւերը, որոնք անհրաժեշտ պիտի ըլլան իրականացնելու այն ինչ որ իրենց ցոյց տուի: Զգացի, որ անոնք կը խանդավառուէին երբ խնայուած կանխիկ դրամը հետզհետէ կ'աւելնար: Բայց երբ հասայ այն եզրակացութեան, որ 6.2 տարուան մէջ բոլորովին ազատ պիտի ըլլային իրենց պարտքերէն, ներառեալ իրենց տան պարտքէն եւ իրենց ներկայ եկամուտով, երկուքն ալ սկսան լալ՝ այս անգամ ուրախութեամբ: Անոնք նստած էին ու իրենց արցունքները կը վազէին իրենց դէմքերէն եւ անընդհատ կ'ըսէին, որ ընթաց ցնցուած էին արդիւնքներէն: Անոնք վեր ցատկեցին ու ինծի փաթթուեցան եւ այդ գիշեր մենք հինանալի ժամանակ անցուցինք տօնելով:

Եկէք անկեղծ ըլլանք, «Այ. Ար. Էս. »-ը (ԱՄՆ ներքին տուրքերու ծառայութիւնը) ձեզի պիտի ըսէ ինչպէս աւելի պակաս տուրք վճարէք: Արդեօք դրամավարը ձեզի պիտի ըսէ ինչպէս պիտի խուսափիք տոկոսներ վճարելէն: Ո՛չ, ամբողջ համակարգը ստեղծուած է ձեր դրամը առնելու եւ ոչ թէ զայն պաշտպանելու: Ես գիտէի, թէ այն, ինչ որ յայտնաբերեցի, պէտք է սորվեցնեմ Ամերիկայի բոլոր ընտանիքներուն: Այդ գիշերը մեծ ազդեցութիւն ունեցաւ իմ վրաս եւ կ'ուզէի ընել նոյն բանը իմ հանդիպած բոլոր յաճախորդներուս համար:

Ուրեմն զինուած այդ տեղեկութեամբ եւ Աստուծոյ ինծի տուած երազին հաստատումով, Տրենտան եւ ես հեռացանք կեանքի ապահովագրութեան ընկերութենէն, որուն հետ աշխատած էի եւ հիմնեցինք մեր սեփական ընկերութիւնը, պարզապէս ընելով այն ինչ որ ես ըրած էի այդ յաճախորդին համար: Այդ առաջին տարիներուն մենք մեր ընկերութիւնը կոչեցինք «*Ֆէյթ-Տոյ Ֆամիլի Ֆայնէնսըզ*»: Անունը յստակօրէն կ'ըսէր, թէ ինչ էր մեր ընկերութեան իսկական նպատակը՝ եթէ հասկնաս Թագաւորութիւնը եւ հաւատքը, քու դրամականդ լեցուն պիտի ըլլայ: Համաձայն եմ, որ այս մէկը այնքան ալ լաւ անուն մը չէր ընկերութեան մը համար (փորձէ ետեւ-ետեւի տասը անգամ ըսել), բայց յաջողեցաւ: Մենք յետոյ անունը փոխեցինք «*Տորուրդր Ֆայնէնշըլ Կրուսի*»-ի, որ այսօր կայ եւ յաջողութեամբ կը գոյատեւէ:

Անկեղծ ըսած, անձնապէս մեր ֆինանսները տակաւին լեցուն չէին: Մենք տակաւին շատ պարտք ունէինք վճարելիք, բայց

գիտէինք, թէ գտած ենք մեր վազքուղին, որուն վրայ պիտի վազենք: Երբ մեր նոր ընկերութիւնը սկսանք, մենք խանդավառուած էինք եւ միեւնոյն ատեն քիչ մը մտահոգ: Մենք շատ բան ունէինք սորվելիք ընկերութիւն մը հիմնելու եւ ղեկավարելու մասին, բայց ամենամեծ խոչընդոտը, որուն հանդիպեցանք, ինչպէս դրամ շահիլն էր մինչ այդ մէկը կ'ընէինք: Մեր մարտահրաւերը այն էր, որ մենք կը զգայինք, որ չենք կրնար եւ չենք ուզեր մարդոցմէ դրամ գանձել՝ իրենց օգնելու իրենց պարտքերէն դուրս գալու համար: Ասիկա մեծ խոչընդոտ մըն էր, որուն համար բաւական ժամանակ աղօթեցինք եւ այլընտրանքներ փնտոեցինք: Առանց մանրամասնութիւններու մէջ մտնելու, Տէրը մեզի ցոյց տուաւ հիանալի ռազմավարութիւն մը՝ ընկերութիւնը հիմնելու եւ զայն դիրքաւորելու, որպէսզի դրամ շահի առանց յաճախորդէն դրամ գանձելու:

Յետոյ պէտք էր միջոց մը գտնէինք արագացնելու այն երկար՝ ձեռքով կատարուած հաշիւները, զորս ես կ'ընէի իմ յաճախորդներուս տուեալներով: Գիտէի, որ պէտք էր յատուկ ապսպրանքով գրել տայի համակարգչային ծրագիր մը, որպէսզի ընենք այն ինչ, որ մենք կ'ընէինք, բայց ես ոչինչ գիտէի համակարգիչներու մասին կամ ինչպէս գտնել մէկը, որ այդ մէկը ընելու կարողութիւնը ունէր: Դարձեալ Աստուած հիանալի գործ մը կատարեց: Ես հեռաձայն մը ստացայ մեր տունէն հեռու գտնուող անձէ մը, որ մեր մասին լսած էր: Ան կ'ուզէր տեսնել մեր աշխատանքը՝ որպէս յաճախորդ: Ան կը սիրէր մեր ըրածը եւ մինչ կը խօսէինք, գիտցայ, որ ան համակարգչային ծրագրաւորող էր եւ իր գործէն զատ ունէր իր սեփական ընկերութիւնը, ուր մասնակի ժամանակով կ'աշխատէր: Ես իրեն յայտնեցի մեր պէտքին մասին եւ ան մեծ խանդավառութեամբ ըսաւ, որ կ'ուզէր մեզի օգնել մեր գործին մէջ: Ես իրեն ըսի, որ մենք նոր մեր ընկերութիւնը հիմնելու կը սկսէինք եւ տակաւին դրամական միջոցները չունէինք՝ իր առաջարկած գործին համար վճարելու, հակառակ անոր, որ ան իր աշխատանքը մեծ զեղչով առաջարկած էր: Ան դեռ կ'ուզէր գործը ընել եւ ըսաւ, թէ կրնայի իրեն վճարել երբ դրամ շահելու սկսէի: Ուրեմն այդպէս ալ ըրինք:



Մարդիկ կը սիրէին մեր գործը: Ի վերջոյ, ինչն ոչ: Ձրի էր եւ մարդիկ կը սիրէին դրամ գտնել ու պարտքերէն ձերբազատուիլ: Գործը շատ արագ կերպով մեծապէս բարգաւաճեցաւ, եւ երկուքուկէս տարուան մէջ մենք կրցանք մեր պարտքերէն ազատիլ: Շուտով մենք ունեցանք ատելի քան երեք հարիւր ներկայացուցիչներ, որոնք մեր ծրագիրը կը բաժնեկցէին ամբողջ Միացեալ Նահանգներու տարածքին: Մենք ոչ միայն կրցանք մեր երկու ինքնաշարժներուն զինը կանխիկ վճարել, այլ՝ կրցանք շինել մեր երազանքի տունը եւ անոր զինը կանխիկ վճարել: Մեր ընկերութիւնը մեծցաւ եւ մեզի տուաւ հնարաւորութիւնը տարիներու ընթացքին հարիւր հազարաւոր տղարներ տալ՝ Աւետարանին եւ մարդոց աջակցելու համար:

«Պարտքի ծրագիր»-ը, ինչպէս մենք զանիկա կը կոչենք, այսօր ալ ձրիօրէն կը գործէ երեսուն տարիներ ետք: Տարիներու ընթացքին ընկերութիւնը մեծցաւ իր առաքելութեան մէջ: Անկէ ետք մենք սկսանք կեդրոնանալ կենսաթոշակային ներդրումներու վրայ (հանգստեան օրերու համար ներդրում) 2001-ի ֆինանսական սնանկացումէն եւ յետոյ անշուշտ 2008-ի սնանկացումէն ետք, երբ միլիոնաւոր մարդիկ իրենց հանգստեան թոշակին 50-էն 80 տոկոսը կորսնցուցին: Մենք ուսումնասիրեցինք ապահով դրամական ներդրումներու տարբերակներ եւ մեր գործին այդ բաժինը սկսանք գործի լծել 2001-ին: Ես հպարտութեամբ կ'ըսեմ, որ ատելի քան հարիւր միլիոն տղար ներկայիս կը կառավարենք մեր յաճախորդներուն համար, որոնցմէ ոչ մէկը կորսնցուցած է ոչ իսկ լումայ մը իր ներդրումներէն նախորդ տասնվեց տարիներու ֆինանսական քաոսին ընթացքին, որ պատահեցաւ Ամերիկայի Միացեալ Նահանգներուն եւ աշխարհի մէջ: Մեր ծրագիրին համաձայն մեր ընկերութեան մէջ ներդրում կատարող յաճախորդներուն համար չկայ վճարում, չկայ որեւէ վարչական ծախս կամ սկզբնական կամ տարեկան միջնորդավճար: Եթէ յոգնած ես քու կենսաթոշակիդ (հանգստեան օրերուդ համար հաւաքած դրամիդ) հետ բաղդախաղ խաղալէն, կրնաս կապուիլ «Ֆորուրրրրր ֆայնենշըլ Կրուպ»-ին հետ հեռաձայնելով 1-(800)-815-0818 թիւին կամ գրելով [Forwardfinancialgroup.com](http://Forwardfinancialgroup.com)-ին՝ յաւելեալ տեղեկութիւններու համար:

Հիանալի է, չէ՛: Սուրբ Հոգիին կողմէ տրուած պարզ գաղափար մը մեր կեանքերը վերջնականապէս փոխեց: Այո՛, թէեւ տակաւին մենք պէտք էր կիրարկէիք այդ գաղափարը, բայց Աստուած մեզի ցոյց տուաւ, թէ ինչպէս պէտք էր այդ մէկը ընէինք: «Ինչ էր զգացումդ, Կերի, երբ պարտքէն ձերբազատուեցար»: Խաղաղութիւն: Հանգիստ: Մտածէ՛ պահ մը: Ֆինանսապէս խիստ քայքայուած վիճակ ունէինք եւ յանկարծ ամբողջութեամբ պարտքերէն ձերբազատուեցանք, սկսանք կանխիկ վճարել մեր ինքնաշարժներուն գինը, մեր տան գինը

**ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ  
ԿՈՂՄԷ ՏՐՈՒԱԾ  
ՊԱՐԶ ԳԱՂԱՓԱՐ  
ՄԸ ՄԵՐ ԿԵԱՆՔԵՐԸ  
ՎԵՐՋՆԱԿԱՆԱՊԷՍ  
ՓՈԽԵՑ: ԱՅՈ՛,  
ԹԷԵՒ ՏԱԿԱԻՆ  
ՄԵՆՔ ՊԷՏՔ ԵՐ  
ԿԻՐԱՐԿԷՆՔ ԱՅԴ  
ԳԱՂԱՓԱՐԸ, ԲԱՅՑ  
ԱՍՏՈՒԱԾ ՄԵՉԻ  
ՑՈՅՑ ՏՈՒԱԻ, ԹԷ  
ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ  
ԵՐ ԱՅԴ ՄԷԿԸ  
ԸՆԵԷԻՆՔ:**

եւ մնացեալ բոլոր բաներուն համար, որոնց պէտք ունէինք: Ինը երկար տարիներ ես ծայրայեղ ճնշումի տակ էի ամէն օր, ամէն վայրկեան: Հանգիստ չունէի: Կարելի չէր, թէ շաբթուան ո՛ր օրն էր կամ թէ տօնական օր էր: Խաղաղութիւն չունէի: Ֆինանսական հարցերս ինծի կը հետեւէին ուր որ երթայի: Ես յարատեւ կ'ամչնայի եւ կը խայտառակուէի մեր ֆինանսական կացութեան պատճառով: Իմ յուսահատութեանս գագաթնակէտին վախը իմ մշտական ընկերակիցս էր, խուճապի յարձակումները եւ ընկճուածութեան դեղերը իմ ապրելակերպս:

Ֆինանսական բոլոր փոփոխութիւնները ունենալէ ետք, եւ անշուշտ մեր կեանքին բոլոր կարիքները ունենալէ ետք, դուռն կրնաս մտածել, թէ մեր անձնական ֆինանսները ինքնին յաղթանակն էին: Այո, վերջապէս մեզի պէտք եղած բոլոր բաները ունենալը հսկայական յաղթանակ էր, բայց իրական խանդավառութիւնը Աստուծոյ Թագաւորութեան ներգործութիւնը տեսնելն էր: Երբ Տրենտան եւ ես շարունակ կը տեսնէինք Թագաւորութեան աշխատանքը, շատ յաճախ կ'ըսէինք.

«Տեսմիր ինչ ըրաւ»: Ճիշդ ինչպէս երբ լոյսին կոճակը վեր կ'ընես (լոյսը կը վառես), ամէն բան յստակ կ'ըլլայ լոյսին տակ. կրնաս տեսնել:

Կոյր ըլլալէ եւ առանց պատասխաններու ապրելէ ետք տեսնելը հիանալի փորձառութիւն մըն է: Մեր ճշմարիտ գանձը՝ Աստուծոյ Թագաւորութիւնը՝ գտնելը պարզապէս հիանալի էր: Եթէ ձեզի պիտի ըսեմ, թէ ինչ էր զգացումս, պարզ է – կեանքիս մէջ առաջին անգամ ըլլալով հանգիստ կար:

Յուզումնալից դէպքերը վերջացան: Անցեալին եթէ մեր անիւղ պայթէր, անիկա լուրջ զգացական տագնապ մը կը պատճառէր: «Ուրկէ՞ պիտի բերէիք դրամը: Վարկաքարտին մէջ տակաւին դրամ կ'այ»: Բայց այսօր, եթէ որոշ պատճառով մեր ինքնաշարժը պայթի, ես պարզապէս կնոջս կը հարցնեմ. «Ինչ գոյնի ինքնաշարժ կ'ուզես այս անգամ»: Չկայ ո՛չ յուզումնալից արտայայտութիւն, ո՛չ խուճապ, ո՛չ ալ պարտք, միայն հանգիստ: Կրնանք մնալ մեր պարտականութեան եւ նպատակին վրայ: Այլեւս չենք ապրիր գոյատեւելու համար, հապա կրնանք գործել ԿԵԱՆՔԻՆ համար:

*Ուստի կ'ըսեմ ձեզի. “Հոգ մի՛ ընէք ձեր կեանքին համար թէ ինչ պիտի ուրէք, կամ ինչ պիտի խմէք. ոչ ալ ձեր մարմիններուն համար թէ ինչ պիտի հագնիք. չէ՛ որ կեանքը կերակուրէն աւելի է ու մարմինը հագուստէն: Նայեցէք երկնքի թռչուններուն, որոնք ո՛չ կը սերմանեն եւ ո՛չ կը հնձեն, ո՛չ ամբարի մէջ կը ժողվեն, բայց մեր երկնաւոր Հայրը կը կերակուրէ զանոնք: Չէ՛ որ դուք անոնցմէ լաւ էք”:*

– Մատթէոս 6. 25-26

Այս վերջին երեսունվեց տարիներուն ընթացքին ես հազարաւոր մարդոց հետ նստած եմ իրենց խոհանոցի սեղաններուն շուրջ եւ իրենց դրամական միջոցները քննարկած եմ շատ անձնական մակարդակի վրայ: Ես հազարաւոր մարդոց առջեւ խօսած եմ ամբողջ աշխարհին շուրջ եւ կայ մէկ բան, զոր կը տեսնեմ ամէն տեղ՝ ամէն մարդ հանգիստ կը փնտռէ: Ամէն մարդ ակնկալութեամբ կը սպասէ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ՃՆՇՈՒՄՈՎ ԿԵԱՆՔ  
ՄԸ ԱՊՐԻԼԸ ՍԿԻՉՔԷՆ  
ԱՍՏՈՒԾՈՅ ԾՐԱԳԻՐԸ  
ՉԷՐ ԵՒ ԱՏԻԿԱ  
ԱՅՍՕՐ ԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ  
ԾՐԱԳԻՐԸ ՉԷ ՔԵՉԻ  
ՀԱՄԱՐ:**

շաբաթավերջին, արձակուրդին, կամ հանգստեան կոչուելուն, որպէսզի կենայ եւ հանգստանայ:

Վերջին քանի մը ուսումնասիրութիւնները, զորս կարդացի, կը պարզեն, որ ամերիկացիներուն եօթանասուն տոկոսը իրենց գործերը չեն սիրեր եւ այդ եօթանասուն տոկոսին քսան տոկոսը իրենց գործով հետաքրքրուած

(ներգրաւուած) չեն եւ կ'ենթադրուի, որ կ'ատեն իրենց գործը: Ինչո՞ւ կ'ընեն բան մը, զոր կ'ատեն: Ինչպիսի՞ ճնշումներու տակ կ'ապրին, որ հանդուրժեն այդքան մեծ զգացական ցաւ ամէն օր: (Մենք բոլորս եղած ենք այս կացութեան մէջ: Մենք մեծցեր ենք աշխարհի մը մէջ, ուր բարգաւաճելու միակ միջոցը բաւարարաչափ դրամ ունենալն է այլընտրանքներ ունենալու համար: Բայց մարդոց մեծամասնութիւնը այդ մէկը չունի:) Անոնց բարգաւաճելու երազները կամաց-կամաց կ'անհետանան եւ իրենց կեանքը կը դառնայ գոյատեւման կեանք մը մինչ անոնք իրենց երեսունական, քառասունական եւ նոյնիսկ յիսունական տարիքին մէջ իրենք զիրենք կը գտնեն փակուղային գործերու (միօրինակ գործերու) մէջ:

Վերջին վիճակագրութիւն մը ցոյց կու տայ, որ Ամերիկայի բնակչութեան վաթսունինը տոկոսը նոյնիսկ հազար տոլար չունի իր խնայողութեան հաշիւին մէջ<sup>1</sup>: Այդ ճնշումը եւ հոգեկան ցնցումը, որուն տակ կ'ապրի մարդոց մեծամասնութիւնը, կը խեղաթիւրէ անոնց ինքնութեան գիտակցութիւնը եւ ինքնարժեւորումը: Երազները մէկդի կը դրուին անհրաժեշտ պէտքերու պատճառով եւ կը տիրէ ծանձրացուցիչ հիասթափութիւն մը: Ուրախութիւնը կ'անհետանայ:

Օր մը կը յիշեմ, որ հովիտի մը հետ կը խօսէի ֆինանսներու

1 Նայլ ՄաքՔարթի, «Վիճակագրութիւն. Ամերիկացիներուն 69 տոկոսը հազար տոլարէն պակաս ունի իր խնայողութեան հաշիւին մէջ», Ֆորպզ, Սեպտեմբեր 23, 2016, <https://www.forbes.com/sites/niallmccarthy/2016/09/23/survey-69-of-americans-have-less-than-1000-in-savingsinfographic/#30d27351ae67>.

մասին: Ան ինձի ըսաւ, որ կը սիրէր ծառայութիւնը եւ մարդիկը, բայց ամէն օր կ'արթննար խանդավառութեամբ մինչեւ որ յիշէր իր ֆինանսական կացութիւնը: Ան ինձի ըսաւ, որ կարծես մեծ սեւ ամպի մը պէս էր, որ արեւուն լոյսը կը խափանէր մինչ յուսահատեցնող միտքեր կը զբաղեցնէին իր միտքը եւ զինք պատանդ կը դարձնէին գոյատեւման մտածելակերպին, ֆինանսական յուսահատութեան եւ տեսիլքէ զուրկ ստրկութեան:

Կեանքը փոխարինուած էր ուրիշներու յաղթանակը դիտելով: Հոլիուտը միլիառներ շահած է՝ զանգուածներուն ցոյց տալով ուրիշ մարդոց յաղթանակը մեծ պաստառին վրայ: Մարդիկ, որոնք իրենց անձնական յաղթանակը չեն տեսներ, քանի մը վայրկեան իրենց դժուարութիւններէն փախուստ կը գտնեն եւ իրենց երազները կ'ապրին՝ դիտելով կատարեալ մարդիկ, որոնք կատարեալ կեանքեր կ'ապրին մեծ պաստառին վրայ:

Ներկայիս մարմնամարզութիւնը տարեկան միլիառաւոր տոլարներ կը շահի հանդիսատեսներէն ամբողջ աշխարհին մէջ: 2017-ին «Էն. Էֆ. Էլ. »-ը (Նաշընըլ Ֆութպոլ Լիկ) 7. 8 միլիառ տոլարէն աւելի շահ ապահովեց. «Սուփըր Պոլ»-ը՝ մօտաւորապէս 15. 5 միլիառ եւ ասիկա ընդամէնը մէկ խաղ է<sup>2</sup> 3: Մարդիկ կը սիրեն իրենց նախասիրած խումբը քաջալերել մինչեւ անիկա յաղթէ:

Բայց պէտք է հասկնանք, որ մենք բոլորս սահմանուած եւ ստեղծուած ենք յաղթելու՝ պայքարին մէջ ըլլալու, խաղին մէջ ըլլալու եւ ի վերջոյ, յաղթելու: Մարդոց մեծամասնութեան համար ֆինանսական յուսահատութիւնը ընդհանուր կանոն է, ոչ բացառութիւն: Ուրեմն միակ փախուստը մեր բոլորին երազած կեանքը ուրիշներուն միջոցաւ

2 Մայքըլ Տէյլիտ Սմիթ, «Փեքըրզ Պուքս Շօ Էն. Էֆ. Էլ. -ի խումբերը իրենց միջեւ Բաժնուեցան 7. 8 միլիառ տոլար Ազգային Եկամուտէն», Էն. Պի. Սի. Սփորթզ, <http://profootballtalk.nbcsports.com/2017/07/12/packers-books-show-nfl-teams-split-7-8-billion-in-national-revenue/>

3 Ճօ Տ'Ալեկրօ, «Սուփըր Պոլ Պիլսնգ. Մեծագոյն Վաճառականական Գործը Տարուան Մեծագոյն Խաղին Ետին», Էն. Սի. Պի. Սի. , Յունուար 22, 2017, թարմացուած՝ Փետրուար 2, 2017-ին, <https://www.cnbc.com/2017/01/20/super-bowl-billions-the-big-business-behind-the-big-game>:

ապրիլն է: Ի՞նչ է վիճակահանութիւն շահելուն հրապոյրը: Ինչո՞ւ «Ո՞վ Կ'ուզէ Միլիոնատէր Ըլլալ» խորագիրով հեռատեսիլի յայտագիրը այդքան սիրուած էր (հանրածանօթ էր): Ինչո՞ւ հարստանալու հնարքները տակաւին փորձութիւն են այսօր: Պատասխանը: ՀԱՆԳԻՍ: Ամէն մարդ յոգնած է վազելէն, ամէն մարդ յոգնած է արթննալէն այն ծանրութեան տակ, որ պէտքերը ապահովելը իրենցմէ կը գողնայ իրենց երազները: Բայց ֆինանսական ճնշումի տակ ապրիլը նորութիւն մը չէ. իրականութեան մէջ անիկա միշտ ալ գոյութիւն ունեցած է այնքան ատեն, որ մարդը եղած է երկրի վրայ: Բայց սկիզբէն ատիկա Աստուծոյ ծրագիրը չէր եւ ատիկա այսօր ալ Աստուծոյ ծրագիրը չէ քեզի համար:

## ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

# ՕՐԻՆԱԿԱՆ ԻՐԱԴՈՒՆՔՆԵՐ

Յուսահատ - Ես այդպես կը նկարագրեմ մեր կեանքը նախքան մեր հասկնալը, թէ ինչպէս պէտք է հանգստանանք: Ինը տարին երկար ժամանակ է՝ ֆինանսական քաոսի եւ ճնշումի մէջ ապրելու համար: Կը յիշեմ, որ շատ անգամ դուրս կը նայէի՝ ութսունհինգ արտավար տարածութեամբ ագարակին, զոր ամսական երեք հարիւր տոլարով վարձած էինք եւ հազիւ կրնայինք վճարել այդ գումարը, որ չափազանց աժան էր եւ ես ինծի հարց կու տայի, թէ արդեօք բնաւ պիտի կարենայինք այդպիսի հող մը ունենալ:

Սեփականատէրը կոլֆի դաշտ մը պիտի շինէր կալուածին վրայ եւ պարզապէս կ'ուզէր, որ մէկը հոն ապրի՝ պարզապէս կալուածին վրայ հսկելու համար մինչեւ որ սկսէին ծրագրիին, զոր կը նախատեսէին, որ երեքէն հինգ տարի ետք պիտի իրագործուէր: Հին ագարակատունը ստացանք «ինչպէս որ էր» եւ այդ ընթացքին անոնք վերանորոգութիւններու համար ոչ մէկ գումար պիտի ծախսէին: Մենք առինք զանհիկա եւ լաւ ներկելէ ետք, տունը ունեցաւ իր իւրայատուկ հմայքը: Մեր ծրագիրն էր հոն մնալ երեք տարի եւ անկէ ետք ուրիշ տեղ անցնիլ, բայց այդ ութ տարիներուն ընթացքին, զորս հոն մնացինք, մենք տակաւին ոչ մէկ բանի տիրանալու (սեփականատէր դառնալու) հնարաւորութիւնը չունեցանք:

Աստուած ինծի Թագաւորութեան մասին խօսելէն ետք, երբ սկսանք սերտել եւ կիրառել Թագաւորութեան սկզբունքներն ու

օրէնքները, փոփոխութիւններ սկսան տեղի ունենալ: Սկիզբը, երբ մեր ֆինանսական վիճակը սկսաւ բարելաւուիլ, մենք շատ ուրախ էինք ամենափոքր յաղթանակներով: Ես կը յիշեմ, որ հին ազարակատան համար աման լուալու մեքենայ մը գնեցինք եւ Տրենտան եւ ես շատ ուրախ էինք, յատկապէս Տրենտան: Թէեւ ես երբեմն ամանները լուալու կ'օգնէի, բայց նաեւ գործով զբաղած էի: Այն ատեն չորս մանուկներ ունէիք, անոր համար կինս միշտ աման կը լուար: Երբ աման լուալու մեքենան գնեցինք, կը յիշեմ, որ այսպիսի բան մը ըսի. «Կը հաւատամ, որ նոր աման լուալու մեքենայի մը գինը կանխիկ վճարեցինք»: Գիտեմ, կը մտածէք. «Ուահ, ինչ մեծ բան կայ աման լուալու մեքենայ գնելուն մէջ»: Անոր կարեւորութիւնը գնահատելու համար, դուք պէտք է նայիք մեր ազարակատան խոհանոցին միւս մեքենաներուն: Թէ՛ մեր փուռը եւ թէ՛ մեր սառնարանը ակատանձի (աւոքատո) պէս կանանչ եւ քսանհինգ տարուայ էին: Ուրեմն անոնց հետ բաղդատած՝ նոր աման լուալու մեքենայ մը գնելը մեծ յաղթանակ էր մեզի համար:

Նախորդ գլուխին մէջ ես պատմեցի, թէ ինչպէս Աստուած ինձի երազ մը եւ ծրագիր մը տուաւ՝ սկսելու գործ մը, որ մեր ֆինանսական քառսին լուծումը պիտի դառնար: Կրնաս մտածել. «Երանի Աստուած ինձի ալայդպիսի բան մը ըսէր»: Լաւ լուրը այն է, որ Ան կը փափաքի այդ մէկը ընել, բայց կան Թագաւորութեան գործելակերպին վերաբերող կարգ մը բաներ, զորս պէտք է գիտնաս նախքան կարենաս օգտուիլ այդ տեսակի օգնութենէն: Այդ օրը այդ ուղղութիւնը ստացայ երազիս մէջ, որովհետեւ Աստուած մեզի կը սորվեցնէր Իր Թագաւորութեան մասին եւ մենք այդ մէկը կիրարկեցինք: Թէեւ իմ նախորդ գիրքիս մէջ ես Թագաւորութեան մասին մանրամասնօրէն խօսած եմ, պէտք է զանիկա նորէն վերաքաղեմ, որպէսզի մեզի համար յատակագիծ մը ըլլայ, որուն հիման վրայ կրնանք աշխատիլ:

Մարդիկ ինձի կը հարցնեն, թէ ինչ նկատի ունիմ Աստուծոյ Թագաւորութիւն ըսելով: Ես Աստուծոյ Թագաւորութեան մասին գիտութիւն չունէի, թէեւ քրիստոնէայ էի: Ես գիտէի, որ երբ մեռնիմ, դրախտ պիտի երթամ, բայց Աստուծոյ Թագաւորութեան եւ անոր գործելակերպին հասկացողութիւնը չունէի: Այս գաղափարը



հասկնալու համար, պէտք է հասկնաք, թէ ինչ կը նշանակէ «թագաւորութիւն» բառը: Բառացի իմաստով, ատիկա կը նշանակէ թագաւորին տիրապետութիւնը: Թագաւորին թագաւորութիւնը կը գործէ թագաւորին խօսքով: Անոր խօսքերը կը դառնան այն օրէնքը, որ կը կառավարէ Իր (իշխանութեան) մարզը եւ Իր քաղաքացիներուն կեանքերը: Թագաւորութեան մասին ուրիշ գաղափար մը կ'ըսէ, թէ մէկ միլիոն մարդոցմէ բաղկացած ամբոխ մը թագաւորութիւն չի կազմեր: Թագաւորութիւնը կ'ենթադրէ օրէնքներով կառավարութիւն մը, որ կը կիրարկէ թագաւորին օրէնքները այդ թագաւորութեան բոլոր օրինական քաղաքացիներուն կեանքերուն մէջ: Այս գաղափարը, թէ Աստուած ունի Թագաւորութիւն մը՝ հաստատուած օրէնքներով, որոնք հասանելի են Իր Թագաւորութեան բոլոր օրինական քաղաքացիներուն համար, կարծես անվաւեր (ջնջուած) է քրիստոնէութեան մեծ մասին մէջ: Քրիստոնեաներէն շատերը կը հաւատան, որ Աստուած կ'որոշէ, թէ որ աղօթքներուն պիտի պատասխանէ կամ որոնն աչառութիւն պիտի ընէ: Անոնք կը հաւատան, որ եթէ երկար ժամանակ ծոմ պահեն կամ Աստուծոյ համար աւելի շատ հոգեւոր աշխատանք կատարեն, Անոր առջեւ շնորհք պիտի գտնեն: Բարեկամ, դուն արդէն շնորհք գտած ես Անոր առջեւ:

*Ուրեմն ան սակէ յեպոյ դուք օտար ու պանդուխտ չէք, հապա սուրբերուն քաղաքակիցները եւ Աստուծոյ ընտանիքը:*

– Եփեսացիներուն 2. 19

Դուն ոչ միայն Անոր Թագաւորութեան քաղաքացի ես, այլ՝ Անոր սեփական ընտանիքին անդամը, Թագաւորին որդին կամ դուստրը: Գաղատացիս 4-ը շատ յստակ կը պարզէ, թէ այս մէկը ինչ կը նշանակէ քեզի եւ ինծի համար:

*Բայց այս կ'ըսեմ որչափ ժամանակ որ ժառանգորդը մանուկ է, ծառայէ տարբերութիւն մը չունի, թէեւ ամենուն տէրն է. հապա խնամակալներու ու հոգաբարձոներու տակ է մինչեւ հօրը որոշած ժամանակը: Նոյնպէս մենք*

*ալ երբ մանուկ էինք, աշխարհի սկզբունքներուն փակ ծառայ էինք: Բայց երբ ժամանակը լեցունցաւ, Աստուած իր Որդին դրկեց, որ կնոջմէ եղաւ ու օրէնքի փակ մտաւ. Որպէսզի օրէնքի փակ եղողները փրկէ եւ որպէսզի մենք որդեգրութիւնը ընդունինք: Որովհետեւ դուք որդիներ էք, Աստուած իր Որդիին Հոգին ձեր սրտերուն մէջ դրկեց, որ կ'աղաղակէ «Աբբա Հայր»: Ուստի ալ ծառայ չես, հապա՛ որդի եւ եթէ որդի՝ ալ Աստուծոյ ժառանգորդը Քրիստոսով:*

– Գաղատացիներուն 4. 1-7

Դուն Անոր ամբողջ ունեցուածքին ժառանգորդն ես՝ որպէս որդի կամ դուստր եւ որպէս Անոր Թագաւորութեան քաղաքացի՝ ունիս օրինական իրաւունքներ: Պահ մը արտօսէ, որ այս մէկը միտքիդ մէջ տեղ գտնէ՝ դուն արդէն ամէն ինչ ունիս: Չկայ բան մը, որուն պէտք ունիս, զոր դուն արդէն չունիս: Ուրեմն կեցիւր աղաչել է ու լալէ: Չես կրնար մտաւր բան մը, զոր արդէն ունիս: Աստուած իւրաքանչիւր պարագայի համար յատուկ որոշում չի կայացներ, թէ՛ որուն պիտի օգնէ եւ որուն պիտի չօգնէ: Ան որ Աստուծոյ որդի կամ դուստր է, արդէն Աստուծոյ օգնութիւնը ունի:

**ԶԳԱՅՈՒՄՆԵՐԸ  
ՀԱՃԵԼԻ ԵՆ ԵՒ  
ԵՍ ԿԸ ՍԻՐԵՄ  
ԶԳԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ  
ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ,  
ԲԱՅՅ ԳԱԼՈՎ  
ՕՐԻՆԱԿԱՆ  
ՀԱՐՅԵՐՈՒՆ, ԵՍ ՊԷՏՔ  
ՉՈՒՆԻՄ ՓՐԿՈՒԱԾ  
ԶԳԱԼՈՒ, ՈՐՊԷՍՁԻ  
ՓՐԿՈՒԱԾ ԸԼԼԱՄ:  
ՓՐԿՈՒԹԻՒՆՆ  
ՕՐԻՆԱԿԱՆ ՀԱՐՅ Է:**

Այս մէկը բաղդատեմ Ամերիկայի Միացեալ Նահանգներու քաղաքացի ըլլալուն հետ: Եթէ քաղաքացի ես, դուն արդէն ունիս Միացեալ Նահանգներու կառավարութեան աջակցութիւնը՝ օրէնքին ըսածը կիրարկելու համար: Այդ առաւելութիւնը կամ բարիքը քու քաղաքացիութեանդ մաս կը կազմէ: Ուրեմն երկար ժամանակ ծոմ պահելով կամ աղօթելով չես կրնար Աստուծոյ օգնութիւնը շահիլ.

Ան արդէն զայն ճրիօրէն տուած է քեզի Յիսուսի կատարած գործին միջոցաւ: Ուրեմն վայելէ զանիկա: Անիկա քննիչ է:

*Անոր հետ մեզ յարուցանեց ու անոր հետ նստեցուց երկնաւորներուն մէջ Քրիստոս Յիսուսով, որպէսզի գալու դարերուն մէջ ցուցնէ իր շնորհքին գերազանց մեծութիւնը՝ Քրիստոս Յիսուսով մեզի ցուցուցած քաղցրութիւնով:*

– Եփեսացիներուն 2. 6-7

«Մեզ նստեցուց երկնաւորներուն մէջ» նախադասութիւնը կը խօսի ձեր օրինական դիրքին մասին Աստուծոյ Թագաւորութեան մէջ: Յիսուս նստած է Հօր աջ կողմը եւ դուք նոյնպէս, քանի որ դուք Քրիստոսի մարմինն էք: Այդպիսով դուք Յիսուսի հետ ժառանգակից էք Աստուծոյ բոլոր ունեցածներուն: Գիտեմ, որ անհաւատալի է այս մէկը խորհիլը, բայց ճիշդ է: Դուք ամէն բան ունիք. դուք Աստուծոյ ընտանիքին կը պատկանիք, եւ այս մէկը ընտանեկան գործ է: Բայց քանի որ Սատանան փորձած է պահել ձեր ինքնութիւնը եւ ձեր ամբողջ ունեցածը, մարդոց մեծ մասը, նոյնիսկ քրիստոնէաներ, կ'ապրին կարծես տակաւին կապուած ըլլալին աշխարհին գոյատեւման անէծքին համակարգով:

Բանալին, որ իմ կեանքս փոխեց, այն անդրադարձն էր, որ Աստուծոյ Թագաւորութիւնը կառավարութիւն մըն է, որ ունի իր օրէնքները եւ ես, ըլլալով անոր քաղաքացին, ունիմ օրինական իրաւունքներ եւ շահեր Թագաւորութեան մէջ: Զգացումները հաճելի են եւ ես կը սիրեմ զգալ Աստուծոյ ներկայութիւնը, բայց գալով օրինական հարցերուն նիւթին, ես պէտք չունիմ փրկուած զգալու, որպէսզի փրկուած ըլլամ: Փրկութիւնս օրինական հարց է: Ես պէտք չունիմ զգալու, թէ Միացեալ Նահանգներու քաղաքացի եմ, որպէսզի քաղաքացի ըլլամ: Ես արդէն գիտեմ, թէ ատիկա օրինական հարց է, որ կը գոհանայ այն իրականութեամբ, թէ ես հոն ծնած եմ: Եթէ Աստուծոյ առջեւ ճիշդ կեցուածք ունիս եւ կեանքդ օրէնքի վրայ հիմնուած է փոխանակ զգացումներուդ, շատ բան կը փոխուի:

*Մենք համարձակութիւնը ունինք անոր քով, քանզի գիտենք թէ ինչ որ խնդրելու ըլլանք իր կամքին համեմատ, պիտի լսէ մեզի: Եւ եթէ գիտնանք թէ պիտի լսէ ինչ որ խնդրելու ըլլանք, ուրեմն կը գիտնանք թէ պիտի առնենք ինչ որ խնդրենք իրմէ»:*

– Ա. Յովհաննէսի 5. 14-15

Պահ մը այս աստուածաշնչական հատուածին մասին մտածէ. ասիկա իմ նախասիրած հատուածներէս մէկն է: Եթէ որեւէ բան խնդրեմ Անոր կամքին համաձայն, գիտեմ, որ Ան կը լսէ զանիկա: Ասիկա ձայնային այլքներուն մասին չէ, զորս քու ականջներովդ կը լսես: Ասիկա օրինական հաստատում մըն է: Երեւակայէ դատաւոր մը եւ իր դատասարահը: Եթէ դատաւորը որոշէ դատ մը քննել, ատիկա կը նշանակէ, թէ ան համաձայն է լուծելու հարցը օրէնքին համաձայն: Մեր պարագային, քանի որ մենք խնդրած ենք Թագաւորին օրէնքներուն համաձայն, մենք արդէն գիտենք, որ Ան պիտի կիրառէ Իր սեփական օրէնքները: Այդպիսով մենք վստահ ենք արդիւնքէն. չենք ենթադրեր:

Օրինակ՝ Միացեալ Նահանգները թագաւորութիւն չեն, քանի որ թագաւոր չունին, բայց անոնք կը գործեն օրէնքներու համաձայն, որոնք հաւասար եւ հասանելի են բոլոր օրինական քաղաքացիներուն համար: Նմանապէս Աստուծոյ Թագաւորութիւնն ալ կը կառավարուի օրէնքներով, որոնք հասանելի են բոլոր քաղաքացիներուն համար առանց կողմնակալութեան: Աստուածաշունչէն մեր կարդացած պատմութիւնները հոն գրուած չեն պարզապէս մեզ զուարճացնելու համար, այլ մեզի ցոյց տալու այդ օրէնքները, որպէսզի զանոնք սորվինք եւ գործածենք: Յիսուս օգտագործեց «Աստուծոյ Թագաւորութիւնը նման է» եզրը շատ անգամներ երբ Ան մարդոց կը բացատրէր, թէ ինչպէս կը գործէր Թագաւորութիւնը: Յիսուս կ'ակնարկէր Թագաւորութեան օրէնքներուն երբ կը պատմէր առակները, տալով տեսանելի պատկերներ օրէնքներուն գործելակերպին մասին կամ բացայայտելով, թէ ինչն է որոշ բան մը կատարուեցաւ: Դարձեալ, որոշ պատճառներով, մարդիկ չեն կրնար

պատկերացնել, թե Աստուծոյ Թագաւորութիւնը ունի օրէնքներ, որոնք կը կառավարեն անոր գործունէութիւնը: Շատեր կը կարծեն, թէ Աստուած ինչ որ կ'ուզէ կ'ընէ, երբ որ ուզէ, քանի որ Ինք Աստուած է: Ես համաձայն եմ, որ Աստուած ունի զօրութիւնը ընելու ինչ որ կ'ուզէ, բայց Ան սահմանափակուած է Իր սեփական օրէնքներով: Գիտեմ, ասիկա կրնայ տարօրինակ թուիլ ձեզի, բայց իմ տեսակէտս բացատրելու համար կարդանք Մարկոսի Աւետարան 6-րդ գլուխէն:

*Յիսուս ըսաւ անոնց. “Մարգարէ մը որեւէ տեղ անպատիւ չէ՛ բայց միայն իր երկրին, իր ազգականներուն եւ իր տանը մէջ”։ Ու չէր կրնար հոն հրաշք ընել, միայն քանի մը հիւանդներու վրայ ձեռք դրաւ ու բժշկեց զանոնք։ Ինք անոնց անհաւատութեանը վրայ կը զարմանար [...]։*

– Մարկոս 6. 4-6

Երբ կը կարդաս այս աստուածաշնչական հատուածը, պէտք է քու ուշադրութիւնդ գրաւեն քանի մը բաներ, որոնք քեզի կու տան Թագաւորութեան գործունէութեան մասին խոր հասկացողութիւն:

## **Ան չէր կրնար հրաշք ընել ...**

Նախ եւ առաջ շատ քրիստոնեաներ նոյնիսկ չեն տեսած այս աստուածաշնչական հատուածը եւ սկիզբէն կը վիճին քու հետդ եթէ ըսես, թէ Աստուածաշունչին մէջ կային կացութիւններ, ուր Յիսուս չէր կրնար բժշկել: Բայց ինչպէս կը տեսնես, Ան չէր կրնար: Երբ հասկնաս, որ Թագաւորութիւնը կը գործէ օրէնքներու համաձայն, այն ատեն կը սկսիս այս պատմութեան ասելի խոր նայիլ: Քրիստոնեաներուն մեծամասնութեան համար սովորական հասկացողութիւնը այն է, որ Յիսուս ընտրեց չբժշկել զիրենք: Ատիկա տրամաբանակ կ'ըլլար եթէ չունենայիր Թագաւորութեան օրինականութեան հասկացողութիւնը (ըմբռնումը): Երբ օրինական իրավասութիւնը չես ըմբռնած եւ գիտես, որ Յիսուս ունէր բժշկելու զօրութիւնը, բայց եւ այնպէս չբժշկեց, դուն բնականաբար կ'եզրակացնես, որ Ան ընտրեց չբժշկել: Ատկէ զատ ինչ կրնար ըլլալ պատճառը:

Թերեւս լսած ես, որ մարդիկ կ'ըսեն. «Աստուած արտօնեց, որ ասիկա պատահի», կամ «Աստուած գիտէ ինչն է մեզի համար լաւագոյնը», կամ «Ամէն բան Աստուծոյ վերահսկողութեան տակ է», կամ այդ ուղղութեամբ բան մը, երբ մէկը կ'ակնարկէ հարցի մը կամ դժուարութեան մը, որուն մէջէն կ'անցնի կամ ինք կամ իր մէկ բարեկամը: Սովորական քրիստոնեան հոս կանգ կ'առնէ: Չգիտնալով Թագաւորութեան օրէնքները եւ այն, ինչ որ իրապէս արգելք էր Յիսուսի, միակ եզրակացութիւնը, որուն կրնան յանգիլ այն է, որ Աստուծոյ կամքը չէր զիրենք բժշկել: Բարեկամ, Աստուածաշունչը չ'ըսեր, որ Ան ընտրեց չբժշկել: Անիկա կ'ըսէ, որ Ան չկրցաւ զիրենք բժշկել իրենց թերահաւատութեան պատճառով: Կ'անդրադառնաս, որ այս պատմութեան մէջ բժշկութեան արգելքը Աստուծոյ փափաքին բացակայութիւնը չէր, այլ կային իրաւասութեան հոգեւոր օրէնքներ, որոնք դադրեցուցին Աստուծոյ զօրութիւնը:

Ուրիշ պատմութիւններու մէջ դուն պիտի անդրադառնաս, որ կային օրինական պատճառներ, թէ ինչո՞ւ Աստուծոյ զօրութիւնը իրաւասութիւն ունէր Իր կամքը կամ փափաքը կացութեան մը մէջ իրագործելու կամ ոչ, ինչպէս այս պատմութեան մէջ: Հետեւաբար շատ կարեւոր է, որ դուն մեզի համար գիտնաս, թէ ինչպէս կը գործեն Թագաւորութեան օրէնքները: Օր մը, երբ երկինքէն հպումի մը պէտք ունենաս, դուն պիտի չուզես, որ երկինքի զօրութիւնը խափանով կամ արգելքի մը հանդիպի, այլ՝ ունենայ ազատութիւնը Աստուծոյ կամքը բերելու քու կեանքէդ ներս:

Ես ճիշդ այդ պատճառով գրեցի այս գիրքը:

Քու ճամբորդութիւնդ իրապէս սկսելու համար խորհուրդ կու տամ, որ նորոգուած միտքով սկսիս եւ անդրադառնաս, որ պէտք է

ձերբազատուիս հին կրօնական պատասխաններէն, զորս ամբողջ կեանքիդ ընթացքին լսած ես, որ ինչն Աստուած կ'ընէ կամ չ'ընէր բան մը: Յուսամ հիմա գիտես, որ պէտք է մերժես այդ ընդհանրական բացատրութիւնը, որ կը տրուի ըսելու համար, թէ օրինակ՝ ինչն փոքրիկ ճոնին մահացաւ փոքր տարիքին. «Աստուած գիտէ ինչն է մեզի համար լաւագոյնը, ամէն բան Անոր իշխանութեան տակ է», եայլն: Ո՛չ, դուն պէտք է ԳԻՏՆԱՍ, թէ ինչն Յիսուս չկրցաւ բժշկել եւ այն օրէնքները, որոնք կը կառավարեն Աստուծոյ զօրութեան հոսանքը երկրի վրայ: Դուն պէտք է գիտնաս «Ինչն Յիսուս չկրցաւ բժշկել» հարցումին պատասխանը: Մարդոց մեծամասնութեան համար նոյնիսկ ըսելս, որ այդ հարցումին պատասխանը կայ, կը գայթակղեցնէ զիրենք: Բայց ես պարզապէս ձեզի կ'ըսեմ այն, ինչ որ Աստուածաշունչը կ'ընէ եւ վերստին կրկնեմ՝ թէ դուք անպայման ՊԷՏՔ է գիտնաք այդ հարցումին պատասխանը:

Պարզ եւ կարճ պատասխան մը տալու համար, թէ Յիսուս ինչն չկրցաւ բժշկել այդ պատմութեան մէջ, այն է, որ դրախտը չունէր օրինական իրաւասութիւն այդ մէկը ընելու: Այդ իրաւասութիւնը երկրի վրայ կը տրուի հաւատքով տղամարդու մը կամ կնոջ մը, որ լիովին համոզուած է երկինքի ըսածներով: Թէեւ մենք երկուքս ալ համաձայն ենք, որ Յիսուս ունէր զօրութիւնը եւ փափաքը մարդիկը բժշկելու, բայց Ան չկրցաւ: Յիսուս Ինք ըսաւ, թէ բժշկել չկարենալը Իր կողմէն տկարութիւն չէր, այլ՝ մարդոց հաւատքի պակասին արդիւնքը: Գրեցէք ատիկա: Ահա՛ հիմնական բանալի՛ մը՝ Հաւատք:

Իմ նախորդ գիրքիս մէջ ես շատ ժամանակ տրամադրեցի բացատրելով, թէ ինչ է հաւատքը, ինչպէս կը գործէ, ինչն մենք պէտք ունինք հաւատքի, ինչն Աստուած հաւատք կը պահանջէ, ինչպէս հաւատք կը ստանանք եւ ինչպէս կը գիտնանք եթէ հաւատքի մէջ ենք: Ըսելը, թէ շատ կարեւոր է, որ հասկնաք Թագաւորութեան այս ամենահիմնական օրէնքը թերասութիւն է: Ատիկա կենաց եւ մահու հարց է:

Վերջերս շրջաբերական նամակ մը ստացայ յայտնի քրիստոնէական առաքելութենէ մը: Դժբախտաբար անոր բովանդակութիւնը քրիստոնեաներուն մեծամասնութեան սովորական հաւատացած բանն է: Ձեզի հետ պիտի բաժնեկցիմ անկէ մաս մը:

Անիկա կը սկսի **Բ. Օրինաց 31. 6**-էն հիանալի խօսքով մը:

*Ուժովցէ՛ք ու քանջ եղէ՛ք, մի՛ վախնաք ու անոնց երեսէն մի՛ զարհուրի՛ք. քանզի ձեր Տէր Աստուածը ինք ձեզի հետ պիտի երթայ. անիկա ձեզ պիտի չթողու ու երեսէ պիտի չձգէ:*

Յետոյ շարունակելով կ'ըսէ...

«Ինչո՞ւ Աստուած չի դադրեցներ ահաբեկչութիւնն ու տառապանքը: Ինչո՞ւ Ան կ'արտօնէ, որ մարդիկ մեռնին: Հարցումները շատ են եւ իրականութեան մէջ մենք պարզապէս բոլոր պատասխանները չենք գիտեր: Մենք չենք գիտեր, թէ ինչո՞ւ Աստուած կ'արտօնէ, որ որոշ բաներ տեղի ունենան: Այս մէկ բանը գիտենք, որ Աստուծոյ սէրը կատարեալ է: Իր ճամբաները մեր ճամբաներէն բարձր են: Մենք պէտք է վստահինք Իր խոստումներուն, որոնք մեզի չեն ըսեր, որ Ինք մեզի պիտի չտայ այն, ինչ որ մեր կարողութենէն վեր է, այլ՝ ինչ որ ալ Ան տայ մեզի, Ան մեզի հետ պիտի ըլլայ ամէն քայլափոխին»:

ՍԽԱ՛Լ, ՍԽԱ՛Լ, ՍԽԱ՛Լ: Իրականութեան մէջ Աստուածաշունչը մեզի կ'ըսէ ճիշդ հակառակը:

*Ձեզի մարդկային փորձութենէն զատ ուրիշ բան չէ պատահած. բայց Աստուած հաւատարիմ է, որ ձեզ պիտի չթողու որ ձեր կարողութենէն աւելի փորձուիք, հապա փորձութեանը հետ ազատութեան միջոց մըն ալ պիտի տայ, որպէսզի կարող ըլլաք համբերել:*

– Ա. Կորնթացիներուն 10. 13

Անոր խոստումները մեզի կու տան բժշկութեան, վերականգնումի, ֆինանսական աճի խոստում եւ շատ աւելին, ոչ միայն դժուարութեան եւ աղէտին տոկալու կարողութիւնը: Կատարեալ սէրը լուծումներ կ'առաջարկէ: Ես կրնամ ուրիշ շատ օրինակներ տալ, բայց դժբախտաբար այս է մարդոց մեծամասնութեան հաւատացածը Աստուծոյ մասին: Ինծի համար անհասկնալի է, թէ ինչպէս մէկը կրնայ մտածել, թէ Աստուած, որուն սէրը կատարեալ է, կրնայ մէկու



մը քաղցկեղ տալ կամ մերժել գայն բժշկել երբ Ինք այդ մէկը ընելու զօրութիւնը ունի: Երբ իրենց վերստին կը հարցուի ասոր մասին, անոնց սովորական պատասխանը այն է, թէ Իր ճամբաները մեր ճամբաները չեն: Կատմկ կ'ընէք: Մեր սէրը կատարեալ չէ եւ ատիկա չենք ըներ մեր զաւակներուն: Ընդհակառակը, Ան Իր ճամբաները շատ պարզ կը դարձնէ Իր Խօսքին մէջ:

Շրջաբերական նամակը կ'ակնարկէր, թէ ինչ որ Ան տայ մեզի, Ան մեզի հետ պիտի ըլլայ մեր ամողջ տառապանքին ընթացքին: Արդեօք Աստուած մեզի վատ բան մը պիտի տայ: Ո՛չ: Երբ Աստուածաշունչը կ'ըսէ, թէ Ան մեզի հետ է եւ երբեք մեզ պիտի չքէ, կը նշանակէ, թէ Աստուած մեր կողքին է՝ Իր խոստումները հաստատելու համար: Բարեկամ, այս վարդապետութիւնը, որ կ'ըսէ, թէ Աստուած մեր թշնամին է, Աստուծմէ չէ: Անիկա չի ներկայացներ այն Աստուածը, որուն ես կը ծառայեմ եւ յուսամ, որ դուն ալ չես հանդուրժեր այդ մէկը: Եթէ քու եկեղեցիդ այս տեսակի աղբ կը սորվեցնէ, պէտք է անմիջապէս հեռանաս այդ տեղէն:

Աստուած սէր է եւ Աստուծոյ Խօսքը կ'ըսէ, թէ սէրը բնաւ յուսախաբեր չ'ըներ (չի ձախողիր): Սակայն ինչ որ կը ձախողի, Աստուծոյ իրաւասութիւնն է, երկրի վրայ Անոր միջամտելու կարողութիւնը, որ յառաջ կու գայ մեր հաւատքէն: Դարձեալ, ասիկա օրինական հարց է, ոչ թէ զգացական կամ որեւէ ուրիշ հարց: Ասիկա պարզապէս օրինական հարց մըն է, զոր պէտք է գիտնաս: Քանի որ մարդը օրինական իշխանութիւն ունի երկրի վրայ, Աստուած չի կրնար ընել այն, ինչ որ կ'ուզէ, ինչպէս նախապէս բաժնեկցեցայ: Քու համաձայնութիւնդ երկինքի հետ եւ քու հաւատքդ անհրաժեշտ են երկինքին տալու իրաւասութիւնը՝ Աստուծոյ զօրութիւնը այդ կացութեան մէջ բերելու եւ արդարութիւն հաստատելու համար: Բարեկամ, **պէտք է** գիտնաս ինչ է հաւատքը եւ ինչո՞ւ ատիկա անհրաժեշտ է Աստուծմէ ստանալու համար:

Եթէ իմ նախորդ գիրքս չես կարդացած, (*«Ձեր Ֆինանսական Յեղափոխութիւնը. Հաւատարմութեան Զօրութիւնը»*), ամփոփ կերպով վերլիշեմ, թէ ինչ է հաւատքը: Թէեւ դուն կրնաս ենթադրել, թէ բոլոր քրիստոնեաները, որոնք հաւատք բառը կը գործածեն,

գիտեն, թե ինչ է հաւատքը, բայց կը սխալիս: Պէտք է պատմութենէն դաս մը սորվինք, որպէսզի հասկնանք Թագաւորութեան վերաբերող կենսական գաղափար մը, որ օրինական իրաւասութեան կը վերաբերի:

Կարդանք **Հոռոմայեցիներուն 4. 18-21**-ը.

*[Աբրահամ] չյուսացուած բանին՝ յուսով հաւաւրաց՝ թէ ինք շար ազգերու հայր պիտի ըլլայ, “ինչպէս ըսուեցաւ ալ, թէ՛ «Քու սերունդդ այսպէս պիտի ըլլայ”»։ Եւ ինք հաւաւրքի մէջ չտրկարացած՝ չնայեցաւ իր մարմնին, որ արդէն մեռածի պէս էր, “որովհետեւ ինք հարիւր տարեկանի չափ էր”։ Ի՞նչ ալ Սառայի արգանդին մեռած ըլլալուն։ Անհաւաւրութիւնով չտարակուսեցաւ Աստուծոյ խոստումին վրայ, հապա հաւաւրքով զօրացած՝ Աստուծոյ փառք տուաւ եւ իր մտքին մէջ հաստատ պահեց թէ՛ ան որ խօսք տուաւ, կարող է ընելու ալ։*

Աբրահամ ճանչցուած է որպէս մեր հաւատքին հայրը: Ան լիովին համոզուած էր, որ Աստուած ունի զօրութիւնը կատարելու այն, ինչ որ խոստացած է: Լիովին համոզուած ըլլալը, Աստուծոյ հետ համաձայն ըլլալը հաւատք կը կոչուի: Առանց այդ համաձայնութեան Աստուած չի կրնար շարժիլ երկրի վրայ: Ուրեմն կրնաս հարցնել. «Ինչու Աստուած պէտք ունի մէկու մը, որպէսզի ընէ բան մը, զոր Իրեն պիտի արտօնէ, որպէսզի բան մը ընէ կամ պիտի արգիլէ Զինք ընելէ այն ինչ, որ Ինք կ'ուզէր ընել: Ինք Աստուած է»: Այդ հարցումին պատասխանելու համար պէտք է վերադառնանք սկիզբին՝ Ադամին օրերուն:

*Քիչ մը վար ըրիր զանհկա հրեշտակներէն. փառքով ու պատուով պսակեցիր զանհկա եւ քու ձեռքերուդ գործերուն վրայ կեցուցիր զանհկա, ամէն բան անոր ուրքերուն տակ հնազանդեցուցիր: Ուստի ամէնքը անոր հնազանդեցուց, անոր չհնազանդող բան չձգեց. բայց հիմա ամէնքը անոր հնազանդած չենք տեսներ:*

– Եբրայեցիներուն 2. 7-8

Այս աստուածաշնչական հատուածը կ'ականարկէ Ադամին եւ Եւային ստեղծագործութեան ժամանակ: Կը խնդրեմ, որ նկատի առնէք, թէ երկրի վրայ չկար բան մը, որ անոնց օրինական իշխանութեան տակ չէր: Ադամ երկրի վրայ դրուեցաւ, որպէսզի իրեն տրուած իշխանութեամբ երկիրը կառավարէ Աստուծոյ Թագաւորութեան համար: Ան տիրեց ամբողջ երկիրին վրայ:

*Աստուած ըսաւ. «Մեր պատկերին ու նմանութեանը պէս մարդ ընենք: Ան ծովու ձուկերուն ու երկնքի թռչուններուն եւ անասուններուն ու բոլոր երկրի ու սողացող բոլոր սողուններուն վրայ թող իշխէ»:*

– Ծննդոց 1. 26

Ուրեմն դարձեալ, կը տեսնենք, որ Ադամ երկրի վրայ տիրեց իրեն տրուած իշխանութեամբ եւ պատկուած էր փառքով (օծութիւնը կամ զօրութիւնը) եւ պատիով (իշխանութեան դիրքը): Չկար բան մը, որ իր իշխանութեան տակ չէր: Իրականութեան մէջ, եթէ կարդաք ստեղծագործութեան պատմութիւնը, Ադամ իրապէս անասուններուն անունները դրաւ, քանի որ անոր իշխանութիւն տրուած էր ամբողջ մոլորակին վրայ: Ինչպէս բոլորս գիտենք, Ադամ կորսնցուց իր իշխանութեան դիրքը եւ Սատանային յանձնեց, որ խաբած էր Եւան եւ փորձութեան ենթարկած էր Ադամը, որպէսզի Աստուծոյ կառավարութեան դէմ դաւաճանութիւն գործէ եւ ան ըրաւ այդ մէկը: Բ. Կորնթացիներուն 4. 4-ին մէջ Պօղոս կը գրէ, որ Ադամին դաւաճանութեան պատճառով Սատանան այս աշխարհի աստուածը դարձաւ: Ան չ'ըսեր, որ ան աստուած մըն է, այլ՝ այս աշխարհի աստուածը, այսինքն՝ ան հոս ունի օրինական հոգեւոր իշխանութիւն: Թէեւ մարդը տակաւին կ'ապրէր երկրի վրայ, բայց հոգեւորապէս մեռած էր Աստուծոյ համար: Մարդուն հոգին, որ ստեղծուած էր Աստուծոյ Հոգիին հետ միութեան մէջ քալելու, հիմա բաժնուած էր Անկէ: Մարդը սկսաւ քալել իր սեփական զգայարանքներուն, իր միտքին, կամքին եւ զգացումներուն համաձայն:

*Սատանան բարձր լեռ մը հանելով զանիկա, աշխարհի բոլոր թագաւորութիւնները ցուցուց անոր վայրկեանի մը մէջ եւ ըսաւ անոր. «Այս ամէն իշխանութիւնը ու անոնց փառքը քեզի կու տամ. Վասնզի ինձի յանձնուած է եւ որո՞ւ որ ուզեմ՝ կու տամ զանիկա, ուստի եթէ դուն իմ առջեւ իյնաս երկրպագութիւն ընես, ամէնքը քուկդ պիտի ըլլան»:*

– Ղուկասի 4. 5-7

Պիտի նկատէք, որ Սատանան կ'ըսէ, թէ այն դիրքը, որ ինք կը գրաւէ երկրի վրայ իրեն «**տրուեցաւ**»: Անշուշտ գիտենք, որ ան, որ ատիկա իրեն տուաւ, սկիզբը ինքն էր անոր օրինական սեփականատէրը, այսինքն՝ Ադամը: Ասիկա կարելոր է: Եթէ, իրականութեան մէջ, Սատանան փորձէր անօրէն կերպով երկիր ներխուժել, անիկա անմիջապէս եւ բռնի կերպով դուրս պիտի նետուէր: Եթէ առնենք օրինակը ոստիկանի մը, որ օգնութիւն կը կանչէ, դուք լաւ պիտի հասկնաք, թէ ինչո՞ւ կ'ըսեմ, որ Սատանան դուրս պիտի վտարուէր: Այն կրծքանշանը, որ ոստիկանը իր վրայ կը կրէ, ցոյց կու տայ, որ Միացեալ Նահանգներու կառավարութեան ամբողջ ուժը եւ զօրութիւնը իր կողքին են՝ անոր խօսքերը հաստատելու համար:

Ադամին կրած պսակը (իր ունեցած դիրքը), Աստուծոյ կառավարութեան կողմէ իշխելը, Աստուծոյ ամբողջ զօրութիւնը կը հրաւիրէր իր պաշտպանութեան համար: Երկրի վրայ Ադամին ունեցած դիրքին շնորհիւ Սատանան երկրի վրայ որեւէ իրաւասութիւն չունէր: Ադամն ու Եւան անոր վրայ կ'իշխէին: Սատանային միակ օրինական միջոցը երկրի վրայ իրաւասութիւն ձեռք բերելու համար Ադամէն կը պահանջէր, որ հանէ իր պսակը իր վրայէն, բան մը, որ Սատանան իշխանութիւն չունէր անոր ստիպելու, որ ընէ: Սատանան գիտէր, որ միակ անձը, որ կրնար այդ պսակը վերցնել Ադամին գլուխէն Ադամ ինքն էր: Այդ պատճառով Սատանան պէտք ունեցաւ դիմելու իր խաբկանքի ծրագիրին: Ինչ էր այդ խաբկանքը: Սատանան ակնարկեց, որ Աստուած վստահելի չէ եւ թէ Ան իրենց բարիքը կամ շահը չի փնտոներ: Ան Եւային համոզեց, որ Աստուծոյ

չհնազանդելուն մէջ շահ մը կար եւ թէ Աստուծոյ օրէնքները զինք եւ Ադամը կը զրկէին շահէ կամ օգուտէ մը:

**Սատանան պէտք էր համոզէր Ադամն ու Եւան, որ Աստուծոյ փոխարէն իրեն հաւատան կամ իրեն հետ համաձայնին եւ համագործակցին:**

Պարզօրէն ասիկա հաւատք է: Հաւատքը կարելի է սահմանել որպէս «լիովին համուզուած ըլլալ» Աստուծոյ ըսածին: Ադամ եւ Եւա լքեցին Աստուծոյ Խօսքը որպէս վստահելի Խօսք եւ անոր փոխարէն Սատանային ըսածին հետ համաձայնեցան: Յետոյ անոնք իրենց հաւատքին համաձայն գործեցին, բան մը, որ անվաւեր դարձուց իրենց ճիշդ դիրքը Աստուծոյ Թագաւորութեան մէջ եւ Սատանային տուաւ օրինական յենակէտ մը մարդոց գործերուն վրայ: Արդիւնքը: Ադամը, որ երկրի վրայ իշխանութիւն ունէր, հոգեւորապէս վտարեց զԱստուած երբ համաձայնեցաւ եւ համագործակցեցաւ Սատանային հետ: Ադամը լքեց իր պսակը, իր իշխանութեան դիրքը՝ Սատանային հետեւելու համար: Այդպիսով ան հիմնականօրէն զԱստուած վտարեց իր կեանքէն: Շատեր կ'ըսեն. «Ո՛չ, ատիկա չի կրնար ըլլալ. Ադամ չէր կրնար զԱստուած վռնտել աշխարհէն: Սակայն ինչ կը վերաբերի մարդոց գործերուն, ան անկասկած ըրաւ այդ մէկը: Եկէ՛ք այդ մէկը փաստեմ ձեզի: Եկէ՛ք անգամ մը եւս կարդանք **Ծննդոց 3. 17-19-ը**: Ադամին մեղանշելէն ետք Աստուած մօտեցաւ անոր եւ ըսաւ.

*[...] Երկիրը քու պատճառաւ անիծեալ ըլլայ, կեանքիդ բոլոր օրերուն մէջ նեղութիւնով ուրես անկէ եւ փուշ ու փափասկ բուսցնէ քեզի եւ դաշտին խոտը ուրես: Երեսիդ քրտինքովը ուրես քու հացդ, մինչեւ գետինը դառնալով, ուրկէ առնուեցար [...]:*

Նկատի առէք, կ'ըսէ. «*Երկիրը քու պատճառաւ անիծեալ ըլլայ*»:

Անիծուիլ պարզօրէն կը նշանակէ Աստուծոյ ներկայութեան եւ օրինութեան բացակայութիւնը: Ադամն էր, որ երկրի վրայ իշխանութիւն ունէր, ինքն էր, որ Աստուծոյ օրինական իրաւասութեան վերջ դրաւ

երկրի վրայ: Հիմնականօրէն, Աստուած կ'ըսէ. «Հէյ, Ադամ, քու պատճառովդ Իմ ձեռքերս կապուած են: Ես չեմ կրնար քեզի օգնել»: Յետոյ Ան Ադամին կ'ըսէ, որ այլեւս անոր պատասխանատուութիւնն էր գոյատեւել ծանր եւ ցաւալի աշխատանքով: Ես ասիկա կը կոչեմ գոյատեւման «երկրի անէծքի համակարգ»-ը: Հոս է, որ մենք բոլորս մեծցած ենք՝ գոյատեւման եւ վախի թագաւորութեան մէջ: Մենք սորված ենք մտահոգուիլ եւ վախը տիրած է մեր միտքերուն վրայ մեր ծնածօրէն: Քիչ ետք ես կ'ուզեմ վերադառնալ այս աստուածաշնչական հատուածին՝ երկրի անէծքի համակարգը ատլի մանրամասնօրէն քննարկելու համար, բայց առ այժմ կ'ուզեմ վստահ ըլլալ, որ դուք կը հասկնաք Սատանան ինչպէս մուտք գործեց երկիր: Դարձեալ կ'ըսեմ, ան երկրի վրայ պէտք էր գտնէր տղամարդ մը կամ կին մը, որ ունէր աստուածատուր իրաւասութիւն երկրի վրայ իրեն համար դուռը բանալու: Ադամ ունէր այդ բանալին եւ Սատանան կրցաւ խաբել Ադամը, որպէսզի այդ դուռը բանայ: Հիմա եկէք անգամ մը եւս կարդանք Եբրայեցիներուն 2. 7-8:

*Քիչ մը վար ըրիր զանիկա հրեշտակներէն. փառքով ու պատուով պսակեցիր զանիկա եւ քու ձեռքերուդ գործերուն վրայ կեցուցիր զանիկա, ամէն բան անոր ոտքերուն տակ հնազանդեցուցիր: Ուստի ամէնքը անոր հնազանդեցուց, անոր չհնազանդող բան չձգեց. բայց հիմա ամէնքը անոր հնազանդած չենք տեսներ:*

– Եբրայեցիներուն 2. 7-8

Նկատի առէք, որ այս աստուածաշնչական հատուածը կ'ըսէ, թէ Աստուած անոր ՉՀՆԱԶԱՆԴՈՂ ԲԱՆ չձգեց: Թէեւ այս աստուածաշնչական հատուածը կը վերաբերի դէպքի մը, որ երկար ժամանակ առաջ պատահած է, անիկա կ'օգտագործէ անգլերէնով “IS” բառը, ներկայ ժամանակին մէջ՝ նկարագրելու համար մարդուն ներկայ վիճակը երկրի վրայ: Թէեւ Ադամին մեղքին պատճառով մարդը կորսնցուց իր հոգեւոր իշխանութիւնը երկրի վրայ, բայց մարդը չկորսնցուց երկրին տիրելու իր օրինական իրաւունքը,

անոր համար է, որ հոս գործածուած է անգլերէնով “is” բառը: Այս օրինական դիրքին պատճռով, որ մարդը ունի երկրի վրայ, եւ Սատանային մարդուն վրայ դրած օրինական հոգեւոր ամրոցին պատճառով, Աստուած չի կրնար երկիր ներխուժել եւ խախտել Իր սեփական Խօսքը, այլապէս Սատանան պիտի բողոքէ, որ այդ մէկը օրէնքի խախտում է:

Աստուած պէտք է գտնէ տղամարդ մը կամ կին մը երկրի վրայ, որ Իրեն հետ պիտի համաձայնի: Այս մէկը կը բանայ հոգեւոր դուռը, որպէսզի Աստուծոյ Թագաւորութիւնը օրինական իրաւասութիւն ունենայ երկրի վրայ: Ճիշդ ինչպէս Սատանան պէտք էր աշխատէր դռնապանին՝ Ադամին միջոցաւ, հիմա Աստուած պէտք է աշխատի տղամարդոց եւ կիներու՝ երկրին դռնապաններուն միջոցաւ՝ երկրի վրայ Թագաւորութեան իրաւասութիւն տալու համար: Երբ քու սիրտդ եւ միտքդ լիովին համոզուած կ'ըլլան երկինքին ըսածներով, ատիկա կը կոչուի հաւատք: Պէտք է հաւատք ըլլայ, որպէսզի Աստուծոյ Թագաւորութիւնը իրաւասութիւն ունենայ երկրի վրայ: Ես հիմա ժամանակ պիտի չտրամադրեմ բացատրելու, թէ ինչպէս կարելի է հաւատք ստանալ կամ ինչպէս գիտնալ եթէ դուն հաւատքի մէջ ես: Այս բոլորին մասին ես խօսած եմ այս շարքին պատկանող իմ առաջին գիրքիս մէջ: Այս քննարկումին նպատակն է, որ դուք գիտնաք, թէ ինչ է հաւատքը եւ ինչն անիկա անհրաժեշտ է երկինքի թագաւորութիւնը երկիր բերելու համար:

Յուսամ հիմա աւելի լաւ հասկցաք, թէ ինչն է Յիսուս «չկրցաւ» բազմաթիւ հրաշքներ ընել Իր ծննդավայրին մէջ՝ հոն գտնուող մարդիկը հաւատք չունէին: Ուրեմն երկինքը օրինական իրաւասութիւն չունէր հոն: Այս քննարկումը պիտի աւարտեմ հիանալի աստուածաշնչական համարով մը, որ ցոյց պիտի տայ այն, ինչ որ կ'ըսեմ: Ամէն մարդ լսած է Հռոմայեցիներուն 10. 10-ին մասին.

*Վասնզի սրտով կը հաւատայ մէկը արդարանալու համար  
ու բերնով կը խոստովանի փրկուելու համար:*

Այս աստուածաշնչական համարը քրիստոնէաներուն կողմէ

Հռոմէական ճամբայ կոչուած աստուածաշնչական չորս համարներու մէկ մասն է, որոնք մեզի ցոյց կու տան, թէ ինչպէս պէտք է փրկուինք: Բայց դուն իրապէս կեցած ու մտածամծ ես այն գործընթացին մասին, որ Հռոմայեցիներուն 10. 10-ն քեզի ցոյց կու տայ: Սրտով է, որ կը հաւատաս կամ կը համաձայնիս երկինքի հետ: Քու սիրտիդ համաձայնութիւնը երկինքի հետ երկինքին երկիր ներխուժելը օրինական կը դարձնէ: Այս աստուածաշնչական համարը կ'ըսէ, թէ երբ երկինքին կը հաւատաս, կ'արդարանաս: Արդարութիւնը օրէնքին կիրառումն է: Ուստի սրտովդ հաւատալը քեզի կու տայ օրինական իրաւունք երկինքի եւ երկրի առջեւ, որպէսզի ունենաս այն, ինչ որ երկինքը կ'ըսէ, որովհետեւ ատիկա երկինքին կու տայ օրինականութիւն երկրի վրայ: Սակայն նկատի առ, որ այս հանգրուանին տակաւին ոչ մէկ բան կը պատահի: Այս համարը ունի երկրորդ մաս մը. «...Ու բերնով կը խոստովանի փրկուելու համար»: Գիտեն, թէ եւ քու սիրտդ կրնայ համաձայն ըլլալ երկինքի հետ, ինչ որ երկինքին ներխուժումը երկիր օրինական կը դարձնէ, սակայն ոչինչ կը պատահի մինչեւ որ դուն՝ որպէս երկրի վրայ իրաւասութիւն ունեցող տղամարդ կամ կին, այդ մէկը արձակես երկրի վրայ: Ինչհի: Որովհետեւ դուն երկրի վրայ իրաւասութիւն ունիս. առանց քեզի երկինքը իրաւասութիւն չունի երկրի վրայ:

*Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, 'Երկրի վրայ ինչ որ կապէք, երկնքի մէջ կապուած պիտի ըլլայ ու երկրի վրայ ինչ որ արձակէք, երկնքի մէջ արձակուած պիտի ըլլայ':*

– Մատթէոս 18. 18

Հիմնականօրէն, այս համարը կ'ըսէ ինչ որ ես քիչ առաջ ըսի: Երկրի վրայ ինչ որ կապէք, երկինքը պիտի հաստատէ զանիկա եւ երկրի վրայ ինչ որ արձակէք, երկինքը պիտի հաստատէ զանիկա: Երկինքը քեզ կը սպասէ եւ չի կրնար շարժիլ մինչեւ որ տղամարդ մը կամ կին մը, որ հաւատքի մէջ է կամ երկինքի հետ համաձայն է, արձակէ այդ իշխանութիւնը երկրի վրայ:

Հասկնալը, թէ ինչպէս պէտք է արձակել երկինքի իշխանութիւնը



եւ զօրութիւնը երկրի վրայ շատ կարեւոր է: Այդ մէկը հասկնալը մեծ տարբերութիւն ըրաւ իմ կեանքիս մէջ եւ հետեւեալ ե-նամակին մէջ, զոր ես ստացայ:

«Բարեւ: Ամուսինս եւ ես կ'ուզենք բաժնեկցիլ մեր հիանալի 'հաւատքի որսորդութեան' պատմութիւնը ձեզի հետ: 2011 թուականին մենք կ'ապրէինք մեր 'երազանքի տան մէջ', բայց մեր եկամուտը հազիւ կը բաւէր մեր ծախսերուն եւ երբեմն մեր վարկային քարտերը կը գործածէինք՝ մթերք գնելու եւ մեր տունը տաքցնելու համար: Մենք կը գոյատեւէինք, բայց չէինք բարգաւաճեր: Ես մեր եկեղեցւոյ պաշտամունքի առաջնորդն էի, բայց մեր հաւատքը կապուած չէր մեր դրամականին հետ: Ես տեսայ ձեր '*Դրամի Հարցը Կարգաւորել*' (*Fixing the Money Thing*) խորագիրով ծրագիրը *Տէյսթար* հեռատեսիլի կայանին վրայ, որ ուշադրութիւնս գրաւեց եւ ես ապսպրեցի '*Դրամի Հարցը Կարգաւորել*' խորագիրով գիրքը, ինչպէս նաեւ '*Ֆինանսական Յեղափոխութիւն*' խորագիրով խտասալիկները (CD): Մենք միշտ մտիկ կ'ընէինք այդ խտասալիկներուն եւ գիրքը իրարու կը կարդայինք:

«Մենք բնաւ գաղափար չունէինք, որ հաւատքի մէջ չէինք: Գիտէինք, որ այս երազանքի տունը պահելու համար մենք պէտք ունինք Թագաւորութեան մէջ դրամի գործածութեան վերաբերեալ պատասխաններու: Մենք 200 ամ. տոլարի սերմ ցանեցինք 'Հաւատքի Կեանք Առաքելութեան' մէջ (ատիկա մեզի համար հաւասար էր 2000 ամ. տոլարի: Այն ատեն ատիկա շատ մեծ գումար էր մեզի համար) եւ Աստուծոյ հետ համաձայնութիւն մը ըրինք, որպէսզի մեզի ցոյց տայ գործի առիթ մը գործի շուկային մէջ, զոր կրնայի տունէն ընել:

«Աստուած մեզի Կոլտընտուտըլ տեսակի շունի ձագեր մեծցնելու գործի գաղափարը տուաւ, զոր կրնայինք ընել մեր տունէն: Մենք գնեցինք երկու Կոլտընտուտըլ շունի ձագեր՝ Պելլան եւ Կրէյսին, զանոնք մեծցուցինք՝ Կոլտընտուտըլ տեսակի շունի ձագեր ծնանելու համար եւ մենք գործակցեցանք Աստուծոյ հետ: Մենք գիտէինք, որ չենք կրնար շան ձագեր ստեղծել: Մենք բուծեցինք երկու շնիկներ եւ 2014 թուականին մենք ունէիք տասներեք շնիկներ, որոնցմէ

իրաքանչիւրը կ'արժէր 1200 ամ. տոլար շուկայի գինով: Այս տարի, 2015-ին, մենք ունինք վաթսուներեք շնիկներ, որոնք ԲՈԼՈՐԸ առողջ են: Մեր շնիկները ծախելով մենք ազատեցանք մեր բոլոր պարտքերէն բացի մեր տան պարտքէն: Հիմա մենք նաեւ ունինք ամբողջութեամբ ֆինանսաւորուած շտապ օգնութեան հիմնադրամ մը:

«Անակնկալօրէն մայրս մեզի հարցուց եթէ կ'ուզէինք իր երկու Կոլտրնտուտը շուները ունենալ՝ բուժանելու համար, քանի որ ինք հանգստեան պիտի կոչուէր: Աստուած մեզ օրհնեց ուրիշ երկու ձրի շնիկներով: Նաեւ Յուլիսին, ամուսինս պաշտօնի բարձրացում ունեցաւ որպէս տեսուչ մեր տեղական երկրորդական վարժարանին մէջ: Մէկ տարուան մէջ մեր եկամուտը կրկնապատկուեցաւ մի քանի հարիւր հազար տոլարի բարձրանալով: ՀԱԻԱՏՔԻ ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆԸ ԱՐԴԻՒՆԱԻՋՏ Է:

Մենք Աստուծոյ Թագաւորութեան օրէնքներուն համաձայն սկսանք քալել: Հիմա մենք կը սերմանենք Թագաւորութեան ամէն տեսակի գործերուն մէջ եւ ամէն Կիրակի առաւօտ, նախքան մեր տեղական եկեղեցիին մէջ երկրպագութիւնը առաջնորդենք, առցանց կ'այցելենք ձեր եկեղեցին: Շնորհակալ ենք, որ մեզի սորվեցուցիք Թագաւորութեան գործելակերպը»:

– Քարլա

Այս նոյն զոյգը այս շաբաթ ինծի լրացուցիչ ե-նամակ մը ուղարկեց:

«Շնորհաւոր Սուրբ Ջատիկ: Ան յարեան: Մենք կ'ուզենք մեր վերջին տեղեկութիւնները բաժնեկցիլ մեր առցանց Հովի Կերիին հետ: Կը խնդրենք, որ իրեն տեղեկացնէք, թէ այս տարի մենք Յիսուսի ծնունդը տօնեցինք Երուսաղէմի մէջ (մեր ծախսերը կանխիկ վճարեցինք): Մենք նաեւ օրհնուեցանք մեր պատանի տղուն՝ Քարթըրին մկրտութեամբ Յորդանան Գետին մէջ եւ երեկոյեան պաշտամունք ըրինք Հիլտնկ Ավստրալիա-խումբին հետ Գալիլիոյ Ծովուն ափին: Ուառն: Շատ շնորհակալ ենք, որ մեր դրամական հարցը լուծեցինք:

Մենք մինչեւ հիմա ունեցած ենք հարիւր քսանմէկ շնիկներ:

Մենք ստիպուեցանք մեր շնիկներուն գինը բարձրացնել 2300 ամ. տուլարի, որովհետեւ սպասման ցանկը շատ երկար էր (շատ մարդիկ կը սպասէին շունիկ գնել): Փառք Աստուծոյ»:

– Քարլա

Ասիկա կատարեալ օրինակ մըն է, թէ Թագաւորութիւնը ինչ կ'ընէ քու կեանքիդ մէջ: Այս շաբաթ, այս ե-նամակը ստանալէս ետք, Քարլային հեռաձայնեցի եւ ան ՇԱ՛Տ խանդավառ էր: Ան ըսաւ, որ այս տարի իրենց տան պարտքը լրի պիտի վճարեն: Եթէ նայիք անոր ուղարկած առաջին նամակին, այդ ժամանակ ան ըսաւ հետեւեալը (մէջբերուած վերը նշուած ե-նամակէն).

«Մեր եկամուտը հազիւ կը բաւէր մեր ծախսերուն եւ երբեմն մեր վարկային քարտերը կը գործածէինք՝ մթերք գնելու եւ մեր տունը տաքցնելու համար: Մենք կը գոյատեւէինք, բայց չէինք բարգաւաճեր»:

Հիմա, միայն քանի մը տարի ետք, անոնք իրենց տան պարտքը լրի պիտի վճարեն: Ահա՛ Թագաւորութիւնը:



ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

# ԹԱԳԱԽՈՐՈՒԹԻՒՆՆ Է ՔՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԴ

Հիմա որ դուք հիմնական հասկացողություն ունիք, թե ինչպես Թագաւորութիւնը կը գործէ օրէնքներով եւ սկզբունքներով, որոնք երբեք չեն փոխուիր, կ'ուզեմ սկսիլ կեդրոնանալ այն օրէնքներուն վրայ, որոնք իրապէս ազդեցութիւն ունին ձեր դրամականին վրայ եւ ի վերջոյ ձեր հանգիստին վրայ:

Բայց նախքան հոն հասնիլս, կ'ուզեմ պարզել, թե ինչնիւ այս գիրքը «Հանգիստին Չօրութիւնը» կոչեցի եւ թե ինչ ըսել կ'ուզեմ *հանգիստ* բառով ֆինանսներու եւ Թագաւորութեան պարունակին մէջ: Չարմանալիօրէն ես չեմ յօրինած այս գաղափարը, թե հանգիստը կապուած է դրամականին, այլ՝ Աստուած:

*Ամբողջացան երկինք ու երկիր եւ անոնց բոլոր զարդերը:  
Եւ Աստուած իր բոլոր գործերը եօթներորդ օրը վնցուց  
ու եօթներորդ օրը հանգստացաւ իր բոլոր գործերէն:  
Եւ Աստուած եօթներորդ օրը օրհնեց ու սրբեց զանիկա.  
վասնզի անոր մէջ հանգստացաւ իր բոլոր գործերէն՝  
որոնք ստեղծագործութեան մէջ կատարած էր:*

– Ծննդոց 2. 1-3

Նախ ասիկա յստակացնեմ. Աստուած եօթներորդ օրը չհանգստացաւ, որովհետեւ յոգնած էր: Աստուած չի յոգնիր: Ան հանգստացաւ, որովհետեւ, ինչպէս հատուածը կ'ըսէ՝ ամէն բան ամբողջացած էր եւ Ան Իր գործերը ասարտած էր: Ան մարդը ստեղծեց ստեղծագործութեան վեցերորդ օրուան վերջաւորութեան, որպէսզի ապրի եօթներորդ օրը: Եօթերորդ օրը չունէր վախի միտք, գոյատեւման մտածմունք, հիւանդութիւն եւ ոչ մէկ ցաւոտ ծննդաբերութիւն կամ քրտինք՝ ապրուստ ապահովելու համար: Այս բոլորին փոխարէն Ադամին մտածումները պիտի ըլլային միայն Աստուծոյ, իր կնոջ, իր պարտականութեան եւ նպատակին վրայ: Ամէն բան, զոր ինք պէտք ունէր իր պարտականութիւնը կատարելու եւ իր կեանքը վարելու համար պատրաստուած եւ տրամադրուած էր. Աստուծոյ ծրագիրը ամբողջացած էր: Մարդիկ այսօր կ'երագեն ունենալ Ադամին ունեցածը՝ հոգերէ զերծ գոյութիւն մը, իրենց փափաքներուն եւ յարաբերութիւններուն վրայ կեդրոնանալու կարողութիւնը առանց մտահոգուելու, որ իրենց ապրուստը ինչպէս պիտի ապահովեն: Դժբախտաբար երբ Ադամ ըմբոստացաւ, կորսնցուց Աստուծոյ նախախնամութիւնը եւ անկէ ի վեր մարդը ստիպուեցաւ (տաժանելի աշխատանք եւ քրտինք) վազել կեանքին վերաբերող բաներուն ետեւէն:

*(Քանզի այդ բոլոր բաները հեթանոսները կը խնդրեն).  
վասնզի ձեր երկնաւոր Հայրը գիտէ՝ թէ այդ բոլոր  
բաները ձեզի պէտք են: Բայց առաջ խնդրեցէք Աստուծոյ  
թագաւորութիւնը եւ անոր արդարութիւնը ու այդ բոլոր  
բաներն ալ ձեզի պիտի տրուին:*

– Մատթէոս 6. 32-33

Ապրուստ ապահովելու ծանրութիւնը ծանր բեռ է եւ կը խեղաթիւրէ մարդուն կեանքի ըմբոնումը: Մարդիկ կ'երագեն հարստութեան հրապոյրին մասին գոյատեւման պահանջած տաժանելի աշխատանքէն ու քրտինքէն ազատելու մասին: Միլիոնատէր ըլլալը

իմաստ ունի միայն երբ ապրուստ ապահովվելու ճնշումը եւ բեռը կը թեթեւցնէ՝ մեզի արտօնելով, որ կեդոնանանք մեր նպատակին եւ պարտականութեան վրայ: Վիճակահանութիւնը շատ սիրուած է, որովհետեւ ապրուստդ կ'ապահովէ առանց աշխատելու եւ երկրին անէծքի ֆինանսական համակարգէն փախուստ մը կու տայ: Մեր ստացած ե-նամակները եւ մեր ֆէյսպուքին (դիմատետրին) վրայ եկած յայտարարութիւնները լեցուն են շուտ հարստանալու ամէն տեսակի հնարքներով: Ուրեմն մեր ֆինանսներու պարունակին մէջ, մենք պէտք է պատասխանենք հարցումի մը. կայ՞ ձեւ մը վերադառնալու այդ եօթերորդ օրուան, ուր ամէն բան ամբողջացած է, չէ վնասուած եւ տրամադրուած է: Պատասխանը մեծ ԱՅՈ՛ մըն է: Այս գիրքին նպատակն է ցոյց տալ, թէ ատիկա ինչպէս կ'իրականանայ՝ հասկնալով Թագաւորութեան օրէնքները, որոնք այդպիսի արդիւնք կու տան: Գիտեմ, ձեր կեանքի փորձառութիւնը կամ նոյնիսկ եկեղեցին եւ քրիստոնեաները կրնան առարկել, որ ըսածս չի կրնար ճիշդ ըլլալ, քանի որ շատ քրիստոնեաներ ընդունած են «աղքատութիւնը սուրբ է» աստուածաբանութիւնը: Սակայն ձեզի կը վստահեցնեմ, որ բոլոր պատասխանները, որոնք անհրաժեշտ են ձեզի՝ բարգաւաճելու ու ձեր պարտականութեան մէջ մնալու եւ ձեր նպատակը յայտնաբերելու համար, կը գտնուին Թագաւորութեան մէջ:

**ԲՈԼՈՐ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ,  
ՈՐՈՆՑ ՊԵՏՔ ՈՒՆԻՍ  
ԲԱՐԳԱՒԱՃԵԼՈՒ ՈՒ ՔՈՒ  
ՊԱՐՏԱՎԱՆՈՒԹԵԱՆԴ  
ՄԷՋ ՄՆԱԼՈՒ ԵՒ  
ՔՈՒ ՆՊԱՏԱԿԴ  
ՅԱՅՏՆԱԲԵՐԵԼՈՒ  
ՀԱՄԱՐ, ԿԸ ԳՏՆՈՒՆ  
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ:**

*Երանի՛ ձեզի աղքատներուդ, վասնզի ձերն է Աստուծոյ  
թագաւորութիւնը:*

– Ղուկասի 6. 20

Աղքատ ըլլալուն պատասխանը Թագաւորութիւնն է: Ասիկա առաջին աստուածաշնչական համարն էր, որուն առաջնորդեց զիս Աստուած երբ սկսաւ ինձի սորվեցնել Թագաւորութեան ֆինանսական օրէնքը: Անշուշտ այս գաղափարը հասկնալու համար պէտք է գիտնաք, թէ ինչ կը նշանակէ թագաւորութիւն հասկացողութիւնը, զոր արդէն ես նշեցի: Կը կարծեմ, թէ պէտք է յստակ հասկացողութիւն ունենաք, թէ իրականութեան մէջ ինչ պատահեցաւ Պարտէզին մէջ երբ Ադամ մեղանչեց: Ուրեմն կ'ուզեմ հիմա արագ վերաքաղ մը ընել:

Սկիզբը Ադամը եւ Եանն բանի մը մասին մտահոգ չէին. հիւանդութեան կամ ապրուստ ապահովելու հարցերը իրենց միտքերը չէին գրաւեր ամէն օր: Ամէն օր անոնք պէտք էր մտածէին միայն իրենց պարտականութեան մասին, որ զԱստուած սիրել ու մէկգմէկ սիրել էր եւ հոգ տանիլ երկրին եւ Պարտէզին, զորս Աստուած իրենց տուաւ: Վախը ամբողջութեամբ բացակայ էր իրենց կեանքէն: Բայց երբ Ադամ դաւաճանութիւն ըրաւ, անշուշտ ամէն բան փոխուեցաւ: Ինչպէս ըսի, Սատանան այս աշխարհի աստուածը դարձաւ, մարդը Աստուծմէ անջատուեցաւ, եւ Աստուած դադրեցաւ օրինական իրաւասութիւն ունենալէն մարդուն կեանքին մէջ: Ադամ ցնցուեցաւ երբ ինքզինք գտաւ նոր կեանքի իրականութեան մը մէջ: Դարձեալ, ահա՛ այն խօսքերը, զորս Աստուած Ադամին ըսաւ անոր մեղանչելէն ետք:

*[...] Երկիրը քու պատճառաւ անիծեալ ըլլայ, կեանքիդ բոլոր օրերուն մէջ նեղութիւնով ուրես անկէ եւ փուշ ու փայտակ բուսցնէ քեզի եւ դաշտին խոտը ուրես: Երեսիդ քրտինքովը ուրես քու հացդ, մինչեւ գետինը դառնալդ, ուրկէ առնուեցար [...]:*

– Ծննդոց 3. 17-19

Հիմա ան ցաւալի աշխատանքը, քրտինքը, վախը եւ գոյատեւման մտայնութիւնը կը զբաղեցնեն Ադամին եւ Եային միտքը: Իրենց



Նպատակը, որ Աստուծոյ իրենց համար ունեցած ծրագիրն էր, հիմա կորսուած է գոյատեւման մրցումին եւ ճակատամարտին մէջ: Ադամին հոյակապ պարտականութիւնը՝ իր նպատակը հիմա խեղդուած է կեանքի հոգերով եւ ապրուստ ապահովելու պէտքով: Ան այլեւս չի տեսներ իր ինքնութիւնը: Միակ նպատակը, զոր ինք կը տեսնէ հիմա, գոյատեւելն է, որ իրմէ կը պահանջէ յարատեւ աշխատանք եւ քրտինք: Այդ օրուընէ մինչեւ այսօր շատ բան չէ փոխուած:

Այսօր, իբրեւ հովիւ, ամենամեծ հարցումը, որ մարդիկ ինծի կը հարցնեն հետեւեալն է. «Ինչ պէտք է ընեմ իմ կեանքովս»: Անոնք այս հարցումը կը հարցնեն, որովհետեւ Ադամին օրերէն ի վեր, երկրի վրայ ապրուստ ապահովելն է նպատակը, որմով մնացած բոլոր բաները կը չափուին: Սովորաբար որոշումները կ'առնուին դրամի հիման վրայ եւ ոչ՝ նպատակի: Դրամը եւ դրամին կարիքը կրնան մարդոց ստիպել, որ աշխատին գործեր, զորս կ'ատեն: Իրականութեան մէջ մարդոց մեծ մասը գաղափար չունի, թէ իրապէս ինք ո՞վ է: Գրեցէք ասիկա. «Մինչեւ զԱստուած չճանչնաս, երբեք պիտի չգիտնաս Անոր ծրագիրը քու կեանքիդ համար: Ան է, որ քեզ ստեղծեց»:

Մարդիկ շատ մեծ փափաք ունին գիտնալու, թէ ո՞վ են իրենք: Աշխարհի մէջ այնպէս կը թուի, թէ անոնք պարզապէս թիւ մըն են, բայց Աստուծոյ համար անոնք շատ յատուկ եւ եզակի ստեղծագործութիւն մըն են այնպիսի ձիրքերով եւ կարողականութեամբ օժտուած, որոնց նմանը ուրիշ ոչ ոք ունի: Բայց որովհետեւ անոնք զԱստուած չեն ճանչնար եւ հետեւաբար իրենք զիրենք չեն ճանչնար, իրենց արժէքը կը փնտռեն սխալ տեղերու մէջ: Անոնք կ'արտօնեն, որ մշակոյթը որոշէ իրենց արժէքը՝ ընդունելով այն, ինչ որ մշակոյթը կ'ըսէ: Սակայն լրատուամիջոցներուն գծած պատկերը եւ մշակոյթին հայելին, բոլորն ալ, կը տարուբերին: Մինչ կը կարծես, թէ դուն մշակոյթին ընդունած չափանիշներուն համաձայն կը շարժիս, շուտով պիտի տեսնես, թէ անոնք փոխուած են եւ դուն արդէն ետեւ մնացած ես:

Կը յիշեմ երբ Փարիզ էինք եւ Տրենտային հետ ճամբան կը

քալելինք: Փարիզը անշուշտ ծանօթ է նորաձեւութեամբ եւ այդ տարուան նորաձեւութիւնները բոլորը մոխրագոյն եւ սեւ էին: Բոլոր խանութներուն ցուցաբեղկերը լեցուն էին միայն մոխրագոյններով եւ սեւերով: Երբ փողոցին երկու ուղղութեամբ նայեցայ, տեսայ հարիւրաւոր մարդիկ կը քալեն: Ես ցնցուեցայ երբ տեսայ, որ գոյնի նշոյլ մը չկար: Ամէն մարդ առանց բացառութեան մոխրագոյն եւ սեւ հագած էր: Հարիւրաւոր մարդիկ կային, որոնք բոլորը իրարու կը նմանէին: Վերջին անգամ երբ մէկը ձեզի ըսաւ, որ իր նախասիրած գոյնը մոխրագոյն է: Բայց այդ օրը զանգուածները վստահ էին, որ իրենց նախասիրած գոյնը մոխրագոյն կամ սեւ է:

Քանի որ ապրուստ ապահովելու ճնշումը շատ մեծ է եւ կ'այլափոխէ մեր ինքնութիւնը կապելով զանիկա որեւէ բանի մը, որ կը կարծենք, թէ մեզի պիտի օգնէ, որպէսզի մեր ինքնութիւնը գտնենք եւ ընդունուած ըլլանք, Տրենտան եւ ես ասացուածք մը յառաջ բերինք, զոր տարիներէ ի վեր կը քարոզենք. «Եթէ դրամին հարցը չլուծես, կոչումդ երբեք պիտի չյայտնաբերես»: Գոյատեւման գերին ըլլալը շատ քիչ ժամանակ կու տայ այլընտրանքներ փնտոելու կամ ստեղծելու: Ճշմարտութիւնը այն է, ինչպէս բաժնեկցեցայ, որ շատ անգամ մարդիկ իրենց որոշումները կը կայացնեն կամ ապրուստ ապահովելուն կամ դրամ դիզելու նպատակին շուրջ: Անոնք իրենց փափաքներէն կը հրաժարին աշխատավարձի մը համար եւ իրենց տեսիլքէն՝ ապրուստ ապահովելու համար: Իրականութիւնը այն է, որ մենք այնքան ճնշուած ենք մեր գոյատեւման մտայնութեամբ՝ քրտնաջան աշխատանքով, որ դադարած ենք երազելէն: Վախը մեր երազները պատանդ կը բռնէ եւ ապրուստի բացակայութիւնը մեր երազները անկարելի կը դարձնէ:

Կը յիշեմ երբ կ'երազէի, որ միայն բաւարար վառելանիւթի դրամ ունենամ՝ տուն հասնելու համար. ո՛ր մնաց որ մտածէի կեանք փոխելու չափ կարելորութիւն ունեցող բանի մը մասին: Այդ օրերուն իմ ռատիոտեղակայանքիս (radar) վրայ մեծ տեսիլքներ չկային: Միայն ամսական վարձքը վճարելը իմ ամբողջ երեւակայութիւնս կը խլէր: Կը խոստովանիմ, որ դժուար է գոյատեւումէն անդին տեսնել

երբ ճնշուած ես ուտելիք ճառելու բեռին տակ կամ կը դիմագրաւես անմիջական ու անյետաձգելի ֆինանսական մտահոգութիւններ:

Երբ Ադամ ձրիօրէն յանձնեց Թագաւորութիւնը, մահուան, վախի, գոյատեւման եւ խուճապի ամբողջ նոր մթնոլորտ մը տիրեց իր կեանքին վրայ: Վստահ բոլորս գիտենք, թէ ինչպէս կ'ըլլայ վախի զգացումը: Ես կը յիշեմ բազմաթիւ պատմութիւններ իմ սեփական կեանքէս, որոնք խուճապով, ամօթով եւ վախով լեցուն էին: Ինը երկար տարիներ տառապեցայ ֆինանսական քաոսի մէջ եւ վերջաւորութեան ունեցայ խուճապի յարձակումներ եւ ընկճուածութեան դեղեր առնելով ապրեցայ: Երկրի անէծքին համակարգին մէջ ապրիլը բոլորս վարժեցուցած է կեանքի նկատմամբ բացասական նայուածք մը ունենալու: Ոմանք ուրիշներէ աւելի լաւ ձեռով կը լուծեն այդ հարցը, բայց առանց Քրիստոսի այս բացասական մտայնութիւնը շարունակ մեզի կ'ըսէ, թէ մենք բաւարարաչափ լաւ չենք:

Բնաւ լսէր էք մէկը կ'ըսէ. «Շատ մի՛ յուսար»: Մեծցած ատենս երբ որեւէ ատեն խանդավառուէի բանով մը, զոր հայրիկս յիմարութիւն կը համարէր, ան կ'ըսէր. «Օ՛ր մը դուն պիտի մեծնաս»: Այդ պատճառով, ընդհանրապէս ես ինծի չէի արտօներ, որ բանի մը մասին երազեմ բացի եթէ այդ մէկը հայրիկիս կողմէ կարեւոր նկատուէր: Կը կարծեմ, թէ հայրիկս վիրաւորուած էր, որովհետեւ ալքոլամոլ ընտանիքի մը մէջ մեծցած էր եւ ինքն ալ իր մեծցած ժամանակ այդ մէկը պէտք էր ընէր:

Անկեղծ ըսած, մենք բոլորս ալ մասնագէտ մտահոգուողներ եղած ենք մեր ծնած օրէն ի վեր: Վախը աշխարհի մէջ խօսուած հասարակաց լեզուն է: Եթէ պահ մը մտածես, «ոչ» բառը խորապէս արմատաւորուած է մեր մէջ մեր ծնած պահէն ի վեր: «Ո՛չ, չես կրնար այդ բանը ունենալ»: «Ո՛չ, տեղը դիւր ատիկա»: «Ո՛չ, չես կրնար հոն երթալ»: «Ո՛չ, այդ մէկը գնելու միջոցը չունիս»: Ի վերջոյ, մենք կը դադրինք «Այո՛» ըսելէն որեւէ բանի, բացի երբեմն զբաղումի մը համար, որպէսզի մեր միտքը թմրի կամ թէթեւնայ եւ չզգանք մեր ներկայ պայմաններուն բեռը, օրինակ՝ շատ ուտելով մեր նախասիրած մէկ կերակուրը, որ մեզի հանգիստ կը զգացնէ:

Ուսումնասիրութեան մը արդիւնքը ցոյց կու տայ, թէ մանուկ մը միջին հաշուով 148,000 անգամէն անելի կը լսէ «ո՛հ» կամ «մի՛» բառերը մեծնալուն ընթացքին եւ միայն քանի մը հազար «այո՛ր»<sup>4</sup>:

Վերջերս ես վարեցի մեր տարեկան Մատակարարութեան համագումարը եւ բեմին վրայ դրի 2017 թուականի «Ֆեռարի» ինքնաշարժ մը, որ անշուշտ հիանալի է: Ինքնաշարժին տէրը իմ եկեղեցիս կը յաճախէ եւ կանխիկ վճարած է այդ ինքնաշարժին գինը, որ մօտաւորապէս 400,000 ամ. տոլար էր: Երբ ներկաները բոլորը ներս մտան, հիացած կը նայէին այդ ինքնաշարժին, բոլորը կը գննէին զանիկա եւ կ'ուզէին անելի մօտէն դիտել: Թէեւ բոլորը ինքնաշարժով հիացած էին, բայց զանիկա բեմին վրայ դնելուս նպատակը նիւթական նպատակներու վրայ հիմնուած ապրելակերպ մը ներշնչել չէր, հապա իրենց դաս մը սորվեցնել էր: Բոլոր մարդիկը հաւաքուեցան ինքնաշարժին շուրջ եւ բոլորն ալ կ'ըսէին, թէ շատ պիտի ուզէին քշել այդ ինքնաշարժը:

Ես գիտէի, որ այդ «ո՛հ» լսելու մարզումը, զոր ստացած էին ծանր աշխատանքի եւ քրտինք թափելու երկրի անէծքի համակարգին մէջ, ենթագիտակցաբար կը գոռար. «Ո՛Չ, դուն երբեք այդպիսի ինքնաշարժ մը պիտի չունենաս: Ո՛՛հ, դուն երբեք ատիկա գնելու նիւթական կարողութիւնը պիտի չունենաս. նոյնիսկ մի՛ մտածեր այդ մասին»: Իրենց «Ո՛Չ» լսելու մարզումին պատճառով, որ մենք բոլորս ստացած ենք, ներկաներէն շատերը նոյնիսկ իրենց միտքէն չէին անցուցած «Ֆեռարի» մը ունենալ, որովհետեւ «ո՛հ»-ի մտայնութիւնը չէր կրնար այդ մէկը պատկերացնել կամ ընդունիլ: Սակայն եթէ ես շարունակ ամէն ժամ փոխէի ինքնաշարժները, սկսելով սուղէն եւ հասնելով մինչեւ ամէնէն աժանը, վերջաւորութեան բեմին վրայ պիտի գտնուէր ինքնաշարժ մը, որուն համար պիտի ըսէին. «Ես կը սիրեմ այդ ինքնաշարժը. պէտք է գնեմ զանիկա»:

Ինչ էր տարբերութիւնը: Այդ մէկը կախում ունէր իրենց անծին, կարողականութեան եւ ինքնաշարժին գինին հանդէպ ունեցած

---

4 «Դառնալ «Այո՛ր» Ըսող Մայրիկ» “Becoming a Yes Mom,” <http://www.babyzone.com>.

իրենց պատկերացումն: Այո, հոն կրնային գտնուիլ քանի մը մարդիկ, որոնք իրենք իրենց ըսած պիտի ըլլային. «Օր մը այդ ինքնաշարժը իմս պիտի ըլլայ», կամ թերեւս կային մարդիկ, որոնք դրամ ունէին եւ տարբեր ձեւով կը նայէին ինքնաշարժին: Բայց ես վստահ եմ, որ ամբոխներուն համար այդպիսի ինքնաշարժ մը ունենալը նոյնիսկ իրենց միտքէն չէր անցներ: Այդ միլիոնատէրը, որ կանխիկ վճարած է այդ ինքնաշարժին գինը, իրականութեան մէջ ունի վեց «ֆեռարի»: Իր մտայնութեամբ ատիկա պարզապէս շատ լաւ ինքնաշարժ մըն է: Երբ տեսաւ այդ ինքնաշարժը, ան պատկերացուց, որ ինք պիտի տիրանար այդ ինքնաշարժին եւ սկսաւ այդ ինքնաշարժը Իտալիայէն ապսպրելու եւ նաեւ Միացեալ Նահանգներու մէջ գտնուող իր տունը փոխադրելու գործընթացին: Իրեն համար դժուար չէր իր տեսիլքին համաձայն քայլ առնելը, որովհետեւ ան իր ապրուստը ապահոված էր: Ահա հանգիստին մէկ կարեւոր բանալին՝ ապրուստ ապահովելը տեսիլքին օգուտին համար է:

## **Հիմնական Բանալի՝**

## **Ապրուստ Ապահովելը Տեսիլքին Օգուտին**

### **համար է:**

Առանց ապրուստ ապահոված ըլլալու, տեսիլք չ'ըլլար. միայն գոյատեւում կ'ըլլայ: Աշխարհի աղքատութեան անէծքի համակարգը գողցեր է մեր երազներն ու ապագան: Գիտեմ, որ «ֆեռարի»-ն ծայրայեղ օրինակ մըն էր, բայց անիկա շեշտեց իմ կէտս: Հոն գտնուող մարդիկը նոյնիսկ իրենք իրենց չէին արտօներ, որ այդպիսի ինքնաշարժ մը ունենալ երազեն, որովհետեւ ատիկա անհասանելի կը համարէին: Նոյնիսկ եթէ պահ մը իրենք իրենց արտօնէին, որ այդ մէկը ունենալու մասին երազեն, այդ մարգումը, զոր ստացած են երկրի անէծքի համակարգին մէջ, իրենց պիտի պոռար. «Ինչ դրամի մսխում»: Բայց երեւակայէ, որ քսանհինգ միլիառ տոլար կանխիկ դրամ ունենայիր քու վճարագրի հաշիւիդ մէջ (ես պարզապէս կ'ուզեմ կէտ մը շեշտել): Այդ ինքնաշարժը այնքան աժան պիտի թուէր քեզի,

որ պիտի գնէիր զանիկա՝ պարզապէս զանիկա շաբաթավերջերուն գործածելու համար: Այդ ամէնը տեսակէտէր կախեալ է եւ քանի որ Աստուծոյ Խօսքը կ'ըսէ, թէ Աստուծոյ բոլոր խոստումները «Այո» եւ «Ամէն» են (թող այդպէս ըլլայ), քու տեսակէտդ պէտք է փոխուի, որպէսզի մտածես այնպէս, ինչպէս Աստուած կը մտածէ:

*Քանզի որչափ որ Աստուծոյ խոստումները կան՝ իր [Քրիստոսի] մէջ «Այո» են եւ իր մէջ «Ամէն» են Աստուծոյ փառքին համար մեր ձեռքով:*

– Բ. Կորնթացիներուն 1. 20

Ըստ բառարանին, անգլերէն «փըրսփեքթիվ» կամ տեսակէտ բառին սահմանումն է՝ բանի մը նկատմամբ յատուկ դիրք մը ունենալ կամ բան մը որոշ ձեւով գնահատել, տեսանկիւն, վերաբերում. չափանիշներ կամ արժէքներ, որոնց համաձայն կարծիքներ կը կազմուին, կամ մեկնաբանութիւն: Հիմնականօրէն անգլերէն «փըրսփեքթիվ» բառը կը նշանակէ՝ բանի մը մասին ինչպէս կը մտածես:

Կ'ուզեմ այս նիւթին մասին մտածես: Ազամը իշխան էր նախքան Սատանային տեղի տալը (անձնատուր ըլլալը): Ուստի եթէ զինք տեսնէիր իր իյնալէն ետք, պիտի տեսնէիր աղքատացած մարդ մը՝ խանգարուած ընտանիքով (անոր որդին՝ Կայէնը սպաննեց իր եղբայրը՝ Աբելը) եւ ան բոլորովին անկարելի մէկը պիտի թուէր ձեզի: Բայց այն, ինչ որ չտեսար այն է, որ ան թագաւորական արին ունէր իր երակներուն մէջ: Թէեւ զինք այդ կարողութեամբ չտեսար, իրականութեան մէջ ան ստեղծուած էր՝ կեանքի մէջ իշխելու եւ թագաւորելու համար: Նոյն ճշմարտութիւնը նաեւ կը վերաբերի քեզի: Դուն չես կրնար դուն քեզի նայիլ քու բնակութեան վայրիդ, քու ունեցածիդ եւ քու ներկայ պայմաններուդ հիման վրայ եւ այդպիսով կարծիք կազմել քու կարողականութեանդ մասին: Դուն պէտք է նայիս այն կարողականութեան, որմով դուն ստեղծուեցար:

Կը յիշեմ երբ ծանր պայմաններէ կ'անցնէի եւ մեծ հարցեր կը

դիմագրաւէի, որոնք ինձմէ մեծ կը թուէին: Պէտք էր առնէի կարգ մը որոշումներ, որոնք շատ ակտիւ մեծ գումար կը պահանջէին ինձմէ քան ինչ որ ունէի: Կը զգայի, թէ գիտեմ, թէ Աստուած ինձի ինչ կը թելադրէ, որ ես ընեմ, բայց տակաւին քիչ մը երկչոտ էի անմիջապէս այդ քայլը առնելու:

Այն ատեն Աստուած ինձի երազ մը տուաւ: Ես ձիու մը վրայ էի բլուրի մը գագաթին: Ձեռքիս սուր մը ունէի: Իմ տակս, բլուրին ստորոտը, կային հարիւրաւոր, եթէ ոչ հազարաւոր

**ՔՈՒ ՏԵՍԱԿԵՏԴ ՊԷՏՔ  
Է ՓՈԽՈՒԻ, ՈՐՊԵՍՁԻ  
ՄՏԱԾԵՍ ԱՅՆՊԵՍ  
ԻՆՉՊԵՍ ԱՍՏՈՒԱԾ ԿԸ  
ՄՏԱԾԷ:**

թշնամի զինուորներ ձիրերու վրայ, որոնք իրենց սուրերը ինձի դէմ բարձրացուցած էին: Ես բոլորվի մինակ էի այդ բլուրին լանջին եւ անշուշտ թշնամին թիով մեծապէս կը գերազանցէր զիս: Երագիս մէջ ձայն մը ինձի այս խօսքերը ըսաւ. «Դուն քեզ մի թերագնահատեր, Կէրի»: Այդ խօսքին վրայ, ես բարձրացուցի իմ սուրս եւ սկսայ ձիուս վրայ բլուրն ի վար արշաւել դէպի թշնամին, որ տեսնելով իմ յարձակումս ինքն ալ իր սուրը բարձրացուցած սկսաւ բլուրն ի վեր իմ վրաս յարձակիլ: Մինչ կ'արշաւէի դէպի թշնամին, բարձրաձայն աղաղակեցի. «ԹՈՐ»:

Երբ արթնցայ, գիտցայ, թէ Տէրը ինձի հետ կը խօսէր եւ կը քաջալերէր զիս, բայց չէի գիտեր, թէ «թոր» բառը ինչ կը նշանակէր: Իմ եկեղեցիս յաճախող մարդ մը կայ, որ երեսուն տարի հովութիւն ըրած է եւ շատ լեզուներ սորված է: Իրեն հարցուցի եթէ գիտէր այդ բառին իմաստը եւ ըսաւ, որ պիտի ստուգէր: Յաջորդ օրը ան ինձի հեռաձայնեց եւ ըսաւ, որ «թոր» բառը որոտումի որդի կը նշանակէ: Շնորհակալութիւն յայտնեցի իրեն եւ Տիրոջ ինձի ըսածով հիացած էի: Թշնամիին համար իմ ձայնս որոտումի ձայնին պէս է: Բացի եթէ ես Սատանային ըսեմ որքան տկար եմ, երբ խօսիմ, իմ ձայնս որոտումի (զօրութեան) պէս է իրեն համար:

2010-ի մեր առաջին «Մատակարարութիւն» Համագումարին

ընթացքին, մինչ կը քարոզէի, այս պատմութիւնը պատմեցի: Երբ պատմութիւնը պատմեցի, վերջաւորութեան պատմեցի այն, ինչ որ Տէրը ինծի ըսաւ երազին մէջ. «Երբ թշնամին քու գալո՞ւ տեսնէ, Կէրի՛, քու ձայնդ որոտումի պէս կը հնչէ իրեն համար»: Այն պահուն, որ ըսի. «Որոտումի պէս կը հնչէ», զօրատր որոտումի ձայն մը լեցուց օդը: Անծրեւ չկար, անկէ առաջ որոտում չէր եղած եւ ատիկա միակ որոտումի ձայնն էր, որ լսուեցաւ ամբողջ գիշերը: Ներկաները, որ հոն կը գտնուէին այդ գիշեր, ցնցուեցան: Բայց ինձմէ ուրախը չկար, որովհետեւ գիտէի, որ Աստուած իմ ըսածիս Իր «ԱՄԷՆ»-ը կու տար, որովհետեւ ատիկա Իր բոլոր զաւակներուն կը վերաբերէր: Մինչ այդ այդ գիշեր հեռատեսիլի լուսանկարչական գործիքները վառած էին եւ եթէ կ'ուզես տեսնել այդ մէկը, կրնաս այցելել՝ <https://youtu.be/rtx1XYJGIAg>:

Ուրեմն ահա գաղափար մը, զոր պէտք է հասկնաս:

### **Ստրուկները մե՛ծ երազներ չեն երազեր:**

Ինչի՞ մասին կ'երազեն ստրուկները: Կանգ առնելու մասին: Անոնք կ'երազեն ժամը 5:00-ին գործէն կենալու մասին. օրուան երկրորդ կէսին շարունակ կը նային իրենց ժամացոյցներուն ուզելով կանգ առնել եւ գործէն արձակուիլ: Անոնք կ'երազեն արձակուրդի երթալու, հանգստեան կոչուելու եւ դրամ ունենալու մասին, որպէսզի դադրին աշխատելէ: Ստրուկները կ'երազեն կանգ առնել, ոչ՝ ասելի գործ ստեղծել: Ստրուկական մտայնութիւնը կամ տեսակէտը գործ չի յօրիներ կամ ստեղծեր. անիկա աշխատանքէն դուրս գալու ելք մը կը փնտռէ: Ստրուկը արդէն շատ ծանրաբեռնուած է եւ չի տեսներ այն կարողականութիւնը, որ իր կեանքին մէջ է, բայց չ'իրագործուիր:

Գլուխ ըլլալու համար եւ ոչ թէ՛ պոչ, քու մտայնութիւնդ պէտք է փոխուի ստրուկի մտայնութենէն սեփականատիրոջ եւ ստեղծագործի մտայնութեան: Պէտք է վերստին սկսիս երազել: Պէտք է քու ինքնապատկերացումդ անդին նայիս, որովհետեւ թէեւ դուն կրնաս քու աչքիդ տկար թուիլ, բայց Սատանային համար քու ձայնդ որոտումի պէս կը հնչէ: Դուն թագաւորական արին ունիս



քու արեան շրջագայութեանդ մէջ եւ պարզապէս անոր համաձայն պէտք է մտածես ու գործես:

Ընկեր մը ունիմ, որ բազմամիլիոնատէր է: Ան ունի բազմաթիւ գեղեցիկ տուներ՝ բոլորը ովկիանոսի կամ լիճերու ափին: Օր մը, երբ իրեն այցելութեան գացի, կը քալէինք նաւահանգիստը նաւերուն ընդմէջէն: Ամէն անգամ որ նաւի մը քովէն կ'անցնէինք, անոր տիրոջ անունը կ'ըսէր ինծի: Ձեզի օրինակ մը պիտի տամ ցոյց տալու համար, թէ ինչպէս էր իր խօսակցութիւնը, բայց անձերուն անունները պիտի հնարեմ, որովհետեւ անունները չեմ յիշեր: Ուրեմն ընկերոջս խօսակցութիւնը այսպէս էր. «Այս նաւը կը պատկանի Պիլի Սմիթին, որ սեփականատէրն է Օհայօ Մետիքըլ Սըրվիսըզ հաստատութեան: Այս յաջորդ նաւը կը պատկանի Ճոն Ռոճըրզին, որ սեփականատէրն է Ռոճըրզ Էնտ Ռոճըրզ իրաւաբանական ընկերութեան: Այս յաջորդ նաւը կը պատկանի Ռալֆ Թայտուէլին, որ այդ Հայ Պողոտային վրայ գտնուող գեղեցիկ կօշիկի խանութին սեփականատէրն է:

Մինչ կը քալէինք նաւերու շարքին քովէն եւ մօտաւորապէս քսան նաւերու քովէն անցնելէ ետք, անդրադարձայ, որ անոնցմէ իւրաքանչիւրը կը պատկանէր գործատիրոջ մը: Նաւերէն ոչ մէկը կը պատկանէր սովորական մարդու մը, որ առաւօտեան ժամը իննէն մինչեւ երեկոյեան ժամը հինգը որպէս գործաւոր կ'աշխատէր տեղական պաղպաղակի կրպակին մէջ: Ես գործաւոր ըլլալուն դէմ չեմ, գոնէ ընդհանրապէս: Ես պարզապէս ձեզի օրինակ մը կու տամ, թէ ինչպիսի մարդիկ են հարստութիւն ունեցող մարդիկը:

Խնդրեմ ուշադիր ըլլաք իմ ըսածիս: Խօսքս իրենց ունեցած դրամին չի վերաբերիր, այլ՝ իրենց մտայնութեան: Սայլը ճիէն առաջ մի՛ գնէք (ձեր գործերը սխալ հերթականութեամբ մի՛ ընէք): Մարդոց մեծամասնութիւնը կ'ըսէ. «Երանի՛ այդքան դրամ ունենայի»: Մինչ անոնք պէտք է ըսեն. «Երանի՛ իրենց պէս մտածէի»: Անոնք կեանքին եւ իրենց անձին նկատմամբ տարբեր տեսակէտ ունին:

Ընտանիքներուն մեծամասնութեան եկամուտը երբեք չի հասնիր այն աստիճանին, որ բարձր եկամուտ կը համարուի: Ներկայի

ուսումնասիրութիւն մը կ'ըսէ, թէ Ամերիկայի գործատրներուն յիսունմէկ տոկոսը տարեկան երեսուն հազար տոլարէն պակաս կը շահի<sup>5</sup>: Մեր ժողովուրդին կէսէն անելին տարեկան երեսուն հազար տոլարէն պակաս կը շահի: Եթէ քսան տարեկանի շուրջ է տարիքդ եւ տակաւին նոր գործի ասպարէզ կը նետուիս կամ դիրքի մը մէջ ես, որովհետեւ իսկապէս կ'ուզես հոն ըլլալ եւ դրամը քեզի համար առաջնահերթութիւն մը չէ, այդ պարագային աստիկա ընդունելի է, բայց գիտեմ, որ աստիկա մեր ազգին անելի քան կէսին պարագան չէ: Գիտեմ, որ անոնք անելի դրամի պէտք ունին: Վստահեցէք ինծի, ես հազարաւոր տուներ մտած եմ իմ երեսունվեց տարուան ֆինանսական ծառայութիւններու գործիս ընթացքին եւ այս մէկը փորձառաբար լաւ գիտեմ:

Ուրեմն ինչո՞ւ անելի շատ եկամուտ չունին: Նախքան սկսիք գոռայ, թէ ինչքան անարդար է կեանքը կամ ինչպէս դուք զոհ էք կամ ուրիշ անհեթեթութիւն մը, կ'ուզեմ նշել, թէ աստիկա երկու պատճառ ունի: Առաջին՝ անոնք երկրի աղքատութեան անէծքի համակարգին մէջ բանտարկուած են եւ Աստուծոյ Թագաւորութենէն եւ Անոր մատակարարութեան սկզբունքներէն անտեղեակ են: Երկրորդ՝ անոնք նեխած ու ժխտական մտածողութիւն ունին, նաեւ որովհետեւ երկրի անէծքի մարզումէն անցած են եւ որովհետեւ անոնք ելքի ճամբայ չեն տեսներ, թէ եւ կրնայ ելքը շատ բացայայտ ըլլալ: Հիմնականօրէն ստրուկները ստրուկի մտայնութիւն ունին, ինչպէս նախապէս ըսի: Անոնք չեն կրնար առիթ մը տեսնել երբ հանգիստ կը փնտռեն: Եկէք ընդունինք, որ առանց իրական պատասխաններու, մարդիկ կը յուսահատին:

Ձեզի օրինակ մը տամ, զոր իմ դասախօսութիւններուս մէջ կը գործածեմ: Ենթադրենք, որ ես կրնայի ձեր բոլոր դրամական

---

5 Մայքըլ Մնայտըր, «Յետութիւն Միջին Խաւ. Ամերիկացի Գործատրներուն Յիսունմէկ Տոկոսը Տարեկան Երեսուն Հազար Տոլարէն Պակաս կը Շահի», «Ամերիկեան Երագին Վերջը», Ուաշինկթընը Պոլկ, Հոկտեմբեր 21, 2015, <http://www.washingtonsblog.com/2015/10/goodbye-middle-class-51-percent-of-all-american-workers-make-less-than-30000-dollars-a-year.html>

հարցերը լուծել մէկ դիւրին նախադասութեամբ: Ձեր մատիտը եւ թուղթը պատրաստեցէք, որովհետեւ ձեզի կ'երաշխաւորեմ, որ ասիկա ձեր պատասխանը պիտի ըլլայ: Պատրաստ էք: Լաւ, հետեւեալն է՝ այս տարի հինգ միլիոն տոլարի զուտ եկամուտ ունենալ: Երբ ասիկա բեմէն կ'ըսեմ, ամէն մարդ կը սկսի խնդալ: Բայց ինչո՞ւ կը խնդան: Որովհետեւ չեն կրնար պատկերացնել, որ այդքան գումար շահին, ոչ ալ կը կարծեն, թէ տարեկան հինգ միլիոն տոլար զուտ եկամուտ շահիլը հնարաւոր է:

Յետոյ իրենց կ'ըսեմ, որ իրենք երբեք պիտի չունենան այն, ինչ որ չեն կրնար պատկերացնել: Յետոյ կը կրկնեմ վարժութիւնը, բայց այս անգամ շարունակ պակսեցնելով գումարը՝ տարեկան երկու հարիւր հազար տոլար, հարիւր հազար տոլար, եօթանասուն հազար տոլար, կամ քառասուն հազար տոլար: Վերջաւորութեան, իրենց կ'ըսեմ. «Ես պիտի հասնիմ գումարի մը, որուն համար պիտի ըսէք. “Լաւ, դիւրին է: Կրնամ ասիկա ընել»:

Յետոյ ուրիշ պատմութիւն մը կը պատմեմ իրենց: Ենթադրենք, որ ես հարուստ գործարար մըն եմ եւ ապրանքներ արտածելու գործով կը զբաղիմ: Կ'ուզեմ գնդակներ ուղարկել Չինաստան, եւ օգնութեան պէտք ունիմ՝ զանոնք տուփերու մէջ դնելու համար, որպէսզի ուղարկեմ: Իրենց կ'ըսեմ, թէ իւրաքանչիւր գնդակի համար, զոր տուփի մէջ կը դնեն, հինգ հարիւր տոլար պիտի վճարեմ: Ենթադրենք, թէ անոնք օրական երկու հարիւր գնդակ կրնան տուփերու մէջ տեղաւորել, որուն համար պիտի շահին օրական հարիւր հազար տոլար: Նաեւ կ'ուզեմ իրենց առաջարկել մէկ տարուան պայմանագիր մը՝ նոյն գինով գնդակները տուփերու մէջ տեղաւորել: Եթէ հիմա իրենց ըսէի, որ իրենց պատասխանը հինգ միլիոն տոլար զուտ եկամուտ ապահովել էր 12 ամսուան մէջ, ինչ պիտի ըլլար իրենց պատասխանը: «Դիւրին է, հարց չէ, այդ արագութեամբ, դիւրութեամբ կրնաս հինգ միլիոն տոլար ապահովել»:

Ինչ էր տարբերութիւնը: Պարզապէս ծրագիրը: Ծրագիր ունենալը շատ կարեւոր է: Քեզ ստեղծող Աստուածը գիտէ այդ

ծրագիրը եւ դուն պարզապէս պէտք է լսես զանիկա: Այս է Աստուծոյ Թագաւորութեան ձեւը: Երբ Աստուած ինծի այդ երազը տուաւ՝ այդ գործը սկսելու համար եւ անկէ ետք ինծի ցոյց տուաւ ինչպէս այդ մէկը ընել, տակաւին իմ եկամուտս չէր փոխուած, բայց ես մէջէս կը պոռայի. «Ասիկա դիրիին է: Իմ դրամի հարցերս վերջացան. ես ծրագիրը ունիմ»:

*Քանզի ձեզի համար ծրագիրս գիտեմ, կ'ըսէ Տէրը, ծրագիր մը բարօրութեան եւ ո՛չ չարիքի, ձեզի ապագայ մը եւ յոյս մը տրալու:*

– Երեմեայ 29. 11

Աստուած քեզ բարգաւաճեցնելու ծրագիրներ ունի: Երբ կը յայտնաբերես, թէ Աստուած քու բարգաւաճմանդ համար ծրագիր ունի, պայքարին կէտը արդէն վերջացած է: Մտիկ ըրէ՛, դրամին հարցը լուծելը այդքան ալ բարդ չէ: Ապրուստ ապահովելը տեսիլքին համար է: Ասիկա իրապէս շատ պարզ է: Մթերքին բացակայութեան պատասխանը մթերք ունենալն է: Աւելի մեծ տան մը կարիքին պատասխանը ավելի մեծ տունն է: Վստահելի ինքնաշարժ մը ունենալուն պատասխանը վստահելի ինքնաշարժ ունենալն է:

**ՈՐՊԷՍ  
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ  
ՔԱՂԱՔԱՅԻ, ԴՈՒՆ  
ՈՒՆԻՍ ՕՐԻՆԱԿԱՆ  
ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐ ԵՒ ԱՄԷՆ  
ՕՐԷՆՔ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔ  
ՀԻՄԱ ՀԱՍԱՆԵԼԻ Է ՔԵԶԻ  
ՀԱՄԱՐ:**

Գիտեմ, որ շփոթեցուցիչ ձեւով կը խօսիմ, բայց տարիներ շարունակ ես քշած եմ կոտորուած ինքնաշարժ մը: Մէկ մղոն հեռուէն կրնայիք տեսնել իմ գալս, որովհետեւ ուր որ երթայի, ինքնաշարժիս ետեւէն մեծ ծուխ կ'ելլէր: Գիտեմ որքան ճնշիչ կրնան ըլլալ ինքնաշարժի

հարցերը երբ կ'ուզես տեղ մը հասնիլ: Նաեւ գիտեմ, թէ ինչ զգացում է ինքնաշարժի ընկերութիւն մը մտնել եւ նոր ինքնաշարժի մը գինը կանխիկ վճարելը: Գիտցի՛ր ինչ: Այլեւս ոչ մէկ ճնշում, ոչ

մէկ մտահոգութիւն: Ինչո՞ւ: Որովհետեւ պէտքս լրացած է եւ ես խաղաղութիւն ունիմ: Կրնամ կեդրոնանալ իմ բուն ընելիքիս վրայ փոխանակ ինքաշարժի մը հարցը լուծեմ:

Իրականութեան մէջ, մարդոց մեծամասնութիւնը իսկական դրամական հարցեր ունի այն աստիճան, որ անոնք իրենց կեանքին մեծ մասը ճնշումի տակ կ'ապրին: Անոնք թերեւս այնքան երկար ժամեր կ'աշխատին՝ պարզապէս գոյատեւելու համար, որ կեանք չունին: Բարեկամ, ասիկա Աստուծոյ կամքը չէ քու կեանքիդ համար:

Ինչպէս նախապէս ըսի, մարդիկ իրենց երազներէն եւ իրենց սիրած բաներէն կը հրաժարին՝ ամսական եկամուտ մը ունենալու համար, աշխատելով գործեր, զորս կ'ատեն: Ստրուկները ընդհանրապէս շատ ուրախ մարդիկ չեն: Դժբախտաբար, մարդիկ այսպիսի պայմաններու մէջ կ'ապրին, դժգոհ իրենց կեանքի պայմաններէն, զգուած եւ յուսահատ: Բայց իրականութեան մէջ, անոնք միայն տեսակէտի փոփոխութեան պէտք ունին՝ ազատագրուելու համար կամ, ինչպէս ըսի, ծրագիր մը ունենալու համար:

Անձնական օրինակ մը տամ ձեզի: Ձեզմէ շատեր գիտեն, թէ ես կը սիրեմ որսորդութիւն ընել ու ձուկ որսալ, հեծանիւ քշել եւ քայլարշաւ ընել, որեւէ զբաղում, որ դուրսը (բացօդեայ) կ'ընես: Ես մեծցած եմ Օհայոյի մէջ՝ գիւղատնտեսութեամբ զբաղող փոքր համայնքի մը մէջ, որ յայտնի է Փլէյն Թաունշիփ անունով: Փլէյն Թաունշիփ կը կոչուէր, որովհետեւ, ինչպէս կրնաք պատկերացնել, անիկա տափակ էր: Անշուշտ այդ մէկը լաւ բան էր հողագործներուն համար, բայց շատ գրաւիչ բնավայր մը չէր: Ես բաժանորդագրուած էի բոլոր որսորդութեան եւ ձկնորսութեան ամսաթերթերուն՝ *Առփտոր Լայֆ*, *Սփորթը Աֆիլը*, *Ֆիլը Էնը Սթրիմ*, եւ ուրիշներ: Կը կարդայի հիանալի պատմութիւններ ձկնորսութեան ու որսորդութեան մասին եւ արեւմուտքի գեղեցիկ լեռներուն ու փարթամ կանաչ Ափալաքեան Հովիտին մասին, որ ինձմէ միայն մէկ ժամ հեռաւորութեան վրայ արեւելեան կողմը կը գտնուի: Բայց ես երբեք այդ շրջանները չէի այցելած: Ես քառասուն տարեկան էի երբ առաջին անգամ ըլլալով լեռ մը տեսայ:

Ինչհի: Ես ճամբորդելու դրամ եւ իմ սեփական ինքնաշարժս ունէի, Ինթըրսթեյթ Այ-70-ը (գլխաւոր միջնասահանգային մայրուղի) կ'անցնի իմ ծննդավայրէս եւ դէպի արեւմուտք երթալով՝ կ'անցնի Ռոքի Լեռներուն ընդմէջէն: Բայց իրականութեան մէջ, ես երբեք չէի մտածած հոն երթալ եւ նոյնիսկ ես ինծի չէի արտօնած մտածելու. «Օր մը, ես հոն պիտի երթամ»: Ես այդ վայրերով կը հիանայի ամսաթերթի փայլուն պատկերները դիտելով, բայց երբեք երթալու մասին չէի մտածեր: Ինծի համար անոնք լուսինին չափ հեռու կամ անհասանելի կը թուէին. իմ միտքիս մէջ այդ մէկը պարզապէս հնարաւոր չէր: Երբ քառասուն տարեկան էի եւ վերջապէս դէպի արեւմուտք քշեցի, չէի կրնար հաւատալ, թէ ինչ փախցուցած էի ամբողջ կեանքիս ընթացքին: Հիմա առնուազն տարին մէկ անգամ պէտք է դէպի լեռները երթամ: Բարեկամ, շատ աւելին կայ քան ինչ որ դուն հիմա կը տեսնես: Դուն աւելին ես քան ինչ, որ հիմա կը պատկերացնես: Կեանքի տարբեր տեսակէտ մը կայ, որմով պէտք է տեսնես եւ ապրիս:

**Երբ սկսիս հասկնալ եւ սորվիլ, թէ Աստուծոյ Թագաւորութիւնը ինչպէս կը գործէ եւ ինչ կ'ըսէ, որ դուն արդէն իսկ ունիս, քու տեսակէտդ պիտի փոխուի:**

*Ուրեմն ա'լ ասկէ յետոյ դուք օտար ու պանդուխտ չէք, հապա սուրբերուն քաղաքակիցները եւ Աստուծոյ ընտանիքը [...]*

– Եփեսացիներուն 2. 19

Որպէս Թագաւորութեան քաղաքացի, ունիս օրինական իրաւունքներ եւ իւրաքանչիւր օրէնք ու սկզբունք հիմա տրամադրուած է քեզի: Ասիկա Տրենտային եւ իմ հարցս էր: Թէեւ քրիստոնեայ էինք եւ զԱստուած կը սիրէինք, բայց մենք Աստուծոյ Թագաւորութեան քաղաքացիներ էինք առանց գիտնալու Թագաւորութեան օրէնքներն ու սկզբունքները: Մեր սահմանափակ տեսակէտներուն պատճառով, զորս երկրի անէծքի համակարգը մեզի տուած էր, մենք երազներ չունէինք: Բայց գիտութիւնը զօրութիւն է:

Օրինակ՝ դատարանին մէջ, ստորագրուած վարձակալութեան պայմանագիրը կը փաստէ, թէ դուն քու տանդ մէջ ապրելու օրինական իրաւունք ունիս: Գիտնալը, թէ ստորագրուած փաստաթուղթ մը կայ եւ թէ կրնաս արդարադատութեան դիմել այդ տան մէջ ապրելու օրինական իրաւունքդ ապահովելու համար, քեզի խաղաղութիւն եւ հանգիստ կու տայ: Նոյն ձեւով ալ Աստուծոյ խօսքին գիտութիւնը եւ Թագաւորութեան մէջ քու բաժինդ, քեզի վստահութիւն կու տան տիրանալու բոլոր այն բաներուն, որոնք օրինականօրէն քուկդ են: Օրինակ՝ հողագործին բարգաւաճումը ինչի մէջ կը կայանայ: Դրամի՞ն: Ո՛չ: Իր ցանած սերմի՞ն: Ո՛չ: Անոր բարգաւաճման աղբիւրը ցանելու եւ հնձելու օրէնքներուն մասին իր ունեցած գիտութիւնն է: Որքան ալ աղքատ ըլլայ, ան գիտէ ինչպէս հարստանալ: Ան պարզապէս կ'օգտագործէ երկրի օրէնքները, զորս Աստուած հաստատած է: Սերմանելու եւ հնձելու գործընթացը շարունակ բերք կու տայ հողագործին:

Ան կը հասկնայ բերքահաւաքի օրէնքները եւ կատարեալ վստահութիւն ունի անոնց վրայ: Ան հազարաւոր տողարներ արժող սերմեր կը ցանէ հողին մէջ առանց վախնալու: Չես գտներ հողագործ մը, իր բերքը ցանելէ ետք, նստած է իր քարշակին (թրաքթոր) քով եւ կու լայ հողին մէջ թափած իր դրամին համար: Ո՛չ, չի լար սերմին համար ծախսած դրամին համար: Ան վստահ է այն օրէնքներէն, որոնք բնութենական աշխարհը կը կառավարեն: Ան կրնայ քեզի ըսել, թէ սերմը ինչպէս կ'աճի: Կը կասկածիմ, բայց ան կրնայ քեզի ըսել, թէ աւելի հողատարածք կը փնտռէ մշակելու համար: Նոյնը կը վերաբերի քեզի եւ ինծի: Եթէ չգիտնանք Թագաւորութեան օրէնքները եւ չվստահինք անոնց, չենք կրնար վայելել այն կեանքը, զոր Աստուած նախասահմանած է մեզի համար, որպէսզի ապրինք:

Ամէնէն հետաքրքրական պատմութիւններէն մէկը, զոր մենք տեսանք այդ առաջին օրերուն, տեղի ունեցաւ երբ հեռաձայն մը ստացայ մարդէ մը, զոր «Տոն» պիտի կոչեմ, որ ֆինանսական լուրջ հարցեր կը դիմագրաւէր: Ան լսեր էր, որ ես մարդոց կ'օգնեմ իրենց ֆինանսական հարցերուն մէջ:

Երբ առաջին անգամ Տոնին ծանօթացայ, ան իմ գրասենեակս եկած էր շատ յուսահատ եւ պարտքի մէջ: Այդ ժամանակ ոչինչ ճիշդ ձեւով կ'ընթանար իր կեանքին մէջ: Երբ նստայ եւ խօսեցայ իրեն հետ, իմացայ, որ ան երեք-չորս ամիս ուշացած էր իր վարձքը եւ գրեթէ իր բոլոր միւս ծախսերը վճարելու: Ամուսնական հարցեր կային՝ կիներ յոգնած էր իրենց ֆինանսական կացութենէն եւ սկսած էր Տոնին հանդէպ իր յարգանքը կորսնցնել, որովհետեւ ան չէր կրցած ապրուստ ապահովել իրեն եւ իրենց հինգ զաւակներուն համար: Խորքին մէջ, Տոնը իր անձին հանդէպ իր յարգանքը կորսնցուցած էր եւ հարցումներով լեցուն էր:

Այն ժամանակ, ան կը զբաղէր առողջապահական ապահովագրութիւն ծախելով Օհայօ նահանգին մէջ, բայց իր անյաջողութիւնը զինք արագօրէն կը տանէր աղետալի ֆինանսական ճամբու մը մէջ:

Հակառակ այն բոլոր բաներուն, որոնք Տոնին դէմ կ'աշխատէին, ես անոր մէջ կարողականութիւն տեսայ: Ան պատրաստ էր սորվելու եւ աշխատելու: Այս երկու կէտերուն հզօր համախմբումը հետաքրքրութիւնս շարժեց այն աստիճան, որ իրեն գործ տամ եւ անձս նուիրեմ իր ապագային բարօրութեան համար: Վերջաւորութեան այդ մէկը ներդրում մըն էր, որ շատ շահաբեր եղաւ երկուքիս համար:

Իմ նորաստեղծ ընկերութիւնս նոր ճամբորդութիւն մը շահած էր դէպի Հաուայ մեր ծախողներէն մէկէն եւ կը զգայի, որ ասիկա հիմնալի առիթ է Տոնին հետ Աստուծոյ Թագաւորութեան մասին խօսելու: Թէեւ Տոնը քրիստոնեայ էր, բայց ան չունէր նոյն հասկացողութիւնը, որ ես ունէի: Թէեւ զանազան առիթներով փորձած էի այս մարզին մէջի Աստուծոյ սկզբունքները բաժնեկցիլ իր հետ, բայց կարծես ան իմ ըսածներուս չէր հաւատար:

Ես շարունակ կը փնտռէի Տոնին ուշադրութիւնը գրաւելու ձեւ մը, որ իրեն պիտի օգնէր անդրադառնալու, որ ինքն ալ կրնար յաջողութեան հասնիլ սորվելով Աստուծոյ Թագաւորութեան գործելաձեւը: Սակայն Տոնը այնքան յուսահատ էր, որ չէր կրնար իր անձին հանդէպ հաւատք ունենալ եւ չէր կրնար հաւատալ, թէ



իրապես փոփոխություն կրնայ տեղի ունենալ: Ես գիտեի, թե այս ճամբորդությունը դեպի Հաուայ իմ առիթս էր իրեն հետ խօսելու:

Տոնին եւ իմ մեկնելէս քանի մը շաբաթ առաջ, մենք խօսեցանք այն բաներուն մասին, զորս հոն պիտի տեսնէինք եւ ընէինք: Ամէն բանէ աւելի յատուկ բան մը գրաւեց Տոնին ուշադրութիւնը: Ան կ'ուզէր կապոյտ մարլին մը որսալ Խաղաղական Ովկիանոսին գեղեցիկ ջուրերուն մէջ: «Հաուայը կապոյտ մարլինի աշխարհին մայրաքաղաքն է (բուն տեղը, ուր կը գտնուին)», Տոնը ինծի խանդավառութեամբ ըսաւ: «Ես միշտ ուզած եմ կապոյտ մարլին որսալ. ասիկա իմ երազս է»: Շաբաթներէ ի վեր առաջին անգամ ըլլալով տեսայ փայլք մը Տոնին աչքերուն մէջ: Բան մը իրապէս զինք խանդավառեց եւ ես գիտեի, որ իր խանդավառութիւնը ազդեցիկ դաս մը սորվելու դուռը պիտի բանար:

«Տոն», ըսի, «Գիտե՞ս, որ կարելի է գիտնալ, ո՛չ յուսալ, հապա գիտնալ, որ դուն կապոյտ մարլին պիտի բռնես Հաուայի մէջ՝ Աստուծոյ Թագաւորութենէն ներս մտնելով»: Շփոթած, բայց հետաքրքրուած, Տոնը ուզեց աւելին գիտնալ եւ ես շարունակեցի բացատրել Թագաւորութեան մասին: Ես մէջբերեցի Մարկոս 11. 24-ը, որ կ'ըսէ. «Ասոր համար կ'ըսեմ ձեզի. 'Ի՛նչ բան որ աղօթքով կը խնդրէք, հաւատարմօք թէ պիտի առնէք եւ պիտի ըլլայ ձեզի'»: Տոնին համար ասիկա գրեթէ անհաւատալի էր: Ես որոշ ժամանակ տրամադրեցի՝ իրեն օգնելու, որպէսզի հասկնայ Թագաւորութիւնը եւ թէ ինչպէս պէտք է արձակէր իր հաւատքը: Ուրեմն նախքան ճամբորդենք, ինք եւ իր կինը համաձայնութեամբ աղօթեցին եւ հաւատացին, թէ իրենք կապոյտ մարլին մը ստացած են: Անոնք նաեւ դրամական սերմ մը ցանեցին Աստուծոյ Թագաւորութեան մէջ իրենց հունձքին համար: Այս մէկը Սուրբ Հոգին ինծի սորվեցուցած էր ընել երբ ես իմ հաւատքս արձակած էի իմ մէկ պէտքիս համար:

Մինչ այդ Տոնը ըրաւ ամէն ինչ որ գիտէր՝ բերքին մէջ իր բաժինը բերելու համար: Ան որոշ պրպտումներ ըրաւ տրամադրելի նաւերուն եւ անոնց գիներուն մասին եւ վերջապէս լաւ նաւապետի մը հետ

Ժամադրութիւն ապահովեց: Ամէն բան պատրաստ էր եւ բոլորս շատ խանդավառուած էինք դէպի Հաուայի կապոյտ ջուրերը երթալու:

Ծովային ճամբորդութեան օրը հասաւ եւ երբ մենք նաւ մտանք, ուրախութեամբ ըսինք նաւապետին, թէ այսօր այն օրն էր, երբ մենք կապոյտ մարլին պիտի բռնէինք: Մինչ կ'ակնկալէր, որ մենք յաջող օր մը պիտի ունենանք ուրիշ տեսակի ձուկեր որսալով, ան մեզի վստահեցուց, թէ անհաւանական էր, որ այդ օրը կապոյտ մարլին բռնենք: Վերջին չորս ամիսներուն ընթացքին, ամէն օր Երկու վարձուած պտոյտի նաւերով պտըտելով, իր անձնակազմը միայն մէկ կապոյտ մարլին բռնած էր: Ասոր գլխաւոր պատճառը այն էր, որ մարլին ձուկ բռնելու եղանակը չէր տակաւին, որովհետեւ մարլին ձուկը գաղթող ձուկ է: Մերժելով յուսահատիլ, մենք յարգանքով իրեն ըսինք, թէ մենք մարլին ձուկ մը պիտի ստանայինք եւ շարունակեցինք մեր գոյքերը պատրաստել:

Վեց ժամ զգուշութեամբ փնտռելէ ետք, ոչ մէկ բան որսացինք եւ ես սկսայ մտահոգուիլ, որ բան մը չգտնելը կրնայ Տոնին հաւատքը տկարացնել: Մտահոգուելով, պոռալով Տոնին հարցում մը հարցուցի: «Տո՛ն», պոռացի նաւուն վերի յարկէն, «քեզի հարցում մը պիտի հարցնեմ: Ե՞րբ ստացար այդ կապոյտ մարլինը: Երբ անիկա յայտնուի՞ թէ՛ երբ մենք աղօթեցինք»: Տոնը վստահութեամբ ու ուժեղ կերպով պատասխանեց. «Կէրի՛, պարզ է: Ես զանիկա ստացայ երբ աղօթեցի»: Երբ լսեցի իր պատասխանը, խանդավառուեցայ եւ վստահութեամբ լեցուեցայ: Այդ ժամանակ էր, որ ես գիտցայ, թէ Տոնը իմ ցուցմունքներս լուրջի առած էր եւ վճռականօրէն որոշած էր այդ մարլինը ունենալ:

Քանի մը վայրկեան ետք Տոնին կարթը սկսաւ ձայն հանել մինչ անելի կը ծռէր ծովուն մէջ եւ նաւաստիները սկսան պոռալ. «Շարունակէ՛ ձուկը որսալ (մի՛ ձգեր)»:

«Շատ մի՛ խանդավարուիք», զգուշացուց նաւապետը: «Այո՛, մեծ ձուկ է, բայց կապոյտ մարլին չէ: Մարլինները անմիջապէս ջուրէն դուրս կու գան եւ շատ բարձր կը ցատկեն օդին մէջ եւ այս ձուկը

ջուրին խորը կը մնայ»: Վայրկեանները դանդաղօրէն կ'անցնէին մինչ Տոնը կը շարունակէր գօտեմարտիլ ձուկին հետ, որ տակաւին պէտք էր մակերեսին մօտենար, որպէսզի տեսնուէր: Թէեւ Տոնը բաւական յոգնած էր, բայց ձուկը աւելի յոգնած էր եւ շուտով հրաժարեցաւ պայքարելէն: Տոնը եւ ես չզարմացանք երբ ան թելով ներս քաշեց այդ մեծ, գեղեցիկ կապոյտ մարլինը, բայց նաւին վրայ միւս բոլոր գտնուողները ապշած էին:

Տոնին եւ իր ձուկին նկարը մինչեւ օրս գրասենեակիս մէջ կը մնայ՝ որպէս վկայութիւն ուրիշներուն եւ մնայուն յիշեցում ինծի Թագաւորութեան իրականութեան մասին: Արտաքնապէս անիկա պարզապէս ձուկ մըն էր: Բայց Տոնին համար մարլինը շատ աւելի մեծ նշանակութիւն ունէր: Եթէ Թագաւորութիւնը գործեց մարլինին համար, անիկա անշուշտ պիտի գործէր միւս բոլոր բաներուն համար, որոնց ինք պէտք ունէր իր կեանքին մէջ: Տոնին համար ատիկա պարզապէս սկզբնական անդրադարձն էր այն ազդեցութեան, որ Աստուծոյ Թագաւորութիւնը կրնար ունենալ իր կեանքին վրայ:

Ես կը սիրեմ այս պատմութիւնը եւ կը սիրեմ տեսնել մարդիկ իրական փորձառութիւններ ունենան Աստուծոյ Թագաւորութեան հետ: Ես այդ մէկը կը փափաքիմ նաեւ քեզի համար:



## ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

# ԵՍ ԳՏԱՅ ԹԱԳԱԻՈՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԳԼԽԱԻՈՐ ԲԱՆԱԼԻ ՄԸ

Մենք բոլորս ունինք տարբեր տեսակի բանալիներ մեր տուներուն, մեր ինքնաշարժներուն եւ ամէն բանի համար, զոր կ'ուզենք պաշտպանել: Բանալին մեզի համար մատչելի կը դարձնէ այն բաները, որոնք ներսը պաշտպանուած են կամ մեզի կու տայ որոշ իր մը, օրինակ՝ ինքնաշարժ մը, գործածելու իրաւասութիւնը: Ինը երկար տարիներ որպէս քրիստոնեայ ֆինանսական քառսի եւ յուսահատութեան մէջ ապրելէ ետք, ես գիտէի, թէ բան մը կը պակսէր եւ թէ բան մը սխալ էր: Ոչ ոք պէտք ունէր այդ մէկը ինծի ըսելու: Ես պէտք ունէի գիտնալու, թէ ինչ էր սխալը եւ ինչպէս ճշդել զանիկա:

Երբ Տէրը ինծի խօսեցաւ այն պահուն երբ Իրեն աղաղակեցի օգնութեան համար, անկողինիս վրայ պառկած կոտրտուած ագարակատան մէջ, ինծի ըսաւ, թէ իմ հարցս այն էր, որ ես երբեք չէի սորված, թէ ինչպէս կը գործէ Իր Թագաւորութիւնը: Այդ մէկ նախադասութեան մէջ լսեցի բանալին կամ պէտք է ըսեմ անհրաժեշտ բանալիին կամ բանալիներուն աղբիւրը՝ Թագաւորութիւնը: Աստուած ինծի կ'ըսէր, թէ իմ պատասխանս Իր Թագաւորութեան մէջ կը գտնուէր: Ես երբեք ժամանակ չէի յատկացուցած սորվելու համար, թէ ինչպէս կը գործէր Իր Թագաւորութիւնը, բայց եթէ

սորվէի, իմ պատասխանս պիտի գտնէի: Երբ այդ օրը Աստուած ինձի խօսեցաւ Թագաւորութեան հասկացողութիւնը չունենալու մասին, ես իրապէս գաղափար չունէի, թէ Ան Թագաւորութիւն ըսելով ինչ ըսել կ'ուզէր: Բայց Ան յստակ եւ հասկնալի կերպով ըսաւ, թէ եթէ ես գիտնայի, թէ Իր Թագաւորութիւնը ինչպէս կը գործէ, իմ փնտռած պատասխաններս պիտի գտնէի: Ուրեմն ինձի համար գլխաւոր բանալի մը կար այդ ընդհանուր հաստատումին մէջ. «Դուն երբեք ժամանակ չես յատկացուցած սորվելու համար, թէ ինչպէս կը գործէ Իմ Թագաւորութիւնս»: Անշուշտ ինքնին այդ նախադասութիւնը շատ բան ըսաւ եւ անշուշտ իմ առաջին գլխաւոր բանալիս էր իմ կեանքիս փոխակերպումին համար:

*Վասնզի մեզի մանուկ մը ծնաւ, մեզի որդի մը փրութեցաւ եւ իշխանութիւնը անոր ուսին վրայ պիտի ըլլայ: Անոր անունը պիտի կոչուի Սքանչելի, Խորհրդակից, Հզօր Աստուած, Յաւիտենականութեան Հայր, Խաղաղութեան Իշխան: Դաւիթին աթոռին վրայ ու անոր թագաւորութեանը վրայ անոր իշխանութեանը մեծնալուն ու խաղաղութեանը սահման չկայ, որպէսզի հիմակուրնէ մինչեւ յաւիտեան իրաւունքով ու արդարութիւնով հաստատուի ու զօրացնէ զանիկա: Ջօրքերու Տէրոջը նախանձը պիտի ընէ ասիկա:*

– Եսայի 9. 6-7

Հասկնալը, թէ Աստուծոյ Թագաւորութիւնը իսկական թագաւորութիւն մըն է, որ կը գործէ կառավարութեան եւ օրէնքներու հիման վրայ, աչքերս բացաւ հասկնալու Թագաւորութիւնը այնպիսի ձեւով մը, որ ատկէ առաջ երբեք չէի ճանչցած: Գիտնալը, թէ Աստուծոյ Թագաւորութիւնը հաստատուած է եւ կը պահպանուի արդարութեամբ (օրէնքի կիրառումով) եւ Աստուծոյ արդարութեամբ (Իր օրէնքները), ինձի ցոյց տուաւ, թէ ամէն բան, որ կը պատահի Թագաւորութեան մէջ, այդ Թագաւորութեան մէկ օրէնքին կամ սկզբունքին արդիւնքն է: Թերեւս ես շատ խելացի չեմ, բայց բաւարար խելացի եմ հասկնալու, թէ եթէ Թագաւորութիւնը օրէնքներու հիման

վրայ կը գործէ, ուրեմն ես կրնամ սորվիլ այդ օրէնքները եւ զանոնք կիրարկել իմ կեանքիս մէջ: Երբ Աստուած սկսաւ Տրենտային եւ ինծի Իր օրէնքները յայտնել եւ սորվեցնել, ես սկսայ անդրադառնալ, թէ Աստուածաշունչին իրաքանչիւր պատմութիւնը իր մէջ ունի Թագաւորութեան գործելակերպին վերաբերող բանալիներ, զորս ես պէտք է գիտնամ: Ես սկսայ Աստուածաշունչին պատմութիւնները տարբեր ձեւով կարդալ. «Ինչո՞ւ այդ բանը պատահեցաւ: Ինչո՞ւ այդ բանը չպատահեցաւ»: Ես իրաքանչիւր պատմութիւն կը կարդայի հետեւեալ նայուածքով. «Ինչ սկզբունքներ կը յայտնուին այս պատմութեան մէջ: Ինչպէս պատահեցաւ այդ բանը»:

Ես սկսայ ինքզինքս հոգեւոր գիտնական անուանել եւ կը հիանայի երբ Սուրբ Հոգին օրէնք օրէնքի ետեւէ կը յայտնէր ինծի: Հիացմունքս աւելցաւ երբ տեսայ, թէ իմ յայտնաբերած օրէնքներս կրնային գործել իմ սեփական կեանքիս մէջ ճիշդ այնպէս ինչպէս Աստուածաշունչին մէջ գործած էին: Մարդիկ ինծի կը հարցնեն. «Կէրի՞, Թագաւորութեան օրէնքները ըսելով ի՞նչ ըսել կ'ուզես»: Ես սովորաբար իրենց կը յիշեցնեմ այն բոլոր օրէնքները, զորս իրենք կը գործածեն երկրի վրայ՝ ձգողութիւնը, բնագիտութեան օրէնքները եւ այն բոլոր օրէնքները, որոնք կը կառավարեն բնութիւնը:

Հողագործը այս օրէնքները կը գործածէ երբ որ ուզէ. ան պէտք չունի աղօթելու, որպէսզի անոնք գործեն: Անոնք կը գործեն ամէն անգամ որ ան որոշէ զանոնք գործածել: Անոնք մասշտիկ են բոլորին համար եւ բոլոր անոնց համար, որոնք կ'ուզեն զանոնք գործածել: Նոյնպէս ալ Աստուծոյ Թագաւորութիւնը կը գործէ օրէնքներով, զորս կարելի է սորվիլ: Քանի որ անոնք օրէնքներ են, անոնք երբեք չեն

**ԵՐԲ ԱՍՏՈՒԱԾ ՍԿՍԱԻ  
ՏՐԵՆՏԱՅԻՆ ԵՒ ԻՆԾԻ ԻՐ  
ՕՐԷՆՔՆԵՐԸ ՅԱՅՏՆԵԼ  
ԵՒ ՍՈՐՎԵՑՆԵԼ, ԵՍ  
ՍԿՍԱՅ ԱՆԴՐԱԴԱՌՆԱԼ,  
ԹԷ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶԻՆ  
ԻԻՐԱՔԱՆԶԻԻՐ  
ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԻՐ ՄԷՋ  
ՈՒՆԻ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ  
ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԻՆ  
ՎԵՐԱԲԵՐՈՂ  
ԲԱՆԱԼԻՆԵՐ, ՋՈՐՍ ԵՍ  
ՊԷՏՔ Է ԳԻՏՆԱՄ:**

փոխուիլի եւ կարելի է զանոնք սորվիլ եւ կիրառել Թագաւորութեան կեանքին մէջ:

Ի միջի այլոց, երբ Քրիստոսի կուգաք, դուք Անոր Թագաւորութեան քաղաքացին կը դառնաք եւ ամբողջ Թագաւորութիւնը ձերն է: Դուք ալ կրնաք սորվիլ եւ գործածել Թագաւորութեան այս օրէնքները:

«Լաւ», մարդիկ ինծի կ'ըսեն. «Ես այդ մասը հասկցայ, բայց ինծի Թագաւորութեան օրէնքներէն մէկուն օրինակը տուր»: Շատ, շատ օրէնքներ կան: Իրականութեան մէջ, ես արդէն անոնցմէ քանի մը հատին մասին գրեցի, օրինակ՝ իրաւասութեան օրէնքը, հաւատքի օրէնքը եւ համաձայնութեան օրէնքը, թէ եւ անոնց անունները չտուի նախորդ գլուխներուն մէջ: Դարձեալ, կան բազմաթիւ օրէնքներ եւ այս բոլոր օրէնքները կարելի է բաժնել գործունէութեան եւ կիրարկման բաժիններու, որոնք այն մասերն էն, որոնց վրայ կ'ուզենք անպայման կեդրոնանալ: Ձեզի պատմութիւն մը պատմեմ, որ պիտի օգնէ ըսածս բացատրելու:

Ես Փայլիըր Միրաժ տեսակի օդանաւ մը ունիմ, զոր կը գործածեմ հանդիպումներու երթալու համար, յաճախորդներու հանդիպելու համար եւ գործի ճամբորդութեան համար: Դէպի Քոլորատո ճամբորդութիւն մը ծրագրած էի՝ ժողովի մը մասնակցելու համար եւ ուշադրութեամբ ծրագրած էի այդ ճամբորդութեան համար օրէնքին պահանջած օդանաւին տարեկան ստուգումը: Եթէ չէք գիտեր, ըսեմ՝ բոլոր օդանաւները, որոնք կը թռչին Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ, պէտք է անցնին տարեկան պահպանութեան վերաքննութենէ մը: Իմ օդաչուս պէտք էր Միրաժը առնէր եւ մեզ մեր հանդիպման վայրը տանէր: Բայց մեր ճամբորդութենէն մէկ օր առաջ խանութէն մեզի հեռաձայնեցին եւ ըսին, թէ պատահմամբ կոտրեր են օդաչուին օգնականին օդարգելը: Անոնք ճիշտէն պիտի փոխէին զանիկա, բայց այդ գործընթացը երեք օր եւս կը պահանջէր նախքան որ օդանաւը կարենար թռչիլ: Ատիկա կը նշնանակէր, թէ Տրենտան եւ ես պէտք էր առետրական թռիչքով երթայինք Քոլորատո: Չենք ուզեր զանգատիլ, բայց եթէ կրնանք, մենք միշտ կը նախընտրենք մեր անձնական օդանաւով երթալ ո՛ր որ պիտի երթանք: Քիչ մը յուսախաբ էինք, բայց գացինք ժողովին: Ծրագրած էինք, որ մեր



օդաչուն պիտի գար ու մեզ պիտի վերադարձնէր Օհայո:

Մեր ժողովին երկրորդ օրն էր, երբ յանկարծակի կարկտաբեր փոթորիկ մը տեղի ունեցաւ այդ շրջանին մէջ: Կարկուտը կամ սառէ հատիկները այնքան մեծ էին, որ ամբողջ շրջանին վնասեցին: Կարգ մը շրջաններու մէջ, սառի հսկայական կտորները տանիքները ծակեցին: Հարիւրաւոր ինքնաշարժներ վնասուեցան եւ աննորոգելի դարձան: Շէնքերն ու տանիքները վնասուած էին: Երբ օդաչուս եկաւ մեզ տանելու, ան շարեց նոյն էֆ. Պի. Օ. -ին քով (FBO = fixed-base operator՝ կազմակերպութիւն մը, որուն օդակայանը իրաւունք տուած է օդակայանին մէջ գործելու եւ օդագնացային ծառայութիւններ հայթայթելու ինչպէս՝ վառելանիւթ լցնել, օդանաւը շարել, օդանաւներ վարձել, օդանաւներու սպասարկութիւն, թռիչքի ուսուցում եւ նման ծառայութիւններ), ուր մեր օդանաւը ձգած պիտի ըլլայինք եթէ սկիզբը ժողովին մեր օդանաւով եկած ըլլայինք: Զարմանալի տեսարան մը տեսայ: Բոլոր օդանաւները, որոնք շարուած էին ճիշդ հոն ուր իմ օդանաւս շարուած պիտի ըլլար, եթէ հոն ըլլար, ջախջախուած էին: Իմ օդանաւս, Աստուծոյ շնորհքով, հոն չէր եւ հետեւաբար վնասուած չէր: Իսկապէս զարմանալի պատմութիւն մըն է, բայց ինչպէս պատահեցաւ ատիկա: Արդեօք ատիկա պարզապէս զուգահիւսութիւն էր կամ օդանաւին հոն չըլլալը արդիւնքն էր հոգեւոր օրէնքի մը, որմէ ես ձեռով մը օգտուեցայ:

Ես հաստատ գիտեմ, թէ ատիկա արդիւնքն էր հոգեւոր օրէնքի մը, զոր ես գործադրեցի եւ քիչ ետք ձեզի հետ պիտի բաժնեկցիմ: Օրէնք մը հասկնալը ձեզի կ'արտօնէ, որ կրկնօրինակէք արդիւնքները երբ որ պէտք ունենաք: Այս պարագային ես կիրառեցի օրէնք մը, զոր Աստուած ինծի սորվեցուցած էր սկիզբը երբ առաջին անգամ ըլլալով սկսած էր ինծի սորվեցնել Իր Թագաւորութեան օրէնքներն ու գործառնութիւնները:

Ձեզի ցոյց պիտի տամ այն օրէնքը, զոր Աստուած ինծի ցոյց տուաւ, յետոյ ձեզի ցոյց պիտի տամ, թէ ես ինչպէս կիրարկեցի զանիկա: Յիշեցնեմ, որ իւրաքանչիւր պատմութիւն Աստուածաշունչին մէջ ձեզի ցոյց կու տայ բան մը Թագաւորութեան եւ անոր գործելակերպին մասին: Ես ինծի հոգեւոր գիտնական կը կոչեմ:

Երբ Աստուածաշունչ կը կարդամ, միշտ կը փնտոեն օրէնքներ, որոնք բան մը յառաջացուցին կամ օրէնքներ, որոնք չարսօնեցին, որ որոշ բան մը պատահի: Մարկոսի Աւետարան 6-րդ գլուխին մէջ, մենք կը գտնենք պատմութիւն մը, որ այս դասին հետ կապ ունի եւ կ'ուզեմ ցոյց տալ ձեզի:

*Երբ ժամանակը շար անցաւ, իր աշակերտները իրեն եկան ու ըսին. 'Հոս անապատ տեղ մըն է, ժամանակը անցած է: Արձակէ ժողովուրդը որպէսզի երթան բոլորփոքի ագարակները ու գիւղերը ու իրենց հաց գնեն, վասնզի ուրելու բան մը չունին':*

*Բայց անիկա պատասխան արուաւ ու ըսաւ անոնց. 'Դուք արուք ապոնց որ ուրեն':*

*Ըսին իրեն. 'Երթանք երկու հարիւր դահեկանի հաց գնենք եւ փամք ապոնց որ ուրեն':*

*Ըսաւ անոնց. 'Քանի՞ նկանակ ունիք, գացէք նայեցէք':*

*Երբ իմացան՝ ըսին. 'Հինգ ու երկու ձուկ':*

*Հրաման ըրաւ անոնց՝ որ ամէնքը կանանչ խոտին վրայ գունդ գունդ նստեցնեն: Դաս դաս նստան, հարիւրական, յիսունական: Հինգ նկանակը եւ երկու ձուկը առաւ ու դէպի երկինք նայելով՝ օրհնեց եւ մանրեց նկանակները ու արուաւ իր աշակերտներուն, որպէսզի անոնց առջեւ դնեն ու երկու ձուկը ամենուն ալ բաժնեն: Ամէնքը կերան ու կշտացան, եւ փասներկու կողով լեցուն՝ կտորուանք վերցուցին եւ ձուկերէն ալ: Այն հացերէն ուտողները հինգ հազարի չափ այր մարդիկ էին:*

– Մարկոս 6. 35-44

Ասիկա հիանալի պատմութիւն մը եւ պատկերաւոր բացատրութիւն մըն է Աստուծոյ Թագաւորութեան գործունէութեան մասին: Հինգ նկանակ եւ երկու ձուկ կը կերակրեն քսան հազար հոգի: Բայց կրնաս ըսել. «Կէրի՛, Աստուածաշունչը կ'ըսէ, թէ այնտեղ միայն հինգ

հազար տղամարդ կար»: Այո, այդպես կ'ըսե՛ք, բայց կ'ենթադրեմ, որ հոն նաեւ կային կիներ եւ մանուկներ: Ուստի կ'ենթադրեմ, որ թերեւս մօտաւորապէս քսան հազար մարդ կար հոն:

Երբ աշակերտները Յիսուսի կու գան՝ կերակուրի հարցին համար, Յիսուս կ'ուզէ անոնց բան մը սորվեցնել Թագաւորութեան մասին, ուստի անոնց կ'ըսէ. «*Դուք փուլէք ափոնց որ ուրեմն*»: Ատիկա բաւական կը ցնցէ զանոնք: Անոնք ուրկէ՞ պիտի ճարէին այդքան կերակուր: Անոնք կը պատասխանեն այն գիտակցութեամբ, զոր ունին, թէ ուտելիքի պաշարին միակ աղբիւրը աշխատանքն է: Անոնք կ'ըսեն. «Ատիկա մարդու մը ութը ամսուայ վարձքն է»: Երկրի անէծքի համակարգին պատկանող նեղութեամբ եւ քրտինքով շահուած ժամական աշխատավարձի տեսակէտէն նայելով՝ զանոնք կերակրելը անկարելի պիտի ըլլար:

Բայց Թագաւորութեան մէջ, տարբեր գործունէութեան օրէնքներ կան, որոնք ամէն բան կարելի կը դարձնեն: Յիսուս կ'ուզէ իրենց օգնել, որպէսզի աշխարհի անէծքի համակարգէն անդին տեսնեն եւ Աստուծոյ Թագաւորութենէն սորվին նոր հնարաւորութեան մը մասին: Յետոյ Յիսուս իրենց կը հարցնէ, որ նային, թէ ինչ ունին՝ ամբոխը կերակրելու համար: Անոնք կ'երթան եւ կը նային եւ ապա կ'ըսեն, որ գտան հինգ նկանակ եւ երկու ձուկ, բայց գիտեն, որ ատիկա բնաւ բաւարար չէ: Յետոյ Յիսուս իրենց կ'ըսէ, որ հացը եւ ձուկը Իրեն բերեն: Իր ձեռքերուն մէջ բռնելով զանոնք, անոնց վրայ կ'աղօթէ եւ կ'օրհնէ զանոնք: Յետոյ զանոնք նորէն Իր աշակերտներուն կու տայ, որպէսզի բազմութեան բաժնեն: Անշուշտ դուն գիտես մնացեալ պատմութիւնը. հոն գտնուող քսան հազար մարդիկը, բոլորն ալ կերան ու կշտացան եւ տակաւին տասներկու կողով աւելցաւ:

Իմ հարցումներս հետեւեալներն են՝ «Յիսուս ինչո՞ւ ըսաւ, որ Իրեն բերեն հացը եւ ձուկը նախքան անոնց ըսէ, որ բաժնեն զանոնք: Յիսուս ինչո՞ւ ուղղակի աշակերտներէն չխնդրեց, որ բաժնեն կերակուրը երբ գտան զանիկա: Արդեօք պէտք էր նախ Յիսուսը օրհնէ՞ր զանիկա»: Ճիշդ պատասխանը այն է, որ Յիսուս նախ պէտք

էր օրինէր հացը եւ ձուկը: Կը տեսնէք, նկանակը եւ ձուկը աշխարհի մարզին մէջ էին՝ մարդոց իշխանութեան եւ իրաւասութեան տակ երբ սկիզբը Անոր աշակերտները գտան զանոնք: Բայց երբ նկանակը եւ ձուկը կամովին Իրեն բերուեցան, Ան կրցաւ օրինել զանոնք: «Օրինել» բառը կը նշանակէ սրբացնել կամ զատել: Հոս կը գտնենք Թագաւորութեան մէկ օրէնքին յայտնութիւնը:

**Երբ Յիսուս օրինեց նկանակն ու ձուկը, ձուկը եւ նկանակը թագաւորութենէ մը ուրիշ թագաւորութեան տակ անցան:**

Հիմնականօրէն, հացին եւ ձուկին վրայ եղող իրաւասութիւնը փոխուեցաւ: Հիմա Աստուած ունէր օրինական իրաւունքը հացը եւ ձուկը բազմապատկելու ժողովուրդին համար:

**Եթէ Յիսուս չառնէր հացը եւ ձուկը եւ չօրինէր, պիտի չբազմապատկուէին:**

Մենք այս նոյն օրէնքը կը գործածենք երբ մեր կերակուրը կ'օրինենք, թէեւ ես կը կարծեմ, թէ մարդոց մեծամասնութիւնը չ'անդրադառնար, որ իրականութեան մէջ ինչ կ'ընէ երբ կ'աղօթէ իր կերակուրին համար: Բայց պարզօրէն, երբ մեր կերակուրին համար կ'աղօթենք, կերակուրը թագաւորութիւն կը փոխէ, հետեւաբար Աստուծոյ կ'արտօնէ, որ պաշտպանէ մեզ ամէն վնասակար բանէ, զոր կրնանք ուտել: Պէտք է նշում մը ընեմ հոս: Եթէ մենք կամովին շարունակենք անպէտք բաներ ուտել եւ ուտենք բաներ, զորս գիտենք, թէ վնասակար են մեզի համար, պիտի հնծենք ինչ որ ցանեցինք: Բայց եթէ վտանգաւոր բան մը ուտէինք, որ չէինք գիտեր, թէ պիտի վնասէր մեզի, Աստուծոյ Խօսքը պիտի պաշտպանէր մեզ այնպէս ինչպէս իմ օդանաւս պաշտպանեց: Ես չեմ խօսիր այն ծիսական աղօթքին մասին, զոր կը լսէք, որ մարդոց մեծամասնութիւնը կ'աղօթէ իր կերակուրին համար, այլ՝ հաւատքով աղօթելուն, Աստուծոյ շնորհակալութիւն յայտնելուն, որ Ան մեր մէջէն հիւանդութիւնը կը վերցնէ եւ կ'արտօնէ մեզի՝ որպէս Իր հզօր Թագաւորութեան քաղաքացիները, որ վայելենք Իր խոստումները:

*Ձեռքերնին օձեր պիտի բռնեն եւ եթէ մահառիթ դեղ մը խմեն, իրենց պիտի չվնասէ:*

– Մարկոս 16. 18

Այսօրուան աշխարհին մէջ, մենք պէտք է վստահ ըլլանք, որ Աստուծոյ պաշտպանութիւնը ունինք, որպէսզի մեր հանգիստը գտնենք: Կան շատ բաներ, որոնք կրնան գողնալ մեր խաղաղութիւնը ամէն տեղէ, ներառեալ կերակուրը, զոր կ'ուտենք: Հաւատացէք ինձի, կրնաք վստահ ըլլալ, որ Սատանան ծրագիր ունի կերակուրին միջոցաւ գողնալու ձեր առողջութիւնը եւ երկրի մարզին մէջ իր դէմ ազդու ըլլալու ձեր կարողութիւնը:

Կրնանք մեր հարցերը, խնդիրները, մեր միտքի խաղաղութիւնը, իրականութեան մէջ մեր կեանքին մէջ գտնուող ամէն բան Թագաւորութեան իրաւասութեան ներքեւ բերելու ուրիշ օրինակ մըն ալ տեսնել Փիլիպպեցիներու Նամակին 4. 6-7-ին մէջ:

*Բանի մը համար հոգ մի՛ ընէք, հապա ամէն բանի մէջ աղօթքով ու աղաչանքով, գոհութիւնով մէկտեղ, ձեր խնդրանքը Աստուծոյ յայտնի ըլլայ: Աստուծոյ խաղաղութիւնը, որ ամէն մտքէ վեր է, ձեր սրտերը ու մտքերը Յիսուս Քրիստոսով պիտի պահպանէ:*

– Փիլիպպոսի 4. 6-7

Երբ մենք բանի մը համար կ'աղօթենք, ատիկա այդ հարցը կամ խնդիրը Աստուծոյ Թագաւորութեան իրաւասութեան տակ կը բերէ: Եթէ ատոր մասին չաղօթենք, Աստուծոյ ձեռքերը կապուած կ'ըլլան: Ուստի Աստուածաշունչը կ'ըսէ՝ անդադար աղօթք ըրէք (Ա. Թեսաղոնիկեցիներուն 5. 17) եւ չունիք, քանի որ Աստուծմէ չէք խնդրեր (Յակոբոս 4. 2):

Երբ ես գնեցի օդանաւս եւ երբ որեւէ մէկ բան գնեմ, անոր վրայ ձեռքերս դնելով անոր համար կ'աղօթեմ, եւ զանիկա Աստուծոյ Թագաւորութեան իրաւասութեան տակ կը դնեմ, որպէսզի ատիկա իրագործէ այն բանը, որուն համար նախատեսուած էր մինչ կը

ծառայել Աստուծոյ Թագաւորութեան եւ իմ պարտականութեանս: Այդ պատճառով, իմ օդանաւս անհասանելի է Սատանային եւ իր գործակալներուն: Ո՛չ մէկ վնաս պիտի հասնի ինձի այդ օդանաւին մէջ:

Մօտաւորապէս ամիս մը առաջ, խորհրդաժողովէ մը ետք, ես Միրաժ օդանաւովս Հյուսիսընէն դէպի Օհայօ կ'երթայի: Ուշ էր, երբ մութ գիւղին մէջէն անցանք: Հեռուն կայծակը լուսաւորեց երկինքը մեր աջ կողմը եւ մեր ձախ կողմը մինչ կատաղի փոթորիկ մը կը տարածուէր ամբողջ երկրին մէջ: Այդ կատաղի փոթորիկը պատճառ եղաւ, որ մենք մեր ճամբան փոխենք՝ փոթորիկէն հեռու մնալու համար եւ այդ պատճառով, մենք աւելի վառելանիւթ գործածեցինք քան ինչ որ նախատեսած էինք: Ուրեմն, վստահ ըլլալու համար, որ ապահով կերպով տուն պիտի հասնինք եւ բաւարար վառելանիւթի պաշար պիտի ունենանք Կառավարական Օդագնացութեան Վարչութեան (FAA = Federal Aviation Administration) օրէնքները գոհացնելու համար, մենք որոշեցինք կանգ առնել Քենթաքի նահանգին Լուիվիլ քաղաքին մէջ՝ վառելանիւթ առնելու համար: Մեր օդանաւը վայրէջք կատարեց մօտ երեսուն կալոն վառելանիւթով, բայց մենք տակաւին մէկ ժամ ունէինք ճամբորդելու եւ չուզեցինք, որ մեր վառելանիւթը վերջանայ: Մենք մտանք *էֆ. Պի. Օ.* -ին քով (FBO = fixed-base operator) եւ իրենցմէ խնդրեցինք, որ իւրաքանչիւր թեւին մէջ գտնուող աւազանին մէջ քսան կալոն վառելանիւթ լեցնեն: Այդպիսով մեր օդանաւին մէջ մօտաւորապէս եօթանասուն կալոն վառելանիւթ ունեցանք, որ մնացեալ հեռաւորութիւնը մինչեւ Օհայօ թռչելու համար պէտք եղածէն աւելի է, որովհետեւ Միրաժը ժամական քսաներկու կալոն կը սպառէ:

Մինչ կը սպասէինք *էֆ. Պի. Օ.* -ին մէջ, հաշուասեղանին ետին նստող աղջիկը մեզի ըսաւ, որ կրնար քառասուն կալոնին գումարը հաշուել եւ արձանագրել: Մինչ ան այդ մէկը կ'ըսէր, զձաքննիչը եկաւ այդ գործառնութեան վերաբերող փաստաթուղթերով: Աղջիկը առաւ զանոնք իր ձեռքէն, նայեցաւ անոնց, եւ վերջը ըսաւ. «Սխալ բան մը կայ հոս: Թիւերը իրարու չեն համապատասխաներ»: Գձաքննիչը ըսաւ, թէ ինք վառելանիւթը դրած էր օդանաւին մէջ եւ կրնար վերջը

շտկել թիւերը: Աղջիկը ըսաւ. «Լաւ», բայց մինչեւ որ թիւերը չճշդուին, չի կրնար ստացագիր տալ ինձի, բայց ե-նամակով պիտի ուղարկէր զանիկա մեզի: Ըսինք. «Լաւ» եւ գծաքննիչին հետ գացինք դէպի օդանաւը: Իմ օդաչուս գծաքննիչին հարցուց, որպէսզի ստուգէ, թէ ան իսկապէս դրամձ է քսան կալոն իւրաքանչիւր կողմին մէջ եւ ան ըսաւ. «Այո՛, ես քսան կալոն դրի իւրաքանչիւր կողմին մէջ»:

Ուրեմն մենք թանք դէպի Օհայօ եւ մեր թռիչքէն մօտաւորապէս քսան վայրկեան անց, յանկարծ ձախ կողմի աւազանը ցամքեցաւ: Մենք ցնցուեցանք. ինչպէս կրնար ատիկա պատահիլ: Մէկ վայրկեան ետք, աջ կողմի աւազանը ցամքեցաւ: Կէս գիշեր էր, մութ գիշեր մը եւ մենք 15000 ոտք (4572 քիլոմէթր) բարձրութեան վրայ էինք՝ առանց վառելանիւթի: Ինչ պատահեցաւ: Մենք տակաւին նոր վառելանիւթ լեցուցած էինք: Մարդիկ ինձի պիտի ըսեն. «Քու օդանաւը վառելանիւթին քանակը չափող գործիք չունի»: Անշուշտ ունի, բայց մեր օդանաւին վառելանիւթը չափող գործիքը կամաց-կամաց կը սկսի ցոյց տալ վառելանիւթին քանակը: Եթէ երբեք հին Սապըրպըն ինքնաշարժ քշած էք, դուք հաւանաբար կը հասկնաք, թէ ինչի մասին կը խօսիմ: Անոնց վառելանիւթ չափող գործիքները դանդաղօրէն կը չափեն ատելցուած վառելանիւթը:

**ԹԱԳԱԽՈՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ  
ԿԱՆ ՕՐԵՆՔՆԵՐ, ԶՈՐՍ  
ՊԷՏՔ Է ՍՈՐՎԻՍ՝ ԱԶԴՈՒ  
ՈՒ ԱՊԱՀՈՎ ԸԼԼԱԼՈՒ  
ԵՒ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ ՊԱՇԱՐ  
ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ:**

Ուրեմն այս պարագային, իմ օդաչուս ուղղակի գծաքննիչին հարցուց եթէ օդանաւը վառելանիւթով լեցուցած էր եւ ինչքան դրած էր: Մենք անձամբ տեսած էինք զինք վառելանիւթի բեռնակառքով օդանաւին մէջ վառելանիւթ կը լեցնէր: Իմ օդաչուս իր պարտականութիւնը ըրաւ՝ ստուգելով, որ վառելանիւթի բեռնակառքը վառելանիւթ կը լեցնէր օդանաւին մէջ եւ երկու անգամ բերանացի հաստատելով, թէ քառասուն կալոն լեցուցաւ օդանաւին մէջ: Վառելանիւթը ստուգելէ ետք, մենք կ'աշխատցնենք վառելանիւթը չափող գործիքը, որ կը հետեւի, թէ ինչքան վառելանիւթ սպառած

ենք մինչեւ մէկ կալոնին մէկ տասներորդը: Մենք կը կարծէինք, թէ մեր կողմէն ամէն բան, զոր պէտք էր ընէինք ըրած էինք՝ ապահով ըլլալու համար:

Մենք արտակարգ դրութիւն յայտարարեցինք եւ ստիպուած էինք արագ էջքով իջնելու Կրէյթըր Սինսընաթի օդակայանը, որ իրապէս հարց չէր, որովհետեւ մենք ուղղակի անոր վերեւն էինք երբ աւազանները ցամքեցան, բայց այս մէկը հաստատ քիչ մը խանդավառիչ էր: Ինչպէս վերջը յայտնաբերեցինք, ատիկա առաջին օդանաւն էր, զոր գծաքննիչը երբեւէ վառելանիւթով լեցուցեր էր: Ան երկու կալոն լեցուցած էր աւազանին մէջ, ոչ՝ քսան: Ան չէր գիտեր ինչպէս կարդալ չափացոյցը: Իրապէս: Միակ բանը, զոր այդ ազգային ընկերութիւնը կ'ընէ, օդանաւերը վառելանիւթով լեցնել է – անհաւատալի:

Այն ինչ որ թշնամին վնաս հասցնելու համար մտադրած էր, իրականութեան մէջ հարց մը չեղաւ, բայց կրնար մեծ հարց ըլլալ եթէ մեր վառելանիւթը վերջացած ըլլար որեւէ տեղ բացի 15,000 ոտք կամ 4,572 քիլոմէթր բաժրութենէն: Ամենայնդէպս թշնամին չի կրնար վնաս հասցնել ինծի կամ այդ օդանաւին: Մեր հակառակորդին ուրիշ մէկ փորձը կանխելու համար, այդ դէպքէն ի վեր մենք փոխած ենք մեր գործընթացը վառելանիւթ լեցնելու ժամանակ: Մենք հիմա չենք ձգեր, որ գծաքննիչը օդանաւը վառելանիւթով լեցնէ առանց որ մենք իր քով ըլլանք վերահսկելու համար բոլոր վառելանիւթի կանգառները: Այս դէպքը կրնար աղէտալի ըլլալ եթէ մենք արագ չշարժէինք կամ եթէ օդը աննպաստ ըլլար. բայց անշուշտ այդպէս չեղաւ, որովհետեւ ես պաշտպանութեան ուխտ ունիմ:

Օդանաւիս եւ իմ ապահովութեանս վերաբերող այս երկու դէպքերը արդիւնքն էին իմ ուխտիս, իմ օրինական իրաւունքներուս Թագաւորութեան մէջ: Անշուշտ կրնամ ձեզի պատմել, թէ նախ ինչպէս ստացայ այդ օդանաւը, բայց հիմա պիտի չպատմեմ: Կարծեմ հասկցաք միտքը՝ Աստուած հրաշալի է:

Թագաւորութեան մէջ կան օրէնքներ, զորս պէտք է սորվիս՝ ազդեցիկ ու ապահով ըլլալու եւ նիւթապէս ապահովուած ըլլալու



համար: Սատանան կ'ատէ մեզ, բայց փառք Աստուծոյ, ան չի կրնար կեցնել մեզ: Պաշտպանութիւնը նաեւ հանգիստ է, ազատ մտահոգութենէ եւ վախէ: Ատիկա քու օրինական իրաւունքդ է:

Տեղին է ըսել, որ այն օրէնքը, զոր ես հիմա նկարագրեցի եւ գործածեցի, կը կոչեմ իրաւասութեան օրէնք, եթէ այդ մասին կը մտածէիք: Ուրիշ աստուածաշնչական համար մը, զոր Աստուած սկիզբը ինծի տուաւ Իր Թագաւորութեան մասին, Ղկ 6. 20-ն էր:

*Երանի՛ ձեզի աղքատներուդ, վասնզի ձերն է Աստուծոյ թագաւորութիւնը:*

– Ղուկաս 6. 20

Երբ Տէրը առաջին անգամ այս համարը ցոյց տուաւ մեզի, Տրենտան եւ ես սկսանք սերտել, թէ Աստուած ինչ նկատի ունէր «Աստուծոյ Թագաւորութիւնը» ըսելով այս համարին մէջ: Դարձեալ Ան մեզի ցոյց տուաւ, որ Ինք թագաւորն է թագաւորութեան մը, որ կը կառավարուի եւ կը գործէ օրէնքներով: Օրինակ՝ եկէք նայինք մեր հարաւային սահմանին: Ամէն տարի հազարաւոր մարդիկ կը փորձեն սպրդիլ Միացեալ Նահանգներ: Ինչո՞ւ: Արդե՞ծք քանի որ անոնք իրենց ապրած տեղին մէջ գեղեցիկ տեսարաններ չունին: Ո՛չ, անշուշտ ոչ: Անոնք կը փորձեն Միացեալ Նահանգներ գալ այստեղի կառավարութեան համար: Մեր կառավարութիւնը ունի օրէնքներ, որոնք կը պաշտպանեն մարդոց իրաւունքները եւ կու տան բազմաթիւ ազատութիւններ, որոնք առկայ չեն ուրիշ երկիրներու մէջ՝ կալուածատիրութեան իրաւունք, քու գործիդ սեփականատէրը ըլլալու իրաւունք, ազատօրէն պաշտելու իրաւունք եւ խօսքի ազատութիւն: Այս բոլորը առկայ չեն ուրիշ շատ երկիրներու մէջ:

Մենք արդէն բաւական խօսեցանք Աստուծոյ Թագաւորութեան մասին, բոլոր բանալիներուն հիմերուն, սկզբունքներուն ու օրէնքներուն մասին, զորս Աստուած մեզի տուած է իբրեւ քաղաքացիներ: Այս օրէնքներուն մասին ձեր գիտութիւնը կամ գիտութեան պակասը կրնայ կեանքի ու մահուան տարբերութիւնը ըլլալ, յաղթութեան ու պարտութեան տարբերութիւնը: Ինը տարի

հիծող ֆինանսական վախ՛ տառապել է ետք եւ հիմա ազատ ըլլալով, չեմ կրնար բաւականաչափ շեշտել, թէ ինչքան կարեւոր է գիտնալ, թէ ինչ կը նշանակէ Աստուծոյ Թագաւորութեան քաղաքացի ըլլալ եւ թէ ինչքան կարեւոր է գիտնալ Թագաւորութիւնը կազմող բոլոր օրէնքներն ու սկզբունքները:

Հազարամեակներ շարունակ երկիրը գոյութիւն ունեցեր է, սակայն այսօր մեր վայելած բաներէն շատերը անցեալին հասկցուած չէին: Օրինակ՝ կ'ուզեմ պատկերացնէք, թէ ինչպէս կ'անցընէին Սուրբ Ծննդեան տօնին նախօրեակը 1906-ին, Մասաչուսեթս նահանգի Օշըն Պլաֆ-Պրենթ Ռոք քաղաքին մէջ: Բան մը պատահեցաւ, որ այդ օրը աշխարհը փոխեց: Ռեճիմալտ Ֆեսենտընը ռատիոալիքի մը միջոցաւ ծովուն վրայ գտնուող նաւերուն սփռեց «Օ՛ Սուրբ Գիշեր» երգը եւ կարդաց Ղուկասի Աւետարան երկրորդ գլուխը: Ասիկա աշխարհի առաջին ռատիոհաղորդումն էր: Հիմա մենք կ'առնենք մեր բջիջային հեռաձայնը եւ կրնանք խօսիլ մոլորակին վրայ գտնուող ռեւէ մէկուն հետ՝ առանց ատոր մասին մտածելու:

Կամ ինչ ըսենք Յունուար 1879-ին մասին: Թոմաս Էտիսընը յաջողութեամբ հնարեց ելեկտրական լամբը եւ հիմա երկրի վրայ գտնուող բոլոր ազգերը կը գործածեն ելեկտրականութեան օրէնքները եւ բնագիտութեան օրէնքները՝ գիշերը տեսնելու համար:

Կամ ինչ ըսենք Դեկտեմբեր 17, 1903-ին մասին: Ռայթ եղբայրները յաջողութեամբ թոցուցին իրենց առաջին օդանաւը եւ հիմա մենք կրնանք նստիլ մեր արդիական ճամբորդատար օդանաւը եւ քանի մը ժամուան մէջ թռչիլ ամբողջ աշխարհի շուրջ: Էյ. 380-ը, ամենամեծ առետրական ճամբորդատար օդանաւը, որ կը կշռէ 1. 2 միլիոն փաունտ (544310. 844 քլկ. ), կրնայ թռչիլ, իր մէջ ունենալով աւելի քան 800 մարդ, աւելի քան 9 ժամ առանց անգամ մը եւս վառելանիւթ լեցնելու մօտաւորապէս ժամական 600 մղոն արագութեամբ ամբողջ երկրի շուրջ: Եթէ մարդիկ այսպիսի բան մը տեսնէին 1800-ականներուն, պիտի մարէին: Բայց հիմա այս մէկը մեզի համար նոյնքան սովորական է որքան կոճակ մը կոխելը եւ ելեկտրական լամբը վառելը:

Միտքը, որ կ'ուզեմ հասցնել այն է, որ այս բոլոր օրէնքները միշտ ալ ներկայ եղած են հոս՝ երկրի վրայ մարդուն ստեղծուելէն ի վեր: Անոնք միշտ ալ մատչելի եղած են, որպէսզի մարդը գործածէ. ան պարզապէս չէ տեսած զանոնք: Ան կը տեսնէր թոչնոլ թոչունները, կը տեսնէր կայծակը, բայց տակաւին չէր հասկնար:

Նոյնը ճիշդ է նաեւ Սուրբ Գիրքին մասին: Կրօնը Աստուծոյ Խօսքին նշանակութեան վերաբերեալ սահմաններ դրած է: Դուք եւ ես տարիներ շարունակ լսեր ենք, թէ այդ բոլոր բաները անցած են, Աստուած այլեւս հրաշքներ չի գործեր: Սուրբ Հոգիին պարգեւները միայն առաքեալներուն համար էին, կամ Պօղոսին փուշը հիւանդութիւն մըն էր: Իրականութեան մէջ Խօսքը բաւական պարզ է: Անիկա կը նշանակէ ճիշդ այն ինչ որ կ'ըսէ: Բայց Թագաւորութեան հիմը առաջին գլխաւոր բանալին է, որ պէտք է ունենաք՝ մնացեալ բոլոր դռները բանալու համար:

## **Ահա՛ Ուրիշ Գլխավոր Բանալի Մը՝ Օրէնքները Չէն Փոխուիր:**

Քարը նետէ եւ պիտի իյնայ: Քանի՛ անգամ պիտի իյնայ: Ամէն անգամ: Ձգողութեան օրէնքը կը վստահեցնէ, որ դուք ամէն անգամ նոյն պատասխանը պիտի ստանաք: Նոյնը նաեւ ճիշդ է Աստուծոյ Թագաւորութեան պարագային:



## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

# ԹՈՉԻԼԸ ԱՒԵԼԻ ԼԱՒ Է ՔԱՆ ՔԱԼԵԼԸ

Թռչիլը քալելն ասելի լաւ է: Երբ այս գլուխը կը գրէի, կը թռչէի Քանատայի մերամառանոցէն դէպի տուն՝ իմանձնական օդանաւովս, ժամական 250 մղոն (402. 336 քիլոմէթր) արագութեամբ, 23,000 ոտք (7. 0104 քիլոմէթր) բարձրութեան վրայ ճամբորդելով: Տարիներ շարունակ մենք Օհայոյի մեր տունէն ինքնաշարժով կ'երթայինք Քանատա: Երեսունմէկ երկար եւ յոգնեցուցիչ ժամեր կ'առնէր հոն հասնիլը: Ես ստիպուած կ'ըլլայի քշել ամբողջ գիշերը՝ յաջորդ օրը հոն հասնելու համար: Այո, քանի մը անգամ մենք ճամբորդութիւնը երկու օրուայ վրայ բաժնեցինք՝ հոն հասնելու համար, բայց երբ դուք երկու շաբաթ արձակուրդ ունիք եւ չորս օրը քշելով կ'անցընէք, շատ ժամանակ կորսնցուցած կ'ըլլաք: Բայց, ուա՛հ, ես շատ յոգնած կ'ըլլայի երբ հոն հասնէինք եւ վերջը պէտք էր նորէն երեսունմէկ ժամ քշէի՝ Օհայօ հասնելու համար:

Ես միշտ օդանաւները սիրած եմ եւ տասնըինը տարեկանէս ի վեր օդաչուի արտօնագիր ունեցած եմ, բայց երբեք չէի մտածած օդանաւ ունենալու մասին: Այսինքն՝ դուք երբեք օդանաւերու գիները ստուգէր էք: Սակայն ինչքան ասելի կը սորվէի Թագաւորութեան մասին, այդքան կ'անդրադառնայի, որ ես էի, որ իմ «Ո՛չ»-ովս եւ աղքատութեան մտայնութեամբս ինքզինքիս կ'արգիլէի այդ

օդանաւը ունենալ: Ես իրականութեան մէջ երկու օդանաւ ունիմ հիմա, մէկ հատը՝ առաջին օդանաւս կը գործածեմ զուարճանալու համար, , եւ միւսը՝ ճամբորդելու համար: Ինչպէս նախորդ գլուխի մը մէջ նշեցի, մեր «Ոչ» լսելուն վարժուած ըլլալը, չ'արտօներ, որ երազենք կամ հնարաւորութիւններու մասին մտածենք: Մենք այդ միտքերն ու երազները կը լռեցնենք կամ կը մարենք նախքան անոնք սկիզբ առնեն:

Ես նախապէս երբեք չէի մտածած օդանաւ ունենալու մասին: Պարզապէս չէի կրնար տեսնել, թէ ինչպէս կրնար այդ մէկը կարելի ըլլալ: Տարիներ շարունակ ես իմ քշած օդանաւներս կը վարձէի: Սակայն երբ ես սերտեցի Թագաւորութեան օրէնքները եւ տեսայ բազմաթիւ պատմութիւններ իմ կեանքիս մէջ, որոնք կ'արտացոլացնէին Թագաւորութիւնը, որոշեցի Աստուծոյ հաւատալ՝ իմ անձնական օդանաւս ունենալու համար: Այդ ժամանակ, օդանաւ գնելու դրամ չունէի, բայց ես վճարագիր մը հանեցի եւ յուշագրութեան բաժինին մէջ գրեցի. «Իմ օդանաւիս համար»: Գրեցի օդանաւին ճիշդ այն տեսակին անունը, զոր պիտի ստանայի: Կինս եւ ես այդ վճարագիրը ցանցինք Թագաւորութեան մէջ Մարկոս 11. 24-ին համաձայն, հաւատալով, թէ ես ստացայ երբ աղօթեցի: Տէրը ինձի այս մէկը ցոյց տուած էր, որ ընեմ ամէնէն սկիզբը, երբ ինձի կը սորվեցնէր Թագաւորութեան մասին: Տեսած էի ինչպէս այս մէկը շատ շատ անգամներ արդիւնք բերած էր իմ կեանքիս մէջ:

Քանի մը շաբաթ ետք, բժշկական ընդհանուր քննութեան կ'ենթարկուէի եւ բժիշկը շատ պարզօրէն ըսաւ ինձի. «Պատահմամբ գիտեմ մէկը, որ կրնայ օդանաւ գնելով հետաքրքրուած ըլլալ»: Ես զարմացայ, որովհետեւ ասկէ առաջ ոչ ոք երբեք այդ հարցումը ինձի չէր հարցուցած: «Ինչ տեսակ օդանաւ է», հարցուցի: Ան շարունակեց բացատրել, թէ ինչ տեսակի օդանաւ էր եւ ըսաւ, թէ ատիկա տեղական օդակայանին մէջ կը գտնուէր եթէ կ'ուզէի տեսնել զանիկա: Զարմանալիօրէն, ատիկա ճիշդ այն տեսակի օդանաւն էր, որուն համար ես հաւատքով ցաներ էի: Օդակայան գացի եւ տեսայ զանիկա եւ անիկա հիանալի վիճակի մէջ էր: Ես գիտցայ, որ ատիկա իմ օդանաւս էր: Բայց մէկ հարց կար. ես օդանաւը գնելու դրամ

չունէի: Բժիշկին ըսի, որ ես շատ հետաքրքրուած էի օդանաւով եւ թէ իրեն հետ պիտի կապուէի:

Քանի մը շաբաթ անցաւ եւ ես հեռաձայն մը ստացայ եղբօրմէս, որ հօրս ճաշարանին մէջ կ'աշխատէր, որ կը գտնուէր ինծի պատկանող մէկ շէնքին կողքին: Նոր գնած էի այդ շէնքը քանի մը ամիս առաջ, աշնան վերջաւորութեան: Կը ծրագրէի շէնքը գրասենեակային համալիրի մը վերածել՝ իմ ֆինանսական ծառայութիւններու ընկերութեանս համար: Շէնքը չէր համապատասխանէր առեւտրական շէնքերու օրէնքներուն՝ այն նպատակին, որուն համար կ'ուզէի զանիկա գործածել, ուստի գիտէի, որ պէտք էր վերակառուցել զանիկա: Ես կապուեցայ շինարարի մը հետ, որ ծրագիրները գծեց եւ մենք համաձայնագիր մը ստորագրեցինք: Սակայն մենք որոշեցինք, որ պէտք է սպասենք մինչեւ գարուն մեր ծրագիրը սկսելու համար, որպէսզի օդը արգելք չըլլայ: Այդ վերականգնումը պէտք պիտի ունենար շէնքին ամբողջական վերակառուցման:

Շէնքին նախկին սեփականատէրը ինծի ըսաւ, որ ջուրի հոսանքը փակած էին ձմրան համար, ուրեմն ես նոյնիսկ չստուգեցի ատիկա: Եղբայրս հեռաձայնեց Փետրուարի վերջաւորութեան, երբ քանի մը օրուան տաք օդը սկսած էր հալեցնել ձմրան ձիւնը: Ան ինծի ըսաւ, որ շէնքս քանդուած էր, քանի որ շէնքէս ջուր կը հոսէր դէպի փողոց: Մենք երկուքս ալ գիտէինք, թէ ատիկա ինչ կը նշանակէր. ջուրը չէր գոցուած ինչպէս նախկին սեփականատէրը ըսած էր: Իսկապէս, երբ ստուգեցի վնասը, վերի լուացարանին խողովակները, ինչպէս նաեւ վարի լուացարանին եւ խոհանոցին խողովակները բոլորը պայթած էին եւ ամբողջ շէնքը ջուրով լեցուած էր: Ներսի բոլոր բարակ պատերը, առաստաղները եւ պատերը իրենց տեղերէն ելած էին:

Սկիզբը ասիկա կրնայ հսկայական աղէտ մը թուիլ, բայց իմ վերականգնողական ծրագիրներուս համար կարեւոր էր, որ ներսի բարակ պատերը բուն պատերէն անջատուէին եւ նոր սենեակներ կազմուէին: Շէնքին արտաքին սալիկապատումն ալ պէտք էր փոխուէր: Ուրեմն իրականութեան մէջ, ջուրը բնաւ վնաս չհասցուց շէնքին: Վնաս կրեցին այն բաժինները, որոնք արդէն ամբողջովին պիտի վերակառուցուէին: Բայց եւ այնպէս, երբ շէնքը գնեցի,

ապահովագրեցի զանիկա: Վնասներու ամբողջական հատուցում ստացանք եւ ապահովագրութեան ընկերութիւնը վճարագիր մը գրեց ինծի եւ այո՛, գիտցաք՝ իմ օդանաւիս գինը այդ վճարագիրով կրցայ վճարել: Այդ օդանաւը, որ Փայփըր Ուորլըր տեսակին կը պատկանի, դիւրին է քշել եւ յաճախ զանիկա կը քշեմ հաճոյքի համար: Ամէն անգամ որ այդ օդանաւը կը քշեմ, կը հիանամ, որ ինչքան հիանալի է քշել օդանաւ մը, որուն գինը վճարուած է: Ես տակաւին քսան տարիէ այդ օդանաւը ունիմ:

Թէեւ այս պատմութեան մէջ տեղի ունեցած դէպքերը շատ հիանալի են, բայց չեմ ուզեր սխալ տեսակէտ ունենաք գործելաձեւին մասին: Միշտ չէ որ բաներ յանկարծ կը յայտնուին ինչպէս այս պատմութեան մէջ: Աստուած կրնայ ձեզ առաջնորդել գործի առիթի մը, որպէսզի դրամ շահելու հնարաւորութիւնը ունենաք՝ այդ օդանաւը գնելու համար, կամ կրնաք իրապէս լաւ գինով ձեռք բերել զանիկա: Մտայնութիւնը, զոր պէտք է ունենաք երբ Թագաւորութեան մէջ կը սերմանէք, այն է, թէ Աստուած ձեզի ցոյց պիտի տայ հունձքը եւ զանիկա ձեռք բերելու ծրագիրը: Երկրորդ բանը այն է, որ պէտք է մնաք ձեր զարգացուցած հաւատքին եւ կարողութեան մէջ: Ես հանդիպած եմ մարդոց, որոնք կը կարծեն, թէ քանի որ Աստուած իրենց ցոյց տուած է ինչպէս վճարեն իրենց ինքնաշարժին գինը, ուրեմն իրենք հիմա կրնան սերմանել՝ մէկ թրիլիոն տոլար ստանալու համար: Բաւարարաչափ հաւատք չունիս մէկ թրիլիոն տոլարի համար: Սկսիր ներկայիս քու գտնուած տեղէդ եւ սկսիր կիրարկել Թագաւորութեան օրէնքը եւ ամրապնդել վստահութիւնդ Թագաւորութեան օրէնքներուն նկատմամբ ու զարգացնել քու կարողութիւնդ՝ ձեռք բերելու համար այն ինչ որ Աստուած քեզի ցոյց կու տայ:

Հետեւեալ կէտը կ'ուզեմ հասկնաք: Ես քսան տարիէ ասելի օդաչու էի նախքան այդ օդանաւը գնելս: Արդեօք Թագաւորութեան օրէնքները քսան տարի առաջ կը գործէին: Այո, անշուշտ: Իմ հասկացողութիւնս կամ ըսեմ անհասկացողութիւնս ինծի թոյլ չէր տար, որ պատկերացնեմ, թէ կրնամ օդանաւ մը ունենալ:

Մարդը հազարաւոր տարիներ շարունակ դիտած է թռչուններուն



թռչիլը: Բարձրացումի օրէնքը (the law of lift) ամէն օր ցերեկ ատեն կը գործէր բոլորին աչքերուն առջեւ, բայց ոչ ոք տեսաւ այդ մէկը: Մտածեցէք պահ մը:

Համարներէն մէկը, զոր Աստուած ինծի սորվեցուց առաջին օրերուն՝ Թագաւորութեան մատակարարութեան մասին, Առակաց 10. 22-ն էր:

*Տիրոջ օրհնութիւնն է, որ հարստութիւն կու տայ ու անոր հետ տրտմութիւն չի խառնէր:*

– Առակաց 10. 22

Այս համարը կ’ակնարկէ Ծն 3. 17 համարին եւ անոր սկզբունքին, որուն մասին ես նախապէս խօսեցայ:

*[...] Երկիրը քու պատճառաւ անհծեալ ըլլայ, կեանքիդ բոլոր օրերուն մէջ նեղութիւնով ուրեստ անկէ եւ փուշ ու տապալակ բուսցնէ քեզի եւ դաշտին խոտը ուրեստ: Երեսիդ քրտինքովը ուրեստ քու հացդ, մինչեւ գեպինը դառնալը, ուրկէ առնուեցար. քանզի հող էիր դուն ու հողի պիտի դառնաս:*

– Ծննդոց 3. 17

Երբ Ադամը կորսնցուց Թագաւորութիւնը, ան կորսնցուց Թագաւորութեան մատակարարութիւնը եւ այլեւս իր սեփական ջանքերով պիտի գոյատեւէր: Բայց ինչպէս դուք եւ ես արդէն յայտնաբերած ենք, տքնաջան աշխատանքով եւ քրտինքով մենք պարզապէս չենք կրնար բաւարար արագ վազել՝ հասնելու այն ազատութեան, որուն կը ձգտինք: Բայց լաւ լուր ունիմ: Յիսուս եկաւ աղքատներուն բարի լուր տալու:

*Տէր Եհովային Հոգին իմ վրաս է, վասնզի Տէրը զիս օժեց ու զիս դրկեց աղքատներուն աւերիս տալու [...]:*

– Եսայի 61:1

Յիսուս դրկուեցաւ աղքատներուն աւետիս տալու: Ինչը լաւ լուր կրնայ ըլլալ աղքատներուն համար: Պարզ է, անոնք ստիպուած պիտի չըլլան կապուելու կարօտութեան եւ աղքատութեան երկրի անէծքի մատակարարութեան համակարգին մէջ: Վստահեցէք ինծի, ինը տարի պարտքի եւ ճնշումի տակ ապրելէ կամ գոյատեւելէ ետք, այս համարը բարի լուր էր, բայց՝ շփոթեցուցիչ: Արդեօք այդ մէկը իրապէս ըսել կ'ուզէր: Հիանալի պիտի չ'ըլլամք եթէ այդ մէկը իրապէս ըսել ուզէր, այսինքն՝ Տիրոջ օրհնութիւնը իրապէս ձեռով մը հարստութիւն բերէր մեր կեանքերէն ներս: Ես իրապէս պէտք ունէի գիտնալու եթէ այդ մէկը ճիշդ էր եւ ապա գիտնալու ինչպէս կրնայի զանիկա իրագործել: Սակայն մէկ բան հասկցայ, որ ծանր ու քրտնաջան աշխատանքի անէծքը միայն կ'արտօնէ, որ գոյատեւես եւ գոյատեւումը բաւարար չէ: Ինձմէ աւելի ոչ ոք կ'ուզէր այս անէծքէն ազատիլ, բայց եւ այնպէս բնաւ գաղափար չունէի ինչպէս այդ մէկը իրագործեմ իմ կեանքիս մէջ: Կարծեմ բազմաթիւ քրիստոնեաներ այս ձեռով կ'ապրին՝ կը կարդան Աստուծոյ խոստումները, բայց տակաւին չեն գիտեր ինչպէս պէտք է սեփականացնեն այդ խոստումները եւ ապա զանոնք դրսեւորեն իրենց կեանքերուն մէջ:

Երբ սկսայ ուսումնասիրել եւ երբ Տէրը զիս առաջնորդեց Թագաւորութեան սկզբունքները հասկնալու, կարդացի ինչպէս Աբրահամ շատ հարուստ էր: Կեցէք: Հապա երկրի անէծքի համակարգը... ինչպէս այդ մէկը յաղթահարեց:

*Աբրամ շատ հարուստ էր անասուններով, արծաթով ու ոսկիով:*

– Ծննդոց 13. 2

Ան հարստացաւ. ո՛չ, Աստուածաշունչը կ'ըսէ, թէ շատ հարուստ էր- բայց ինչպէս: «Լամ», կրնաք ըսել, «քանի որ ինք Աբրահամն էր»: Ո՛չ, աստիկա ճիշդ չէ եւ հոս է, որ պէտք է ըմբռնէք Թագաւորութեան օրէնքի հասկացողութիւնը: Օրէնքները ուշադրութիւն չեն դարձներ, թէ դուն ո՛վ ես: Անոնք խտրութիւն չեն դներ մարդոց միջեւ: Եթէ մէկը, ռեւէ մէկը, առանց անկարգելի «Էմփայր Սթէյթ Պիլտինկ»-էն վար

Նետուի, ինչքան ալ մեծ կամ աննշան մարդ ըլլայ, ամէն մարդ գիտէ, թէ արդիւնքը ինչ պիտի ըլլայ: Ձգողութեան օրէնքը միշտ պիտի գործէ: Ուրեմն Աբրահամ ինչպէս բարգաւաճեցաւ հակառակ երկրին անէծքին: Արդեօք բանալիներ կան անոր պատմութեան մէջ: Պատասխանին մէկ մասը կրնանք գտնել Ծննդոց գիրքին 12-րդ գլուխին մէջ: Հոն Աստուած Աբրամին, որ հետագային Աբրահամ կոչուեցաւ, տուաւ խոստում մը անոր կեանքին եւ սերունդին համար:

*Տէրը ըսաւ Աբրամին. «Քու երկրէդ եւ քու ազգականներէդ ու քու հորդ տունէն գնա՛ այն երկիրը, որ ես քեզի պիտի ցուցնեմ: Քեզ մեծ ազգ պիտի ընեմ ու քեզ պիտի օրհնեմ եւ քու անունդ պիտի մեծցնեմ ու դուն օրհնեալ պիտի ըլլաս: Քեզ օրհնողները պիտի օրհնեմ ու քեզ անիծողները պիտի անիծեմ ու երկրի բոլոր ազգերը քեզմով պիտի օրհնուին»:*

– Ծննդոց 12. 1-3

Այս խոստումը հետեւեալ պայմանները ունէր՝ Աբրահամ պէտք էր հաւատար Աստուծոյ եւ հնազանդէր Իրեն: Մեծ հաւատք կը պահանջէր իրեն ծանօթ եղող բաները ձգելը եւ ճամբայ ելլելը՝ առանց գիտնալու, թէ ո՛ր կ'երթայ:

*Հաւաքքով երբ Աբրահամ կանչուեցաւ, մտիկ ըրաւ ու գնաց այն տեղը, որ պիտի ժառանգէր եւ ելաւ գնաց ու չէր գիտեր թէ ո՛ր կ'երթայ:*

– Եբրայեցիներուն 11. 8

Ուրեմն կը տեսնենք, որ Աստուած օրինական միջոց մը գտաւ երկրի վրայ մարդու մը միջոցաւ, որ Իրեն հաւատաց նոյնիսկ երբ այդ մէկը անիմաստ կը թուէր իրեն: Աբրահամին հաւատքը Աստուծոյ հնարատրութիւն տուաւ, որպէսզի անձամբ զինք օրհնէ: Բայց յետոյ, Աբրահամին հաւատքին շնորհիւ, Աստուած իրեն հետ ուխտ մըն ալ ըրաւ իր ժառանգորդները նկատի առնելով: Այս մէկը տարօրինակ թող չթուի ձեզի: Յիշեցէք, որ սկիզբը Սատանան

այսպէս հնարատրութիւն ունեցաւ երկիր մուտք գործելու: Ադամ, որ օրինական իրաւասութիւն ունէր երկրի վրայ, ինչպէս նշուած է Եբր 2. 7-8ին մէջ, ընտրեց Սատանային հաւատալ փոխանակ՝ Աստուծոյ:

Աբրահամին հաւատքը, որ օրինական դուռ մը բացաւ, որպէսզի երկինքը ազդեցութիւն ունենայ իր կեանքին մէջ, նաեւ իրեն թոյլ տուաւ, որ մեծապէս բարգաւաճի: Այս բարգաւաճումը շարունակուեցաւ Աբրահամի բոլոր ժառանգորդներուն կեանքերուն մէջ: Մինչ այս մէկը աւելի կը սերտէի, նաեւ կարդացի Յովսէփին՝ Աբրահամին թոռնիկին տղուն մասին: Թագաւորութեան եւ անոր գործելաձեւին մասին գտայ հիանալի օրինակ մը ու բացատրութիւն մը եւ յատկապէս Առակաց 10. 22-ին իսկական իմաստը:

Տամ պատմութեան ներածականը՝ Յովսէփին եղբայրները կ'ատէին զինք եւ զինք ծախեցին ստրկավաճառներու, որոնք յաճախ իրենց շրջանէն կ'անցնէին: Անոնք Յովսէփը տարին Եգիպտոս, ուր ան ծախուեցաւ Պետափրէսին, որ Եգիպտական բանակին մէջ դահճապետ էր: Յաջորդ հատուածին մէջ էր, որ ես գտայ ընդհանուր պատկերին պակսող մէկ կարեւոր կտորը, որ կը վերաբերէր Աբրահամին այդ աստիճան բարգաւաճելու կարողութեան:

*Յովսէփը Եգիպտոս իջեցուցին եւ Փարաւոնին ներքինին՝ Եգիպտացի Պետափրէս դահճապետը ծախու առաւ զանհկա Իսմայելացիներուն ձեռքէն, որոնք զանհկա հոն իջեցուցին: Տէրը Յովսէփին հետ էր ու անհկա յաջողակ մարդ մըն էր ու իր Եգիպտացի փրորջը փունն էր անհկա: Անոր փէրը փեսաւ որ Տէրը անոր հետ է եւ թէ ինչ որ ընէր, Տէրը կը յաջողցնէր անոր ձեռքով:*

*Յովսէփի շնորհք գտաւ անոր առջեւ ու կը ծառայէր անոր, որ իր փանը վրայ վերակացու ըրաւ զանհկա եւ իր բոլոր ունեցածը անոր ձեռքը յանձնեց: Այն օրէն, երբ Յովսէփը իր փանը ու իր բոլոր ունեցածին վրայ վերակացու եղաւ, Տէրը Եգիպտացիին փունը օրհնեց Յովսէփին համար: Թէ՛ ՏԱՆԸ ՄԷՋ ԵՒ Թէ՛ ԴԱՇՏԻՆ ՄԷՋ ԱՆՈՐ ԲՈԼՈՐ ՈՒՆԵՑԱԾԻՆ ՎՐԱՅ ՏԻՐՈՋ ՕՐՀՆՈՒԹԻՒՆԸ ԵՂԱԻ:*

*Պեպատիրէս իր բոլոր ունեցածը Յովսէփին ձեռքը թողուց  
ու ինչ որ կար անոր քով՝ չէր գիտեր՝ իր կերած հացէն  
զայր: Յովսէփ գեղեցիկ էր դէմքով ու գեղեցիկ՝ տեսքով:*

– Ծննդոց 39. 1-6

Հատուածը յստակօրէն կ'ըսէ, թէ Տիրոջ Օրհնութիւնն էր Յովսէփի բարգաւաճումին պատճառը: Բայց ինչ էր կամ ինչ է Տիրոջ Օրհնութիւնը: Ես նկատեցի, որ ատիկա Տիրոջ «Օրհնութիւնն» էր եւ ո՛չ թէ Տիրոջ մէկ օրհնութիւնը: Երբ մեծ բան մը պատահի, մենք բոլորս ալ կ'ըսենք, թէ «ատիկա օրհնութիւն էր»: Բայց այս հատուածը սովորական, լաւ բան մը պատահելու մասին չի խօսիր: Անիկա կը խօսի «Օրհնութեան» մասին (յատուկ օրհնութեան մը մասին):

Ես անդրադարձայ, որ Տիրոջ Օրհնութիւնը իրականութեան մէջ ուխտ մըն էր Աստուծոյ եւ Աբրահամի եւ իր ժառանգորդներուն միջեւ: Այդ Օրհնութիւնը յատկապէս ուխտին միջոցաւ Աբրահամին տրուած խոստումն էր: Օրինական համաձայնութիւն մը իր մէջ կ'ընդգրկէ երկու մասնակից կողմերուն պարտականութիւններն ու պարտաւորութիւնները, բայց անիկա նաեւ յստակօրէն կը խօսի իւրաքանչիւրին շահերուն մասին: Այս պարագային, Աբրահամին տրուած խոստումները համաձայնութեան շահերու մասը կը ներկայացնէին: Այս բարիքներէն օգտուելու համար պարտաւորութիւնը Տիրոջ կանոններուն եւ օրէնքներուն հետեւիլն էր: Ես նաեւ յստակօրէն տեսայ, որ ինչ որ Յովսէփ իր օրինական իրաւասութեան տակ բերաւ, նաեւ մաս կազմեց կամ վայելեց այդ նոյն խոստումները կամ օգուտները:

Անկէ ետք ես սկսայ հասկնալ Առակաց 10. 22-ը: Աստուծմէ Աբրահամին տրուած խոստումները, իբրեւ օրինական համաձայնութիւն, գերիշխեցին երկրի աղքատութեան անէծքի համակարգին: Աբրահամին տրուած Օրհնութիւնը Աստուծոյ տուաւ օրինական իրաւունք օրհնելու Աբրահամը եւ իր սերունդը այն բարգաւաճութեամբ եւ ազդեցութեամբ, զորս Աստուած ատենօք ուզած էր, որ մարդը ունենայ: Եկէք կարդանք Առ 10. 22-ը՝ անոր մասին մեր հասկոցութիւնը փակագիծերու մէջ գրուած:

## Գլխաւոր Բանալի Մը

**Տիրոջ օրհնութիւնն [Աբրահամին Տրուած Խոստումները] է, որ հարստութիւն կու տայ ու անոր հետ տրտմութիւն չի խառնէր:**

«Անոր հետ տրտմութիւն չի խառնէր» եզրը կ'ակնարկէ Ծննդոց 3. 17-ին մէջ յիշուած երկրի անէծքի համակարգին՝ նեղութիւնով ուսես եւ երեսիդ քրտինքովը ուսես: Նեղութիւն բառը եբրայերէնով նաեւ ծանր աշխատանք կը նշանակէ: Հասկնալի է: Մարդը կրնայ ազատիլ երկրի նեղութեան եւ քրտինքի անէծքի համակարգին սահմանափակումներէն Աբրահամին տրուած խոստումներուն միջոցաւ: Օ՛, գիտեմ ինչ կը մտածէք. «Այդ խոստումները միայն Աբրահամին եւ անոր սերունդին տրուած են»: Այո՛, բայց ես ձեզի ցոյց պիտի տամ ուրիշ աստուածաշնչական հատուած մը՝ Գաղատացիներուն 3. 13-14:

*Քրիստոս մեզ ծախու առաւ օրէնքին անէծքէն՝ ինք մեզի համար անիծուեցաւ (վասնզի գրուած է թէ՛ “Անիծեալ է ան՝ որ փայտէ կը կախուի”.) որպէսզի Աբրահամին օրհնութիւնը հեթանոսներուն վրայ ըլլայ Քրիստոս Յիսուսով. որպէսզի մենք ալ հոգիին խոստումները առնենք հաւատքով:*

– Գաղատացիներուն 3. 13-14

Հիմա մենք՝ իբրեւ Յիսուս Քրիստոսի հաւատացողներ, հաւատքով մասնակից կ'ըլլանք Աբրահամի ստացած օրհնութիւններուն: Ուրեմն ինչ է Աբրահամին տրուած օրհնութիւնը: Մենք այդ խոստումներուն ցանկը կը գտնենք Բ. Օրինաց 28-ին մէջ:

*Եթէ քու Տէր Աստուծոյդ խօսքը ուշադրութեամբ մտիկ ընելով՝ զգուշութեամբ գործադրես անոր բոլոր պատուիրանքները, որոնք ես այսօր քեզի կը յայտնեմ, քու Տէր Աստուծոյ երկրի բոլոր ազգերէն աւելի պիտի բարձրացնէ քեզ: Եւ*

Եթէ քու Տէր Աստուծոյդ խօսքին հնազանդիս, այս բոլոր օրհնութիւնները քու վրադ պիտի հասնին: Քաղաքի մէջ օրհնեալ ու դաշտի մէջ օրհնեալ պիտի ըլլաս: Քու որովայնիդ պտուղը, քու երկրիդ պտուղը, քու անասուններուդ պտուղը, կովերուդ ծնունդը ու ոչխարներուդ հօտերը օրհնեալ պիտի ըլլան: Քու կողովդ ու տաշտիդ օրհնեալ պիտի ըլլան: Մտած ապենդ օրհնեալ ու ելած ապենդ օրհնեալ պիտի ըլլաս: Տէրը քու առջեւդ ջարդել պիտի տայ քու բոլոր թշնամիներդ: Անոնք քեզի դէմ մէկ ճամբով պիտի ելլեն եւ քու առջեւդ եօթը ճամբով պիտի փախչին: Տէրը քու շրեմարաններուդ ու բոլոր ձեռքի գործերուդ մէջ օրհնութիւն պիտի դրկէ քեզի եւ քու Տէր Աստուծոյդ քեզի տուած երկրին մէջ քեզ պիտի օրհնէ: Եթէ քու Տէր Աստուծոյդ հրամանները պահելով՝ անոր ճամբաներուն մէջ քալես, Տէրը քեզ իրեն իբր սուրբ ժողովուրդ պիտի հաստատէ, ինչպէս երդում ըրաւ: Երկրի բոլոր ժողովուրդները պիտի տեսնեն թէ Տէրոջը անունով կը կոչուիս ու քեզմէ պիտի վախնան: Տէրը բարիքներով քեզ պիտի լեցնէ, քու որովայնիդ պտուղը, քու անասուններուդ պտուղը ու քու երկրիդ պտուղը շարունակելով այն երկրին մէջ, որ Տէրը քու հայրերուդ երդում ըրաւ քեզի տալու: Տէրը իր բարութեան գանձը, այսինքն երկինքը, քեզի պիտի բանայ, որպէսզի քու երկրիդ անձրեւը ժամանակին տայ ու քու ձեռքիդ բոլոր գործերը օրհնէ եւ դուն շար ազգերու փոխ պիտի տաս, բայց դուն փոխ պիտի չտանես: Տէրը ժողովուրդներու գլուխ պիտի ընէ քեզ եւ ո՛չ թէ՛ պոչ: Դուն միշտ պիտի բարձրանաս ու բնաւ վար պիտի չիջնես, եթէ քու Տէր Աստուծոյդ պատուիրանքները մտիկ ընելով պահես ու կատարես, որոնք ես այսօր քեզի կը յայտնեմ: Օտար աստուածներու երեսէն երթալու համար ու անոնց ծառայութիւն ընելու համար՝ աջ կողմը կամ ձախ կողմը մի՛ խոտորիր այն բոլոր խօսքերէն, որոնք ես այսօր քեզի կը յայտնեմ:

– Բ. Օրինաց 28. 1-14

Այս բոլոր խոստումները, թէեւ Հին Կտակարանին մէջ են, բայց այսօր դուք կրնաք վայելել զանոնք: Տարբերությունը այն է, որ Հին Կտակարանին մէջ մարդիկ զանոնք ձեռք կը բերէին իրենց գործերով, բայց նոր ուխտին մէջ մենք զանոնք ձեռք կը բերենք Յիսուս Քրիստոսի հանդէպ մեր հաւատքով: Դուք եւ ես, իբրեւ Հեթանոսներ, որդեգրուած ենք ու Աբրահամի սերունդին միացած ենք. եւ հիմա, Յիսուս Քրիստոսի միջոցաւ, մենք Աբրահամի Օրհնութեան մասնակից ենք: Բայց մենք Աբրահամի ֆիզիքական օրհնութենէն աւելին ունինք, մենք նոր ծնունդին հոգեւոր օրհնութիւնը ունինք: Մենք այժմ ունինք Աբրահամի ֆիզիքական, երկրաւոր օրհնութիւնը, բայց նաեւ ունինք երկինքի յաւիտենական օրհնութիւնը եւ Սուրբ Հոգին, որ իսկապէս մեր, Աստուծոյ որդիներուն ու աղջիկներուն, մէջ կը բնակի: Յիշեցէք, միայն որդիները եւ աղջիկները կրնան ձեռք բերել ժառանգութիւնը. ստրուկները չեն կրնար: Թէեւ Աբրահամ կը սիրէր զԱստուած, բայց առանց վերածնունդի, Սուրբ Հոգին չէր բնակեր անոր մէջ, ոչ ալ ան կրնար երկինք մտնել: Անշուշտ ան երկինքը շահեցաւ երբ Յիսուս վճարեց մեղքին պարտքը:

Ես հիմա հասկցայ, թէ Առակաց 10. 22-ը իրականութեան մէջ ինչ ըսել կ'ուզէր երբ կ'ըսէր, թէ Աստուած հարստութիւն կու տայ եւ անոր հետ տրտմութիւն չի խառներ: Եբրայերէնի մէջ «տրտմութիւն» բառը կը նշանակէ ծանր աշխատանք եւ ես հիմա հասկցայ, թէ անիկա կը վերաբերի երկրի ծանր ու քրտնաջան աշխատանքի անէծքի համակարգին: Ես հասկցայ, թէ այս ուխտը, Աստուծոյ օգնութեան եւ բարիքներուն այս խոստումը երկրին անէծքէն վեր բարձրացուց Աբրահամը եւ պատճառ եղաւ, որ ան բարգաւաճի: Ես անդրադարձայ, որ այդ օրհնութեան օգուտները, որ սահմանուած են Բ. Օրինաց 28-ին մէջ, ինծի յստակօրէն ցոյց կու տային, թէ ես պիտի բարգաւաճէի: Այս խոստումներուն արդիւնքը այն պիտի ըլլար, որ ես սահմանուած ըլլայի գլուխ ըլլալու եւ ո՛չ թէ՛ պոչ, փոխ տուող եւ ո՛չ թէ՛ փոխ առնող: Ասիկա Աստուծոյ բոլոր զաւակներուն օրինական իրաւունքն է: Յովսէփի պէս, ես ունիմ Աստուծոյ օրհնութիւնը եւ ես պիտի բարգաւաճիմ: Ես նաեւ ունիմ Աստուծոյ



ամբողջ Թագաւորութեան ժառանգութիւնը: Իբրեւ որդի՝ այդ ամէնը արդէն իսկ օրինականօրէն իմա է:

Երբ Ծննդոց 39-ին մէջ գտնուող Յովսէփի պատմութեան անգամ մը եւս նայեցայ, յստակօրէն տեսայ, որ Յովսէփին յաջողութիւնն էր, որ գրաւեց Պետափրէսին ուշադրութիւնը եւ այդ նոյն տեսանելի յաջողութիւնն էր, որ աշխարհի ազգերուն ուշադրութիւնը պիտի գրաւէր եւ թոյլ պիտի տար, որ տարբերութիւն մը տեսնեն Աստուծոյ ժողովուրդին մէջ:

*Երկրի բոլոր ժողովուրդները պիտի տեսնեն թէ Տէրոջը անունով կը կոչուիս ու քեզմէ պիտի վախնան: Տէրը բարիքներով քեզ պիտի լեցնէ, քու որովայնիդ պարուղը, քու անասուններուդ պարուղը ու քու երկրիդ պարուղը շարժեցնելով այն երկրին մէջ, որ Տէրը քու հայրերուդ երդում ըրաւ քեզի տալու:*

– Բ. Օրինաց 28. 10-11

Ուրիշ հսկայական բանալի մըն ալ կար Ծննդոց 39. 6-ին մէջ, զոր ես նոյնպէս նշեցի եւ կ'ուզեմ տեսնէք: Պետափրէսին մասին խօսելով կ'ըսէ՝ «Պետափրէս իր բոլոր ունեցածը Յովսէփին ձեռքը թողուց ու ինչ որ կար անոր քով՝ չէր գիտեր [մտահոգուած չէր]՝ իր կերած հացէն զատ [...]»: Ես տեսայ ատիկա: Ահա օրինակ մը այն հանգիստին, որուն մասին մենք կը խօսինք: Պետափրէսը իր կերած կերակուրէն զատ ոչ մէկ բանի մասին մտահոգուելու պէտք ունէր: Ասիկա կը նշանակէ, թէ յաջողութիւնը, զոր Յովսէփ անոր տան բերաւ, Տիրոջ Օրինութիւնը, այնպիսի արդիւնքներ տուին, որ Պետափրէսին արտօնեցին, որ կեդրոնանայ իր պարտականութեան վրայ եւ ո՛չ գոյատեւման:

Կայ խօսք մը, զոր Տրենտան եւ ես տարիներէ ի վեր կը գործածենք՝ «Եթէ դրամին հարցը չլուծես, կոչումդ երբեք պիտի չյայտնաբերես», եւ քու ինքնութիւնդ երբեք պիտի չյայտնաբերես: Դուն երբեք պիտի չգտնես քու տեղդ, կեանքի այն մարզերը եւ գործերը, որոնց հանդէպ բուն փափաք ունիս, երբեք իսկապէս գոհունակութիւն

պիտի չգտնես: Քու բոլոր որոշումներդ գոյատեւման շուրջ պիտի կայացնես, դրամ գտնելով կամ դիզելով, հակառակ անոր, որ մէկը չես, որ միայն ամսական ապահովելու համար եղած է: Հոս մենք կը տեսնենք Տիրոջ Օրհնութեան ազդեցութիւնը Պետափրէսի վրայ, որ նոյնիսկ բան մը չէր գիտեր Աստուծոյ Թագաւորութեան մասին: Իր ունեցուածքը Յովսէփին խնամակալութեան յանձնելով, իր կալուածն ու իր մտահոգութիւնները փոխանցուեցան Յովսէփի կրած ուխտին տակ: Յստակօրէն կրնաս տեսնել այն պահը, երբ այդ փոխանցումը կատարուեցաւ 39-րդ գլուխին 5-րդ համարին մէջ:

*Այն օրէն, երբ Յովսէփը իր փանը ու իր բոլոր ունեցածին վրայ վերակացու եղաւ, Տէրը Եգիպտացիին տունը օրհնեց Յովսէփին համար: Թէ՛ փանը մէջ եւ թէ՛ դաշտին մէջ անոր բոլոր ունեցածին վրայ Տիրոջը օրհութիւնը եղաւ:*

– Ծննդոց 39. 5

Այստեղ մենք դարձեալ կը տեսնենք բանի մը փոխանցումը երկրի վրայ, որ ենթակայ է երկրի անէծքի համակարգին, կ'ենթարկուի Աստուծոյ Թագաւորութեան իրաւասութեան եւ արմատական փոփոխութիւններ տեղի կ'ունենան: Եկէք իրականութիւնը ըսենք. եթէ Աստուած քեզի կ'օգնէ Իր իմաստութեամբ, քեզ կ'առաջնորդէ ճիշդ որոշումներու եւ քեզ կը նախագոյշացնէ հաւանական ծուղակներէ, ռեւէ մէկը կրնայ բարգաւաճիլ: Հասկնալի է: Տիրոջ Օրհնութիւնը քրկդ է:

Երբ ասիկա կը սերտէի եւ Տէրը ինծի Թագաւորութեան մասին կը սորվեցնէր, շփոթած էի, թէ ինչո՞ւ Յովսէփի հրաշալի յաջողութիւն ունեցաւ այս օրհնութեան պատճառով եւ տակաւին քրիստոնեաներուն մեծամասնութիւնը, զոր ես կը ճանչնամ, այսօր դժուարութեամբ կը վճարեն իրենց հաշիւները: Դրամականօրէն ամբողջովին ազատ ըլլալը շատերուն կարծիքով նոյնիսկ կարելի բան մը չէ: Մինչեւ մենք ունինք աւելի լաւ ուխտ մը հիմնուած աւելի լաւ խոստումներու վրայ քան Հին Կտակարանի խոստումները: Թէ՛ եւ ես յստակօրէն հասկցած էի Տիրոջ Օրհնութիւնը, բայց տակաւին

չէի գիտեր, թէ ճիշդ ինչպէս այդ օրհնութիւնը իրականութեան մէջ ինձի պիտի տար այն պատասխանները, որոնց պէտք ունէի, բայց ես կը սորվէի եւ հետզհետէ անլի ազատութիւն կը վայելէի մինչ կը կիրարկէի եւ կը փորձարկէի այն ինչ որ Աստուած կը սորվեցնէր ինձի:

Յետոյ ուշադրութիւնս դարձուցի Նոր Կտակարանին եւ նայեցայ Յիսուսին եւ Անոր առաքելութեան՝ անլի գիտնալու համար, թէ Աստուծոյ Թագաւորութիւնը ինչպէս կը փոխէ կացութիւններն ու պարագաները:

*Օր մը, երբ ժողովուրդը անոր բոլորփոքը դիզուեցաւ Աստուծոյ խօսքը լսելու համար, ինք Գեննեսարէթի ծովակին քով կեցեր էր, տեսաւ երկու նաւեր, որոնք ծովակին քով կեցեր էին եւ ձկնորսները անոնց մէջէն ելած՝ ուռկանները կը լրային: Ինք այն նաւերէն մէկուն մէջ մտաւ, որ Սիմոնին էր եւ աղաչեց անոր որ քիչ մը ցամաքէն ծովուն մէջ տանի եւ նստելով՝ նաւուն մէջէն ժողովորդին կը սորվեցնէր:*

*Երբ խօսելէն դադրեցաւ, ըսաւ Սիմոնին. «Յառաջ տար նաւը՝ դէպի խորունկը եւ ուռկաննիդ ձգեցէք ձուկ որսալու»: Սիմոն պատասխան տալով՝ ըսաւ անոր. «Վարդապետ, բոլոր գիշերը աշխատեցանք ու բան մը չբռնեցինք. բայց քու խօսքիդ համար ուռկանը կը ձգեմ»: Երբ ըսուածը ըրին, խիստ շատ ձուկեր ժողովեցին, անանկ որ իրենց ուռկանը կը պատուարէր: Աչք կ'ընէին միւս նաւուն մէջ եղող իրենց ընկերներուն՝ որ գան օգնեն իրենց: Եկան ու երկու նաւերն ալ լեցուցին, գրեթէ ընկղմելու մօտ էին: Սիմոն Պետրոս երբ տեսաւ, Յիսուսին ծունկերուն ինկաւ ու ըսաւ. «Տէր, իմ քովէս մէկդի գնա, քանզի ես մեղաւոր մարդ մըն եմ»: Վասնզի ապշութիւնը պատեց զանիկա եւ անոր հետ եղող ամէնքը՝ իրենց բռնած ձուկերուն շարութեան համար: Նոյնպէս ալ Ջեքեդէոսի որդիները՝ Յակոբոս եւ Յովհաննէս՝ որոնք Սիմոնին ընկերներն էին:*

*Յիսուս ըսաւ Սիմոնին. «Մի՛ վախնար, ասկէ ետեւ մարդոց որսորդ պիտի ըլլաս»: Նաւերը ցամաք հանելով՝ ամէն բան թողուցին եւ անոր ետեւէն գացին:*

– Ղուկաս 5. 1-11

Ահա պատմութիւն մը, որ ցոյց կու տայ, թէ ինչպէս առաւօտ մը Աստուծոյ Թագաւորութիւնը շրջեց երկրի անէծքի համակարգը երեք ձկնորսներու կեանքերուն մէջ: Եթէ կարդաք հատուածը, պիտի տեսնէք, թէ Պետրոսը, Յակոբոսը եւ Յովհաննէսը ամբողջ գիշերը ձկնորսութիւն ըրած էին, բայց բան մը չէին բռնած: Այս մէկը Աշխարհի ծանր ու քրտնաջան աշխատանքի անէծքի համակարգին յատկանշական երեւոյթն է: Անոնք իրենց նպատակին չհասան այդ գիշեր. անոնց աշխատանքը ապարդիւն էր: Բայց երբ Յիսուս Աստուծոյ Թագաւորութեան եւ անոր գործունէութեան կը դիմէ, այդ նոյն ձկնորսները այնքան շատ ձուկ կը բռնեն, որ անոնց նաւերը գրեթէ կ'ընկղմին:

Կեցէք: Եկէք մտածենք այս մեր կարդացածին մասին: Ոչինչէն, ձուկ չունենալէն ու սնանկացած վիճակէն կ'անցնին ունենալու հունձք մը, որ գրեթէ երկու նաւ կ'ընկղմեցնէ: Տակաւին մարդիկ կը կարդան այս պատմութիւնը եւ հարիւրաւոր տարիներէ ի վեր կարդացած են այս պատմութիւնը եւ չեն տեսներ կամ նոյնիսկ չեն մտածեր, որ ասիկա տակաւին կրնայ իրենց պատահիլ: Ինչո՞ւ: Սովորական պատասխանը այն է, որ Յիսուս հոն էր եւ Ինք ըրաւ ատիկա: Կը յիշէք այն պատմութիւնը, որ ձեզի ցոյց տուի Մարկոս 6-րդ գլուխին մէջ, ուր Յիսուս չկրցաւ բժշկել մարդիկը, որովհետեւ անոնք հաւատք չունէին եւ հետեաբար Թագաւորութիւնը իրաւասութիւն չունէր: Մէկը պէտք էր իրաւասութիւն տար երկինքին նախքան որ երկինքը կարենար գործել այս կացութեան մէջ:

**Սիմոն պատասխան տալով՝ ըսաւ անոր. «Վարդապետ, բոլոր գիշերը աշխատեցանք ու բան մը չբռնեցինք. բայց քու խօսքիդ համար ուռկանը կը ձգեմ»:**

Պետրոսը համաձայնեցաւ երկինքի հետ եւ երկինքը օրինական միջոց ունեցաւ գործելու այս պատմութեան մէջ: Դարձեալ կը տեսնենք երկրաւոր աշխարհը Աստուծոյ Թագաւորութեան կողմէ փոխակերպուած: Տարօրինակ է, չէ՞, ինչպէս մարդիկ հազարաւոր տարիներու ընթացքին կը տեսնէին, թէ թռչունները կը թռչին, բայց չէին անդրադառնար, որ իրենք ալ կրնան թռչիլ եւ հետեւաբար երբեք չէին ձգտիր այդ մէկուն: Այսպէս են նաեւ քրիստոնեաները այսօր, անոնք չեն անդրադառնար, որ պէտք չունին պարապ ուռկաններ հանդուրժելու, այլ՝ միջոցը ունին ձեռք բերելու երկինքի զօրութիւնը, որպէսզի իրենց օգնէ կեանքի մէջ բարգաւաճելու: Հոս կ'ուզեմ տեսնէք, որ այդ նոյն մարդիկը, որոնք իրենց նպատակին չհասան, նոյն մարդիկն են, որոնց նաւերը այնքան լեցուեցան, որ ընկղմելու մօտ էին:

Բարեկամս, տարբերութիւր Թագաւորութիւնն է, ո՛չ թէ մարդիկը: Դուք կրնաք մտածել, թէ ապագայ չունիք, նպատակին չէք հասնիր, ոչ մէկ բան կը յաջողի: Բայց իրականութեան մէջ, միակ բանը, որուն պէտք ունիք յաջող կեանք մը ունենալու համար Թագաւորութիւնն է: Այո՛, դուք ձեր դերը ունիք խաղալու: Անոնք պէտք ունէին ձկնորսութեան երթալու, իրենց ուռկաններուն հոգ տանելու եւ պատրաստուելու ձուկ բռնելու համար, բայց ոեւէ մէկը կրնայ ձուկ բռնել եթէ Աստուած ցոյց տայ տեղը:

Մտիկ ըրէք, վազվզելու ու քրտինք թափելու անէծքի դրութիւնը չի կրնար այդ մէկը իրագործել: Դուք չէք կրնար բաւականաչափ արագ վազել կամ բաւարարաչափ երկար վազել՝ ձեր երազներուն հասնելու համար: Աստուած երբեք չէր նախատեսած, որ դուք ձեր ակոսները սեղմէք եւ ձեր սեփական ուժերով փորձէք գործերը իրենց ասարտին հասցնել:

Աստուծոյ Թագաւորութեան օրէնքներուն եւ խոստումներուն դիմելով, մենք կրնանք քալելու փոխարէն թռչիլ: Ուրիշ ձեւով ըսեմ: Թէեւ ձգողութեան օրէնքը տակաւին կը գործէ, բայց մենք կրնանք թռչիլ հասկնալով ուրիշ օրէնք մը՝ բարձրացումի օրէնքը (the law of lift) եւ վայելել բոլորովին նոր ապրելակերպ մը:

Յիշեցէք, երբ Յիսուսի կու գաք, դուք Աստուծոյ Թագաւորութեան անդամ կ'ըլլաք: Իբրեւ քաղաքացի՝ դուք կ'եզրակացնէք, թէ օրինական իրաւունքներ ունիք եւ իբրեւ որդի կամ դուստր՝ դուք կ'եզրակացնէք, թէ ժառանգութեան իրաւունք ունիք: Ձեր օրինական իրաւունքները եւ օգուտները ձեզ երկրի աղքատութեան, հիւանդութեան եւ ճախողութեան անէծքի համակարգէն վեր կը կանգնեցնեն:

Երեւակայեցէք, թէ այս համարը ինչ ազդեցութիւն պիտի ունենար իսրայելացիի մը վրայ, որ իր ամբողջ կեանքը ստրուկ եղած էր: Իրականութեան մէջ միակ բանը, զոր գիտէին եւ իրենց յիշողութեան մէջ կար, ստրկութիւնն էր: Ասոնք են Մովսէսի խօսած խօսքերը իսրայէլի ժողովուրդին մինչ անոնք կ'երթային մտնելու խոստացուած երկիրը:

*Երբ քու Տէր Աստուածդ քեզ փանհայն երկիրը, որուն համար քու հայրերուդ՝ Աբրահամին, Իսահակին ու Յակոբին՝ երդում ըրաւ, որ քեզի մեծ ու գեղեցիկ քաղաքներ փայ, որոնք ԴՈՒՆ ՇԻՆԱԾ ՉԵՍ եւ ամէն փեսակ բարիքներով լեցուած փուներ՝ որոնք դուն լեցուցած չես ու փորուած ջրհորներ՝ որոնք դուն փորած չես, այգիներ ու ձիթենիներ՝ որոնք դուն փնկած չես ու երբ ուտես ու կշտանաս, զգոյշ կեցիր, որ չըլլայ թէ քեզ Եգիպտոսի երկրէն [միւս թագաւորութիւնը], ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ փունէն [գերութեան թագաւորութիւնը] հանող Տէրը մոռնաս:*

– Բ. Օրինաց 6:10-12

**ՄԻԱԿ ԲԱՆԸ, ՈՐՈՒՆ  
ՊԷՏՔ ՈՒՆԻՍ  
ՅԱՋՈՂ ԿԵԱՆՔ ՄԸ  
ՈՒՆԵՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ  
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՆ Է:  
ԱՅՈ՛, ԴՈՒՆ ՔՈՒ ԴԵՐԴ  
ՈՒՆԻՍ ԽԱՂԱԼՈՒ:**

Իբրեւ նախկին ստրուկներ, միակ միջոցը, զոր անոնք գիտէին բան մը աւարտին հասցնելու համար, տաժանելի ու քրտնաջան աշխատանքն էր: Բայց հոս Աստուած իրենց կ'ըսէր, թէ իրենց սեփական աշխատանքը չէր

կրնար հայթայթել իրենց պէտքերը: Աստուած իրենց չէր ըսեր, որ այլեւս պէտք պիտի չունենային որեւէ բանի համար աշխատելու, այլ՝ թէ կապուած պիտի չըլլային համակարգի մը, որ աշխատանք կը պահանջէր՝ պարզապէս գոյատեւելու համար: Աստուած կ'ըսէ, թէ անոնք պիտի բարգաւաճին այն երկրին մէջ, ուր կ'առաջնորդէր զիրենք:

Կ'ուզեմ այս գլուխը փակել պատմելով պատմութիւն մը եւս, որ անելի մանրամասնօրէն կը ներկայացնէ ըսածս: Տրենտան եւ ես ինքնաշարժներու հանդէպ մասնաւոր մեծ հետաքրքրութիւն մը չունինք: Կարգ մը մարդիկ շատ կը սիրեն ինքնաշարժները եւ ձեզի կը պատմեն այն բոլոր ինքնաշարժներուն մասին, որոնցմով իրենք հիացած են: Որոշ պատճառով մենք երբեք չենք հետաքրքրուած ինքնաշարժներով: Սխալ չհասկնաք: Մենք աղուոր բաները կը սիրենք, բայց պարզապէս երբեք չենք ըսած, թէ անպայման պէտք է ունենանք որոշ ինքնաշարժ մը: Մենք սովորաբար ինքնաշարժ մը կը գնենք եւ զանիկա կը քշենք շուրջ տասը տարի: Անշուշտ մենք մեր ինքնաշարժներուն լաւ հոգ կը տանինք եւ անոնք երբեք հին ինքնաշարժներու չեն նմանիր, բայց այնքան ատեն որ տակաւին լաւ տեսք ունին եւ լաւ կ'աշխատին, մենք ուրախ ենք:

Բայց քանի մը տարի առաջ մեր եկեղեցին քանի մը «Էսքալատ» (ամերիկեան «Քատիլաք» ինքնաշարժին մէկ տեսակը) վարձեց՝ համաժողովի մը համար, զոր մենք կը հիւրընկալէինք: Մենք զանոնք վարձեցինք՝ մեր հիւրերը պտըտցնելու համար եւ ուզեցինք աղուոր ինքնաշարժներ հայթայթել այդ մէկը ընելու համար: Ասիկա առաջին անգամը չէր, որ մենք այդ մէկը կ'ընէինք: Մենք միշտ ալ այդպէս ըրած ենք: Բայց առաջին անգամն էր, որ մենք անոնցմէ մէկը կը քշէինք երբ զանիկա մեր քով ունէինք այդ առիթին համար: Ես վստահ չեմ, թէ ինչո՞ւ մենք ատիկա քշեցինք այդ յատուկ առիթին, բայց քշելով տուն գացինք: Եւ գիտէք ինչ: Մենք սիրեցինք զանիկա: Տրենտան եւ ես սիրեցինք անոր քշուածքը եւ տեսքը:

Այն ժամանակ մենք աղուոր «Հոնտա Փայլթ» մը ունէինք, բայց «Էսքալատ»-ը անշուշտ անելի յաջող ինքնաշարժ էր քան «Փայլթ»-ը: Ատիկա «փլաթինում փըրլ ուայթ» տարբերակն էր եւ

աւելի կարճ տարբերակն էր: Եթէ «Էսքալատ» ինքնաշարժին մասին գիտէք, անոնք երկու չափ ունին՝ երկար եւ կարճ: Մենք կարճը աւելի սիրեցինք, որովհետեւ աւելի լաւ կը կառավարուէր քիչ մը աւելի շարժումակ ըլլալով: Երբ Տրենտային հետ «Էսքալատ»-ը կը քէփ, ըսաւ. «Գիտես, ես կը սիրեմ այս ինքնաշարժը. կը կարծեմ, որ պէտք է այս ինքնաշարժէն գնենք»: Ես համաձայն էի: «Մէկ հատ ճիշդ ասկէ պէտք է գնենք՝ կարճ տարբերակը եւ ճերմակ մարգարիտի գոյնով»: Երկուքս ալ համաձայն էինք:

Թէեւ ունէ մէկուն չըսինք մեր գրոյցին մասին, բայց մօտաւորապէս մէկ ամիս ետք, երբ ես դուրսը կը քալէի՝ օրաթերթս առնելու համար, բջիջային հեռաձայնս զարկաւ: Ես ճանչցայ իմ հետս խօսողին ձայնը, ան մէկն էր, որ մեր եկեղեցին կը յաճախէր: Ըսաւ. «Բարեւ», եւ յետոյ ըսաւ, որ կ'ուզէր ինծի համար «Էսքալատ» մը գնել: Ես վայրկեան մը ապշեցայ, բայց ըսի. «Հիանալի»: Յետոյ ինծի հարցուց, թէ ինչ գոյն կ'ուզէի, եւ իրեն ըսի, որ մենք ճերմակ մարգարիտի գոյնովը կը սիրենք: Ըսաւ. «Երբ գնեմ, քեզի նորէն կը հեռաձայնեմ»: Սակայն ինծի չհարցուց, թէ երկարը կ'ուզէի կամ կարճը: Ամիս մը անցաւ եւ կարծեցի, թէ ան մոռցաւ ինքնաշարժին մասին, բայց ան իսկապէս հեռաձայնեց եւ մեզի ըսաւ, որ երթանք, «Էսքալատ»-ը պատրաստ էր եւ կրնայինք զանիկա առնել:

Երբ իրեն հանդիպեցանք, հոն տեսանք գեղեցիկ, ճերմակ մարգարիտի գոյնով «Էսքալատ»-ին կարճ տարբերակը: Անիկա ամէն ձեւով կատարեալ էր, բիծ մը չկար անոր վրայ, բառացիօրէն կատարեալ էր: Իրեն ըսինք, թէ շատ սիրեցինք զանիկա: Յետոյ ան ներողութիւն խնդրեց ըսելով, թէ ներողութիւն կը խնդրէր, որ այդքան երկար ժամանակ առած էր եւ թէեւ ինք փորձած էր երկար տարբերակը գտնել, բայց միայն կարճը կրցած էր գտնել: Մենք խնդացինք ըսելով՝ «Մեր ուզածը կարճ տարբերակն էր»: Մենք այդ ինքնաշարժը քէցինք մինչեւ մեր տունը եւ կը մտածէինք, թէ աշխարհի վրայ ամենահարուստ մարդիկն էինք, որովհետեւ այդ ինքնաշարժը կը քէփէր: Բայց գիտէք ինչ: Այդ «Էսքալատ»-ները երկար ժամանակէ ի վեր գոյութիւն ունեցած են: Ես պարզապէս երբեք չէի մտածած անոնցմէ մէկը ունենալ: Այս պատմութիւնը



ամբողջութեամբ հասկնալու համար կարելոր է գիտնալ, որ անցեալին ես ութ ինքնաշաժ նուիրած եմ, ուրեմն ինքնաշարժներուն գալով՝ ես հողին մէջ սերմ ցանած եմ: Պարզապէս ես երբեք չեմ ըսած, թէ կ'ուզեմ մէկ հատ ունենալ:

Յ. Գ. – Ես գիտեմ ինչ կը մտածէք, թէ այսպիսի բաներ միայն քարոզիչներուն կը պատահին: Խորքին մէջ, ես երեսունվեց տարի ֆինանսասական մարզին մէջ եղած եմ եւ բազմաթիւ քարոզիչներու հետ խօսած եմ: Իրականութեան մէջ, մեծամասնութիւնը հազիւ իր կենսական պէտքերուն կրնայ հոգալ: Ո՛չ, այս բաները մեզի չեն պատահած եւ մեզի չեն պատահիր, որովհետեւ մենք Թագաւորութեան մասին կը քարոզենք, այլ որովհետեւ մենք Թագաւորութեան մէջ կ'ապրինք եւ Թագաւորութեան օրէնքները կը կիրարկենք մեր կեանքերուն: Իրականութեան մէջ, ես պարտքերէս ձերբազատուած էի նախքան իմ եկեղեցիս հիմնելս: Միայն ըսեմ, որ պէտք չունէի իմ եկեղեցիս հիմնելու, որպէսզի գործ մը ունենամ՝ իմ վճարումներս կատարելու համար: Ես իմ եկեղեցիս հիմնեցի, որպէսզի մարդոց ըսեմ այն ինչ որ Տրենտան եւ ես յայտնաբերեցինք՝ Թագաւորութեան բարի լուրը:



ՎԵՑԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

# ԿԵԱՆՔԸ ԱԻԵԼԻՆ Է ՔԱՆ ՊԱՐՋԱՊԷՍ ՄՈՒՐՀԱԿՆԵՐ ՎՃԱՐԵԼԸ

Կարծես կեանքի կարճ ովասիս մը (կարճ հանգիստ մը) ըլլար կեանքի փոթորիկին մէջ, զոր ես կը դիմագրաւէի: Մօտաւորապէս յիսուն հոգի հրաւիրած էինք մեր հին ագարակատունը կէսօրէ ետք մը՝ խարոյկ, հոթ-տոկ եւ ընկերութիւն վայելելու համար: Ասիկա ծայրայեղ ճնշումի տարիներուն էր երբ դրամ չունէինք, պարզապէս շաբաթ մը եւս գոյատեւելու համար կը պայքարէինք: Ես անհամբեր կը սպասէի այդ առիթին, որովհետեւ զգացապէս յոգնած էի եւ պէտք ունէի դրական բանի մը վրայ կեդրոնանալու քիչ մը: Շատ յաջող երեկոյ մըն էր՝ կերակուրը շատ լաւ էր, մեր բարեկամներէն շատերը եկան իրենց զաւակներով եւ բոլորը լաւ ժամանակ կ'անցընէին: Տունը լեփլեցուն էր երբ դուռը զարնուեցաւ: Կարծեցի, որ մեր հիւրերէն մէկը ուշ հասած էր, բայց երբ դուռը բացի, ելեկտրական ընկերութեան պաշտօնեաներէն մէկը դիմաւորեց զիս: Ան քաղաքավարօրէն ըսաւ, որ եկած էր ելեկտրական հոսանքը անջատելու՝ չվճարուած հաշիւի մը համար: Ես սարսափեցայ: Տունս հիւրերով լեցուն էր եւ անկախ այն խայտառակութենէն, զոր այս մէկը պիտի պատճառէր, ես պէտք ունէի ելեկտրականութեան:

Ես շուտով պաշտօնեայէն խնդրեցի, որ տունէն հեռանայ եւ վայրկեան մը տան ետեւի բակը երթայ: Ես իրեն հարցուցի մեզմէ ինչ կը պահանջուէր, որպէսզի լոյսերը վառած մնային եւ ան ինծի գումար մը տուաւ: «Շատ բարձր է», մտածեցի: «Կրնամք քիչ մը պակսեցնել գումարը»: Ան վայրկեան մը մտածեց եւ վերջապէս անելի ցած գին մը տուաւ ինծի: «Կրնամք այս վճարագիրը պահել մինչեւ Երեքշաբթի նախքան զանիկա դրամատուն զետեղէք», հարցուցի: Ան ըսաւ. «Հարց չկայ» եւ ես վճարագիրը գրեցի: Հաշիվս մէջ դրամ չկար այդ Ուրբաթ օրը եւ չէի գիտեր, թէ Երեքշաբթի օրուընէ առաջ ինչպէս դրամ պիտի ըլլար հաշիվս մէջ, բայց գոնէ ամբողջ շաբաթավերջին ելեկտրականութիւն ունէինք: Ես չեմ յիշեր, թէ ինչ ըրի Երեքշաբթի օրը, բայց հաւանաբար գրաւի դնելու բան մը գտայ:

Ասիկա օր մըն էր մեր ֆինանսապէս քայքայուած կեանքին մէջ: Երեւակայեցէք ինը տարի այսպէս ապրիլ: Այդպիսի ճնշումի տակ ապրիլը ամէն տեսակի տեսիլք կը դադրեցնէ եւ ամէն օրուան բերելիք ուրախութեան ամէն մէկ կաթիլը կը գողնայ քեզմէ: Բոլոր միտքերը կեդրոնացած են գոյատեւելու վրայ, ուրկէ՞ դրամ գտնել՝ յաջորդ վճարումը կատարելու համար: Արդեօք ես շատ ծախսեցի անցեալ շաբաթ: Արդեօք պէտք է, որ հաշուիչ մեքենաս հետս առնեմ երբ մթերք գնելու կ'երթամ, որպէսզի վստահ ըլլամ, որ պէտք եղածէն անելի չեմ ծախսեր: Միշտ կը մտածեմ ինչպէս ամէն բան ամէնէն աժան ձեւով ընել: Բարեկամ, ատիկա ապրիլ չէ՛: Նայեցէք Մատթէոս 6. 25-ը ինչ կըսէ:

*Ուստի կ'ըսեմ ձեզի. «Հոգ մի՛ ընէք ձեր կեանքին համար թէ ինչ պիտի ուրէք, կամ ինչ պիտի խմէք. ոչ ալ ձեր մարմիններուն համար թէ ինչ պիտի հագնիք: չէ՞ որ կեանքը կերակուրէն անելի է ու մարմինը հագուստէն»:*

— Մատթէոս 6. 25

Յիսուս կ'ըսէ, թէ կեանքի բաները կեանք չեն: Ամէն բան, որ կը գտնուի այս կեանքին մէջ, կեանքին, մեր նպատակին աջակցելու համար է: Բայց քանի որ Ադամ կորսնցուց Թագաւորութեան

հովանաւորութիւնը, կեանքը տակնուվրայ եղաւ եւ հիմա ամէն բան, որ կ'աջակցի կեանքին, ինքնին կեանքէն աւելի կարելի է: Մարդիկ գաղափար չունին, թէ նոյնիսկ ինչ է իրական կեանքը եւ մանաւանդ չեն գիտեր իրենց իսկական ինքնութիւնը: Ոեւէ մէկուն հարցուցէք, թէ ո՞վ են իրենք եւ ձեզի պիտի ըսեն, թէ ինչ կ'ընեն: «Ես բժիշկ եմ, ես անշարժ կալուածի միջնորդ եմ», ելլն: Ո՛չ, ատիկա քու ինքնութիւնդ չէ. ատիկա քու գործդ է: Մարդը իր երազները կորսնցուցած է: Ըսել կ'ուզեմ, թէ հիմա մարդը կ'երազէ, թէ ինչպէս աւելի դրամ պիտի շահի, բայց կորսնցուցած է իր նպատակին երազը: Այլ խօսքով՝ այն բանը, որ ամենաշատ դրամը կ'ապահովէ, իր երազը կը դառնայ: Բայց քանի որ իւրաքանչիւր անձ իւրայատուկ կերպով ստեղծուած է, տարբեր տաղանդներով եւ կարողութիւններով, անոնք իրենք զիրենք կը գտնեն զբաղումի մը կամ գործի մը մէջ, որ իրենց սիրածը չէ: Կեանքը կը դառնայ ձանձրացուցիչ, երկարատեւ շաբաթներ, որուն ընթացքին կը սպասես շաբաթավերջին ազատ ըլլալուն կամ ձանձրացուցիչ երկարատեւ կեանք մը, որուն ընթացքին կը սպասես հանգստեան կոչուելու:

Ուրեմն քեզի հարցում մը հարցնեմ: Եթէ դրամի պէտք չունենայիր, եթէ ունենայիր աւելի դրամ քան երբեւէ կարենայիր ծախսել քու կեանքիդ ընթացքին, ինչ կ'ընէիր: Հաւանաբար պիտի գտնէիր ընելու բան մը, որ քու հիմակուայ ըրածէդ տարբեր է: Ինչպէս նախապէս նշեցի, վիճակագրութիւն մը ցոյց կու տայ, թէ երբ ամերիկացիներուն կը հարցուի, թէ արդեօք կը սիրեն իրենց գործերը, անոնց առնուազն եօթանասուն տոկոսը կ'ըսէ, թէ իրենց սիրած գործը չեն աշխատիր: Կ'ուզեմ հասկնաք, որ հարստութեան ետեւէն վազելը, բան մը յաջողապէս կատարելու ճշումը եւ վաղուան մասին յարատեւ մտահոգուիլը երբեք Աստուծոյ նպատակը չէին սկիզբը:

*Աստուած՝ իր պարկերովը ստեղծեց մարդը. Աստուծոյ պարկերովը ստեղծեց զանիկա, արու եւ էգ ստեղծեց զանոնք: Աստուած օրհնեց զանոնք եւ Աստուած անոնց ըսաւ. «Աճեցէք ու շարցէք ու երկիրը լեցուցէք եւ անոր*

*դիրեցէք ու ծովու ձուկերուն ու երկնքի թռչուններուն եւ երկրի վրայ սողացող բոլոր կենդանիներուն իշխեցէք»:*

*Աստուած ըսաւ. «Ահա ձեզի տուի բոլոր երկրի վրայ եղած ամէն սերմ ունեցող խոտ ու ամէն ծառ, որուն մէջ սերմ տուող ծառի պտուղ կայ: Ասոնք ձեզի կերակուր պիտի ըլլան: Ու երկրի բոլոր գազաններուն ու երկնքի բոլոր թռչուններուն եւ երկրի վրայ կենդանութեան շունչ ունեցող բոլոր սողուններուն՝ կերակուրի համար կանաչ խոտ տուի»:* Ու այնպէս եղաւ:

*Եւ Աստուած իր բոլոր ըրածը տեսաւ: Ահա շապ բարի էր: Եւ իրիկուն ու առտու ըլլալով՝ վեցերորդ օրը եղաւ:*

– Ծննդոց 1. 27-31

Մարդը ստեղծագործութեան վեցերորդ օրը ստեղծուեցա՛վ վեցերորդ օրուան վերջաւորութեան, ճշգրիտ ըլլալու համար: Ան վեցերորդ օրուան վերջաւորութեան ստեղծուեցաւ, որովհետեւ ան ստեղծուած էր Աստուծոյ հետ բնակելու եօթներորդ օրը, այն օրը, զոր մենք գիտենք որպէս հանգիստի օր:

*Ամբողջացան երկինք ու երկիր եւ անոնց բոլոր զարդերը: Եւ Աստուած իր բոլոր գործերը եօթներորդ օրը լմնցուց ու եօթներորդ օրը հանգստացաւ իր բոլոր գործերէն: Եւ Աստուած եօթներորդ օրը օրհնեց ու սրբեց զանիկա. վասնզի անոր մէջ հանգստացաւ իր բոլոր գործերէն՝ որոնք ստեղծագործութեան մէջ կատարած էր:*

– Ծննդոց 2. 1-3

Աստուածաշունչը կ'ըսէ, թէ եօթներորդ օրը Աստուած հանգստացաւ: Ան յոգնած չէր: Ան ստեղծագործութիւնը ամբողջացուցած էր: Ամէն բան ամբողջացած էր: Ամէն բան, զոր մարդը երբեւէ պէտք կրնար ունենալ երկրի վրայ արդէն իսկ երկրի վրայ էր երբ մարդը յայտնուեցաւ: Խաղաղութիւն: Մարդը ունէր ամէն պարէն, որուն պէտք կրնար ունենալ: Հաշիւներ վճարելու մտահոգութիւն չկար,

հիանդանալու մտահոգութիւն չկար: Ան կատարեալ մարմին ունէր եւ կատարեալ կին: Անոնք պէտք էր կեդրոնանային միայն իրարու վրայ, Աստուծոյ եւ իրենց պարտականութեան կամ իրենց նպատակին վրայ: Ադամ երկրին պատասխանատու էր. ան ամբողջութեամբ կը տիրէր երկրի վրայ Աստուծոյ Թագաւորութեան իշխանութեամբ եւ զօրութեամբ: Բայց մենք արդէն գիտենք, թէ ինչպէս վերջացաւ այդ պատմութիւնը: Ադամն ու Եան դաւաճանութիւն գործեցին

**ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆԸ  
ԿԸ ՀՐԱՊՈՒՐԷ  
ՄԵՋ ՀԱՒԱՆԱԿԱՆ  
ՓԱԽՈՒՍՏՈՎ ՄԸ ԴԷՊԻ  
ՀԱՆԳՍՏԱՎԱՅՐ՝ ՏԵՂ  
ՄԸ, ՈՒՐ ԿՐՆԱՆՔ  
ԿԵԴՐՈՆԱՆԱԼ ԱՅՆ  
ԲԱՆԵՐՈՒՆ ՎՐԱՅ, ԶՈՐՍ  
ԻՐԱՊԵՍ Կ՝ՈՒՋԵՆՔ  
ԸՆԵԼ, ԳՈՅԱՏԵՒՄԱՆ  
ՓՈԽԱՐԷՆ ԱՊՐԻԼ  
ՆՊԱՏԱԿԱՌՈՒՄԾ  
ԿԵԱՆՔԵՐ:**

Աստուծոյ Թագաւորութեան դէմ եւ կորսնցուցին իրենց դիրքը, կորսնցուցին իրենց պարէնը եւ կորսնցուցին իրենց նպատակը: Անոնց նպատակը դարձաւ գոյատեւումը: Հիմա մտահոգութիւնը, վախը եւ գոյատեւման պայքարը կը զբաղեցնէին իրենց միտքերը: Ինչպէս Ծննդոց Գիրքին երրորդ գլուխ տասնեօթներորդ համարը (Ծննդոց 3. 17) կ'ըսէ, քրտնաջան աշխատանք կը պահանջուէր իրենցմէ:

## **Ադամ կորսնցնոց եօթներորդ օրը**

Հիմա այլեւս հանգիստ չկար, խաղաղութիւն չկար: Մութ անկատարութիւն մը պատեց իր կեանքը եւ Ադամ ստիպուած էր վազել՝ այդ պարապութեան առաջը առնելու համար: Այդ ժամանակէն ի վեր մարդը այս անկատարութեան վիճակին մէջ ապրած է: Բայց յոյս կար: Երբ մարդը ինկաւ, Աստուած իրեն տուաւ յիշատակ մը, պատկեր մը այն բանին, զոր օր մը Ան պիտի վերադարձնէր Իր ստեղծագործութեան: Ատիկա Շաբաթ կը կոչուէր: «Շաբաթ» բառը բառացիօրէն կը նշանակէ հանգիստ: Շաբթուան եօթներորդ օրը մարդուն տրուեցաւ որպէս Շաբաթ օր: Շաբաթին

պահանջը, ինչպէս կրնաք պատկերացնել, բնաւ չաշխատիլն էր. ոչ քրտնիլ եւ ոչ ալ ծանր աշխատիլ արտօնուած էր: Այդ մէկը օր մըն էր, երբ մարդը պէտք էր կենար, իր ընտանիքը վայելէր, եւ զԱստուած պաշտէր: Շաբաթ օրուան ամբողջ պատրաստութիւնը պէտք էր ամբողջանար նախքան Շաբաթը սկսէր: Նոյնիսկ Շաբաթ օրուան կերակուրը պէտք էր պատրաստուէր նախորդ իրիկունը: Ատիկա հանգստեան օր էր ամէն պէտք լիովին հայթայթուած եւ ամէն հնարաւոր պէտքի բոլոր մանրամասնութիւնները լիովին հոգացուած ըլլալով: Մարդը կրնար կանգ առնել եւ գոյատեւումէ զատ ուրիշ բանի մասին մտածել:

Շաբաթ օրը պարզապէս օր մըն էր: Բայց այն օրէն ի վեր, մարդը հանգիստ կեանքի մասին կ'երագէ: Մարդուն հարստութեան ձգտումը նշան է, թէ ան կ'ուզէ ազատիլ քրտնաջան աշխատանքէն, որ իր ամբողջ կեանքին ընթացքին զինք բանտարկած է: Հարստութիւնը կը հրապուրէ մեզ հաւանական փախուստով մը դէպի հանգստավայր՝ տեղ մը, ուր կրնանք կեդրոնանալ այն բաներուն վրայ, զորս իրապէս կ'ուզենք ընել՝ ապրիլ նպատակաուղղուած կեանքեր գոյատեւման փոխարէն:

Թէ դուք այսօր, Շաբաթը, եօթներորդ օրը, կը տօնէք Շաբաթ օրը կամ Կիրակի օրը, անիկա շատ չէ պատուուած մեր մշակոյթին մէջ: Այո, եկեղեցի յաճախողներուն մեծամասնութիւնը Կիրակի առտու եկեղեցի կ'երթայ, բայց եւ այնպէս երբ ամբողջ մշակոյթին կը նայիք, այդ օրը չէք կրնար զանազանել ուրիշ որեւէ աշխատանքի օրէ: Երբ մանուկ էի, Կիրակի օրը ամէն տեղ կը գոցէին: Դուք չէիք կրնար գնում ընել Կիրակի օրը. նոյնիսկ վառելանիւթ չէիք կրնար գնել Կիրակի օրը: Հայրս պէտք էր անպայման Շաբաթ երեկոյեան վառելանիւթ գնէր, որպէսզի Կիրակի օրուան իր պէտքը ապահովէր: Եթէ իմ մասիս շատ բան գիտէք, գիտէք, թէ ես որսորդութիւնը կը սիրեմ. Կիրակի օրը չէի կրնար ոչ իսկ որսորդութիւն ընել: Անօրինական էր Կիրակի օրը որսորդութիւն ընել: Կիրակի օրը մարդիկ իրենց լաագոյն հագուստը կը հագնէին եւ ընտանեկան մեծ ընթրիք կ'ունենային: Բայց անշուշտ այդ ամէնը փոխուած է այսօր: Բայց Շաբաթին ճշմարիտ պատկերը չէ փոխուած:



Ինչքան ալ լաւ պատրաստութիւն տեսնուած ըլլար Շաբաթ օրուան համար, ինչքան ալ հիանալի ըլլար ընտանեկան ճաշը, Երկուշաբթի օրը պիտի գար: Անգլերէնով «Մանտէյ մորնին պլուզ» (Երկուշաբթի առտուայ տխրութիւն) խօսքը կամ արտայայտութիւնը միշտ ալ սարսափ բառին կամ վախով սպասելուն հոմանիշը եղած է: «Պէտք է գործի երթամ» եւ «վերադառնանք նոյն երկար, միօրինակ, ձանձրացուցիչ գործին» նախադասութիւնները կը գործածուէին Երկուշաբթի առտուն նկարագրելու համար: Եթէ կանգ առնես եւ մտածես այդ մասին, անոնք ստրկութեան տպաւորութիւնը կը ձգեն: Բայց փառք Աստուծոյ, որ Ուրբաթ է: Նոյնիսկ այսօր, շաբաթավերջը եւ Շաբաթը մարդոց մեծամասնութեան համար ժամանակաւոր հանգիստ մը կ'ընծայեն: Բայց ատիկա շատ կարճ ժամանակուան մը համար է եւ Երկուշաբթի առաւօտեան խճողումը միշտ հոն է, կը սպասէ մարդոց:

Բայց եթէ իրապէս միջոց մը գոյութիւն ունենար կեանքը շարունակ Շաբաթի մէջ ապրելու: Ինչքան հիանալի պիտի ըլլար եթէ իսկապէս ըլլար միջոց մը կեանքը ապրելու ազատ վախէն, հայթայթուած պաշարով, նպատակով լեցուն եւ հանգիստ վիճակով: Տրենտան եւ ես ինը երկար տարիներ ապրեցանք տանջանքի, վախի, հիւանդութեան եւ անապահովութեան կեանք մը մինչեւ որ յայտնաբերեցինք, թէ Շաբաթ օրուան հանգիստը իրականութեան մէջ ընտրութիւն մըն էր մեր կեանքերուն համար: Լհորջ եմ:

*Ուրեմն Աստուծոյ ժողովուրդին դեռ հանգիստ մը կը մնայ:  
Վասնզի ան որ անոր հանգիստը մտաւ, ալ հանգստեցաւ  
իր գործերէն, ինչպէս Աստուած ալ իրեններէն: Ուրեմն  
ջանանք այն հանգիստը մտնել, որ չըլլայ թէ մէկը նոյն  
անհաւարութեան մէջ իյնայ:*

– Երբայացիներուն 4. 9-11

Բարեկամ, ասիկա Նոր Կտակարանն է: Այսօր Աստուծոյ ժողովուրդին համար հասանելի է Շաբաթ օրուայ հանգիստը: Այս աստուածաշնչական հատուածը կը նշէ, թէ մենք կրնանք Աստուծոյ

հանգիստին մէջ մտնել եւ մեր գործէն հանգստանալ: Յիշեցէք, թէ ինչ տրվեցանք՝ Աստուծոյ հանգիստը կ'ըսէ, թէ ամէն բան ամբողջական է, ամբողջացած է եւ պէտք եղած պաշարն ու հովանաւորութիւնը հայթայթուած են: Կայ ազատութիւն գոյատեւման մտայնութենէն, ազատութիւն աղքատութեամբ բանտարկուելէն եւ ազատութիւն վատառողջութենէն ու հիւանդութենէն: Նոր այլընտրանքներ կան: Շաբաթը միայն Հին Կտակարանի տեղեկութիւն չէր, ատիկա այսօր մեզի համար ալ է: Բայց նախքան կարծես, թէ ես

**ԻՆՉՔԱՆ ՀԻԱՆԱԼԻ  
ՊԻՏԻ ԸԼԼԱՐ ԵԹԷ  
ԻՍԿԱՊԷՍ ԸԼԼԱՐ  
ՄԻՋՈՑ ՄԸ ԿԵԱՆՔԸ  
ԱՊՐԵԼՈՒ ԱԶԱՏ ՎԱԽԵՆ,  
ՀԱՅԹԱՅԹՈՒԱԾ  
ՊԱՇԱՐՈՎ, ՆՊԱՏԱԿՈՎ  
ԼԵՑՈՒՆ ԵՒ ՀԱՆԳԻՍ  
ՎԻՃԱԿՈՎ:**

կը խօսիմ Հին Կտակարանի ամբողջ օրինապաշտութեան եւ ծէսերուն տակ ապրելու մասին, յստակացնեմ, որ ես այդ մասին չեմ խօսիր: Ատոր փոխարէն՝ կ'ուզեմ ուսումնասիրել այս Շաբաթ օրուայ հանգիստը, որուն մասին կը խօսի Եբրայեցիներուն ղրկուած նամակը, որովհետեւ ինչպէս Տրենտան եւ ես յայտնաբերած ենք, այստեղ

կը գտնուի շատ կարեւոր բանալի մը, որ կ'արտօնէ, որ Աստուծոյ Թագաւորութիւնը գործէ եւ հայթայթէ մեր կեանքերուն մէջ այնպէս, ինչպէս Աստուած նախատեսած է:

**ՑՆՅՈՂ ԲԱՆ՝ ՇԱԲԱԹԸ ԱՅԼԵԻՍ ՕՐ ՄԸ ՉԷ**

Յուսամ, որ այդ նախադասութիւնը քու ուշադրութիւնդ գրաւեց: Քրիստոսի մարմինին մէջ մեծ քննարկում եղած է, թէ ինչպէս պէտք է Շաբաթը տօնել՝ Շաբաթ օրը, Կիրակի օրը կամ Ուրբաթ գիշեր մայրամուտէն սկսեալ մինչեւ Շաբաթ երեկոյան մայրամուտը: Տարբեր յարանուանութիւններ յառաջ եկած են իրենց Շաբաթի մեկնաբանութեան հիման վրայ: Նախքան այս գիրքը զգուանքով սենեակին մէկ կողմէն միւսը նետես կարծելով, թէ ես հերետիկոս մըն եմ, կը խնդրեմ, որ պահ մը համբերես եւ եկուր նայինք Կողոսացիներուն ղրկուած նամակին 2. 16-17:

*Կարենորութիւն մի՛ տաք անոնց՝ որոնք ձեզ կը քննադատեն, թէ ինչո՞ւ չէք պահեր ուրելու եւ խմելու, տօնակատարութեանց, ամսամուտերու եւ Շաբաթ օրերու վերաբերող կանոնները. որովհետեւ այդ բոլորը գալիք իրականութեանց շուքն են, իսկ իրականութիւնը Քրիստոսի մէջ է:*

– Կողոսացիներուն 2. 16-17

Ուշադրութիւն դարձուր, թէ Պօղոս ինչ կ'ըսէ: Շաբաթ օրը գալիք բաներուն շուքն էր. իսկ իրականութիւնը Քրիստոսի մէջ է: Շաբաթ օրը շուք մըն էր, իրականութիւնը չէր: Եթէ Քրիստոսն է իրականութիւնը, ուրեմն Շաբաթ օրը Անոր ինքնութեան եւ ըրածին ստուերն էր: Այսպէս ըսեմ՝ Շաբաթ օրը զօրութիւն չունի հեռացնելու կամ փոխելու երկրի քրտնաջան աշխատանքի անէծքի համակարգը, զոր Ադամ բերաւ երկրի ոլորտին մէջ: Եթէ դուն կրօնապէս կը պատուես զանիկա, անիկա ինքնին զօրութիւն չունի քեզ ազատագրելու: Սակայն անիկա շուքն է, պատկերը այն բանին, զոր դուն պիտի գտնես Քրիստոսի մէջ:

Երբ ես առաջին դասարան էի, ուսուցիչս մեր բոլորին գծել տուաւ մեր գլուխին ուրուագիծը կողմէն դիտուած: Լուսարձակ մը ադին եւ մեզ անոր առջեւ նստեցուցին եւ անիկա մեր գլխուն շուքը արձակեց ճերմակ թուղթի մը վրայ: Յետոյ անոնք մեր շուքերուն ուրուագիծը գծեցին եւ այդպիսով մեր ստուերագիրը (ուրուագիծը) ստեղծեցին, զոր մենք կտրեցինք եւ տուն տարինք մեր մայրերուն՝ Մայրերու Օրուան առթիւ: Շուքը քիչ մը ինծի կը նմանէր, բայց իմ էութենէս, իմ նկարագրիէս կամ անհատականութենէս ոչ մէկ բան ունէր: Բայց անիկա որոշ տեղեկութիւն կու տար իմ մասիս:

Շաբաթը նոյն բանը ըրաւ: Անոր շուքը ըսաւ, որ պէտք չէ աշխատիլ, չկայ քրտնաջան աշխատանք: Սակայն ատիկա պարզապէս շուք էր, իրականութիւնը չէր: Բայց ատիկա կը մատնանշէր Յիսուս Քրիստոսի, որ, իրականութեան մէջ, մեզ ազատագրեց օրէնքին անէծքէն ու աշխարհի անէծքի համակարգէն եւ վերահաստատեց մեզ իբրեւ Աստուծոյ որդիներ ու դուստրեր եւ Աստուծոյ մեծ

Թագաւորութեան քաղաքացիներ: Դարձեալ ատիկա պատկեր մըն էր, թէ Յիսուս օր մը ինչ պիտի վերադարձնէր մեզի: Ատիկա ամբողջացած գործ մըն է, ուր ամէն բան, որուն պէտք ունինք կեանքի մէջ, մեզի վերադարձուած է: Սակայն Եբրայեցիներուն դրկուած նամակը կ'ըսէ, թէ մենք այս հանգիստին մէջ կը մտնենք հաւատքով: Յիշէ, որ հաւատք կը պահանջուի, որպէսզի երկինքը օրինական իրաւասութիւն ունենայ երկրի վրայ: Իսաչին վրայ Յիսուս աղաղակեց. «Ամէն բան կատարուեցաւ» ճիշդ այնպէս ինչպէս Աստուած վեցերորդ օրուան վերջաւորութեան ըսաւ, թէ ամէն բան ամբողջացած էր:

Այսօր Շաբաթը մարդոց մեծամասնութեան համար կրօնական օր է: Մարդիկ Շաբաթ օրուան կը նային որպէս Աստուծոյ օրը, օր մը, երբ Աստուծոյ պարտական ենք եկեղեցի երթալու, Աստուծոյ համար բաներ ընելու եւ ուրիշ կրօնական բաներ ընելու: Յիսուս պէտք ունեցաւ սրբագրելու Իր աշակերտները, որոնք նոյն մտայնութիւնը ունէին:

*Շաբաթը մարդուն համար եղաւ, ո՛չ թէ մարդը շաբաթին համար:*

– Մարկոս 2. 27

Շաբաթը մարդուն համար եղաւ, ո՛չ թէ մարդը շաբաթին համար: Գիտէ՞ս, որ շատ մարդիկ մեղաւոր կը զգան եթէ եկեղեցի չերթան: Ինչո՞ւ մեղաւոր պիտի զգան եկեղեցիէն բացակայելու համար երբ իրականութեան մէջ իրենք են եկեղեցին: Ես չեմ ըսեր, որ մենք բնաւ պէտք չէ միասին հաւաքուինք պաշտելու համար, բայց այս մտայնութիւնը ցոյց կու տայ, որ անոնք սխալ պատկերացում մը ունին Շաբաթին մասին:

Գիտե՞մ, որ կրնաք տակաւին շփոթած ըլլալ, ուրեմն քիչ մը ատիկ պիտի խորանամ անդրադառնալով Յիսուսի յայտարարութեան, որ ըրաւ Յովհաննէս 11-ին մէջ:

*Յիսուս երբ գնաց, գտաւ որ անիկա արդէն չորս օրուան գերեզմանը դրուած էր: Բեթանիա Երուսաղէմի մօտ էր՝ քսանհինգ ասպարէզի չափ: Հրեաներէն շարեր Մարթային ու Մարիամին եկած էին, որպէսզի մխիթարեն զանոնք իրենց եղբօրը համար: Արդ՝ երբ Մարթան լսեց թէ Յիսուս կու գայ, զանիկա դիմաւորելու գնաց, բայց Մարիամ քանը մէջ նստեր էր:*

*Մարթա ըսաւ Յիսուսին. «Տէր, եթէ հոս ըլլայիր, իմ եղբայրս չէր մեռներ. բայց գիտեմ թէ հիմա ալ դուն ինչ որ խնդրես Աստուծմէ, Աստուծ պիտի փայ քեզի»:*

*Յիսուս ըսաւ անոր. «Քու եղբայրդ յարութիւն պիտի առնէ»:*  
*Մարթա ըսաւ անոր. «Գիտեմ թէ յարութեան ժամանակը՝ վերջին օրը՝ յարութիւն պիտի առնէ»:*

*Յիսուս ըսաւ անոր. «Ես եմ յարութիւնն ու կեանքը: Ան որ ինծի կը հաւատայ, թէեւ մեռնի՝ պիտի ապրի. եւ ան որ կենդանի է ու ինծի կը հաւատայ, յաւիտեան պիտի չմեռնի: Դուն կը հաւատանս ասոր»:* Ըսաւ անոր. «Այո՛, Տէր, ես հաւատացեր եմ, որ դուն ես Քրիստոսը՝ Աստուծոյ Որդին՝ որ աշխարհ գալու էիր»:

– Յովհաննէս 11. 17-27

Յիսուս ըսաւ, որ Ինքն էր յարութիւնը. Ատիկա պարզապէս օր մը չէր: Շաբաթ օրը եղած է եւ կը մնայ շուքը այն բոլոր բաներուն, զորս Յիսուս մեզի համար ըրաւ խաչին վրայ: Յիսուս ճշմարիտ Շաբաթն է եւ Իրմով մենք կրնանք Աստուծոյ Թագաւորութեան մէջ մտնել եւ գործածել այն ինչ որ այդ Թագաւորութիւնը ունի իր մէջ: Ուստի կրնանք հանգստանալ:

Վերադառնանք մեր Նոր Կտակարանի համարին Եբրայեցիներուն դրկուած նամակին մէջ:

*Ուրեմն Աստուծոյ ժողովուրդին դեռ հանգիստ մը կը մնայ:  
Վասնզի ան որ անոր հանգիստը մտաւ, ալ հանգչեցաւ*

*իր գործերէն, ինչպէս Աստուած ալ իրեններէն: Ուրեմն ջանանք այն հանգիստը մտնել, որ չըլլայ թէ մէկը նոյն անհաւատութեան մէջ իյնայ:*

– Եբրայացիներուն 4. 9-11

Շաբաթ օրուան շուքը կ'ըսէ, թէ արգիլուած է, որ ծանր աշխատանք տանիս ու քրտնիս քու պէտքերուդ համար եօթերորդ օրուան ընթացքին, բայց այս մէկը միայն փոքր պատկեր մը կու տար Յիսուսին ընելիքին, որ մեզ երկրի քրտնաջան աշխատանքի համակարգէն ազատագրելն էր: Այլ խօսքով՝ այդ պատկերը իրականացաւ Քրիստոսով: Խորքին մէջ, առաջին պատգամը, զոր Յիսուս փոխանցեց, Շաբաթ օրուան կ'ակնարկէր: Եսայեայ 61-ին մէջ, կը գտնենք Իր քարոզին առաջին խօսքերը, զորս Ինք քարոզեց Ղուկասի Աւետարանին չորրորդ գլուխին մէջ:

*Տէր Եհովային Հոգին իմ վրաս է, վասնզի Տէրը զիս օծեց ու զիս դրկեց աղքատներուն աւելորդ փառքով:*

– Եսայեայ 61. 1

Ըսելով, թէ աղքատութենէն ելք կար, ան կ'ըսէր, թէ երկրի քրտնաջան աշխատանքի անէծքի համակարգէն ելք կար: Պաշար գտնելու կամ ապրուստ ապահովելու այս ստրկութիւնն էր, որ մարդիկը գերի կը պահէր եւ անոնք չէին կրնար հանգիստ գտնել: Սակայն Շաբաթ օրը միակ պատկերը չէր, զոր Ատուած իր ժողովուրդին տուաւ գալիք բաներուն վերահաստատումին վերաբերեալ: Կար նաեւ Շաբաթ տարին:

*Եւ ամէն եօթներորդ փարի պարտքեր շնորհէ: Շնորհելու կանոնը այս է՝ ամէն պարտավոր որ իր դրացիին բան մը փոխ փրուած է, զանհկա պիտի շնորհէ. իր դրացիէն կամ եղբորմէն պիտի չպահանջէ զայն, վասնզի թողութիւն յայտարարուած է Տէրոջմէ: Օտարազգիէն պիտի պահանջես, բայց քու եղբորմէդ առնելիքդ պիտի շնորհես.*

*մինչեւ որ քու քովդ աղքատ չգտնուի. վասնզի Տէրը անշուշտ քեզ պիտի օրհնէ այն երկրին մէջ, որ քու Տէր Աստուածդ քեզի ժառանգութիւն պիտի տայ, որպէսզի անոր տիրես: Միայն՝ եթէ քու Տէր Աստուծոյդ խօսքին ամէն կերպով հնազանդիս ու այս բոլոր պատուիրանքները, որոնք ես այսօր քեզի կը պատուիրեմ՝ զգուշութեամբ գործադրես, քու Տէր Աստուածդ ալ քեզի ըսածին պէս քեզ պիտի օրհնէ եւ դուն շար ազգերու փոխ պիտի տաս, բայց դուն փոխ մի՛ առներ, քանզի դուն շար ազգերու վրայ պիտի տիրես, բայց անոնք քու վրադ թող չտիրեն:*

– Բ. Օրինաց 15. 1-6

Նկատի առ, որ ամէն եօթերորդ տարին անոնք բոլոր պարտքերը պէտք էր շնորհէին: Դարձեալ կը տեսնենք, որ Աստուած կը գործածէ եօթը թիւը՝ ցոյց տալու համար, թէ ամէն բան ամբողջացած է: Պակաս չկայ. ան հայթայթած է մարդուն համար անհրաժեշտ ամէն բան: Բայց եւ այնպէս, եթէ ոմանք Անոր իմաստութեան վրայ կը կասկածին երբ Ան կ'ըսէ, թէ պէտք է շնորհել պարտքերը, Ան կ'աւելցնէ. «**Մինչեւ որ քու քովդ աղքատ չգտնուի. վասնզի Տէրը անշուշտ քեզ պիտի օրհնէ այն երկրին մէջ, որ քու Տէր Աստուածդ քեզի ժառանգութիւն պիտի տայ, որպէսզի անոր տիրես**»: Ան կը շարունակէ ըսելով, թէ անոնք այնքան պիտի օրհնուին, որ փոխ տուողներ պիտի ըլլան եւ ո՛չ փոխ առնողներ: Դարձեալ հոս կը տեսնենք, թէ երկրի քրտնաջան աշխատանքի անէծքի համակարգը անվաւեր կը դառնայ կեանքի նոր օրէնքի մը շնորհիւ, որ մեզ հանեց մեղքի եւ մահուան օրէնքի անէծքէն:

Քանի որ ամբողջ տարուան ընթացքին Շաբաթ օրը անոնք պէտք չէր տքնաջան աշխատանք տանէին եւ քրտնէին, հետեւաբար անոնց արտօնուած չէր հունտ ցանել: Բայց անկէ ետք ամէն բան քիչ մը աւելի երկարատեւ դարձաւ: Անոնք ոչ միայն մէկու մը պարտքը պէտք էր շնորհէին, այլեւ անոնց արտօնուած չէր հունտ ցանել: Հոս մէկը կրնայ ըսել. «Ես կրնամ մէկ օր սառնարանին մէջ եղածով ապրիլ, բայց ամբողջ տարի մը առանց աշխատելու գոյատեւելը քիչ

մը աւելի դժուար է»: Ուրեմն հոս ալ գալիք բաներուն շուքը մեզի կ'ըսէ, որ պարտքերը շնորհենք կամ ներենք: Ան անոնց ըսաւ, թէ պէտք պիտի չունենան պարտք գործածելու, որովհետեւ այնքան շատ պիտի ունենան, որ փոխ պիտի տան եւ փոխ պիտի չառնեն: Պարտքը համակարգ մըն է, որ հիմնուած է անբաւարարութեան վրայ, բայց Աստուած լիովին պիտի հայթայթէ իրենց պէտքերը այնպէս որ այլեւս պարտքի պէտք պիտի չըլլայ: Գալիք բաներուն շուքը կ'ըսէ. «Հունտերդ պիտի չցանես», ակնարկելով երկրի անէծքի համակարգէն դուրս նոր ապրելաձեւի մը: Հիմա այս ամէնը կը գտնուի Յիսուս Քրիստոսի մէջ:

Բայց սպասէ՛, աւելին կայ՝ ամենամեծ պատկերը, որ Աստուծոյ ժողովուրդին ցոյց պիտի տար գալիք բաները: Ատիկա կը կոչուէր Յոբելեան Տարին:



## ԵՕԹՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

# ԱՍԻԿԱ ԱՆԿԱՐԵԼԻ Է

Այն ինչ որ պիտի կարդաս հիանալի է: Ոչ, տարբեր ձեռով ըսեմ՝ իրականութեան մէջ պիտի կարծես, թէ ատիկա բացարձակապէս անկարելի է: Կը խօսիմ Յոբելեան Տարուան մասին՝ մեծագոյն պատկերը այն բանին, զոր Յիսուս կ'ուզէ կատարել քու դրամական կեանքիդ մէջ եւ որ գրուած է Հին Կտակարանին մէջ, մինչդեռ քիչեր գիտեն կամ կը հասկնան, թէ ինչ կ'ըսէ այդ մէկը: Մենք արդէն խօսեցանք Շաբաթ օրուան եւ Շաբաթ տարուան մասին, որոնք երկուքն ալ Քրիստոսով մեր ունեցածին շուքն են, բայց հիմա մենք կու գանք մեծ իրադարձութեան՝ Յոբելեան Տարուան:

Միայն անունը արդէն խրախճանք կը յիշեցնէ, այնպէս չէ: Բայց դրամական աշխարհին մէջ, մարդոց մեծամասնութիւնը եւ երբ կ'ըսեմ մարդոց մեծամասնութիւնը, դժբախտաբար այդ մէկը կ'ընդգրկէ Քրիստոնեաներուն մեծ մասը, որոնք շատ բան չունին տօնելու: Ինչպէս նախապէս ըսի, ես երեսունվեց տարիէ կ'աշխատիմ ֆինանսական մարզին մէջ: Այդ ընթացքին ես բազմաթիւ ընկերութիւններ ունեցած եմ եւ միաժամանակ աշխատած եմ տասնեակ, եթէ ոչ հարիւրաւոր, հազարաւոր մարդոց հետ իրենց անձնական դրամական հաշիւներուն վրայ: Ուրեմն գիտեմ, թէ փայլուն, նոր ինքնաշարժին կամ գեղեցիկ մեծ տան ետին ընդհանրապէս ինչ կը գտնուի: Ընդհանրապէս շատ պարտքեր եւ ճնշում կը գտնես: Ես չեմ քննադատեր գեղեցիկ ինքնաշարժ կամ մեծ տուն ունենալը: Պարզապէս այսօրուան կեանքը շատ դրամ կը պահանջէ:

Եւ երկրի անէծքի համակարգը գոյատեւման համակարգ է, որ սովորաբար չի կրնար մարդիկը ազատագրել: Հաւատա՛ ինձի, այդ հազարաւոր մարդիկը, որոնց հանդիպած եմ, անոնց մեծ մասը գէշ մարդիկ չէին: Անոնք առանձին իրենց լաւագոյնը կ'ընէին եւ չէին գիտեր Աստուծոյ Թագաւորութեան մասին կամ այն բաներուն մասին, զորս ես կը բաժնեկցիմ այս գիրքին մէջ: Անշուշտ գիտես, որ Տրենտան եւ ես ինը երկար ու դժուար տարիներ նիւթականօրէն ճնշուած ապրելակերպ մը ունէինք մինչեւ որ սորվեցանք Շաբաթին հանգիստին մասին: Այդքան երկար ժամանակ այդպէս ապրելէ ետք, չես անդրադառնար, թէ՛ որքան անբնական բաներ հանդուրժած ես եւ կարծած ես, թէ՛ անոնք բնական են:

Քանի մը տարի առաջ, Աստուած ինձի հետ խօսեցաւ իմ նեղ մտածելակերպիս մասին եւ ինձի ցոյց տուաւ, որ պէտք է վայելեմ Յոբելեանը, խնճոյքը, բայց ես զանիկա չէի վայելեր: Այո՛, ես պարտքէն ձերբազատուած էի. այո, հիանալի բաներու ականատես եղած էի եւ այո, ուրախ եւ գոհ էի: Բայց դադրեր էի երազելէ եւ Աստուած գիտէր ատիկա եւ կ'ուզէր, որ վերստին մտածելակերպս ընդարձակեմ, որպէսզի շարունակեմ ստեղծագործել եւ երազել: Քիչ մը չոր եւ անհամ դարձած էի, ուրախ բայց չոր:

Ինչպէս ըսի, ես ֆինանսական ծառայութիւններ մատուցանող ընկերութիւն մը ունիմ եւ վաճառողներէս մէկը ամէն տարի զիս կը հրաւիրէր ձեռնարկի մը՝ նախորդ տարուան յաջողութիւնը տօնելու համար: Ներկաները ընդհանրապէս կը բաղկանային մօտաւորապէս երկու հարիւր յիսուն ամենաբարձրաստիճան գործընկերներէն ու տնօրէններէն: Բոլոր ծախսերը ապահովուած ճամբորդութիւն մըն էր դէպի հիանալի վայրեր, բայց քանի մը բարձրաստիճան դիրքերու վրայ գտնուող անձերու համար կար յատուկ գնահատանք եւ գնահատական վճարագիր: Քանի որ ես զբաղած էի մեծ եկեղեցիի մը հովութեամբ, հեռատեսիլի յայտագիրներու մասնակցելով եւ ընկերութիւնս ղեկավարելով, միշտ կը զգայի, որ պարզապէս ժամանակ չունէի պէտք եղած արդիւնքը բերելու՝ բարձր գնահատանք ստանալու համար:

Սակայն տարի մը երբ ժողովի նստած էի եւ կը դիտէի տասը

ամենաբարձրաստիճան գործընկերներ կը գնահատուին եւ իրենց հարիւր հազար տոլրոյ արժող գնահատական վճարագիրները կը ստանան, յանդիմանուեցայ: Մտածեցի. «Մէկ վայրկեան, ես ալ պէտք է այդ բեմին վրայ գնահատուիմ: Ես Աստուծոյ զաւակ եմ եւ Սուրբ Հոգին իմ Խորհրդատուս է: Ես պէտք է հոն՝ վերը ըլլամ եւ Աստուծոյ բարութեան մասին խօսիմ եւ Անոր բարութիւնը ցոյց տամ»: Ուստի այն ատեն Տրենտան եւ ես որոշեցինք, որ յաջորդ տարին մենք այդ բեմին վրայ պիտի ըլլանք: Ինչպէս: Գաղափար չունէինք:

Նախորդ տասը տարիներուն ընթացքին այս մէկ ընկերութեան միջոցաւ տարեկան մօտաւորապէս 3-4 միլիոն տոլար կը շահէի, բայց առաջին տասէն ըլլալու համար տարեկան շուրջ տասնըմէկ միլիոն տոլար պէտք էր շահէի: Բնաւ գաղափար չունէի, թէ ինչպէս այդ աստիճան շահ ընելու պիտի հասնէի եւ նոյնիսկ վստահ չէի, որ այդ մէկը կարելի էր իրագործել իմ բազմազբաղ ժամացուցակովս: Սակայն մէկ բան սորված էի, թէ այդ մէկը չէի կրնար ընել իմ սեփական ուժերովս: Հետեւաբար Տրենտան ու ես աղօթեցինք եւ դրինք մեր նպատակը, ցանեցինք մեր ֆինանսական սերմը, արձակեցինք մեր հաւատքը եւ այդ մէկը կատարուած համարեցինք:

**ՉԵՍ ԱՆԴՐԱԴԱՌՆԱՐ,  
ԹԷ ՈՐՔԱՆ ԱՆԲՆԱԿԱՆ  
ԲԱՆԵՐ ՀԱՆԴՈՒԹԱԾ  
ԵՍ ԵՒ ԿԱՐԾԱԾ ԵՍ, ԹԷ  
ԱՆՈՆՔ ԲՆԱԿԱՆ ԵՆ:**

Ամփոփեմ, յաջորդ տարուան Յունուար ամսուն, երբ նոր տարին նոր կը սկսէր, Աստուած երազի մը մէջ ինծի ցոյց տուաւ, թէ ինչպէս կրնամ հասնիլ իմ նպատակիս: Ան ինծի յստակօրէն ցոյց տուաւ, թէ ճիշդ ինչ պէտք էր ընէի եւ թէ այնքան ատեն որ ինծի ցոյց տուածը կ'ընէի, ես անոր պիտի հասնէի: Գիտէ՞ք, որ այդ տարի մենք այդ տասնմէկ միլիոն տոլարի նպատակին հասանք միայն մէկ վաճառքով: Ինչ մեծ ուրախութիւն էր յաջորդ համագումարին ընկերութեան տասը ամենաբարձրաստիճան անդամներուն հետ այդ բեմին վրայ ըլլալը եւ հարիւր հազար տոլար արժող այդ գնահատականը ստանալը: Կ'ուզէ՞ք գիտնալ ինչքան հիանալի էր այդ զգացումը: Մեծ

խնճոյք էր: Մենք ոչ միայն մեր նպատակին հասանք գնահատական ալ ստանալով, այլ՝ այդ տարի մեր եկամուտը քանի մը հարիւր հազար տոլարով բարձրացաւ: Ինձի համար ատիկա խնճոյք է:

Ուրեմն երբ սկսիմ խօսիլ Հին Կտակարանի իրադարձութիւններէն մէկուն մասին ինչպէս՝ Յոբելեան տարուան, գլուխդ մի՛ շարժեր ժխտական ձեւով մտածելով, թէ ասիկա ձանձրացուցիչ բան մըն է, որովհետեւ այդպէս չէ: Յիշէ՛, որ կեանքը ւաւելի լաւ կ'ընթանայ երբ խնճոյք կայ, ուրեմն եկուր նայինք ամենամեծ իրադարձութեան/ խնճոյքին, որ Իսրայէլի ժողովուրդը կը տօնէր եւ սորվիր ինչպէս դուն ալ քուկդ ունենաս:

## Յոբելեան Տարի

*Դուն փարիներու եօթը շաբաթ համրէ, այսինքն եօթը անգամ եօթը փարի, այնպէս որ փարիներուն եօթը շաբաթներուն ժամանակը քառասունինը փարի թող ըլլայ: Ապա եօթներորդ ամսուան փասներորդ օրը ազդարարութեան փողը պէտք է հնչեցնես, քաւութեան օրը ձեր բոլոր երկրին մէջ պէտք է հնչեցնէք փողը: Եւ յիսուներորդ փարին պիտի սրբէք ու երկրի վրայ անոր բոլոր բնակիչներուն համար ազգապօթիւն պիտի քարոզէք: Ասիկա ձեզի Յոբելեան փարի պէտք է ըլլայ: Ձեզմէ իւրաքանչիւրը իր սպասուածքին թող դառնայ ու ձեզմէ իւրաքանչիւրը իր ազգապոռհմին թող դառնայ: Այս յիսուներորդ փարին Յոբելեան փարի թող ըլլայ ձեզի: Ո՛չ պիտի ցանէք ո՛չ ալ ինքնիրմէ բուսածը պիտի հնձէք եւ ձեր չյօրած այգիէն պիտի չհաւաքէք. վասնզի Յոբելեան փարի է: Այն սուրբ պիտի ըլլայ: Արտէն՝ անոր արդիւնքը կրնաք ուրել:*

– Ղեւտացւոց 25. 8-13

Մինչ կը սկսիմ Յոբելեան Տարին քննարկել, թոյլ տուէք, որ նախ քանի մը հիմնական բաներ ըսեմ, զորս դուք արդէն նկատած պէտք

Է ըլլաք: Յոբելեան Տարին յիսուն տարին անգամ մը կ'ըլլար եւ կու գար ճիշդ Շաբաթ տարուընէ ետք, քառասունիններորդ տարին: Կարծեմ արդէն կը տեսնէք, թէ մեծ հարց մը յառաջ կու գայ, չէ: Շաբաթ տարուան ընթացքին իսրայէլացիներուն արտօնուած չէր մշակաբոյս (հունձք) ցանել: Այդ տարուան յաջորդող Յոբելեան տարին նոյնը կը պահանջէր՝ մշակաբոյս (հունձք) չցանել: Ուրեմն հիմնականօրէն Իսրայէլ երկու յաջորդական տարիներ բերք չէր ունենար, անկէ ետք երրորդ տարուան պէտք էր սպասէր, որպէսզի հունձքերը հասուննային եւ հնձուէին իրենց կերակուրի պաշարը լեցնելէ առաջ: Ասիկա կրնար լուրջ հարց ըլլալ բոլոր անոնց համար, որոնք հաճոյք կ'առնէին համով ճաշ ուտելէն կամ իրենց ապրուստը կ'ապահովէին հատիկներ ծախելով: Երբ Մովսէս փոխանցեց Յոբելեան Տարուան վերաբերող հրահանգները, կրնաք երեակայել այն խառնաշփոթ վիճակը, զոր ստեղծեց: Անշուշտ երեք տարի ազատ ըլլալը աղուոր գաղափար էր, բայց մէկը անոր գինը պէտք էր վճարեր: Առաջին բանը, զոր անոնք հարցուցին Մովսէսին երբ այս բանին մասին իմացան հետեւեալն էր. «Ասիկա ինչպէս կարելի է»:

*Եւ եթէ ըսէք՝ «Եօթներորդ տարին ինչ պիտի ուրե՞նք եթէ չցանենք ու մեր հունձքը չհաւաքենք»: Վեցերորդ տարին ձեր վրայ պիտի դրկեմ իմ օրհնութիւնս, այնպէս որ երեք տարուան արդիւնք պիտի տայ: Եւ մինչեւ որ ութերորդ տարին ցանէք, հին հունձքէն պիտի ուրե՞ք մինչեւ իններորդ տարին: Մինչեւ նոր հունձքին հասնիլը հինէն պիտի ուրե՞ք»:*

– Ղեւտացոց 25. 20-22

Աստուած անոնց տուաւ հիանալի պատասխան մը, զոր պիտի վերլուծենք անոր բաւական ժամանակ տրամադրելով այս գիրքին մնացած բաժինին մէջ: Ան ըսաւ, որ վեցերորդ տարին այնպիսի օրհնութիւն պիտի դրկէր անոնց, որ երեք տարուան արդիւնք պիտի տար մինչեւ որ նոր հունձքը հասնէր Յոբելեան Տարիէն ետք: Այս իրադարձութեան եւ ստեղծագործութեան օրերուն միջեւ

Նմանութիւն մը կայ: Աստուածաշունչը կ'ըսէ, թէ ստեղծագործութեան վեցերորդ օրը Աստուած ասարտեց Իր գործերը եւ հանգստացաւ: Թէեւ հանգստացաւ, բայց յոգնած չէր: Հապա Ան ասարտած էր Իր գործերը: Ամէն բան, որուն մարդը պէտք ունէր, ստեղծուած էր եւ մատչելի էր իրեն համար:

Աստուած հիմա Իսրայէլին ցոյց կու տար պէտք եղածէն աւելին պատկերը, որ ճիշդ հակառակն է երկրի քրտնաջան աշխատանքի անէծքի համակարգին: Ան կ'ուզէր, որ անոնք Ձինք տեսնեն որպէս իրենց մատակարարը եւ հասկնան, թէ Ան մեծ մատակարարումով կը հայթայթէ: Դարձեալ, թէեւ ասիկա իրենց համար Աստուծոյ մատակարարութեան պատկերն էր իրենց օրերուն, միայն Յիսուսի գալէն ետք մենք կրցանք տեսնել ինչ որ շուքը ցոյց կու տար մեզի: Բնական պայմաններու մէջ, անկարելի էր այդ երեք տարիներուն ընթացքին գոյատեւել առանց հունձք ցանելու: Նոյնպէս ալ բնական պայմաններու մէջ, ապրելով երկրի անէծքի համակարգին տակ, դրամ շահելու ձեւ չ'ըլլար առանց ցերեկ ու գիշեր քրտնաջան աշխատելու: Պարզապէս չես կրնար բաւական արագ վազել, որպէսզի այդ մէկը յաջողցնես: Փորձէ երեք տարի չաշխատիլ երբ ունիս չկատարուած պարտաւորութիւններ եւ վստահ եղիր, որ պատրաստած պիտի ըլլաս սնանկութեան բաղադրութիւնը: Բայց Աստուած կը փորձէ իրենց ցոյց տալ նոր ճամբու (միջոցի) մը պատկերը, ուր Աստուած կը հայթայթէ Իր ժողովուրդին պէտքերը, ճիշդ այնպէս ինչպէս Աստուած ամէն բան պատրաստած էր Ադամի համար ստեղծագործութեան ժամանակ:

Նաեւ կան երկու բաներ, զորս Յոբելեան Տարին ցոյց կու տայ մեզի եւ մենք պէտք է տեսնենք: Դարձեալ կը տեսնենք, որ հողը կը հանգստանայ, չկայ ծանր աշխատանք տանիլ եւ քրտնիլ այս յիսուներորդ տարուան մէջ: Պիտի նկատես նաեւ, թէ բոլոր հողերը իրենց բուն սեփականատէրերուն պիտի վերադարձուէին: Երբ Իսրայէլ Յորդանան Գետէն անցաւ, իւրաքանչիւր ցեղ եւ իւրաքանչիւր ընտանիք հող ստացաւ, որմով անոնք պիտի կարենային կերակուր ու եկամուտ ունենալ եւ արտադրել՝ գոյատեւելու համար: Հիմնականօրէն հողը իրենց հարստութիւնն էր: Անոր վրայ բերք

կ'աճեցնէին եւ իրենց հօտերը կը մեծցնէին: Ուրեմն հողը իր սկզբնական սեփականատիրոջ վերադարձնելը բարգաւաճելու կարողութիւնը վերադարձնել կը նշանակէր:

Դարձեալ, ասիկա Յիսուսի մեզի համար ըրածին շուքն է: Շուքը կ'ըսէր, թէ բարգաւաճումը պէտք էր վերադարձուէր Իսրայէլի ժողովուրդին: Իրականութիւնը նոյն բանը կ'ըսէ մեզի, թէ մեր բարգաւաճումն ալ մեզի վերադարձուած է եւ Աստուծոյ Թագաւորութեան ժառանգութիւնը վերստին մերն է:

Կայ նաեւ երրորդ բան մը, զոր Յոբելեան Տարին մեզի ցոյց կու տայ եւ անիկա ալ հետեւեալն է՝ բոլոր ստրուկները պէտք է ազատ արձակուին եւ իրենց ընտանիքներուն վերադառնան: Ասիկա շատ մեծ բան մըն է: Դարձեալ գալիք բաներուն շուքը կ'ըսէ, թէ դուն այլեւս ստրուկ չես, հապա որդի կամ դուստր: Իրականութիւնը, որ Քրիստոսի մէջ է, կ'ըսէ, թէ դուն այլեւս ստրուկ չես, հապա Աստուծոյ տան մէջ որդի կամ դուստր, որ ունի ամէն իրաւունք օգտուելու տան ժառանգութենէն եւ բարգաւաճումէն:

Ուրեմն մտածէ հիմակուայ սորվածիդ մասին: Յիսուս մեզի վերադարձուց ինչ որ Ադամը կորսնցուցած էր: Յիսուս մեզ ազատեց ստրկութենէն՝ դարձնելով մեզ Աստուծոյ որդիներ եւ դուստրեր: Ան ազատեց մեզ երկրի քրտնաջան աշխատանքի անէծքի համակարգէն՝ Աստուծոյ արտօնելով, որ մեր ձեռքերուն գործերը մեծապէս օրինէ: Թէեւ Յիսուս այս բոլոր բաներուն գինը վճարեց, սակայն մենք տակաւին պէտք է գիտնանք ինչպէս այս օգուտները իրացնել մեր իրական կեանքերուն մէջ երկրի վրայ: Այս է, որ Քրիստոնէաներէն շատերը չեն նկատեր կամ չեն հասկնար: Որովհետեւ անոնք չեն գիտեր, թէ Թագաւորութիւնը օրէնքներու համաձայն կը գործէ եւ որովհետեւ չեն գիտեր իրենց իրաւունքները իբրեւ որդիներ ու դուստրեր եւ քաղաքացիներ, կը կարծեն, թէ Աստուած պատահական

**ԵՐԲ ԳԻՏՆԱՍ ՇԱՐԱԹԸ  
ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ  
ՄԵԶԻ ԻՆՉ ՑՈՅՑ ԿՈՒ  
ՏԱՅ, ՀՍԿԱՅԱԿԱՆ  
ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐ  
ԿՐՆԱՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՆԱԼ  
ՔՈՒ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ  
ԿԵԱՆՔԻԴ ՄԷՋ:**

Կերպով կ'ընտրէ մարդիկը, զորս կ'ուզէ օրհնել: Հետեւաբար անոնք չեն սերտեր Թագաւորութեան օրէնքները, որոնց մէջ կը գտնուին բանալիները իրապէս վայելելու եւ իրականացնելու այն բաները, զորս Աստուածաշունչը կ'ըսէ, թէ իրենցն են: Քեզի հաստատ կ'ըսեմ՝ այդ պահուն, որ գիտնաս, թէ Շաբաթը իրականութեան մէջ ինչ ցոյց կու տայ մեզի, հսկայական փոփոխութիւններ կրնան տեղի ունենալ քու ֆինանսական կեանքիդ մէջ:

Եկեղեցիիս մէջ մարդ մը սկսաւ ինծի մտիկ ընել մինչ ես կը սորվեցնէի հաւատքի մասին եւ Աստուծոյ Թագաւորութեան գործունէութեան մասին: Անոր ընտանիքը զաւակներով միասին ուսումնասիրեց այս օրէնքները: Երբ նոր տարին մօտեցաւ, անոնք որոշեցին, որ իրենց օրինական իրաւունքները ի գործ պիտի դնեն եւ պիտի հաւատան, որ լիովին պիտի վճարեն պարտքերը երկու վարձուած կալուածներու, զորս տակաւին նոր այդ տարի ձեռք բերած էին: Եթէ ճիշդ կը յիշեմ, կարծեմ երկու տուներուն պարտքերը վճարելու համար ընդհանուր գումարը չորս հարիւր հազար տոլար էր: Ուրեմն անոնք աղօթեցին եւ բաւական մեծ գումար սերմանեցին այդ տարուան մէջ այդ երկու տուներուն պարտքերը վճարելու նպատակին համար: Ասիկա իրենց կարողութեան սահմաններէն դուրս բան մըն էր, բայց այս մարդը կ'աշխատէր մարզի մը մէջ, ուր հնարաւորութիւն կար բաւականաչափ յաճախորդներ գտնելու կամ յաճախորդներու հետ մեծ պայմանագիրներ կնքելու, որոնք կրնային ֆինանսաւորել այսպիսի հնարաւորութիւն մը: Ամբողջ ընտանիքը բոլորը միասին աղօթեցին եւ համաձայնեցան, որ ասիկա պիտի իրականանար: Ամէն շաբաթ կը վերաքննէին իրենց նպատակը եւ աստուածաշնչական համարները, որոնք իրենց կու տային այն օրինական հիմը, որուն վրայ պիտի կանգնէին՝ այդպիսի բերք մը ակնկալելու համար: Անշուշտ այս պարոնը գիտէր, որ ինք իր բաժինը պէտք էր ընէր:

Տարուան ընթացքին, իսկապէս քանի մը մեծ պայմանագիրներու հնարաւորութիւնը ունեցաւ, բայց ինչպէս բոլոր մեծ ընկերութիւններուն պարագային, բազմամիլիոն տոլար արժող գործարքները (համաձայնութիւնները) շուտով չեն իրականանար:



Մտաւորապէս տարուան կիսուն, այս մարդը գտաւ եւ ձեռք բերաւ մեծ առուծախ մը իր ընկերութեան համար, այնքան մեծ, որ անիկա կը կազմէր իր ընկերութեան ամբողջ տարեկան արտադրութեան քառասուն տոկոսը: Այդ միջնորդավարձով ան կրցաւ իր վարձուած կալուածներէն մէկուն պարտքը լիովին վճարել: Տարեվերջին նաեւ ուրիշ առեւտրական ընկերութիւն մը յայտնեց, թէ իմ ընկերոջս առաջարկած բազմամիլիոն տոլար արժող պայմանագիրը պիտի ստորագրէին: Բայց վերջնական համաձայնութեան հասնելու թուականը շարունակ կը փոխուէր: Փաստաթուղթերը կը պատրաստուէին, յետոյ թուականը կը փոխուէր եւ փաստաթուղթերը պէտք էր վերանայուէին եւ թուականը նորէն կը փոխուէր: Արդէն ուշ աշուն էր երբ բարեկամիս ըսին, թէ ղեկավարող խումբը, որուն հետ ան կ'աշխատէր, փոխուեր էր եւ նոր խումբ մը պիտի գար եւ գործը ստանձնէր:

Բարեկամս շատ ցնցուեցաւ. ան գիտէր, թէ ինչ կը նշանակէր ասիկա: Փոխարինող ղեկավարութիւնը տեղեակ չէր առկախ պայմանագիրէն, որ անշուշտ հիմա անվաւեր էր: Ան գործընթացը վերստին սկիզբէն պէտք էր սկսէր նոր խումբին հետ: Երբ ան նոր տնօրէններուն հետ հանդիպեցաւ, անոնք իր ընկերութեան առաջարկներուն նայելու յօժարակամ կը թուէին: Նոյեմբերի վերջաւորութեան առաջարկը վերաքննելէ ետք, ըսին, թէ կ'ուզէին քայլեր ձեռնարկել այդ համաձայնութիւնը յառաջ տանելու համար: Բայց դարձեալ գրասենեակային (թուղթերու) աշխատանքը յետաձգուեցաւ եւ վերաշարադրուեցաւ մինչեւ որ հասանք նոր տարիէն երկու օր առաջ: Բարեկամս հեռաձայն մը ստացաւ ու իրեն կ'ըսէին, թէ կ'ուզէին հանդիպիլ ու թուղթերը ստորագրել եւ թէ կանխիկ պիտի վճարէին եթէ նոյն օրը իրենց հանդիպէր եւ ստորագրէր: Բարեկամս բաւարար միջնորդավճար շահեցաւ հասնելով իր երկու տուններուն պարտքերը լիովին վճարելու նպատակին այն տարուան ընթացքին, որուն համար ինք եւ իր ընտանիքը հաւատացեր էին:

Միայն Թագաւորութեան սկզբունքները ուսումնասիրելն էր, որ անոր նոյնիսկ թոյլ տուած էր կամ դրդած էր, որ պատկերացնէ այդպիսի բարձր նպատակ մը, որովհետեւ նախապէս ան երբեք

չէր հասած այսպիսի մեծ գումարի մը կամ նախորդ տարիներուն այդքան գումար չէր շահած, որպէսզի կարենար ցոյց տալ, թէ այս նպատակին հասնիլը հաւանական բան մըն էր: Ան ինծի ըսաւ, թէ բաւական մեծ խնճոյք մը ըրին՝ այդ յաղթանակը տօնելու համար:

Ուրիշ «անհաւատալի բայց իրական» պատմութիւն մը պատահեցաւ իմ զաւակներէս մէկուն հետ: Անշուշտ իմ բոլոր զաւակներս ալ տեսած են Թագաւորութեան գործունէութիւնը իրենց ամբողջ կեանքին ընթացքին: Անոնք բոլորը կիրարկած են այն սկզբունքները, զորս կը քննարկեմ եւ տեսած են, որ Աստուած հիանալի բաներ կ'ընէ: Թէեւ անոնք իրենց քսանականներուն մէջ են, բայց բոլորն ալ իրենց ինքնաշարժներուն գինը լիովին վճարած են եւ անոնց մեծամասնութիւնը իրենց տուներուն գինն ալ լիովին վճարած է կամ գրեթէ վճարած է: Անդրանիկ զաւակս՝ Թիմը, կ'ուզէր իր տունը կանխիկ դրամով գնել: Հետեւաբար իր սերմը ցանեց, Աստուծոյ հաւատալով շատ յարմար տունի մը համար, որուն գինը իր կարողութեան սահմաններուն մէջ ըլլայ: Ան նաեւ շատ վարպետ է շինարարութեան մէջ, ուրեմն չէր վախնար գնելու տուն մը, որ վերանորոգութեան պէտք ունի:

Ան իր ժամանակը կ'անցընէր տուներու նայելով, բայց իր ուզածը չէր գտներ: Բայց օր մը ան իր ինքնաշարժով կը շրջէր եւ նկատեց տուն մը, որ ծախու էր եւ ատկէ առաջ չէր տեսած: Ատիկա գրաւագրկուած էր եւ երբ անոր կը նայէր, նկատեց, որ տունը վերանորոգման պէտք ունէր, բայց կատարեալ կը թուէր: Ան հեռաձայնեց անշարժ կալուածքի գործակալին եւ ստուգեց տան գինը: Ան իր ականջներուն չէր կրնար հաւատալ՝ երեսունեօթը հազար տոլար: «Բայց ինչպէս կրնայ ըլլալ ատիկա», ան մտածեց:

Գործակալը տան մասին ուսումնասիրութիւն մը ըրաւ եւ հիանալի պատմութիւն մը պատմեց: Տունը իրապէս գրաւագրկուած էր (բռնագրաւուած էր) եւ շուրջ վեց ամիս առաջ ցանկագրուած էր հարիւր հազար տոլարի: Ատիկա գրաւագրկուած տան համար որոշուած գինն էր, բայց իրականութեան մէջ քանի մը տարի առաջ այդ տունը հարիւր վաթսուն հազար տոլարի ծախուած էր: Ըստ երեւոյթին, վերջին վեց ամիսներուն, տան գրաւագրկումէն

ետք, ոչ ոք հետաքրքրություն ցուցաբերած էր տան նկատմամբ: Յետոյ դրամատունը հետզհետեւ իջեցուցած էր անոր գինը առանց գիտնալու, թե ինչն ոչ ոք չէր հետաքրքրուեր անով: Բայց յետոյ երբ Թիմը եւ իր անշարժ կալուածքի գործակալը ասելի տեղեկություններ քաղեցին, տեսան, թե ինչն մարդիկ հետաքրքրուած չէին տունով: Անիկա ցանկագրուած էր բոլորովին ուրիշ քաղաքի մը մէջ, ուրիշ հասցեով եւ նոյնիսկ տան մասին հարցումներ հարցնելու համար դրուած հեռաձայնի թիւը սխալ էր: Ուրեմն ոչ ոք գիտէր, թե տունը հոն կը գտնուէր: Տունը կը գտնուէր գիւղին մէջ փոքր ճամբու մը վրայ, փակուղիի մը վրայ, ուր երթեւեկ չկար: Գինը շարունակ կ'իջեցնէին մինչեւ այն օրը, երբ Թիմը գտաւ զանիկա: Հիանալի: Ես Թիմին ըսի, որ տունը յատուկ իրեն համար պահուած էր: Ան նորէն ներկեց տունը եւ քանի մը նորոգություններ ըրաւ ու ծախեց տունը հարիւր վաթսուն հազար տոլարի:

Աղջիկս՝ Էյմին պաշտամունք կ'առաջնորդէ «Ֆէյթ Լայֆ Չըրչ»-ին (Հաւատքի Կեանք Եկեղեցիին) մէջ: Ինք եւ Ճէյսընը ասելի մեծ տունի մը պէտք ունէին, որովհետեւ իրենց ընտանիքը կը մեծնար՝ չորս անդամէն հինգի: 2017-ի ամրան, գիները շատ լաւ էին Օհայոյի մէջ եւ ցանկագրուած տուները ընդհանրապէս մէկ շաբթուան մէջ կը ծախուէին: Անոնք կը յուսային գտնել տուն մը, որ բաւական մեծ էր, որուն գինը երկու հարիւր յիսուն հազար տոլարի եւ երեք հարիւր հազար տոլարի միջեւ էր, որ 5-10 արտավար հող ունէր եւ փափաքելի էր, որ կալուածին մէջ ջուր ըլլար, բայց այդպիսի տուն մը կարելի չէր գտնել: Այդ ամառ շրջանին մէջ մէկ արտավար հողատարածքի վրայ գտնուող ագարակները երկու հարիւր հազար տոլարէն ասելի մեծ գումարի կը ծախուէին: Շատ շրջելէ եւ բազմաթիւ տուներու նայելէ ետք, անոնք կեցան փնտռելէ եւ աղօթեցին: Առաջնորդութեան համար սերմ ցանելով՝ անոնք Տիրոջ ըսին. «Մենք չափազանց զբաղած ենք եւ չենք կրնար այսպէս շարունակ փնտռել»: Դուն գիտես ո՞ր է մեր տունը եւ մենք կը խնդրենք Քեզմէ, որ ճիշդ ժամանակին մեզի ցոյց տաս զանիկա: Մենք այլեւս առցանց տուն պիտի չփնտռենք կամ մեր անշարժ կալուածքի գործակալին հետ պիտի չխօսինք այս տան մասին:

Բայց գիշեր մը հետաքրքրական բան մը պատահեցաւ: Իրենց աղջիկը, որ այն ատեն չորս տարեկան էր, երբ տուն մտան, ըսաւ. «Մամա՛, ժամանակն է, որ տեղափոխուինք»: «Ի՞նչ ըսել կ'ուզես», հարցուց էյմին: «Ժամանակն է, որ տեղափոխուինք այն տունը, որուն մեծ աստիճանները դէպի իմ սենեակս կը տանին», ըսաւ անոր չորս տարեկան փոքրիկը: «Ի՞նչ տուն: Երամզ տեսար», հարցուց էյմին: Աղջիկը ըսաւ՝ այո՛, երազ տեսած էր: Այդ գիշեր, երկու պզտիկները պառկեցնելէ ետք, էյմին չկրցաւ իր միտքէն հանել այդ խօսակցութիւնը եւ ճէյսընին ըսաւ, թէ թերեւս պէտք էր տուներու նայէին առցանց:

Այո, իրականութեան մէջ բռնագրաւուած տուն մը կար, որ տակաւին նոր ցուցակագրուած էր, երկու յարկանի տուն մը տասը արտավար հողով եւ դիմացը լիճով: Բայց անոր գինը քսանվեց հազար տոլար արեւի էր այն երեք հարիւր հազար տոլարի սահմանէն, որուն համար անոնք սերմանած էին: Անոնք մտածեցին, որ կրնան արեւի ցած գին առաջարկել, ուստի իրենց անշարժ կալուածքի գործակալին հեռաձայնեցին: Իրենց գործակալը յաջորդ օրը Ֆլորիտա պիտի մեկնէր, բայց հաւանաբար կրնար իրենց ցոյց տալ տունը եթէ իրենք կարենային զանիկա տեսնել առաւօտեան մօտաւորապէս ժամը իննին: Ճէյսընը եւ էյմին ըսին, որ իրեն այնտեղ պիտի հանդիպէին:

Գործակալը ուշացաւ մեզի հասնելու, բայց տունը կատարեալ կ'երեւէր: Տան տարածութիւնը, տասը արտավար հողին եւ դիմացի լիճին հետ միասին, ամէն բան կատարկեալ կ'երեւէր: Յաւելեալ առաւելութիւնը այն էր, որ կալուածը շրջապատուած էր անտառներով. շատ գեղեցիկ էր: Երբ տուն մտան, իրենց աղջիկը կը ճշար մինչ կը վազէր հսկայ պարուրածեւ սանդուխներէն վեր ուղղակի դէպի իր սենեակը: Երկար պատմութիւն է, բայց ամփոփեմ՝ ճէյսընը եւ էյմին ըսին, թէ կ'ուզեն առաջարկ մը ընել: Երբ գործակալը տան մանրամասնութիւնները ստուգեց, յայտնաբերեց, որ բոլոր առաջարկները պէտք է յայտարարուին մինչեւ կէսօր: Մէկ ժամէն պակաս ունէին: Եթէ իրենց չորս տարեկան աղջիկը իր երազը պատմած չ'ըլլար եւ եթէ այդ գիշեր առցանց ստուգած չ'ըլլային, տունը ծախուած պիտի ըլլար:

Անոնք պահանջուած գինը՝ երեք հարիւր քսանվեց հազար

տուլար առաջարկեցին եւ իրենց առաջարկը ընդունուեցաւ: Շատ խանդավառուած էին: Տան ստուգման ընթացքին, թէեւ տանիքը լաւ վիճակի մէջ էր, քննիչը ըսաւ, որ շուրջ հինգ տարիէն պէտք էր փոխուէր: Ճէյսընը գաղափար մը ունեցաւ: Ան որոշեց դրամատունէն խնդրել, որ աւելի ցած գինով ծախեն, որովհետեւ տանիքը քանի մը տարիէն պէտք էր փոխուէր: Գործակալը իրենց ըսաւ, որ նոյնիսկ չփորձեն այդպիսի առաջարկ մը ընել, որովհետեւ տունը ծախու դրուած էր «ինչպէս որ է» եւ ինք երբեք չէ տեսած, որ դրամատունը բռնագրաւուած բանի մը գինը իջեցնէ՝ տան թերութիւններուն պատճառով: Բայց Ճէյսընը եւ Էյմին իրենց հոգիին մէջ զգացին, որ պէտք էր նամակ մը գրէին եւ դրամատունէն խնդրէին, որ գինը պակսեցնէր: Այո՛, գիտցաք, դրամատունը տունը իրենց տուաւ երկու հարիւր իննսունվեց հազար տուլարի, երեք հարիւր հազար տուլարէն պակաս գումար մը, որուն համար Աստուծոյ հաւատացեր էին, որ պիտի ծախսեն: Աստուած բերաւ այդ տունը ճիշդ այնպէս, ինչպէս անոնք խնդրած էին Իրմէ, որ ընէ: Երբ գնահատողին հարցուցին, թէ իր կարծիքով տունը ինչքան կ'արժէր, ըսաւ. «Հինգ հարիւր հազար տուլար»: Բարեկամս, ասիկա՛ կրկնապատիկ բաժինն է:

Ինչպէս կը տեսնէք, զաւակներս բոլորն ալ Թագաւորութեան ապրելակերպը կը վայելեն: Իրականութեան մէջ իմ կրտսեր զաւակս՝ Քըրսթընը, այս տարի, քսան տարեկանին, իր առաջին տան գինը կանխիկ վճարեց: Ինչպէս: Անոնք բոլորն ալ գիտեն ինչպէս բան մը Թագաւորութեան ձեռով ընեն:



## ՈՒԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

# ԿՐԿՆԱՊԱՏԻԿ ԲԱԺԻՆԸ

Հիմա կ'ուզեմ քիչ մը ասելի խորանալ ցոյց տալու համար, թէ իրականութեան մէջ ինչպէս կը գործէ Շաբաթ օրուայ հանգիստը եւ ինչպէս կրնաս անոր հասնիլ քու սեփական կեանքիդ մէջ: Կ'ուզեմ վերադառնալ մեր Յոբելեան Տարուան պատմութեան եւ նայիլ մեր հատուածին: Հոն կը գտնենք Աստուծոյ տուած պատասխանը Իր ժողովուրդին երբ անոնք հարցուցին, թէ ինչպէս երեք տարի առանց հունձքի պիտի ապրէին: Լաւ հարցում է:

*Եւ եթէ ըսէք՝ «Եօթներորդ փարին ինչ պիտի ուրենք եթէ չցանենք ու մեր հունձքը չհաւաքենք»: Վեցերորդ փարին ձեր վրայ պիտի դրկեմ իմ օրհնութիւնս, այնպէս որ երեք փարուան արդիւնք պիտի տայ: Եւ մինչեւ որ ութերորդ փարին ցանէք, հին հունձքէն պիտի ուրեք մինչեւ իններորդ փարին: Մինչեւ նոր հունձքին հասնիլը հինէն պիտի ուրեք:*

– Ղեւտացոց 25. 20-22

Այս հատուածին մէջ կը տեսնենք, թէ Յոբելեան տարին, ինչպէս նաեւ անոր նախորդող Շաբաթ տարին, երկուքն ալ կարելի էին՝ վեցերորդ տարուան ընթացքին պատահած հսկայական հունձքին շնորհիւ, այս պարագային քառասունութերորդ տարին (վերջին

Յոբելեանէն սկսեալ): Առանց այդ հսկայական հունձքին, Շաբաթի հանգիստը անկարելի պիտի ըլլար: Եկրոր կարդանք ուրիշ հատուած մը, որ կը հաւատամ աւելի պիտի յստակացնէ այս մէկը:

*Ամէն առտու կը հաւաքէին անկէ, ամէն մէկը իր կերածին չափ ու արեւը փաքցածին պէս կը հալէր:*

*Վեցերորդ օրը կրկնապարհիկ ուրելիք, այսինքն ամէն մէկուն համար երկու օմէր, հաւաքեցին եւ ժողովուրդին բոլոր իշխանները եկան ու պարմեցին Մովսէսին: Անիկա ըսաւ անոնց. «Այս է Տիրոջ ըսածը. ‘Վաղը հանգստութեան սուրբ շաբաթն է Տիրոջը, ուրեմն ինչ որ պիտի եփէք՝ եփեցէք եւ ինչ որ պիտի եռացնէք՝ եռացուցէք ու ինչ որ կ’աւելնայ՝ ձեզի համար յաջորդ օրուան պահեցէք’»: Աւելցածը առտուան համար թողուցին, Մովսէսին հրամայածին պէս եւ ո՛չ հոտեցաւ, ո՛չ ալ անոր մէջ որդ ինկաւ: Եւ Մովսէս ըսաւ. «Այսօր կերէք զայն, վասնզի այսօր շաբաթ է Տիրոջը. այսօր դաշտին մէջ անկէ պիտի չգտնէք: Վեց օր պիտի հաւաքէք զանիկա. բայց եօթներորդ օրը, որ շաբաթ է, պիտի չգտնուի»: Սակայն եօթներորդ օրը ժողովուրդէն ոմանք հաւաքելու ելան, բայց չգտան: Եւ Տէրը ըսաւ Մովսէսին. «Մինչեւ երբ չէք ուզեր պահել իմ պարուիրանքներս ու օրէնքներս: Նայեցէք, Տէրը փրուաւ ձեզի շաբաթը, անոր համար վեցերորդ օրը ինք ձեզի երկու օրուան հաց կու տայ. ամէն մէկը իր փեղը թող նստի. մէկը իր փեղէն թող չեւլէ եօթներորդ օրը»: Ժողովուրդը հանգստացաւ եօթներորդ օրը:*

– Ելք 16. 21-30

Այս հատուածը անշուշտ կը խօսի մանանային մասին, որ ամէն օր երկինքէն կ’իջնէր՝ ժողովուրդը կերակրելու համար եւ կը բացատրէ, թէ եօթներորդ օրը՝ Շաբաթ օրը անիկա պիտի չգտնուի: Յաջորդ օրուան համար չէին կրնար պահել անկէ, որովհետեւ շատ



շուտ կ'արոււէր: Միայն վեցերորդ օրը կրնային հաւաքել զանիկա եւ մինչեւ յաջորդ օրը պահել առանց որ արոււէր: Հետաքրքրական նշում մը, որ կը բացատրէ, թէ ինչն մանանան շատ շուտ կ'արոււէր ամէն օր, կը գտնուի **Բ. Օրինաց 8. 16**-ին մէջ:

*Եւ անապատին մէջ քու հայրերուդ չճանչցած մանանայովը քեզ կերակրեց, որպէսզի քեզ խոնարհեցնէ ու փորձէ եւ վերջը քեզի բարիք ընէ:*

Աստուած կը մարգէր ժողովուրդը, որպէսզի ամէն օր Իրեն նայի (յոյսը Իր վրայ դնէ) իր կերակուրին համար, բայց անշուշտ նաեւ իրենց կեանքին մէջի բոլոր բաներուն համար: Աստուած գիտէր, որ անոնք կերակուրէն աւելիին պէտք պիտի ունենային. անոնք շուտով պիտի գտնուէին պարսպապատ քաղաքներու եւ հսկաներու դիմաց: Անոնց ամուր վստահութիւնը (ապաւինումը) Աստուծոյ վրայ այդպիսի իրավիճակի մը մէջ կեանքի ու մահուան տարբերութիւնը պիտի ընէր:

Երթանք **Ելք 16. 29**-ը: Հոս յստակօրէն կը տեսնես, որ Շաբաթ օրուան հանգիստը կարելի էր միայն կրկնապատիկին շնորհիւ, որ վեցերորդ օրը կը տրուէր իրենց:

*Նայեցէ՛ք, Տէրը փուս ձեզի շաբաթը, անոր համար վեցերորդ օրը ինք ձեզի երկու օրուան հաց կու տայ. ամէն մէկդ իր տեղը թող նստի. մէկը իր տեղէն թող չելլէ՛ եօթներորդ օրը»:*

Կը տեսնէ՞ք: Շաբաթին հանգիստը կարելի դարձաւ միայն կրկնապատիկ բաժինին շնորհիւ: Ասիկա այնքան կարեւոր է, որ պիտի խնդրեմ, որ գրէք ձեր քով:

## ՇԱՐԱԹ ՕՐՈՒԱՅ ՀԱՆԳԻՍԸ ԱՆԿԱՐԵԼԻ Է ԱՌԱՆՑ ԿՐԿՆԱՊԱՏԻՎ ԲԱԺԻՆԻՆ

Ասիկա տարբեր պարունակի մէջ պիտի ներկայացնեն: Եթէ չունիք ձեզի համար բաւարարէն աւելին, երբեք պիտի չհանգչիք երկրի անէծքի համակարգին վազելէն ու քրտինք թափելէն: Ինչպէս Տրենտան եւ ես կ'ըսենք մարդոց ո՛ր որ երթանք. «Եթէ դրամին հարցը չլուծես, կոչումդ երբեք պիտի չյայտնաբերես»: Ինչո՞ւ: Քանի որ առանց բաւարարէն աւելին ունենալու, այլընտրանքներ պիտի չունենաս եւ ամբողջ կեանքիդ ընթացքին գոյատեւման ստրուկը պիտի ըլլաս: Կը յիշես երբ կարդացիք Աբրահամին Օրհնութիւններուն օգուտներուն մասին Բ. Օր 28. 11-13 համարներուն մէջ նախկին գլուխներէն մէկուն մէջ: Հոն մենք յստակօրէն տեսանք, թէ դուն չես կոչուած գոյատեւման կեանք մը ապրելու: Եթէ մոռցար, եկուր նորէն վերաքաղ մը ընենք:

*Տէրը բարիքներով քեզ պիտի լեցնէ, քու որովայնիդ պտուղը, քու անասուններուդ պտուղը ու քու երկրիդ պտուղը շաբոցներով այն երկրին մէջ, որ Տէրը քու հայրերուդ երդում ըրաւ քեզի տալու: Տէրը իր բարութեան գանձը, այսինքն երկինքը, քեզի պիտի բանայ, որպէսզի քու երկրիդ անձրեւը ժամանակին տայ ու քու ձեռքիդ բոլոր գործերը օրհնէ եւ դուն շատ ազգերու փոխ տաս, բայց դուն փոխ պիտի չառնես: Տէրը ժողովուրդներու գլուխ պիտի ընէ քեզ եւ ո՛չ թէ՛ պոչ: Դուն միշտ պիտի բարձրանաս ու բնաւ վար պիտի չիջնես, եթէ քու Տէր Աստուծոյդ պատուիրանքները մտիկ ընելով պահես ու կատարես, որոնք ես այսօր քեզի կը յայտնեմ:*

– Բ. Օր 28. 11-13

Դուն նախասահմանուած չես աղքատ, գոյատեւման վիճակի մէջ եւ սնանկացած ըլլալու: Դուն փոխ տուող պիտի ըլլաս եւ ոչ թէ՛

փոխ առնող, գլուխ եւ ոչ թե՛ պոչ: Թագաւորութիւնն ալ այսպէս յորդառատ է: Ասիկա Շաբաթ օրուան հանգիստն է, բաւարար եղածէն աւելի, կրկնապատիկ բաժինը:

**ՀԱՒԱՏՔԸ ԱՍՏՈՒԾՈՅ  
ԸՍԱԾԻՆ ՀԵՏ  
ՀԱՄԱՁԱՅՆԻԼ Է  
ԵՒ ՈՉ ԹԷ՛ ՄԵՐ  
ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՆ:**

Գիտեմ, կը մտածես. «Ատիկա շատ աղուոր կ'ըլլար, Կէրի՛, բայց հիմա իմ կեանքս բնաւ այդ քու ըսածիդ չի նմանիր»: Ատիկա հարց չէ, մենք ետեւ չենք նայիր, հապա կը նայինք Աստուծոյ ըսածին եւ մեր կեանքին մէջ կ'ակնկալենք այն ինչ որ Թագաւորութիւնը կ'ըսէ մեր մասին: Առանց ճիշդ պատկերը ունենալու ու առանց գիտնալու, թէ ինչպիսի՛ կեանք մը պէտք է ունենանք, մենք ծուղակներու մէջ պիտի իյնանք եւ երկրի անէծքի համակարգին այլասերած մտածողութեամբ պիտի խաբուինք: Հաւատքը Աստուծոյ ըսածին հետ համաձայնիլ է եւ ոչ թէ մեր պայմաններուն:

Նախքան ձեզի հետ բաժնեկցիմ, թէ Աստուած ինչպէս Տրենտային եւ ինծի սորվեցուց կրկնապատիկ բաժինին մասին, կ'ուզեմ ձեզի հետ բաժնեկցիլ պատմութիւն մը, որ կը հաւատամ կրկնապատիկ բաժինին մասին ամենահիանալի պատմութիւնն է Նոր Կտակարանին մէջ:

Այն պատմութիւնը, զոր կ'ուզեմ ձեզի հետ բաժնեկցիլ, դուք ասկէ առաջ շատ լսած էք, բայց հաւանաբար ոչ կրկնապատիկ բաժինին պարունակին մէջ կամ Թագաւորութեան հասկացողութեամբ, զոր դուք այժմ ունիք: Այս պատմութիւնը կը գտնենք Ղուկասի աւետարան տասնհինգերորդ գլուխին մէջ, Անառակ Որդիին պատմութիւնը: Դարձեալ կ'ըսեմ, ինծի հետ մնացէք, շարունակեցէք կարդալ: Գիտեմ, որ ասկէ առաջ այս պատմութիւնը կարդացած էք, բայց եկէք միասին կարդանք զանիկա թարմ խորաթափանցութեամբ մը:

*Ապա [Յիսուս] ըսաւ. «Մարդ մը երկու որդի ունէր. անոնցմէ պզդիկը հորը ըսաւ. ‘Հայր, քու սպացուածքէդ ինծի իյնալու*

բաժինը փութիւնը: Ան ալ բաժնեց անոնց իր ունեցածը: Շատ օրեր չանցած՝ պզտիկ որդին բոլոր բաները հաւաքեց, հեռու երկիր մը գնաց եւ հոն անառակութեամբ ապրելով իր ունեցածը փճացուց: Բոլոր ունեցածը հաւրցուցած էր, երբ երկրին մէջ սաստիկ սով մը եղաւ ու ինք չքաւոր դարձաւ: Ուստի գնաց այն երկրին քաղաքացիներէն մէկուն քով մտաւ: Ան ալ իր ագարակը դրկեց զանիկա՝ խոզեր արածելու համար: Հոն կը փափաքէր խոզերուն կերած եղջիւրէն իր փորը լեցնել, բայց մէկը չէր փար անոր: Այն ապրէն ինքզինքին գալով՝ ըսաւ. ‘Քանի բանուորներ կան իմ հօրս փունը հացով լեցուած, ես հոս սովամահ կը կորսուիմ: Ելլեմ, երթամ իմ հօրս եւ ըսեմ անոր. «Հայր, մեղանչեցի երկնքի դէմ ու քու առջեւ, ա՛յլ արժանի չեմ քու որդիդ ըսուելու, զիս քու վարձկաններէդ մէկուն պէս ըրէ՛»: Ու ելաւ իր հօրը գնաց: Մինչդեռ ինք շատ հեռու էր, հայրը փետաւ զանիկա ու գութը շարժեցաւ եւ վազելով՝ անոր պարանոցին վրայ ինկաւ ու համբուրեց զանիկա: Որդին ալ ըսաւ անոր. ‘Հայր, մեղանչեցի երկնքի դէմ ու քու առջեւ եւ ա՛յլ արժանի չեմ քու որդիդ ըսուելու’: Բայց հայրը ըսաւ իր ծառաներուն. ‘Հանեցէք առաջին պատմուռանը ու հագցուցէք անոր եւ մտանի դրէք անոր ձեռքը ու կօշիկներ՝ անոր ոտքերը եւ պարարտ զուարակը բերէք, մորթեցէք, ուտենք եւ ուրախ ըլլանք. վասնզի այս իմ որդիս մեռած էր ու ողջնցաւ, կորսուած էր ու գտնուեցաւ’: Սկսան ուրախութիւն ընել: Անոր մեծ որդին ագարակն էր, երբ եկաւ ու փանը մօտեցաւ, նուագարաններու եւ պարերու ձայն լսեց: Ծառաներէն մէկը իրեն կանչելով՝ հարցուց, թէ ‘Այս ինչ է’: Անիկա ալ ըսաւ անոր. ‘Եղբայրդ եկաւ ու հայրդ պարարտ զուարակ մորթեց, վասնզի ողջ առողջ ձեռք ձգեց զանիկա’: Իսկ ինք բարկացաւ ու չէր ուզեր ներս մտնել, ուստի իր հայրը դուրս ելլելով կ’աղաչէր անոր: Անիկա պատասխան փախով՝ ըսաւ հօրը. ‘Ահա այսչափ

*դարի է, որ քեզի կը ծառայեմ ու բնաւ քու խօսքէդ դուրս չելայ ու ինծի երբեք ուլ մը չտուիր, որ իմ բարեկամներուս հետ ուրախութիւն ընէի: Բայց երբ եկաւ այդ քու որդիդ, որ քու ստացուածքդ բողբոռու հետ կերաւ, անոր մորթեցիր պարարտ գուարակը՝: Եւ հայրը ըսաւ անոր. ‘Որդեակ, դուն միշտ ինծի հետ ես ու իմ բոլոր ունեցածս քուկդ է: Սակայն պէտք է ուրախ ըլլալ եւ խնդալ, վասնզի այս քու եղբայրդ մեռած էր ու ողջնցաւ, կորսուած էր ու գտնուեցաւ»:*

– Ղուկաս 15. 11-32

Այս պատմութեան մէջ կը տեսնենք, թէ կրտսեր որդին տունէն կը հեռանայ ստացուածքէն իր բաժինը առնելով: Ասիկա կարելոր մանրամասնութիւն մըն է պատմութեան մէջ, որովհետեւ անիկա կ’ակնարկէ անոր ժառանգութեան բաժինին: Ուստի նշենք, որ այս կրտսեր որդին արդէն իսկ ստացած է իր ժառանգութեան բաժինը. ան այլեւ չի կրնար ստացուածք պահանջել:

*Անոնցմէ պզտիկը հորը ըսաւ. ‘Հայր, քու ստացուածքէդ ինծի ինչալու բաժինը տուր ինծի’:*

Յետոյ պատմութիւնը մեզի կ’ըսէ, թէ ընդ գնաց այս երիտասարդ որդին՝ հեռու երկիր մը: Կարելոր է, որ հասկնաք, թէ երիտասարդ որդին հեռացաւ իր հոր տունէն, որ կը նշանակէ, թէ ան ձգեց իր մատակարարումը, իր պաշտպանութիւնը, եւ օրէնքները այն ազգին, որուն մէջ իր հոր տունը կը գտնուէր: Ան գնաց դէպի հեռաւոր ազգ մը, որ ունէր տարբեր օրէնքներ եւ տարբեր ապրելաձեւ մը: Ես վստահ եմ, որ այս երիտասարդ որդին իրապէս գաղափար չունէր, թէ ինչ կ’ընէր: Ան կը վայելէր որդի ըլլալու առաւելութիւնը՝ իր հոր տան մէջ ապրելով: Իր հոր ամբողջ ունեցածը իրեն տրամադրուած էր այնքան ատեն որ ան հոն կ’ապրէր: Բայց որոշ պատճառով, ան զգաց, որ բան մը կը պակսէր իրեն եւ անարդարաբար գրկուած էր առիթ մը, որմէ կրնար օգտուիլ ուրիշ տեղի մը մէջ:

Եթէ տակաւին չհասկցաք, իրականութեան մէջ Յիսուս մեզի

կը պատմէ մարդկութեան պատմութիւնը՝ Ադամին պատմութիւնը: Պատմութեան մէջի կրտսեր որդին Ադամն է, որ քեց իր Հօր տունը: Ադամն էր, որ զգաց, թէ ուրիշ տեղ աւելի լաւ ապագայ ունէր փոխանակ շարունակէր ծառայել Աստուծոյ՝ իր Հօր: Ես գիտեմ, որ դուք կը մտածէք. «Ուրեմն եթէ Ադամ կրտսեր որդին էր, ո՞վ էր աագ որդին պատմութեան մէջ, որ մնաց»: Այդ հարցումին պիտի պատասխանեմ այս քննարկման վերջաւորութեան, բայց առ այժմ պարզապէս յիշեցէք, թէ Ադամ կրտսեր որդին էր, որ գնաց:

Թէեւ անոնք ամէն բան ունէին, Ադամն ու Եան խաբուեցան՝ հաւատալով, որ ուրիշ տեղ մը աւելին կար քան ինչ որ ունէին իրենց Հօր տան մէջ մնալով: Երբ Ադամը իր Հօր տան դէմ ըմբոստացաւ եւ ընտրեց հեռանալ, ան ենթակայ դարձաւ նոր կառավարութեան մը, նոր թագաւորութեան մը, որ նոր օրէնքներով կը գործէր: Աստուածաշունչը զանհկա կը կոչէ խաւարի թագաւորութիւնը, որ Սատանային կողմէ տիրապետուած է: Ես վստահ եմ, որ Ադամը զարմացաւ ու ցնցուեցաւ այս նոր թագաւորութեան աղքատութենէն եւ անյուսութենէն: Սկիզբը ամէն բան հիանալի կը թուէր: Այնքան ատեն որ ան դրամ ունէր, հիանալի մեծ խնճոյք մը կ'ընէր: Բայց երբ անդրադարձաւ, որ ինք մեծ սխալ գործած է, արդէն շատ ուշ էր: Յետոյ երբ իր ժառանգութիւնը վատնեց, ինքզինք կորսուած զգաց: Իր միտքը, որ ժամանակ մը այնքան լեցուն էր տեսիլքով, հիմա ամէն օր կեդրոնացած էր ողջ մնալու պարտականութեան վրայ: Այլեւս վաղուան մասին մտածել չկար: Կեդրոնացումը միշտ այսօրուան վրայ պիտի ըլլար եւ այսօրը խոստումներ չունի:

*Շաղ օրեր չանցած՝ պզտիկ որդին բոլոր բաները հաւաքեց,  
հեռու երկիր մը գնաց եւ հոն անստակութեամբ ապրելով  
իր ունեցածը փճացուց:*

Կրտսեր որդին հիմա ինքզինք կը գտնէ թագաւորութեան մը մէջ, որ ամբողջովին ու բացարձակապէս սնանկացած է եւ կը գտնուի անվերջանալի սաստիկ սովի վիճակի մէջ: Որդին կը փորձէ հասկնալ իր տեսածը՝ մարդիկ սովամահ կ'ըլլան: Այդպիսի առատութեամբ

լեցուն տունէ մը եկած ըլլալով՝ անոր միտքը կը դժուարանար հասկնալու իր տեսածը: Բայց իր ստամոքսին անօթութեան ցաւերը իրեն կը յիշեցնեն, թէ իր տեսածը իրական է: Գոյատեւելու համար՝ հիմա ան ինքզինքին կը ստիպէ, որ փողոցներուն մէջ մուրացկանութիւն ընէ: Այս խաւարի թագաւորութեան մէջ երկիրը միայն փուշ ու տատասկ կու տայ եւ որեւէ բան արտադրելու համար տքնաջան աշխատանք եւ քրտինք պէտք է թափել: Մեծ կարօտութեան մէջ ըլլալով, որդին կ'աղաչէ, որ մէկը օգնէ իրեն: Բայց բոլորը նոյն նաւուն մէջ են (բոլորը նոյն դժուար կացութեան մէջ են): Ոչ ոք իրեն շատ բան պիտի տայ, որովհետեւ բոլորն ալ իրեն պէս նոյն սաստիկ սովին մէջ են:

Հոս կրտսեր որդին յատկանշական պահ մը կ'ունենայ, փոփոխութիւն մը, որ ազդած է թէ՛ ձեր, թէ՛ իմ եւ թէ՛ ամբողջ մարդկութեան վրայ: Իր կեանքին մէջ առաջին անգամ ըլլալով կրտսեր որդին կ'աղաչէ, որ վճարուի որպէս ծառայ, վարձկան մը, որ ձեռային աշխատանք կը կատարէ: Ասկա իր ճշմարիտ եւ իսկական ինքնութեան ամբողջական խեղաթիւրումն է: Ան այլեւ շատ հեղինակաւոր, պատուաւոր եւ հարուստ մարդու մը որդին չէ, այլ՝ դռնապանն է, մսագործը, անշարժ կալուածքի գործակալը կամ նամակաբաշխը եւ ցանկը կրնայ երկարիլ: Ան հիմա կը ճանչցուի իր գործով (ըրածով) եւ ոչ թէ իր ինքնութեամբ: Ան կորսնցուցած է իր ինքնութիւնը: Անոր ինքնութեան կորուստը անելի շեշտելու համար Յիսուս կ'ըսէ, թէ ան այնքան յուսահատեցաւ, որ խոզեր կերակրելու գործը ստանձնեց: Խոզերը հրեաներուն համար անմաքուր կը համարուէին եւ Յիսուս ամբոխին կ'ըսէ, թէ այս կրտսեր որդին հիմա այնքան յուսահատ դարձած է, որ իր կեանքին նպատակը կորսնցուցած է: Ան հիմա կ'ապրի ամօթալի եւ խայտառակ կեանք մը: Այն թագաւորական կեանքը, զոր ան առաջ կը վայելէր, հիմա շատ հեռաւոր յիշատակ մը դարձած է:

*Բոլոր ունեցածը հաւրցուցած էր, երբ երկրին մէջ սաստիկ սով մը եղաւ ու ինք չքաւոր դարձաւ: Ուստի գնաց այն երկրին քաղաքացիներէն մէկուն քով մտնաւ: Ան ալ իր*

*ագարակը դրկեց զանիկա՝ խոզեր արածելու համար: Հոն  
կը փափաքէր խոզերուն կերած եղջիրէն իր փորը լեցնել,  
բայց մէկը չէր փար անոր:*

Յուսամ կը տեսնէք այս պատմութեան եւ այսօրուայ մարդկութեան միջեւ եղող զուգահեռը: Երբ երկու տղամարդ իրարու կը հանդիպին, ինչ կ'ըսեն: «Ինչ կ'աշխատիս» կամ «Ո՞ր կ'աշխատիս» կամ «Ինչ գործով կը զբաղիս»: Երբ մէկու մը կը հարցնես, թէ ո՞վ է ինք, ան ընդհանրապէս քեզի կ'ըսէ, թէ ինչ կ'աշխատի: Ինչո՞ւ: Որովհետեւ երկրի անէծքի համակարգին մէջ մենք բոլորս ալ կորսնցուցած ենք մեր ինքնութիւնը եւ յուսահատած՝ շատ կը փորձենք գտնել զանիկա: Մենք կ'ընդօրինակենք այն մարդոց, որոնք ուշադրութիւն կը գրաւեն եւ կարեւոր կը թուին ըլլալ: Այս բոլորը սկիզբ առին իր Հօր տունը ձգելու Ադամին որոշումէն: Մեր գոյատեւման մտայնութեան մէջ մենք այլեւս նկատի չենք առներ մեր իսկական ինքնութիւնը: Բայց քաջալերուեցէք, այս կրտսեր որդին մեր պատմութեան մէջ խոզանոցին մէջ չմնաց եւ մինչ կը հետեւինք պատմութեան, յուսամ կը յայտնաբերէք, որ դուք ալ պէտք չունիք հոն մնալու:

Աստուածաշունչը կ'ըսէ, թէ օր մը կրտսեր որդին ինքզինքը կը գտնէ եւ կը յիշէ իր հօր տունը, ուր նոյնիսկ ծառաները պէտք եղածէն աւելի ուտելիք ունին: Ես կ'երեւակայեմ, որ իր ծայրայեղ անօթութեան վիճակին մէջ, ան կը յիշէր այն բոլոր հիանալի կերակուրները, զորս ինք ժամանակին վայելած էր: Հօրեղբայրս՝ Հարոյտը երկրորդ համաշխարհային պատերազմին ընթացքին ռատիօ-հաղորդակցութեան միջոցաւ Պի-17 (B-17) պատերազմական օդանաւներուն ուղղութիւն կու տար, մինչ անոնք մէկ տեղէն միւսը կ'երթային: Ան հողագործութեամբ զբաղող համայնքէ եւ ընտանիքէ մը կու գար: Ամէն Կիրակի իր մայրը տապկուած հաւէ, ճզմուած գետնախնձորներէ, տունը եփած հացէ, կանանչ լուբիայէ եւ ուրիշ բազմաթիւ համեղ բանջարեղէններէ բաղկացած մեծ ճաշ մը կը մատուցանէր: Անշուշտ միշտ տունը եփած կարկանդակներ եւ անուշեղէններ կ'ըլլային: Ես անձամբ գիտեմ, որ ինչքան հիանալի



էին այդ ճաշերը, որովհետեւ իր մայրը իմ մեծ մայրս էր:

Պատերազմի ընթացքին Գերմանիոյ տարածքին վրայ հորեղբօրս օդանաւին վրայ կրակեցին ու անիկա վար ինկաւ եւ ան բազմաթիւ ամիսներ մնաց Գերմանական բանտի մը մէջ: Կերակուր գրեթէ գոյութիւն չունէր: Օր մը հորեղբօրս հարցուցի, թէ այդ օրերուն ինչպէս գոյատեւեց եւ ան ինծի ըսաւ, թէ միակ բանը, որուն մասին կը մտածէր տուն հասնիլն էր՝ իր մօր տապկուած հաւուն եւ ճզմուած գետնախնձորներուն: Վստահ եմ, որ այս կրտսեր որդին ասոր նման փորձառութիւն մը ունեցաւ եւ անդրադարձաւ, որ ինչ կը փախցնէ: Բայց ան այլեւս ստացուածքի պահանջք չունէր, որովհետեւ արդէն ստացած էր իր հօր ստացուածքէն իր ամբողջ բաժինը: Ուրեմն ծրագիրի մը մասին մտածեց: Տուն պիտի երթար եւ իր հօր պիտի աղաչէր, որպէսզի զինք իբրեւ ծառայող գործի ընդունէր: Իր կարծիքով վարձու աշխատիլը, իբրեւ վարձկան աշխատիլը միակ այլընտրանքն էր:

*Այն ատեն ինքզինքին գալով՝ ըսաւ. ‘Քանի բանուորներ կան իմ հօրս փունը հացով լեցուած, ես հոս սովամահ կը կորսուիմ: Ելլեմ, երթամ իմ հօրս եւ ըսեմ անոր. “Հայր, մեղանչեցի երկնքի դէմ ու քու առջեւդ, ալ արժանի չեմ քու որդիդ ըսուելու, զիս քու վարձկաններէդ մէկուն պէս ըրէ”:*  
*Ու ելաւ իր հօրը գնաց:*

Ուրեմն տուն կը վերադառնայ իր ծրագիրով եւ իր հօր աղաչելու, որ գոնէ քնանալու տեղի մը եւ ուտելիքի համար աշխատելու առիթ տայ իրեն: Բայց Աստուածաշունչը մեզի կ’ըսէ այս պատմութեան հիանալի վերջաւորութիւնը: Երբ ան իր տան կը մօտենայ, անոր հայրը զինք հեռուէն կը տեսնէ եւ դուրս կը վազէ զինք դիմաւորելու մեծ փաթթուկով մը: Այս պահէն սկսեալ պատմութիւնը պէտք է կոչուի Հօր սիրոյ պատմութիւնը, որովհետեւ այդ հայրը անոր փաթթուեցաւ հակառակ անոր որ ան ծածկուած էր խոզու աղտով: Ատիկա ընելով, Յիսուսի հրեայ հանդիսատեսը գիտէր, թէ այդ փաթթուկը հայրը

հոգեւորապէս անմաքուր կը դարձնէր: Բայց այս հայրը իր որդիին սիրոյն կամովին անմաքուր եղաւ: Յետոյ ան կը պատուիրէ, որ իր ունեցած լաւագոյն զգեստը բերեն եւ իր որդիին վրայ դնեն՝ անոր աղտը ծածկելու համար: Ան առաւ իր իշխանութիւնը ներկայացնող կնիքով մատանին եւ զանիկա վերստին դրաւ իր որդիին մատին: Անոր հագուելու կօշիկներ կու տայ, որ կը նշանակէ, թէ ան վերստին ամբողջ կալուածէն ներս մտնելու արտօնութիւն ունի: Բայց այդ վերջին բանն էր, որ անոր հայրը իրեն տուաւ, որ պատճառ դարձաւ, որ անոր երէց որդին զայրանայ: Հայրը կը պատուիրէ, որ պարարտ հորթը մորթեն եւ հրամցնեն՝ որդիին վերադարձին առթիւ: Կրտսեր որդին, թէեւ անարժան էր, վերստին կը ստանայ որդիի դիրքն ու առաւելութիւնները, բայայայտօրէն եւ ազատօրէն կը պատուուի իբրեւ որդի եւ իրեն լիովին կը վերադարձուի իր նախկին դիրքը որպէս որդի տան մէջ:

Լաւ, այս բոլորը ինչ կապ ունին կրկնապատիկ բաժինին հետ: Ամէն բան: Յիսուս կրտսեր որդիին հեռանալուն եւ վերադառնալուն մասին պատմութիւն մը գործածեց, որովհետեւ Իր հանդիսատեսները, հրեական մշակոյթը, պիտի հասկնար պատմութեան նշանակութիւնը եւ այն, ինչ որ ես պիտի ըսեմ ձեզի: Հրեական մշակոյթին մէջ անդրանիկ որդին ինքնաբերաբար կրկնապատիկ բաժինը կը ստանայ: Եթէ կը յիշէք, երէց որդին չհեռացաւ, կրտսեր որդին էր, որ հեռացաւ եւ վերադարձաւ: Նաեւ պէտք է յիշէք, որ երբ ան հեռացաւ, ստացուածքէն իր օրինական բաժինը առաւ ու իր հետ տարաւ: Ան այլեւս ոչ մէկ իրաւունք ունէր կալուածքին կամ անոր մէջ գտնուող որեւէ բանի նկատմամբ պահանջ ներկայացնելու: Բայց երբ կրտսեր որդին վերադարձաւ եւ հայրը զինք վերականգնեցուց իբրեւ որդի, եւ յատկապէս պարարտ հորթը անոր տուաւ՝ անոր վերադարձը տօնելու համար, երէց որդին զայրացաւ: Երէց որդիին կարծիքով այդ հորթը իրեն կը պատկանէր, որովհետեւ ատիկա ստացուածքէն իր բաժինին մաս կը կազմէր:

Ուրեմն այս է կարեւոր կէտը: Թէեւ կրտսեր եղբայրը արդէն

ստացեր էր ստացուածքէն իր բաժինը, բայց վերականգնուած էր իբրեւ որդի եւ հիմա կը վայելէր երկրորդ բաժինը: Ասիկա կը նշանակէ, թէ ան իրականութեան մէջ ստացուածքէն կրկնապատիկ բաժին ստացաւ: Երէց եղբօր տեսանկիւնէն ասիկա անարդար էր եւ ան բարկութեամբ այդ մէկը կ'ըսէ իր հօր: Ան կը պնդէ, որ ինք այսքան տարի անոր համար աշխատելով հաւատարիմ եղած է եւ թէ այս կրտսեր եղբայրը ընտանիքը խայտառակելէն զատ ոչինչ ըրած է: Ուրեմն ինչո՞ւ ան կրկնապատիկ բաժինը պիտի ստանայ:

Ուրեմն ասիկա արդար էր: Աշխարհի քրտնաջան աշխատանքի անէծքի համակարգին տեսանկիւնէն բոլորս ո՛չ պիտի ըսէինք: Մենք հաւանաբար կողմնակից պիտի ըլլայինք երէց որդիին, որ հաւատարմօրէն աշխատեր էր եւ իր հօր համար իր ըրածին հիման վրայ անարդարութեան դէմ դատ կրնար ներկայացնել:

Բայց մենք ինչո՞ւ հիման վրայ կը դատենք, թէ ինչն է արդարը: Հայրը չէ՞, որ կը դատէ եւ կ'որոշէ, թէ որո՞ւ կ'ուզէ Իր շնորհքը ցոյց տալ: Աշխարհի անէծքի համակարգին մարզումը, զոր մենք բոլորս ստացած ենք, կ'ենթադրէ, որ եթէ հայրը կրտսեր որդիին ստացուածքէն ուրիշ բաժին մըն ալ տուաւ, ուրեմն երէց որդիին աւելի քիչ կ'ունենայ, բայց այդպէս չէ: Հայրը այնքան հարուստ է, որ նոյնիսկ ծառաները բաւարար եղածէն աւելի ունին: Ինչքան աւելի պիտի ըլլայ որդիներուն համար:

Սատանան չ'ուզեր, որ գիտնաս, թէ ինչքան մեծ է մեր Աստուածը կամ թէ իրականութեան մէջ դուն ո՞վ ես: Սկիզբէն ի վեր ան շարունակ սուտեր կը խօսի մեր Հօր մասին: Ապահովագրութեան գործունէութեան ծրագիրները կը պնդեն, թէ երբ աղէտները հարուածեն, անոնք Աստուծոյ գործն են: Կրօնական կազմակերպութիւնները կը պնդեն, թէ Աստուած կը հաճի մարդոց աղքատութեան խոստումին: Մարդիկ կը պնդեն, թէ Աստուած վատ բաներ կ'ընէ բարի մարդոց: Սատանան կ'ուզէ, որ դուն կոյր ըլլաս չգիտնալով, թէ դուն ո՞վ ես եւ քու Հայրդ ինչքան հիանալի է, որպէսզի չըլլայ թէ ինքզինքդ գտնես եւ ամբողջ սիրտովդ Իրեն վերադառնաս: Ձեզի կը վստահեցնեն, որ երբ Իրեն

դառնաք, պիտի ստանաք նոյն ընդունելութիւնը, որմով այս կրտսեր որդին ողջունուեցաւ պատմութեան մէջ:

«Ո՞վ է երէց որդին», կ'ըսէք: Եկէք տեսնենք եթէ պիտի կարենաք գիտնալ:

*Անոր մեծ որդին ագարակն էր, երբ եկաւ ու փանը մօտեցաւ, նուագարաններու եւ պարերու ձայն լսեց: Ծառաներէն մէկը իրեն կանչելով՝ հարցուց, թէ 'Այս ի՞նչ է': Անիկա ալ ըսաւ անոր. 'Եղբայրդ եկաւ ու հայրդ պարարտ զուարակ մորթեց, վասնզի ողջ առողջ ձեռք ձգեց զանիկա': Իսկ ինք բարկացաւ ու չէր ուզեր ներս մտնել, ուստի իր հայրը դուրս ելլելով կ'աղաչէր անոր: Անիկա պատասխան փախով՝ ըսաւ հօրը. 'Ահա այսչափ փարի է, որ քեզի կը ծառայեմ ու բնաւ քու խօսքդ դուրս չելայ ու ինձի երբեք ու մը չփութի, որ իմ բարեկամներուս հետ ուրախութիւն ընէի: Բայց երբ եկաւ այդ քու որդիդ, որ քու սպացուածքդ բողբոսի հետ կերաւ, անոր մորթեցիր պարարտ զուարակը': Եւ հայրը ըսաւ անոր. 'Որդեակ, դուն միշտ ինձի հետ ես ու իմ բոլոր ունեցածս քուկդ է: Սակայն պէտք է ուրախ ըլլալ եւ խնդալ, վասնզի այս քու եղբայրդ մեռած էր ու ողջնցաւ, կորսուած էր ու գտնուեցաւ'»:*

**ՍԱՏԱՆԱՆ Չ՝ՈՒՁԵՐ,  
ՈՐ ԴՈՒՆ ԳԻՏՆԱՍ, ԹԷ  
ԻՆՉՔԱՆ ՄԵԾ Է ՄԵՐ  
ԱՍՏՈՒԱԾԸ ԿԱՍ ԹԷ  
ԴՈՒՆ ԻՐԱՊԷՍ Ո՞Վ ԵՍ:**

Երէց որդին կ'ըսէ, թէ այդ բոլոր տարիներուն ընթացքին ինքիւր հօր համար ստրուկ եղած է, մինչդեռ այդ ամբողջ ժամանակուան ընթացքին իր հայրը նոյնիսկ ու մը չէ տուած իրեն, որպէսզի իր բարեկամներուն հետ խնճոյք ընէ:

Իր ըսածը մեկնաբանեմ. «Հայրիկ, դուն անարդար ես»: Սակայն նկատի առէք, թէ հայրը ինչ կը պատասխանէ: «Դուն միշտ իմ հետս ես ու ԻՄ ԱՄԲՈՂՋ ՈՒՆԵՑԱԾՍ քուկդ է»: Կեցէք: Հիմա գիտցա՞ք ո՞վ է

Երէց որդին: Երէց որդին շատ զբաղած էր իր հօր համար իբրեւ ստրուկ աշխատելով՝ սեփական արդարութեան սխալ հասկացողութեամբ մը, իրականութեան մէջ ինքզինք զրկելով իր հօր բարիքները վայելելէն: Իր հօր ամբողջ ունեցածը միշտ ալ իրը եղած էր:

Ճիշդ էք, երէց որդին կը ներկայացնէ առաջին ուխտին օրէնքը: Առաջին որդին երբեք չկրցաւ վայելել իր հօր տան բարիքները, որովհետեւ ան չափազանց զբաղած էր աշխատելով՝ իր հօր հաւանութիւնը շահելու համար: Թէեւ երէց որդին կրկնապատիկ բաժինը ստանալու իրաւունքը ունէր, միայն կրտսեր որդին էր, որ զանհիկա իրապէս վայելեց:

Դ՛հնն ես կրտսեր որդին:

Դ՛հնն կրկնապատիկ բաժինը ունիս: Դ՛հնն այն որդին ես, որ ընդունուած է ոչ թէ իր ըրածին հիման վրայ, այլ՝ Քրիստոսով քու ունեցած ինքնութեանդ վրայ՝ Աստուծոյ որդին կամ դուստրը, որ կը վայելէ ժառանգութիւն մը, որուն համար դուն պէտք չունէիր աշխատելու, հապա զանհիկա ձրիօրէն ստացար քու Հօրմէդ:



ԻՆՆԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

## ԲԱՒԱՐԱՐԷՆ ԱԻԵԼԻ՝

Կը հասկնամ, որ դուք կրնաք կասկածամտութեամբ մօտենալ այս գլուխին վերնագիրին, բայց դուք հոս է, որ կ'ուղղուիք՝ բաւարարէն աւելի: Ոչ թէ որովհետեւ ես ձեզի ցոյց կու տամ դրամ շահելու ամենանոր ու ամենագրաւիչ հնարքը, հապա քանի որ իբրեւ Աստուծոյ զաւակ, ձեր օրինական իրաւունքն է վայելել ձեր Հօր տան բարութիւնն ու բարգաւաճումը:

Կրկնապատիկ բաժինին գաղափարը ու բաւարարէն աւելին պատկերացնելը ձեր կեանքին մէջ հիմա կրնայ անկարելի թուիլ՝ բաղդատած այն տեղին, ուր այս պահուն դուք ձեզ կը տեսնէք: Բայց այդ տեղէն է, որ պէտք է սկսիք ձեր ազատութեան ճամբորդութիւնը՝ ձեր մտածողութեան մէջէն: Եթէ ձեր միտքերը չհամաձայնին Աստուծոյ Խօսքին հետ, դուք երբեք Անոր բարիքները պիտի չվայելէք: Ուստի ձեր աչքերը վերցուցէք ձեր շուրջը ձեր տեսած բաներուն վրայէն եւ զանոնք յառեցէք այն բաներուն վրայ, զորս

**ԿՐԿՆԱՊԱՏԻԿ ԲԱԺԻՆԻՆ  
ԳԱՂԱՓԱՐԸ ՈՒ  
ԲԱՒԱՐԱՐԷՆ ԱԻԵԼԻՆ  
ՊԱՏԿԵՐԱՑՆԵԼԸ ՁԵՐ  
ԿԵԱՆՔԻՆ ՄԷՋ ՀԻՄԱ  
ԿՐՆԱՅ ԱՆԿԱՐԵԼԻ  
ԹՈՒԻԼ՝ ԲԱՂԴԱՏԱԾ  
ԱՅՆ ՏԵՂԻՆ, ՈՒՐ  
ԱՅՍ ՊԱՀՈՒՆ ԴՈՒՔ  
ՁԵՋ ԿԸ ՏԵՍՆԷՔ:  
ԲԱՅՑ ԱՅԴ ՏԵՂԷՆ Է,  
ՈՐ ՊԷՏՔ Է ՍԿՍԻՔ  
ՁԵՐ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ  
ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆԸ՝  
ՁԵՐ ՄՏԱԾՈՂՈՒԹԵԱՆ  
ՄԷՋԷՆ:**

Աստուած կ'ըսէ, թէ ձերն են Իր Թագաւորութեան մէջ: Դադրեցէք Աստուծոյ ըսածներուն հետ վիճելէ, քանի որ զանոնք չէք տեսներ ձեր կեանքին մէջ: Ատոր փոխարէն՝ Աստուծոյ Խօսքին միջոցաւ սկսէք վիճիլ ձեր պայմաններուն հետ, հաւատալով, որ անոնք պէտք է համապատասխանեն այն բոլոր բաներուն, զորս Աստուած կ'ըսէ, թէ ձերն են: Ես պարզ մարդ մըն եմ ձեզի պէս, որ պարզապէս ըրաւ այն ինչ որ ձեզի կը թելադրեմ, որ ընէք: Հաւատացէք Աստուծոյ Խօսքին: Աստուծոյ Խօսքը գետին չ'իյնար եւ որեւէ պայման կը փոխէ: Օրինակ՝ ահա ե-նամակ մը, զոր ունկընդիրէ մը ստացայ, որ կասկածամիտ էր. ան անցեալին այս բոլոր բաները լսած էր, բայց արդեօք իրապէս ամէն բան լամձ էր:

«Ես պիտի փորձեմ քսաներկու տարուայ պայքարը քանի մը նախադասութեամբ ըսել որքան որ կարելի է: Ամուսինս եւ ես Քրիստոնէայ ընտանիքներու մէջ մեծցած ենք եւ կանոնաւոր կերպով եկեղեցի կը յաճախէինք: Մենք նոյնիսկ մեր մասնակցութիւնը կը բերէինք երիտասարդաց խումբին, Կիրակնօրեայ դպրոցին մէջ եւայլն: Երբ ամուսնացանք, ֆինանսական առումով՝ մեր առաջին տարին լաւ էր... ատիկա աւելի քան քսաներկու տարի առաջ էր: Ատկէ ի վեր, «դրամի հարցը» ցաւի եւ պայքարի մնայուն աղբիւր մըն էր եւ հաւատքս միշտ կը տատանէր, որովհետեւ չէի կրնար հասկնալ, թէ ինչո՞ւ այն բաները, զորս Աստուածաշունչը կ'ըսէ, թէ պէտք է պատահին, չէին պատահեր: Եթէ Աստուծոյ Խօսքը յաւիտենական եւ անապական էր եւ Ան նոյնն է երէկ, այսօր եւ յաւիտեան, ուրեմն ինչ է պատճառը, ինչ կը պատահի: Ան կամ խեղճուկրակ մէկն էր, կամ ստախօս մը, կամ ալ խելագար մըն էր:

«Ժամանակը առաջ տանինք մինչեւ Յունուար 28, 2013... Ամուսինիս ըսի. «Կամ Աստուած կը յայտնուի կամ ես կը հեռանամ»: Ես կապս պիտի խզէի եկեղեցիին եւ Աստուծոյ հետ: Երբ տունէն դուրս ելայ՝ քանի մը գործ ընելու համար, վերջապէս ամուսինս Սուրբ Հոգիին մղումին մտիկ ըրաւ եւ մեր սիրելի բարեկամներէն մէկուն հեռաձայնեց խօսելու համար: Խօսակցութիւնը ւարտելէ ետք, մեր բարեկամուհին ըսաւ, թէ կ'ուզէ, որ բան մը մտիկ ընենք՝ Կերի Քիսին: Ան բաժնեկցեցաւ իր վկայութիւնը, թէ ինչ պատահած



էր իրեն: Ուրեմն երբ տուն հասայ, ամուսինս ինձի ըսաւ, թէ ան ինչ ըսած էր իրեն եւ թէ յաջորդ օրը անոր տունը պիտի երթար՝ ատիկա վերցնելու համար:

«Չեմ գիտեր, թէ ինչ պատահեցաւ (որովհետեւ ես բաւական լսած էի հովիւներէ եւ ուսուցիչներէ բոլոր «հոգեւոր բաներուն» մասին), բայց ես հեռաձայնեցի մեր բարեկամուհիին եւ հարցուցի եթէ այդ գիշեր ազատ էր: Շատ ծիւնտո գիշերուան մը մէջ, ես յաջողեցայ իր տունը հասնիլ: Մինչ կը քշէի, Աստուծոյ ըսի. «Յուսամ ան է»:

«Յաջորդ օրը մենք սկսանք մտիկ ընել եւ երկուքս ալ բոլորովին հիացած էինք: Ամէն բան սկսաւ հասկնալի դառնալ: Այդ բոլոր համարները՝ հաւատք, ամուր կառչիլ դաւանանքիդ: Փազըլին բոլոր կտորները վերջապէս իրենց տեղերը գտան: Քանի մը տարի առաջ մենք Թագաւորութեան մասին լսած էինք, ԲԱՅՅ ոչ ոք փորձած էր սորվեցնել ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ մասին... ինչպէս հասնիլ «ԱՀԱ՛ ԱՅՍՊԷՍ Է»-ին: Դուք այդ մէկը ըրիք:

«Ուստի մենք անմիջապէս գործադրեցինք մեր սորվածները... մենք դրամի պէտք ունէինք մեր կալուածագրաւին վճարումը կատարելու համար: Հինգշաբթի էր եւ ամուսինս պզտիկ գործեր աւարտած էր իմ ծնողներու տան մէջ... անոնք անընդհատ կը հարցնէին, թէ որքան պէտք է տան ամուսինիս (անոնք գիտէին, թէ դժուար պայմաններէ կ'անցնէինք): Իրենց ըսի. «Ինչ որ կ'ուզեն»: Ատիկա բաւարար չէր կալուածագրաւին վճարումը կատարելու համար. . . ԲԱՅՅ դեռ Հինգշաբթի էր:

«Ուրբաթ օրը մենք ժամադրուած էինք հանդիպելու այն բարեկամին հետ, որ մեզի խտասալիկները (CDs) փոխ տուած էր: Մեծ ձինախառն փոթորիկ կար, բայց ամուսինս եւ ես կ'ուզէինք նստիլ եւ անոր հետ խօսիլ Թագաւորութեան եւ անոր գործելակերպին մասին:

«Նախքան մեր մեկնիլը ան ուզեց աղօթել եւ չէք (վճարագիր) մը տուաւ մեզի... Տէրը անոր սիրտին վրայ դրած էր, որ մեր կեանքին մէջ սերմանէ: Ատիկա մեզի բոլորովին ապշեցուց: Յետոյ վճարագիրը բացինք... ատիկա կալուածագրաւին վճարումը եւ ուրիշ պզտիկ

վճարումներ կատարելու համար ԲԱԻԱՐԱՐԷՆ ԱԻԵԼԻ էր:

«Ամուսինիս ըսի, որ ես միայն ասոր պէտք ունէի: Ես չէքը նկարեցի, որպէսզի աստիկա ինծի յիշեցնէ Անոր հաւատարմութեան մասին: Թշնամին չսիրեց իր տեսածը եւ անմիջապէս (եւ իրապէս անմիջապէս ըսել կ'ուզեմ) փորձեց գողնալ մեր սերմը: Մենք որոշած էինք, որ այն է ճշմարտութիւնը եւ ոչ մէկ բան պիտի ըսէինք, որ կրնար կործանել մեր ապագան: Ան անգույթ էր... բայց մենք հաստատ եւ վճռական մնացինք եւ մեր վահանը բարձր պահեցինք:

«(Նախքան շարունակեմ, կ'ուզեմ հասկնաք, որ ես յամառ իտալացի մըն եմ ու զգուած էի 'բարգաւաճման ուսուցումներէն', զոր լսած էի... եւ ամուսինս գիտէր ասիկա: Իսկական հրաշքը այն էր, որ ես լիովին ըմբռնեցի այդ մէկը եւ բռնուեցայ ատոր... երբեմն ամուսինս ինծի կը նայի եւ կը զարմանայ, թէ ինչ պատահեցաւ:

«Մենք արձակեցինք մեր հաւատքը եւ սերմանեցինք՝ 3/13-ին մեր շինարարական ընկերութեան համար պայմանագիր մը ստանալու համար, հարիւր յիսուն հազար տոլար արժող անմիջական պայմանագրի մը համար, որպէսզի մեր բոլոր ուշացած (վճարօրը անցած) վճարումները, տուրքերը, եւայլն վճարէինք: Ապրիլ 5/13-ին ՄԷԿ ՕՐՈՒԱՆ մէջ մենք ստացանք երկու պայմանագիրներ, որոնց ընդհանուր գումարը կը հասնէր չորս հարիւր յիսուն հազար տոլարի: Ասիկա Թագաւորութեան սկզբունքները կիրառելէն միայն երկու ամիս ետք էր:

«Մենք մեր զաւակներն ալ մասնակից դարձուցինք եւ անոնք տեսան «ԱՀԱ՛ ԱՅՍՊԷՍ Է»-ն: Հիմա անոնք իրենց սեփական ցանկը կը կազմեն եւ կը սերմանեն իրենց գանձանակէն ինչ բանի համար որ կ'ուզեն: Մենք բոլոր սենեակներուն մէջ աստուածաշնչական համարներ դրած ենք եւ մեր հինգ տարեկան մանուկը անոնց քով կ'երթայ եւ կը հոչակէ. 'Ես կը հաւատամ, որ ստացած եմ':

«Մենք այնքան երախտապարտ ենք, որ հիմա անլի դրամ ունինք տալու եւ մենք մէկ օր անլի մօտ ենք մեր պարտքերէն ազատելու եւ մեր պարտականութիւնները ամբողջացնելու:

«Շնորհակալ եմ, Հովիւ Կէրի՛, որ ժամանակ տրամադրեցիր

իմ դրկած ե-նամակներուս պատասխանելու: Կը հասկնանք, որ դուն սահմանափակ ժամանակ ունիս եւ այս բանը ընելու համար ժամանակ տրամադրելդ ցոյց կու տայ, թէ դուն ինչքան կ'ուզես բաժնեկցիլ Աստուծոյ մեծ Թագաւորութեան այս հիանալի պատգամը:

Ես ամէն օր այսպիսի նամակներ կը ստանամ: Ձեզի եւ ինծի պէս մարդիկ Քրիստոսով իրենց ունեցած ինքնութիւնը կը յայտնաբերեն, սորվելով, թէ ինչպէս կը գործէ Աստուծոյ Թագաւորութիւնը եւ վայելելով անոր օգուտները: Ուրեմն ինչպէս Տրենտան եւ ես յայտնաբերեցինք կրկնապատիկ բաժինին սկզբունքը: Այս գլուխին մէջ պիտի ըսեմ ձեզի եւ գիտեմ, որ մեր պատմութիւնները քաջալերական պիտի ըլլան ձեզի համար:

Երբ Տրենտան եւ ես սկսանք Աստուծոյ Թագաւորութեան օրէնքներն ու սկզբունքները սորվիլ, մեր կեանքերը արմատականօրէն փոխակերպուեցան, ինչպէս ձեզի ըսի այս գիրքին առաջին բաժինին մէջ, ամենատարրական պէտքերը հազիւ ապահովելէն, խուճապի յարձակումներու դէմ պայքարելէն, ընկճուածութեան դեղեր առնելէն եւ ծայրայեղ անյուսութենէն անցանք նպատակաւոր եւ մատակարարուած կեանքի մը: Մենք շատ անգամ ականատես եղանք եղելութիւններու, որոնք մեզի կանգ առնել ու ըսել տուած են. «Տեսմիր ինչ եղաւ: Ուահ!»: Մենք շարունակ կը տեսնէինք, թէ Աստուծոյ Թագաւորութիւնը կը գործէր ճիշդ այնպէս, ինչպէս Աստուածաշունչը կ'ըսէ եւ հարցումներ կը հարցնէինք. «Ինչպէս կամ ինչո՞ւ ատիկա պատահեցաւ» կամ «Ինչ սկզբունք յայտնաբերեցինք»: Թէեւ բաւարարէն աւելին կը վայելէինք, կրկնապատիկ բաժինը իրապէս այնքան յստակ չէինք տեսներ, որքան կը տեսնենք այն պատմութիւններուն մէջ, զորս ձեզի ցոյց պիտի տամ: Մենք կրկնապատիկ բաժինը կը վայելէինք, բայց իրականութեան մէջ չէինք գիտեր մեր տեսածը կրկնապատիկ բաժին կոչել մինչեւ որ Աստուած շարունակ զարգացուց անոր մասին մեր հասկացողութիւնը: Նախքան բացատրեմ, թէ ինչպէս Աստուած մեզի օգնեց, որպէսզի աւելի լաւ ձեռով հասկնանք կրկնապատիկ բաժինը, կ'ուզեմ պահ մը մեր բանալի աստուածաշնչական հատուածը նորէն վերաքաղ ընել:

(Փակագիծերուն մէջ նշուած բառերը իմ մէջբերումներս են, բուն աստուածաշնչական համարին մաս չեն կազմեր):

*Ուրեմն Աստուծոյ ժողովուրդին դեռ հանգիստ մը կը մնայ:  
Վասնզի ան որ անոր հանգիստը մտաւ, ալ հանգչեցաւ  
իր գործերէն, ինչպէս Աստուած ալ իրեններէն: Ուրեմն  
ջանանք այն հանգիստը մտնել, որ չըլլայ թէ մէկը նոյն  
անհաւատութեան մէջ իյնայ:*

– Եբրայեցիներուն 4:9-10

Հիմա արդէն գիտէք, թէ Շաբաթ օրուայ հանգիստը խոստում մըն է բոլոր Նոր Կտակարանի Քրիստոսի հաւատացողներուն եւ անիկա միայն Հին Կտակարանին վերաբերող բան մը չէ: Դուք նաեւ հիմա գիտէք, թէ Շաբաթը կարելի չէ առանց բաւարարէն աւելին ունենալու կամ ինչպէս տեսանք Ելք գիրքին 16-րդ գլուխին մէջ, առանց կրկնապատիկ բաժինին: Կը խնդրեմ մի շփոթիք կարծելով, թէ կրկնապատիկ բաժինին մէջ քալելը կը նշանակէ, թէ դուք ամէն անգամ հսկայական աւելորդ կանխիկ դրամ պիտի ունենաք ձեր տրամադրութեան տակ երբ Աստուած ձեզի թելադրէ, որ նոր ծրագրի մը նախաձեռնէք:

Իմ կեանքիս մէջ եղած են ժամանակներ երբ Յիսուս ինծի ըսած է, որ ծրագրի մը մէջ յառաջ երթամ երբ դրամատան մէջ բնաւ դրամ չունէի: Ես յետագային անդրադաձած եմ, որ Աստուած երբեք մտահոգ չէ դրամին մասին եւ գիտէր, թէ անիկա ճիշտեղէն պիտի գար: Բայց Ան չէր արտօներ, որ աստիկա ժամանակէն առաջ յայտնաբերուի, որպէսզի թշնամին չփորձէր զայն գողնալ: Կ'ուզեմ զգուշացնել ձեզ. այդպիսի կացութեան մը մէջ յառաջ երթալու որոշումը առէք միայն երբ վստահ էք, որ Սուրբ Հոգին ձեզի ըսած է, որ այդպէս ընէք: Դարձեալ, եթէ Յիսուս ձեզի չըսէ, որ յառաջանաք ծրագրի մը մէջ առանց պէտք եղած դրամական միջոցները ունենալու, մի յառաջանաք: Սպասեցէք մինչեւ որ Աստուծոյ ժամանակը եւ մատակարարումը տրամադրելի ըլլան:

Ընդհանրապէս մենք՝ հաւատացելաներս կանչուած ենք ապրելու մեր կեանքին ֆինանսական առատութենէն: Մենք կարիքաւորներ

չենք, այլ՝ կրնանք ամէն առիթի առատաձեռն ըլլալ այնպէս, ինչպէս մեր Հայրը առատաձեռն է: Ես առիկա կ'ըսեմ, որովհետեւ բազմաթիւ ե-նամակներ ստացեր եմ, ուր մարդիկ շատ արագ քայլ առած են եւ Աստուծոյ ժամանակը վրիպած է իրենցմէ: Մտիկ ըրէք, պարզապէս որովհետեւ Աստուած ձեզի բան մը ցոյց կու տայ չի նշանակեր, թէ ժամանակն է անոր համեմատ քայլ առնելու: Շատ անգամ Ան ձեզի բան մը ցոյց կու տայ, որպէսզի ձեզի ուղղութիւն եւ ժամանակ տայ, որպէսզի պատրաստուիք: Իմ փորձառութեամբս, առաջին հերթին ժամանակը նոյնքան կարեւոր է որքան ուղղութիւն ստանալը:

Երբ Յիսուս ծառայութեան սկսաւ Իր ծննդավայրին մէջ, Յովհաննէս Մկրտիչին կողմէ Յորդանան գետին մէջ մտկոտուելէ ետք եւ քառասուն օր եւ քառասուն գիշեր անապատին մէջ անցընելէ ետք, իր տեղական ժողովարանը գնաց եւ Եսայի մարգարէին գիրքը առաւ եւ բացաւ վաթսունմէկերորդ գլուխը եւ կարդաց: Մենք այս դէպքը արձանագրուած կը գտնենք Ղուկասի աւետարան 4:18-21ին մէջ:

*Տիրոջը Հոգին իմ վրաս է. վասնզի զիս օծեց աղքատներուն աւետարան քարոզելու, զիս դրկեց կոտորած սիրտ ունեցողները բժշկելու, գերիներուն ազատութիւն եւ կոյրերուն տեսութիւն քարոզելու, հարստահարութիւն կրողները ազատելու, Տիրոջը ընդունելու փարին քարոզելու:*

*Եւ գիրքը գոցելով՝ փուսաւ սպասաւորին ու նստաւ: Ժողովարանը եղողներուն ամէնքը աչքերնին տնկած անոր կը նայէին: Սկսաւ անոնց ըսել. «Այսօր այս գրուածը կապարուեցաւ ու ձեր ականջները լսեցին»:*

Անշուշտ անոնք զայրացան Իրմէ, որովհետեւ Ան կը հասկցնէր, թէ այդ համարները Իրեն կ'ականարկէին: Բայց ուշադիր եղէք, որ Յիսուս ընդ կանգ առաւ կարդալէն: Եսայի մարգարէութեան 61-րդ գլուխին առաջին եւ երկրորդ համարները իրականութեան մէջ կ'ըսեն.

*Տէր Եհովային Հոգին իմ վրաս է, վասնզի Տէրը զիս  
օծեց ու զիս դրկեց աղքատներուն անտրիս փալու,  
կոտրած սիրտ ունեցողները բժշկելու, գերիներուն՝  
ազատութիւն եւ բանտարկեալներուն բանտին բացուիլը  
հրատարակելու: Տիրոջը՝ ընդունելի փարին ու մեր  
Աստուծոյ վրէժխնդրութեան օրը հրատարակելու [...]:*

Նկատի առէք, որ Յիսուս նախադասութեան մէջտեղը կանգ առաւ: Ան չկարդաց «մեր Աստուծոյ վրէժխնդրութեան օրը հրատարակելու»: Ինչո՞ւ: Որովհետեւ Ան ուզեց կանգ առնել հասնելով այդ նախադասութեան առաջին մասին վրայ՝ «Տիրոջը՝ ընդունելի տարին»: Ինչ է Տիրոջ ընդունելի տարին: Յոբելեան տարին է: Յիսուս հիմնականօրէն կը յայտարարէր, որ ամէն բան, որ Շաբաթ Օրուան, Շաբաթ Տարուան շուքը մեզի ցոյց կու տար, հիմա իրագործուած էր եւ հիմա հոս էր, որովհետեւ Ինք եկած էր: Եսայի մարգարէութեան ամբողջ 61-րդ գլուխը մեզի կ'ըսէ, թէ Յիսուս ինչ ըրաւ մեզի համար: Կրկնապատիկ բաժինին վերաբերեալ, եկէք կարդանք 7-9-րդ համարները:

*Ձեր ամօթին տեղ՝ կրկին ուրախութիւն եւ անարգանքին տեղ  
ձեր ժառանգութեանը մէջ պիտի ցնծաք, ուստի ձեր երկրին  
մէջ կրկին ժառանգութիւն պիտի առնէք: Յաւիտենական  
ուրախութիւն պիտի ունենաք: Քանզի ես Տէրս արդարութիւնը  
կը սիրեմ. անիրաւութիւնն ու յաւիշտակութիւնը կ'ատեմ.  
Իրացնէ անոնց գործերուն վարձքը պիտի տամ ու անոնց  
հետ յաւիտենական ուխտ պիտի ընեմ: Անոնց սերունդը  
ազգերուն մէջ, անոնց տղաքները ժողովուրդներուն մէջ  
պիտի ճանչցուին, զանոնք բոլոր տեսնողները պիտի  
զիտնան, թէ անոնք Տիրոջը օրինած սերունդն են:*

– Եսայեայ 61. 7-9

Ես վստահաբար կը հասկնամ տկարացնող ֆինանսական հարցերու պատճառով ամօթի զգացում ունենալը: Մեր ֆինանսական

կացութեան պատճառով ես շատ անգամ վարկաբեկուած եւ ամչցած եմ: Կը յիշեմ, որ անգամ մը մեր ընկերներէն մօտաւորապէս քսան հոգի ընթրիքի կանչած էի տեղական ճաշարանի մը մէջ: Չեմ յիշեր, թէ ինչ էր այն յատուկ առիթը, զոր կը տօնէինք, բայց կը յիշեմ որոշած էի, որ ես պիտի վճարեմ այդ առիթին համար: Կը յիշեմ, որ ընթրիքին ժամանակ շատ պրկուած էի, որովհետեւ այդքան մարդու ընթրիքը վճարելու համար դրամ իրապէս չունէի:

Այն գումարը, զոր կը սպասէի, որ պիտի գանձեմ գործարքէ մը, որուն վրայ կ'աշխատէի, ուշացաւ: Միակ վարկաքարտը, զոր ունէի չեղարկուած չէր, բայց ամենամեծ գումարը, որ կարելի էր ծախսել, ծախսուած էր եւ վստահ չէի եթէ անգամ մը եւս կրնայի գործածել զանիկա կամ ոչ: Անշուշտ ընթրիքին վերջաւորութեան քարտը մերժուեցաւ: Ես շատ նուաստանալով՝ ստիպուեցայ հիւրերէս մէկէն խոնարհաբար խնդրել, որ այդ առիթին համար վճարէ:

Օ՛հ, ես այդպիսի շատ պատմութիւններ ունիմ, բայց չեմ կարծեր, որ դուք բաւարար թաշկինակներ ունիք ձեր քով այդ պատմութիւններուն ցանկը լսելու համար: Բայց փանօք Աստուծոյ Յիսուսով, բոլոր մեզ տեսնողները ստիպուած պիտի ընդունին, որ մենք մարդիկ ենք, զորս Տէրը օրինած է:

Կրկնապատիկ բաժինը քուկդ է, Յիսուս քու Շաբաթի հանգիստդ է եւ Ա՛ն է քու կրկնապատիկ բաժինդ: Եթէ իմ նախորդ գիրքերէս որեւէ մէկը կարդացած էք, գիտէք, թէ Տէրը ինձի շատ բան սորվեցուց Թագաւորութեան մասին եղնիկի որսորդութեան միջոցաւ: Խորքին մէջ եղնիկի որսորդութիւնը այն միջոցն էր, զոր Աստուած գործածեց՝ նախ Թագաւորութեամբ ուշադրութիւնս

**ՊԱՐԶԱՊԷՍ ՈՐՈՎՇԵՏԵՒ  
ԱՍՏՈՒԱԾ ՁԵՋԻ ԲԱՆ  
ՄԸ ՑՈՅՑ ԿՈՒ ՏԱՅ  
ՉԻ ՆՇԱՆԱԿԵՐ, ՈՐ  
ԱՆՈՐ ՀԱՄԱՐ ՔԱՅԼ  
ԱՌՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿՆ  
Է: ՇԱՏ ԱՆԳԱՍ ԱՆ  
ՁԵՋԻ ԲԱՆ ՄԸ ՑՈՅՑ  
ԿՈՒ ՏԱՅ, ՈՐՊԷՍԶԻ  
ՁԵՋԻ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ  
ԵՒ ԺԱՄԱՆԱԿ  
ՏԱՅ, ՈՐՊԷՍԶԻ  
ՊԱՏՐԱՍՏՈՒԻՔ:**

գրաւելու համար: Ես քանի մը տարիէ եղնիկի որսորդութիւն կ'ընէի առանց յաջողութեան: Թէեւ ես ջանք կը թափէի ժամանակ եւ դրամ տրամադրելով, բայց վերջաւորութեան ես առանց յաջողութեան եւ առանց եղնիկի միսի մնացի: Անկեղծ ըլլալու համար երբեք հաւանականութիւն նոյնիսկ չկար, որ յաջողէի: Տարի մը, մինչ ես կը մտածէի եղնիկի որսորդութեան գալիք եղանակին մասին, Աստուած ինծի հետ խօսեցաւ եւ ըսաւ. «Ինչո՞ւ ինծի թոյլ չես տար, որ քեզի օգնեմ եղնիկ որսալու այս տարի»: Անշուշտ ես գաղափար չունէի, թէ ինչ կը նշանակէր ատիկա, բայց Ան ինծի ըսաւ, որ վճարագիր (չէք) մը առնեմ եւ վարի բաժինին մէջ գրեմ՝ «Իմ 1987-ի եղջերուիս համար» եւ որոշ գումար մըն ալ գրեմ վրան եւ զանիկա ուղարկեմ առաքելութեան մը, որուն Ինք զիս առաջնորդեց, որ դրկեմ: Ան նաեւ ինծի ըսաւ, որ Տրենտան եւ ես մեր ձեռքերը այդ չէքին վրայ դնենք եւ Մարկոս 11. 24-ը հոչակենք մինչ անոր վրայ կ'աղօթենք:

**Մարկոս 11. 24-ը կ'ըսէ.**

*Ասոր համար կ'ըսեմ ձեզի. «Ինչ բան որ աղօթքով կը խնդրէք, հաւատարեք թէ պիտի առնէք եւ պիտի ըլլայ ձեզի»:*

Ամփոփելու համար՝ այդ տարի ես բոլորովին անձանօթ տեղ մը գացի եւ մօտաւորապէս քառասուն վայրկեանէն իմ եղջերուս որսացի: Տրենտան եւ ես վերջին երեսուն տարիներուն այս քայլերուն հետեւած ենք եւ անկէ ի վեր ամէն տարի ես միշտ եղնիկ կամ եղջերու մը որսացած եմ երեսունէն քառասուն վայրկեանուան մէջ: Տարիներու ընթացքին որսորդութեան ժամանակ, տեսած եմ Աստուած հիանալի բաներ կ'ընէ, նաեւ որսորդութեան միջոցաւ Թագաւորութեան օրէնքներուն մասին բաւական դասեր սորված եմ: (Այդ բոլոր նախկին պատմութիւնները ես արձանագրած եմ իմ «Հաւատքի Որսորդութիւն» խորագիրով գիրքիս մէջ):

Ես ընդհանրապէս կը նախընտրեմ աղեղով որսալ աշնանային ջերմ գոյներուն մէջ, փոխանակ՝ որսամ պաղ գէնքի եղանակին հոս՝ Օհայոյի մէջ: Օհայոյի մէջ բաւական շատ եղնիկ կամ եղջերու



արտօնուած է որսալ եւ որբել տարուան մէջ, տարեկան ամենաշատ վեց եղնիկ (եղջերու) արտօնուած է որսալ: Ես երբեք ստիպուած չեմ եղած այդքան շատ եղնիկ որսալու՝ ընտանիքս կերակրելու համար: Իմ սառուցիչս ընդհանրապէս բաւական լեցուն կ'ըլլայ տարեկան երկու կամ երեք եղնիկներով: Գնահատելու համար այն ինչ որ հիմա պիտի ըսեմ, պէտք է գիտնաք, թէ այն բոլոր տարիներուն ընթացքին երբ ես կ'որսայի, երբեք երկու եղնիկի չեմ կրակած նոյն առաւօտուն կամ երեկոյեան որսի ընթացքին: Ի միջի այլոց, եթէ որսորդ չէք, այո, մենք աղեղով որսորդութիւն կ'ընենք ծառի վրայ ամրացուած յենարանէ մը: Ընդհանրապէս երբ եղջերու (եղնիկ) մը կը սպաննէի, անտառէն կը հեռանայի եւ ուրիշ օր մը կը վերադառնայի եւ ուրիշ մը կ'առնէի: Բայց Տէրը ուզեց բան մը սորվեցնել ինծի այդ յատուկ երեկոյեան որսորդութեան ընթացքին:

Աշնանային որսի հիանալի օրերէն մէկն էր, քիչ մը ամպոտ էր եւ թեթեւ անձրեւը քիչ-քիչ կը խոնացնէր գետինը: Կիրակի երեկոյ էր, ես քիչ մը յոգնած էի այդ առաւօտ բազմաթիւ եկեղեցական ծառայութիւններ ընելէ եւ անհամբեր կը սպասէի անտառ երթալու: Տրենտան կ'երթար քանի մը բան գնելու եւ ինք եւ ես համաձայնած էինք, որ ատիկա յարմար գիշեր մըն էր սառուցիչին մէջ եղնիկի միս դնելու համար: Ես իմ որսորդութեան հագուստս կը հագուէի եւ իմ առարկաներս կը հաւաքէի երբ ան դէպի ինքնաշարժը գնաց: Ես դուրս ելայ այն պահուն երբ ան ինքնաշարժը կ'աշխատցնէր ճամբայ ելլելու համար: Երբ ան ինքնաշարժը աշխատցուց, պատուհանը իջեցուց եւ ինծի ըսաւ. «Կրկնապատիկ բաժինը»: Չէի գիտեր ինչո՞ւ ատիկա ըսաւ, թէ եւ յետոյ ան ըսաւ, թէ այդ պահուն Տիրոջմէն լսած էր այդ մէկը եւ առաջնորդուած զգացած էր ինծի ըսելու:

Այդ տարի մենք երեք եղնիկի համար սերմանած էինք եւ այս մէկը այդ եղանակին մեր առաջին որսորդութեան օրն էր: Ես արագ համբոյր մը տուի իրեն եւ ըսի, թէ համաձայն էի եւ մեր անտառը ուղղուեցայ: Ես իմ սեփական կալուածիս մէջ կ'որսամ, ուրեմն իմ գացած տեղիս շատ ծանօթ էի: Մինչ մաքրելով ծառին վրայ ամրացուած իմ յենարանս կ'ելլէի, գործիքովս քանի մը անգամ խոնչալու ձայն հանեցի: Տասնըհինգ վայրկեանուան մէջ մեծ ու ութ

եղջիւրներով եղջերու մը վազելով եկաւ, ես քառասուն կանգուն (36. 5 մեթր) հեռաւորութենէն կրակեցի եւ եղջերուն ինկաւ: Հիանալի էր: Ծառէն վար իջայ եւ եղջերուին քով գացի, բայց վերջը յիշեցի Տրենտային ըսածը՝ կրկնապատիկ բաժինը, ուրեմն եղջերուն իր ինկած տեղը ձգեցի եւ դէպի ծառը գացի եւ նորէն դէպի իմ յենարանս մաքցեցայ:

Մտածեցի, որ ամբողջ աղմուկն ու իրարանցումը, զորս ըրած էի ծառէն վար իջնելով, շրջելով ու վերջը վերադառնալով եւ յենարան մաքցելով, չըսելու համար այն բոյրը, զոր ես հաւանաբար տարածած էի, բնականաբար ուրիշ եղջերու մը սպաննելու շատ քիչ հաւանականութիւն կը ձգէին այդ քանի մը վայրկեանուան մէջ, որ կրակելու օրինական ժամերէն մնացած էր: Բայց տասնըհինգ վայրկեան ծառին վրայ ըլլալէս ետք, 6-12 ամսու եղջերու մը եկաւ ճիշդ իմ ծառիս տակ կեցաւ եւ ես կատարեալ կրակոցով մը զանիկա սպաննեցի: Ուահ, երկու կրակոց եւ երկու եղնիկ ետեւ-ետեւի, նոյն ծառէն: Ես ատկէ առաջ երբեք այդ մէկը չէի ըրած: Ատիկա իմ ուշադրութիւնս գրաւեց եւ գիտցայ, թէ ասիկա այդ կրկնապատիկ բաժինն էր, որուն մասին Տրենտան խօսած էր:

Յաջորդ հինգ տարիներուն ընթացքին, ես նոյն փորձառութիւնը ունեցայ: Ամէն անգամ որ աղեղով որսորդութեան կ'երթայի, հիմա նոյն ծառէն երկու եղնիկ (եղջերու) կ'որսայի քանի մը վայրկեան տարբերութեամբ: Գիտէի, թէ ասիկա բնական չէր եւ սկսայ կեդրոնանալ կրկնապատիկ բաժինին վրայ, անդրադառնալով, որ անգամ մը եւս Աստուած ինձի ուրիշ դաս մըն ալ կը սորվեցնէր Իր Թագաւորութեան մասին:

Ես միշտ հրացանները սիրած եմ եւ անշուշտ որսորդութիւնը կը սիրեմ: Ես ունիմ հրացաններու իմ սեփական հաւաքածոս, զոր կը գործածեմ որսորդութեան համար եւ բաւական ուրախ էի իմ ունեցած հրացաններովս: Տրենտան եւ ես ունինք վաթսուն արտավար հող մօտաւորապէս քսանհինգ արտավար անտառներով եւ նաեւ տասնըհինգ արտավար ճահիճ: Աշնան ճահիճը կրնայ չոր ըլլալ կամ ջուրով լեցուն նայած, թէ ինչքան անձրեւոտ էր ամառը:

Այդ տարի յատկապէս մենք բաւական անձրեւոտ ամառ մը ունեցանք, ուրեմն ճահիճը ջուրով լեցուն էր երբ աշնան բաղերու եղանակը եկաւ: Միշտ ալ բաղեր կու գային ճահիճը այն տարին երբ ջուր կ'ըլլար, բայց ես շատ ուշադրութիւն չէի դարձներ անոնց: Բայց այդ տարի խոշոր խումբեր ճահիճը եկան, որովհետեւ ջուրը շատ բարձր էր եւ ես չկրցայ ինքզինքս զսպել: Թէեւ անցեալին երբեք չէի մտադրած զանոնք որսալ, բայց մտածեցի ճահիճ իջնել եւ փորձել քանի մը բաղ որսալ: Որսորդութիւնը հիանալի էր: Ամէն տեղ բաղեր կային եւ մենք քանի մը անգամ բաղ կերանք ընթրիքին այդ տարի:

Այդ տարի մինչ բաղ կ'որսայի, նկատեցի, որ շատ անգամ բաղերը որսորդական հրացանին հասանելիութեան սահմաններէն դուրս էին: Ես կը գործածէի իմ առօրեայ բազմակողմանի գործածութիւն ունեցող որսորդական հրացանս, զոր սովորաբար կը գործածէի նապաստակներ եւ փասեան թռչուններ որսալու համար, բայց երբ բաղերը որսորդական հրացանին հասանելիութեան սահմաններէն դուրս թռան, յիշեցի, որ լսած էի աւելի նոր տեսակի որսորդական հրացանի մը մասին, որ մասնաւոր բաղեր որսալու համար նախատեսուած էր: Անիկա ռազմական պատրանք ունէր եւ կրնար կրակել նոր բաղերու մեծ խումբին վրայ: Անոր փամփուշտները աւելի մեծ կապարագնդիկ եւ վառօղ ունէին իրենց մէջ, զորս թոյլ կու տային աւելի հեռու կրակել: Կը յիշեմ մտածեցի, թէ պէտք է օր մը զանոնք ստուգեմ:

Պատահեցաւ, որ մարզական խանութի մը մէջ էի՝ բաղերու եղանակը վերջանալէն ամիս մը ետք, երբ նկատեցի զէնքերու դարակ մը պիտակաւորուած ջրային թռչուններու զէնքեր: Քիչ մը անոնց նայեցայ, բայց զինը երկու հազար տոլար էր եւ քանի որ ես այդ հրացանին պէտք պիտի ունենայի տասը ամիս ետք երբ բաղերու եղանակը վերսկսէր, որոշեցի սպասել: Բայց առանց մտածելու ես բարձրաձայն ըսի. «Տէր, ես այդ մէկը կ'ուզեմ»: Ես այդ մասին շատ չմտածեցի երբ խանութէն դուրս ելայ, բայց քանի մը շաբաթ ետք, ես կը խօսէի բաժնետիրական վաճառքի ժողովի մը ընթացքին, ոչ եկեղեցւոյ ծառայութեան մը ընթացքին, այլ՝ բաժնետիրական վաճառքի ժողովի մը: Իմ ներկայացումիս վերջաւորութեան

գործադիր տնօրենը շնորհակալություն յայտնեց ինձի ելույթիս համար եւ ըսաւ. «Այս գիշեր խօսելուդ համար կ'ուզէիք շնորհակալութիւն յայտնել քեզի նուերով մը»: Ես ցնցուեցայ երբ ինք բերաւ ճիշդ նոյն որսորդական հրացանը, զոր ես տեսած էի մարզական խանութին մէջ միայն քանի մը շաբաթ առաջ: Իմ բառերս. «Տէր, ես այդ մէկը կ'ուզեմ» եւ այն իրողութիւնը, որ անցեալին գէնքեր նուիրած էի այդ հունձքը բերաւ:

Այս շարքին պատկանող առաջին գիրքին մէջ՝ «Ձեր Ֆինանսական Յեղափոխութիւնը. Հաւատարմութեան Ջորջիանը» (Your Financial Revolution: The Power of Allegiance), ես կը խօսիմ այն սկզբունքին մասին, որուն շնորհիւ այդ հրացանը յայտնուեցաւ: Ես զանիկա կը կոչեմ մանգաղի սկզբունքը եւ ատիկա կը գտնուի Մարկոսի աւետարան 4. 26-29-ին մէջ: Ես կ'առաջարկեմ, որ այդ գիրքէն օրինակ մը առնէք եթէ կարդացած չէք: Այդ հրացանին յայտնուիլը անկասկած հիանալի էր, բայց ատիկա չէ իրական պատմութիւնը, որուն վրայ կ'ուզեմ կեդրոնանալ: Բայց ատիկա հրահրեց այն պատմութիւնը, զոր կ'ուզեմ ձեզի պատմել:

Այդ հրացանին յայտնուելէն ետք, ես անդրադարձայ, որ ինչպէս այդ հունձքը սկսած էի, օր մը ես պահ մը մտածեցի, թէ արդեօք ուրիշ ինչ հրացաններ կային, զորս կ'ուզէի ունենալ: Ի վերջոյ ես տասնեակներով հրացաններ սերմանած էի, ուրեմն մտածեցի Թագաւորութեան օրէնքները փորձարկել: Միակ հրացանը, որ չունէի իմ հաւաքածոյիս մէջ վրայ-վրայի գետեղուած երկու հրափողով որսորդական հրացան մըն էր: Անոնք գեղեցիկ որսորդական հրացաններ են եւ ընդհանրապէս աժան ալ չեն: Ուրեմն ըսի. «Տէր, ես կ'ուզեմ այդ աղուոր վրայ-վրայի գետեղուած երկու հրափողով որսորդական հրացաններէն ունենալ»:

Մօտաւորապէս ամիս մը ետք, ես հեռաձայն մը ստացայ մեր առաքելութեան գործակիցներէն մէկէն եւ ան ինձի ըսաւ, որ կ'ուզէր ինձի համար գնել որսորդական հրացան մը, վրայ վրայի գետեղուած երկու հրափողերով: Ես չափազանց խանդավառուեցայ եւ ան ըսաւ, որ զանիկա իմ տունս պիտի ուղարկէր: Քանի մը օր ետք ես ստացայ երկու գեղեցիկ վրայ վրայի գետեղուած երկու հրափողերով

որսորդական հրացաններ, պարզապես հոյակապ էին: Նկատի առեք, որ ես երկու որսորդական հրացան ստացայ: «Ուահո», մտածեցի: Հեռաձայնեցի գործակիցիս եւ շնորհակալութիւն յայտնեցի իր դրկած երկու գեղեցիկ որսորդական հրացաններուն համար: Քանի մը օր ետք, ան երկու հատ ալ դրկեց: Երբ հեռաձայնեցի, որպէսզի իրեն դարձեալ շնորհակալութիւն յայտնեմ, ըսաւ. «Ես այնքան տպաւորուեցայ, որ դուք անձամբ ինձի հեռաձայնեցիք՝ շնորհակալութիւն յայտնելու համար, որ ուզեցի երկու հատ ես դրկել ձեզի»: Ես նուէրներով հիացած էի, բայց սկսայ կրկնուող բան մը տեսնել այստեղ: Ամէն անգամ երկրի որսորդական հրացան: Ասիկա կրկնապատիկ բաժինը կը յիշեցնէ:

Մօտաւորապէս երկու ամիս առաջ, առտուն եկեղեցոյ մը մէջ կ'ուսուցանէի եւ յետոյ այդ գիշեր նոյն քաղաքին մէջ գտնուող ուրիշ եկեղեցոյ մը մէջ պիտի ուսուցանէի: Առտուան պաշտամունքէն ետք մարդ մը ինձի մօտենալով կ'ըսէ. «Գեղեցիկ Պրաունինկ կէս-ինքնաշարժ որսորդական հրացան մը ունիմ, որ քեզի պիտի դրկեմ»: Դարձեալ, ես շատ խանդավառուեցայ: Տարօրինակ է ինչպէս միւս եկեղեցոյ մէջ երեկոյեան պաշտամունքին ընթացքին մարդ մը ինձի կը մօտենայ եւ կ'ըսէ. «Բոլորովին նոր հրացան մը բերի, որ տակաւին տուիին մէջ է եւ կ'ուզեմ քեզի տալ»: Ասիկա գեղեցիկ, հեռադիտակով Մարլին 30/30 մըն էր, հրացան մը, որմով ես յաճախ հիացած եմ, բայց երբեք չեմ ունեցած: Դարձեալ, ես զարմացայ, բայց սկսայ հասկնալ այս երեւոյթը՝ կրկնապատիկ բաժինը:

Դարձեալ, անկէ քանի մը շաբաթ ետք, նոյն բանը պատահեցաւ՝ նոյն օրուան մէջ երկու որսորդական հրացան տրուեցաւ ինձի: Միայն կրնամ ըսել, որ ես մարդ մըն եմ, որ վստահօրէն օրհնուած է հիանալի որսորդական հրացաններով: Բայց իմ պատմած բոլոր պատմութիւններուս պէս, ես միշտ կը հարցնեմ. «Ինչպէս պատահեցաւ ատիկա»: Անշուշտ ես արդէն ձեզի ըսի, թէ անցեալին շատ զէնքեր սերմանած եմ, բայց մինչեւ այդ ատեն երբեք չէի ըսած. «Ես ատիկա կ'ուզեմ, Տէր»: Դարձեալ ըսեմ, ասիկա մանգաղի սկզբունքն է, զոր պէտք է գիտնաք: Բայց մանգաղի սկզբունքէն անդին ես սկսած էի հասկնալ կրկնապատիկ բաժինը

շատ յստակօրէն ու բացայայտօրէն եւ կ'ուզէի գիտնալ, թէ ճիշդ ինչպէս այդ մէկը կ'ընէի: Կը հաւատամ, որ Տէրը ինծի ցոյց տուաւ, թէ մեզմէ շատերը փախցուցած են Թագաւորութենէն հնձելու այս շատ կարեւոր երեւոյթը եւ յաջորդ գլուխին մէջ ես ժամանակ պիտի տրամադրեմ այս նիւթը քննարկելու: Բայց նախքան այդ մէկը ընեմ, պէտք է ձեզի հետ բաժնեկցիմ ինչպէս այդ տարին շարունակեց զարգանալ:

Երկու որսորդական հրացանները ստանալէս ետք հետեւեալը պատահեցաւ եւ այս մէկը ամենահիանալի պատմութիւններէն մէկն է, որ պատահած է կրկնապատիկ բաժինը անկասկած, յստակօրէն ու բացայայտօրէն յայտնուելուն վերաբերեալ: Ասիկա կրկնապատիկ բաժինին մէկ օրինակն է: Այս պատմութիւնը իմ ինքնաշարժներուս կը վերաբերի, յատկապէս իմ ճերմակ մարգարիտի գոյնով «Քատիլաք Էսքալատ»-իս, որ ինծի տրուեցաւ եւ որուն մասին նշեցի քանի մը գլուխ առաջ:

Ինչպէս նախապէս գիրքին մէջ ըսի, Տրենտան եւ ես յատկապէս ինքնաշարժներով չենք հետաքրքրուած: Մենք ընդհանրապէս կը քշենք զանոնք մինչեւ որ անոնք դադրին աշխատելէ կամ պարզապէս այլեւս լաւ չերեւին:

Եւ դարձեալ այս պատմութեան մէջ, պէտք է նշեմ, որ Տրենտան եւ ես նախապէս քանի մը ինքնաշարժ նուիրած էինք եւ իրապէս մեր հաւատքով յստակ պահանջք մը չէինք ներկայացուցած ըսելով, թէ ինչ կը հաւատայինք, որ պիտի հնձէինք այդ նուիրատութենէն ետք: Բայց եթէ կը յիշէք այդ պատմութիւնը, երբ մեր համագումարին ժամանակ մենք քշեցինք այդ վարձուած «Էսքալատ»-ը եւ ըսինք. «Մենք կը սիրենք ասիկա. կը կարծենք, որ պէտք է այս ինքնաշարժէն առնենք», մենք իրապէս չէինք ակնկալեր, որ մէկը մեզի հեռաձայնէ եւ ըսէ, թէ կ'ուզէ մեզի համար այդ ինքնաշարժէն մէկ հատ գնել: Բայց անշուշտ այդ մէկը պատահեցաւ եւ անշուշտ մենք ունէ մէկուն չէինք ըսած, որ ատկէ կ'ուզենք: Ուրեմն ինչպէս նախապէս ձեզի ըսի, ճերմակ մարգարիտի գոյնով «Էսքալատ»-ին կարճ տարբերակը յայտնուեցաւ եւ անիկա պարզապէս հիանալի էր եւ դեռ՝ է: Ես կը սիրեմ զանիկա:

Բայց տակաւին կայ ւաւելի հիանալի լուսանցային նշում մը այդ պատմութեան մասին, որ նոր անցեալ ամրան պատահեցաւ: Մինչեւ անցեալ ամառ, մենք այդ «Էսքալատ»-ը քշած էինք մօտաւորապէս մէկ ու կէս տարի եւ օր մը նկատեցի, որ մեքենան (շարժիչը) ստուգելու լոյսը վառեցաւ: «Մեծ հարց չէ», մտածեցի, բայց ուզեցի, որ ստուգուի, ուստի Քատիլաքի

**ԵՍ ԿԸ ՀԵՏԱՊՆԴԵՄ  
ԹԱԳԱՒՈՐԸ ԵՒ ԱՆՈՐ  
ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ,  
ԲԱՅՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ  
ՄԷՋ ԿԸ ԳՏՆԵՄ ԱԻԵԼԻ  
ՔԱՆ ԲԱԻԱՐԱՐԸ,  
ԿՐԿՆԱՊԱՏԻԿԸ:**

վաճառականի մը տարի, որպէսզի անոր նայի: Ան ըսաւ, որ ատիկա իրապէս հարց մը չէր: Զգայակը շատ փոքր քանակութեամբ իւղ կը գտնէր այն խողովակին մէջ, որ մեքենային (շարժիչին) կազերը դուրս կը հանէր, բայց ատիկա հարց չստեղծեր: Մեքենան երկար կեանք ունէր, կրնայի քշել ինչքան որ կ'ուզէի: Հարցուցի, թէ ինչն իւղ կը գտնէր: Իմ «Էսքալատ»-իս վրայ յատուկ ծուխը դուրս հանող խողովակ մը դրուած էր եւ ըսին, որ ատիկա կրնար ըլլալ պատճառը, որ լոյսը կը վառէր: Դարձեալ ըսին, թէ մեքենան (շարժիչը) լաւ վիճակի մէջ էր եւ թէ պէտք էր ակնկալէի, որ մեքենան երկար ժամանակ դիմանար:

Օր մը, այդ ինքնաշարժը նուիրող մարդուն հետ սովորական գրոյցի մը ընթացքին, նշեցի ինքնաշարժին վառող լոյսին հարցին մասին: Ան ըսաւ. «Այո՛, ես տեսած եմ, որ ատիկա ուրիշ ճի. էմ. Սի. տեսակի ինքնաշարժներու հետ ալ կը պատահի»: «Էտրքին մէջ», ան ըսաւ, «ատիկա յաճախ կը պատահի հին տարբերակներուն մէջ»: Ան շարունակեց ըսելով, որ ատիկա ոչ մէկ կերպով չէր ազդեր ինքնաշարժին եւ որ ես պէտք է կարենամ ինքնաշարժը քշել յաջորդ տասը տարիներուն ընթացքին կամ ւաւելի առանց որեւէ խնդիրի:

Ան գիտէր, թէ Տրենտան եւ ես Ֆլորիտայի մէջ տուն մը ունէինք, որ նոր գնած էի: Ես ապշած նստայ հոն երբ ան յետոյ ըսաւ. «Նայէ՛ քեզի ինչ պիտի ըսեմ: Դուն ասիկա քշելով Ֆլորիտա տար ու հոն գործածէ եւ ես քեզի ուրիշ մը գնեմ, որպէսզի հոս՝ Օհայոյի մէջ քշես»: Այո՛, ես

հիմա ունիմ երկու մարգարիտի գոյնով ճերմակ, «Էսքալատ»-ի կարճ տարբերակներ, որոնք ամէն ձեռով կատարեալ են, բացի առաջինին մէջի զգայակին լոյսէն, որ երբեմն կը վառի: Երկուքն ալ ամէն ձեռով կատարեալ են: Դարձեալ ըսեմ, ատիկա այդ, «Տեսմը ինչ եղաւ» պահերէն մէկն էր: Տրենտային եւ ինձի համար շատ զարմանալի է, որ այդ գեղեցիկ ինքնաշարժները կը քշենք: Այդ ինքնաշարժներէն որեւէ մէկուն համար մենք չվճարեցինք: Բայց այս պարագային, մենք գիտցանք, որ ատիկա կրկնապատիկ բաժինն էր:

Ես այս պատմութիւնները ձեզի չեմ պատմեր ցուցադրելու կամ հպարտանալու համար, բայց բարեկամ, ես օրհնում ճեմ: Ես կը վայելեմ կրկնապատիկ բաժինը, որ ինչպէս գիտէք, բաւարարէն ատիկ ունենալն է: Ես ունիմ պահարան մը լեցուն հրացաններով, որոնք բաւարարէն ատիկ են: Ես ունիմ երկու «Էսքալատ», որոնք ճիշդ նոյնն են եւ որոնց գինը ես չեմ վճարած: Կարծեմ կը համաձայնիք, որ ատիկա բաւարարէն ատիկ է: Ես ձեզ չեմ քաջալերեր, որ նիւթական բաներու ետեւէն երթաք, իմ ըրածս այդ մէկը չէ: Ես բաներու չեմ բռնուիր կամ կապուիր եւ նիւթական բաներ չեմ պաշտեր կամ հետապնդեր: Ես կը հետապնդեմ Թագաւորը եւ Անոր Թագաւորութիւնը, բայց Թագաւորութեան մէջ ես պէտք եղածէն ատիկն կը գտնեմ՝ կրկնապատիկ բաժինը:

Սպասեցէք, ես տակաւին Տիրոջ բարութեան եւ կրկնապատիկ բաժինին մասին վկայութիւնս չաւարտեցի:

Վերջին քսան տարիներուն կինս կը փափաքէր ծովափին վրայ տուն մը ունենալ: Ոչ, տարբեր ձեռով ըսեմ: Ան միշտ ալ ուզած է այդ տունը ունենալ: Ան շատ կը սիրէ ովկիանոսը: Ամենայն դէպս ան տարիներէ ի վեր ովկիանոսին վրայ գտնուող կալուածները կ'ուսումնասիրէ: Անցեալին երբ լաւ գինով տուն մը տեսնէր, զոր կը հաւնէր, մեր դրամը առաքելութեան ծրագիրներուն համար յատկացուած կ'ըլլար եւ մենք կը սպասէինք: Այս տարի ես մառանը անշարժ հեծանիւս վրայ նստած կ'աղօթէի: Յանկարծ Տէրը շատ զօրաւոր մղում մը դրաւ մէջս. «Տրենտային ըսէ, որ Ֆլորիտա երթայ՝ այն քաղաքը, ուր ան կ'ուզէր տուն ունենալ եւ իրեն ըսէ, որ այս շաբաթ ովկիանոսին մօտ իր տունը գնէ»: Ուա՛հ, այն շաբաթ:



Հոգիիս մէջ զօրաւոր շտապ մղում մը կար երբ ատիկա լսեցի: Ուստի Տրենտային ըսի այն, ինչ որ Տէրը ինձի ըսեր էր եւ կապուեցանք մեր բարեկամներէն մէկուն հետ, որ այդ քաղաքին մէջ կ'ապրէր տեսնելու համար թէ արդեօք կ'ուզէր Տրենտան քանի մը օր ինքնաշարժով պտըռոցնել, որպէսզի տուներու նայի: Ան ըսաւ, որ սիրով կ'ընէր այդ մէկը:

Ուստի Տրենտան սկսաւ համացանցին միջոցաւ փնտռել եւ ցանկ մը կազմեց մօտաւորապէս քսանհինգ տուներու, որոնց կ'ուզէր նայիլ: Անկէ ետք Տրենտան կրճատեց իր քսանհինգ տուներու ցանկը եւ հասաւ հինգ տունի, որոնք հնարաւոր ընտրութիւններ էին եւ անոնցմէ մէկուն համար ըսաւ, թէ շատ սիրած էր: Այն ատեն ես օդանաւով իրեն քով գացի ու միացայ իրեն եւ ան ինձի ցոյց տուաւ այդ հինգ տուները եւ այն մէկը, զոր ան շատ սիրած էր: Մենք այդ հինգ տուններէն երկուքը ընտրեցինք՝ այն մէկը, զոր ինք շատ սիրած էր եւ ուրիշ մը, որ շատ աղուոր էր, բայց իր սիրած տունին չափ աղուոր չէր: Պէտք է խոստովանիմ, որ երբ տեսայ այն տունը, զոր ան շատ սիրած էր, գիտցայ, որ Տրենտային ճաշակին եւ նկարագիրին շատ յարմար էր եւ ի վերջոյ առաջարկ մը ըրինք անոր համար: Սեփականատէրը ընդունեց մեր առաջարկը եւ մենք պայմանագիրը ստորագրեցինք մեր նոր տունը գնելու վերջին հանգրուանը ամբողջացնելու համար:

Քանի մը շաբաթ ետք, երբ մենք մեր տան մէջ կը հանգստանայինք Օհայոյի մէջ, Տրենտան շունչ մը քաշեց եւ ըսաւ. «Ատիկա իմ տունս է»: «Գիտե՞մ», ըսի, «Ասիկա քու տունդ է: Աստուած ինձի ըսաւ, որ պէտք է քեզի համար ովկիանոսին մօտ քու տունդ գնեմ այն շաբթուան մէջ երբ ես քեզ ովկիանոս դրկեցի»:

«Ո՛հ», ըսաւ ան, «Չես հասկնար. ատիկա իմ տունս է»: Ան շարունակեց բացատրել, թէ տարիներէ ի վեր ան այդ շրջանին մէջ տուներ կը փնտռէր եւ օր մը, անշարժ կալուածքի ծանուցումի մը մէջ, տեսեր է նկարը այն տան, որ մենք կը գնէինք: Երբ տեսեր է զանիկա, շատ սիրած է: Ան անոր ամէն ինչը սիրած է՝ սպանական միջերկրական ճարտարարուեստը, սենեակներուն դասաւորումը, դիրքը, ամէն բան: Ան յիշեց, որ իր մատը դրած էր այդ նկարին վրայ ըսելով. «Տէր, ես այդ տունը կ'ուզեմ»: Բայց ան գիտէր, թէ այդ տունը

շատ սուղ էր եւ մենք արդէն մեր կանխիկ դրամը ուրիշ ծրագիրներու յատկացուցած էինք, ուստի ան շարունակեր է փնտռել տուներ, որոնց գինը այն ժամանակ մեր հասողութեան սահմաններուն մէջ էր: Բայց ուրիշ ոչ մէկ տուն հանեցանք եւ երբեք չհասանք իրապէս պայմանագիր ստորագրելու հանգրուանին: Մենք տակաւին որեւէ տունի հանդէպ խաղաղութիւն չէինք զգացած:

Պէտք է նաեւ գիտնաք, թէ երկու տարի առաջ մենք սերմ սերմանած էինք՝ այս քաղաքին մէջ՝ ովկիանոսի ափին վրայ տուն մը ունենալու համար: Այդ ընթացքին մենք կը յայտարարէինք, որ ծովափնեայ տուն մը ունինք այս քաղաքին մէջ, մենք արդէն ունինք եւ զանիկա ստացանք այն օրը, երբ սերմանեցինք անոր համար: Ես կը յիշեմ ճիշդ տեղը եւ պահը, ուր մենք ձեռք-ձեռքի բռնեցինք եւ համաձայնեցանք Տրենտային ովկիանոսի ծովափնեայ տան համար: Բայց հիմա մինչ համաձայնութիւն կը կնքէինք, Տրենտան յանկարծ յիշեց այն նկարը, զոր տեսած էր երկու տարի առաջ եւ անդրադարձաւ, որ ատիկա նոյն տունն էր, ի՞ր տունը:

Տան պատմութիւնը ուսումնասիրելէ ետք, մենք յայտնաբերեցինք, որ սեփականատէրը իսկապէս փորձեր էր ծախել տունը քանի մը տարի առաջ, բայց չէր ծախուած եւ ան շուկայէն հաներ էր զանիկա: Այն ատեն էր, որ Տրենտան տեսեր էր տան նկարը անշարժ կալուածքի ցանկին մէջ: Բայց սեփականատէրը որոշեր էր նորէն ցանկագրել զանիկա եւ ասիկա կը բացատրէ, թէ ինչո՞ւ ես յանկարծ շտապ կարիքը զգացի Տրենտան ովկիանոս դրկելու անոր թելադրելով. «Պէտք է այս շաբաթ տուն մը գնես»: Ան ձեզի կրնայ ըսել, որ ընդհանրապէս ես այդպէս դրամ չեմ ծախսեր: Ժամանակը ամէն ինչ է: Այս անգամ դրամս ուրիշ ծրագիրներու մէջ չէր ներդրուած եւ տրամադրելի էր տան համար: Վստահ եմ, որ շատ մարդիկ կը նայէին այդ տան եւ այդ էր պատճառը աճապարանքին: Զարմանալիօրէն գինը չէր բարձրացած երկու տարի առաջուայ նշուած գինէն, զոր ան առաջին անգամ տեսած էր: Կը հաւատամ, որ Աստուած զանիկա կը պահէր իրեն համար:

Բայց պատմութեան կրկնապատիկ բաժինին մասը հետեւեալն է: Մինչ մեր տան համար ըրած առաջարկը ընդունուած էր,

պայմանագիրը ստորագրուած էր եւ տունը գնելու վերջին հանգրուանին կը սպասէինք, Տրենտային մօրմէն հեռաձայն մը ստացանք: Վերջին երեսուներկու տարիներուն ընթացքին, անոնք տուն մը ունէին Քանատայի մէջ: Տարիներուն ընթացքին մենք շատ անգամ եղեր ենք այդտեղ եւ կը սիրէինք տունը եւ անոր դիրքը: Տունը կը գտնուի կղզիի մը վրայ՝ անմիջապէս ջուրին վրայ: Իրականութեան մէջ ովկիանոսը տան ետեւի մեծ պատշգամէն մօտաւորապէս երեսուն ոտք կամ ինը մետր հեռաւորութեան վրայ է: Տրենտային ծնողները կը ծերանային եւ որոշեր էին, որ չէին ուզեր այդքան հեռու տան մը վերանորոգման ծախսերուն հոգալ: Մեզի դիմեցին եւ հարցուցին եթէ հետաքրքրուած էինք զանիկա գնելով եւ ես ո՛չ ըսի: Անիկա ինքնաշարժով երեսունմէկ ժամ հեռու էր Օհայոյէն եւ թէեւ կը սիրէի տունը, բայց չէի կրնար շատ յաճախ հոն երթալ ճամբորդութեան ժամանակին պատճառով: Հետեւաբար անոնք տունը ցանկագրեցին անշարժ կալուածքի գործակալի մը հետ, բայց երկու տարի շուկայի վրայ ծախու դրուելէ ետք, ռեւէ մէկը լուրջ հետաքրքրութիւն չէր ցուցաբերած:

**ՄԻ ԿԱՐԾԷՔ, ՈՐ  
ԿՐԿՆԱՊԱՏԻԿ ԲԱԺԻՆԸ  
ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒԱԾ  
Է ԲԱՆԷ ՄԸ ԵՐԿՈՒ  
ՀԱՏ ՈՒՆԵՆԱԼՈՒՆ:  
ԻՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՋ,  
ԿՐԿՆԱՊԱՏԻԿ ԲԱԺԻՆԸ  
ՊԱՐԶԱՊԷՍ ԲԱՒԱՐԱՐԵՆ  
ԱՒԵԼԻՆ ՈՒՆԵՆԱԼ Է:**

Ուրեմն հիմա, մինչ մենք կը սպասէինք մեր ովկիանոսի ծովափնեայ տունը գնելու վերջին հանգրուանի աւարտին, անոնք հեռաձայնեցին եւ բացատրեցին, որ փորձած էին տունը ծախել, բայց չէին յաջողած եւ համաձայն են տունը կէս գինով ծախելու եթէ մենք կ'ուզենք գնել զանիկա եւ ընտանիքին մէջ պահել: Երբ այդ մասին մտածեցի, յիշեցի, որ երբ զաւակներս կը մեծնային, հոն կ'երթային եւ ատիկա գեղեցիկ տեղ մըն է: Ուստի Տրենտան եւ ես անոր մասին աղօթեցինք եւ ըսինք, որ պիտի առնենք զանիկա: Մենք հազիւ բաւարար կանխիկ դրամ ունէինք այդ տունը գնելու համար:

Անկէ զատ՝ նախորդ տարին մենք ընկերութեանս համար օդանաւ մը գնած էինք, որ մեզի կ'արտօներ, որ հինգ ժամէն հոն հասնինք փոխանակ ինքնաշարժով երեսունմէկ ժամէն հոն հասնելու: Ատիկա հոն երթալը շատ աւելի հնարաւոր կը դարձնէր:

Երկու տուները գնելէ ետք, օր մը գրասենեակիս մէջ նստած էի երբ յանկարծ անդրադարձայ. «Վայրկեան մը, ասիկա կրկնապատիկն է»: Կինս տարիներէ ի վեր կ'երազէր ովկիանոսին մօտ տուն մը ունենալ: Հիմա, երկու ամսուայ մէջ, ան ստացաւ տուն մը, որ Միացեալ Նահանգներուն հարաւային մասը կը գտնուի եւ ճմրան օդը տաք է հոն, բայց ամրան, օդը չափազանց տաք է հոն մնալու համար: Բայց Քանատայի տունը ամրան հիանալի ջերմաստիճան ունի, բայց ճմեռը օդը շատ պաղ է հոն: Անդրադարձանք, որ ան հիմա երկու տուն ունի ովկիանոսին վրայ երկու եղանակներուն համար: Անհաւատալի: Երբ այդ երկու տուները գնեցինք, մենք վստահաբար ըսինք. «Տեսմը ինչ եղաւ»: Կարծեմ պիտի համաձայնիք, որ ասիկա ճիշդ պատկերն է կրկնապատիկ բաժինին: Հիանալի է:

Ես գործածեցի քանի մը օրինակներ, որոնք ցոյց կու տան, թէ Աստուած ինչպէս բանէ մը երկու հատ բերաւ Տրենտային եւ ինծի: Կը հաւատամ, որ Աստուած այս մէկը գործածեց, որպէսզի յստակօրէն տեսնենք կրկնապատիկ բաժինին գործունէութիւնը: Բայց կ'ուզեմ վստահ ըլլալ, որ դուք չէք կարծեր, որ կրկնապատիկ բաժինը սահմանափակուած է բանէ մը երկու հատ ունենալուն: Իրականութեան մէջ կրկնապատիկ բաժինը պարզապէս պէտք եղածէն աւելի ունենալն է: Աստուած կը գործածէր այս իւրայատուկ օրինակները, ուր բանէ մը երկու հատ կը տրուէր, կրկնապատիկ բաժինին շուրջ ուշադրութիւնս գրաւելու համար: Ուրեմն ինչ ալ ըլլայ տրուածը, կրկնապատիկ բաժինը առատութեամբ հայթայթուած բաժինն է: Յուսամ կը հասկնաք կրկնապատիկ բաժինին իրականութիւնը եւ Շաբաթին հանգիստը: Կեանքը շատ հիանալի է Թագաւորութեան մէջ: Մինչ այս գլուխը կը գրեմ, ես նստած եմ Քանատայի մեր տան մէջ, պատուհանէն դուրս նայելով ովկիանոսին: Տունէն միայն 25 կանգուն կամ 22. 86 մէթր անդին ծովաճայեր եւ բաղեր կը խաղան ծովեզերքին: Խաղաղութիւն կայ, ջանք թափել

չկայ, գինը վճարուած է եւ օրհնութիւն է: Ես առաքելութիւն ունիմ, իմ Հօրս Թագաւորութեան բարի լուրը կը տարածեմ, Անոր տան մէջ որդի եմ, Անոր մեծ Թագաւորութեան քաղաքացի եմ եւ կը վայելեմ կրկնապատիկ բաժինը:

Տրե՛նտան եւ ես շատ պատմութիւններ կրնանք գրել, որոնք ցոյց կու տան, թէ ինչպէս Աստուծոյ Թագաւորութիւնը եւ զանիկա ղեկավարող օրէնքները ազդած են մեր կեանքերուն վրայ, ինչպէս նաեւ այն հազարաւոր մարդոց, որոնք ե-նամակով մեզի կ'ուղարկեն իրենց պատմութիւնները: Ինչպէս ձեզի հետ բաժնեկցեցայ, այս բոլորը կրնաք կարդալ Աստուածաշունչին մէջ, բայց շատ ոգետորիչ է տեսնել Աստուածաշունչը կ'իրագործուի ձեր աչքերուն առջեւ:

Կ'ուզեմ միայն պզտիկ նշում մը անելցնել հոս: Իրապէս բաւական վտանգաւոր է մարդոց պատմածս, որ Աստուած ինչպէս օրհնած է Տրե՛նտան եւ զիս եւ ինչ ճամբորդութենէ անցանք: Մարդիկ շատ անգամ այդ մէկը սխալ կը հասկնան: Երբեմն անոնք կրնան կարծել, թէ մենք հպարտ կամ ցուցադրող ենք կամ իրենց տասանորդը կամ ընծաները առած ենք եւ մեր վրայ ծախսած ենք: Կը խնդրեմ հասկցէք, որ Տրե՛նտան եւ ես մեր հեռատեսիլի յայտագիրին սփռումէն դրամ չենք առներ եւ ոչ ալ՝ մեր ուսումնական նիւթերուն վաճառքէն: Այո, մենք անշուշտ ամսական կ'առնենք մեր հովուած եկեղեցիէն: Բայց մենք գործատէրեր ենք եւ միշտ ալ եղած ենք եւ Աստուած կ'օրհնէ մեր գործերը: Միայն կ'ուզէի վստահ ըլլալ, որ դուք գիտէք մեր սիրտին մղումը երբ մեր անձնական պատմութիւնները կը բաժնեկցինք ձեզի հետ: Զգացի, որ պէտք է ձեզի պատմեմ այն ինչ որ մենք իրականութեան մէջ տեսած ենք որ կը պատահի եւ ինչ որ Աստուած մեզի սորվեցուցած է այդ դէպքերուն մասին: Այն արդիւնքները, զորս ձեզի հետ կը բաժնեկցիմ, Կէրի եւ Տրե՛նտա Քիսիներուն արդիւնքները չեն. մենք այդքան լաւ չենք: Ո՛չ, այն ինչ որ տեսած ենք եւ այն ինչ որ մենք կը վայելենք մեր Հօր եւ Անոր Թագաւորութեան արդիւնքն են մեր կեանքերուն մէջ: Մենք այս պատմութիւնները կը բաժնեկցինք, որովհետեւ կ'ուզենք, որ դուք հասկնաք: Հէյ, մենք ոչինչէն եկանք եւ այս գիրքը գրելուս միակ պատճառը դուք էք: Կ'ուզեմ գիտնաք, թէ ատիկա ինչպէս կը գործէ

Եւ կ'իրագործուի, որպէսզի դուք ալ հասկնաք եւ ստանաք այն ինչ որ Աստուած ունի ձեզի համար:

Կ'ուզեմ հասկնաք, որ ես բուն կերպով կ'ատեն աղքատութիւնը: Այդ ինը տարիներուն ընթացքին յարատեւ ճնշումի եւ վախի տակ ապրիլը երկրի վրայ բառացիօրէն դժոխային կեանք ապրիլ էր: Յուսամ կը յիշէք, որ Շաբաթի հանգիստը ձերն է ինչպէս նաեւ՝ իմս: Յաջորդ գլուխին մէջ ձեզի պիտի օգնեմ, որպէսզի հասկնաք ինչպէս հասնիլ Շաբաթի հանգիստին:

Միայն կողմնակի նշում մը ընեմ այս գլուխին վերաբերեալ: Երբ հազիւ վերջացուցի վերի նախադասութիւնը գրել, քարտուղարուիս գրասենեակս մտաւ եւ ըսաւ, որ տուփ մը հասած էր ինծի համար: Ես զարմացայ երբ բացի տուփը եւ տեսայ երկու շատ աղուոր որսորդական հրացաններ: Ուան, ատիկա քաջալերական էր: Կարծես Աստուած «Ամէն» կ'ըսէր այդ պահուն իմ ըսածիս համար:

Երբ այս գիրքը տպագրուեցաւ եւ ստացայ գիրքերուս առաջին մեծաքանակ օրինակները, խանդավառուած էի այս սկզբունքները առաջին անգամ ըլլալով մեր Աթլանթա Ռեվոլուշըն Համագումարին մարդոց սորվեցնելու: Ես նաեւ խանդավառուած էի, որովհետեւ նոր գիրքէս օրինակներ ունէի ինծի հետ մարդոց բաժնելու համար: Մինչ կը պատրաստուէի պարասրահ իջնելու՝ խօսելու համար, քարտուղարուիս հեռաձայնեց ինծի եւ ըսաւ, որ հեռաձայն մը եկած էր ինծի այն մարդէն, որ ինծի հրացաններու առաջին հաւաքածոն նուիրած էր եւ ան կ'ըսէր, որ պէտք ունէր անմիջապէս ինծի հետ խօսելու: Հետեալբար իրեն արագ հեռաձայնեցի: Ան շատ խանդավառուած ինծի կը բացատրէր, որ դեռ նոր Եու. Փի. Էս. -ի (նամակատարական-թղթատարական ընկերութիւն) գրասենեակն էր եւ ինծի երկու հրացան եւս ուղարկած էր: Անկէ զատ՝ ան Տրենտային ալ հրացան մը ղրկած էր եւ քանի որ գիտէր, թէ ան որսորդութիւն չ'ըներ, անոր ուղարկած էր հազար հինգ հարիւր տոլար, հարիւր տոլարոնց թղթադրամներով: Ես ցնցուեցայ: Զգացի, որ Աստուած կրկին կը հաստատէր ըրածս եւ ձեռով մը ինծի կ'ըսէր, որ շարունակեմ: Մարդիկ պէտք է գիտնան այս բաները՝ Աստուած կ'ուզէ, որ դուք գիտնաք այս բաները: Ամենայնդէպս,

երբ տուն հասայ, խանդավառուած էի տուփը բանալու: Տրենտան եւ ես ստացանք վրայ վրայի գետեղուած երկու հրափողով երկու նոյնանման, ամենագեղեցիկ որսորդական Պրաունինկ հրացանները, զոր երբեւէ տեսած էի: Երկուքն ալ բոլորովին նոր էին: Ես նաեւ ունէի Պրաունինկ կոլտ կէս-ինքնաշարժ (semi-automatic) քսան տրամաչափ ունեցող հրացան մը եւ անշուշտ Տրենտան ունէր իր հազար հինգ հարիւր տոլարը: Կրկնապատիկ բաժինը:

Դուք կրնաք մտածել՝ ինչո՞ւ այդքան շատ գէնքեր: Պէտք է ընդունիմ, որ ես հիմա շատ գեղեցիկ որսորդական հրացաններ ունիմ ու անոնք աժան ալ չեն եւ ես նոյն հարցումը հարցուցի: Աստուած ինձի իմացուց, որ Ան ինձի այդքան շատ, սուղ եւ գեղեցիկ որսորդական հրացաններ ղրկած էր, որպէսզի տեսնեմ, թէ ճիշտն անսահման է Իր հարստութիւնը եւ թէ Իր մատակարարումը իմ ակնկալածէս ւելի է եւ գոյատեւումէն շատ ւելի է: Ես կը հասկնամ այդ մէկը: Ես կը տեսնեմ այդ մէկը:





ՏԱՍԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

## ԿՐԿՆԱՊԱՏԻԿ ԲԱԺԻՆԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ես խօսեցայ Շաբաթի հանգիստին մասին եւ ինչպէս այդ մէկը կարելի է կրկնապատիկ բաժինին միջոցաւ: Հարցումը, որ ձեր միտքին մէջ պէտք է ունենաք, հետեւեալն է. «Ինչպէս կրնամ հասնիլ կրկնապատիկ բաժինին»: Ուրախ եմ, որ հարցուցիք: Այդ հարցումին պատասխանը գտնելու համար, եկէք երթանք այն պատմութեան, ուր Յիսուս հինգ հացով եւ երկու ձուկով հինգ հազար մարդ կերակրեց:

*Երբ ժամանակը շատ անցաւ, իր աշակերտները իրեն եկան ու ըսին. «Հոս անապատ տեղ մըն է, ժամանակը անցած է: Արձակէ ժողովուրդը որպէսզի երթան բոլորտիքի ազարակները ու գիւղերը ու իրենց հաց գնեն, վասնզի ուտելու բան մը չունին»: Բայց անհկա պատասխան տուաւ ու ըսաւ անոնց. «Դուք տուէք ատոնց որ ուտեն»: Ըսին իրեն. «Երթանք երկու հարիւր դահեկանի հաց գնենք եւ տանք ատոնց որ ուտեն»: Ըսաւ անոնց. «Քանի նկանակ ունիք, գացէք նայեցէք»: Երբ իմացան՝ ըսին. «Հինգ ու երկու ձուկ»: Հրաման ըրաւ անոնց՝ որ ամէնքը կանանչ խոտին վրայ գունդ գունդ նստեցնեն: Դաս դաս նստան, հարիւրական, յիսունական: Հինգ նկանակը ու երկու*

*ձուկը առաւ ու դէպի երկինք նայելով՝ օրհնեց եւ մանրեց նկանակները ու փուսաւ իր աշակերպներուն, որպէսզի անոնց առջեւ դնեն ու երկու ձուկը ամենուն ալ բաժնեն: Ամէնքը կերան ու կշտացան, եւ փասներկու կողով լեցուն՝ կտորուանք վերցուցին եւ ձուկերէն ալ: Այն հացերէն ուրողները հինգ հազարի չափ այր մարդիկ էին:*

– Մարկոսի Աւետարան 6. 35-44

Մենք ասկէ առաջ խօսեցանք այս պատմութեան մասին, բայց հոս իրապէս մեծ յուշումներ կան կրկնապատիկ բաժինին մասին: Պատմութեան մէջ Յիսուս գերբնականօրէն բազմապատկեց հացն ու ձուկը եւ ամբողջ ժողովուրդը կերաւ մինչեւ կշտանայ: Կ’ենթադրեմ, որ հոն կային մօտաւորապէս քսան հազար մարդիկ նկատի առնելով

**ԿԱՅ ԱՊՐԵԼՈՒ ԱԻԵԼԻ  
ԼԱԻ ՁԵԻ ՄԸ ՔԱՆ  
ՄԻԱՅՆ ԲԱԻԱՐԱՐՈՒԱԾ  
ԸԼԼԱԼՈՒՆ ՁԳՏԻԸ:  
ԴՈՒՆ ՇԱՏ ԲԱՆ ՉԵՍ  
ԿՐՆԱՐ ԿԱՌՈՒՅԵԼ  
ԵԹԷ ԲԱԻԱՐԱՐՈՒԱԾ  
ՄՏԱՅՆՈՒԹԻՒՆ  
ՈՒՆԻՍ: ՏԵՍԻԼՔԸ ԴԵՌ  
ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԿԸ ՄՆԱՅ  
ԲԱԻԱՐԱՐՈՒԱԾ ԸԼԼԱԼՈՒ  
ՄԱԿԱՐԴԱԿԻՆ, ՈՒՐ  
ԿԵԴՐՈՆԱՑՈՒՄԸ ՄԻԱՅՆ  
ԱՅՍՕՐՈՒԱՅ ՎՐԱՅ Է:**

կիներն ու մանուկներն ալ: Հինգ հացով եւ երկու ձուկով այդքան մարդիկ կերակրելը մինչեւ որ բոլորն ալ կշտանան՝ վստահ որ ամբողջութեամբ Աստուծոյ գործն էր: Անոր համար մենք կրնանք գնահատել Թագաւորութիւնը եւ անոր գործելակերպը: Բայց միայն մարդոց կերակրուիլը կատարուածին ամբողջ պատկերը չի ներկայացներ եւ եթէ հոն կենաք, պիտի փախցնէք կրկնապատիկ բաժինը: Եկէք քիչ մը ասելի խորանանք:

*Ամէնքը կերան ու կշտացան, եւ փասներկու կողով լեցուն՝ կտորուանք վերցուցին եւ ձուկերէն ալ: Այն հացերէն ուրողները հինգ հազարի չափ այր մարդիկ էին:*

Ուստի ինչ կ'ըսէ հատուածը մեզի: Բոլորը կշտանալէ ետք տասնըերկու կողով լեցուն՝ հաց եւ ձուկ վերցուցին: Կրկնապատիկ բաժինին նշանակութիւնը պէտք եղածէն կամ բաւարարէն աւելի ունենալ է: Բաւարարուիլ կը նշանակէ գոհանալ, բայց ժողովուրդին կշտանալէն ետք մնացած տասնըերկու կողովը կրկնապատիկ բաժինն է՝ բաւարար պէտքէն աւելին: Խնդրեմ, թոյլ տուէք, որ ատիկա հաստատուի ձեր գիտակցութեան մէջ: Կ'ուզեմ, որ դուք յստակօրէն պատկերացնէք ձեր միտքերուն մէջ բաւարարուած ըլլալուն եւ կրկնապատիկ բաժինը ձեռք բերելուն տարբերութիւնը: Ես հոս ժամանակ չունիմ շատ խորանալու բացատրելու համար, թէ Յիսուս ինչպէս Թագաւորութեան զօրութիւնը բերաւ այդ կացութեան մէջ՝ այս պատմութեան առաջին բաժինը իրագործելու համար՝ հինգ հազար հոգի գոհացնել: Բայց անոր ամբողջական բացատրութիւնը կրնաք գտնել այս շարքին առաջին գիրքին մէջ, որուն խորագիրն է՝ «Ձեր Ֆինանսական Յեղափոխութիւնը. Հաւատարմութեան Զօրութիւնը»:

Անոր փոխարէն, կ'ուզեմ կեդրոնանալ կրկնապատիկ բաժինին վրայ, յորդառատութեան եւ ինչպէս ատիկա տեղի ունեցաւ այս պատմութեան մէջ: Այո՛, հիանալի պատմութիւն է՝ քսան հազար հոգի բոլորը կշտացած ու գոհացած, ուստի: Բայց Թագաւորութեան մէջ, գոհանալէն կամ բաւարարուելէն աւելին կայ, թէ՛ անշուշտ պէտք է նախ բաւարարուիք նախքան յորդառատութիւնը վայելէք: Բաւարարուիլը շատ լաւ բան է, բայց վաղը ինչ պիտի ըլլայ կացութիւնը: Ըսել կ'ուզեմ, թէ եթէ ձեր նպատակը միայն բաւարարուիլ է, ինչ պիտի ըլլայ երբ նորէն անօթենաք: Բազմաթիւ քրիստոնեաներ բաւարարուած վիճակի մէջ են, բայց կրկնապատիկ բաժինը կը փախցնեն: Կրկնապատիկ բաժինն է, որ Աստուծոյ Շաբաթի հանգիստը կը բերէ: Բաւարարուած ըլլալը միայն ժամանակաւոր լուծում է: Անիկա չի լուծեր մատակարարման (նախապատրաստութեան) հարցը: Գիտնալը, թէ դարձեալ պիտի անօթենաք նոյնիսկ երբ ներկայիս անօթի չէք, կը բանայ դուռը վախին եւ կը մղէ ձեզ վազելու եւ աշխատելու գոյատեւման մտայնութեամբ:

Կայ ապրելու աւելի լաւ ձեւ մը քան միայն բաւարարուելու ձգտիլը: Դուն շատ բան չես կրնար կառուցել բաւարարուած մտայնութեամբ: Տեսիլքը տակաւին սահմանափակուած կ'ըլլայ բաւարարուած ըլլալու մակարդակին մէջ, ուր կեդրոնացումը միայն այսօրուան վրայ է: Միայն բաւարարուելու նպատակ ունենալը դեռ գոյատեւման նպատակ է աշխարհի քրտնաջան աշխատանքի անէծքի համակարգին մէջ:

### **Բաւարարուիլը այսօրուան համար ուտել է. կրկնապատիկ բաժինը վաղուան համար կառուցել է:**

Ձեզի օրինակ մը տամ, թէ մշակոյթը եւ եկեղեցւոյ մեծ մասը ինչպէս կը մտածէ: Ուեւ մէկուն հարցուցէք, թէ ինչպէս է իրենց ֆինանսական վիճակը եւ շատ պատասխաններ պիտի ստանաք, հաւանաբար ոչ շատ լաւ: Բայց եթէ լաւ պատասխան մը ստանաք, մէկը, որ կ'ըսէ. «Ամէն բան հիանալի ձեւով կ'ընթանայ», անոր հարցուցէք. «Լա՛ւ, ինչքան ժամանակէ ձեր տան պարտքը վճարած էք»: Անոնք հաւանաբար ապշած ձեզի պիտի նային եւ ըսեն. «Տանս պարտքը չեմ վճարած: Ես պարզապէս ըսել կ'ուզէի, որ մեր բոլոր վճարումները կը կատարենք եւ որոշ գումար մը ունինք դրամատան մէջ»: «Հիանալի», կ'ըսէք, «Ամէն բան իրապէս լաւ կ'ընթանայ ձեզի հետ: Ըսէք, տասը հազար տոլարէն աւելի ունի՞ք դրամատան մէջ»: Անշուշտ կ'ընթադրեմ, որ ոչ ոք կը հարցնէ ասիկա, բայց եթէ հարցնէիք եւ իրենք պատասխանէին. «Ո՛չ, բայց մենք ութ հարիւր տոլար ունինք»: Այս մարդիկը լրջօրէն կը կարծեն, որ ֆինանսապէս հիանալի վիճակի մէջ են, որովհետեւ ունին աղուոր ինքնաշարժ մը, աղուոր տուն մը եւ քանի մը հազար տոլար դրամատան մէջ: Անոնք կ'ապրին բաւարարուած ապրելակերպով: Բայց աւելին կայ: Ինչ կ'ըսէք եթէ ձեր տան գինը վճարուի եւ դրամատան մէջ հարիւր հազար կամ հինգ հարիւր հազար տոլար ունենաք: Ատիկա մարդոց մեծամասնութեան համար բաւարարէն կամ պէտք եղածէն աւելին կեանքի պատկերը պիտի ըլլար: Բաւարարուած ըլլալը շատ լաւ եւ կարեւոր է, բայց տասնըերկու կողով հաց եւ ձուկ ունենալը քու

ուտեստեղէնի պաշարիդ մէջ բաւարար եղածէն աւելին է եւ ատիկա խաղաղութիւն կը բերէ:

Օր մը ես նստայաճախորդի մը հետ եւ իրեն հետ իր ֆինանսական կացութիւնը կը քննարկէի: Մինչ կը քննէի իր պարտքերը, նկատեցի, որ ան մօտաւորապէս քառասուն հազար տոլար վարկային քարտի պարտք ունէր: Երբ իր ստացուածքները կը քննէի, նկատեցի, որ մօտաւորապէս քառասուն հազար կանխիկ դրամ ունէր դրամատան մէջ բացած իր հաշիւին մէջ: «Ճօ», ըսի, «ասիկա մտածել չ'ուզեր: Դուն կանխիկ գումար ունիս, որմով կրնաս քու երեք վարկային քարտերուդ պարտքերը ամբողջութեամբ վճարել: Քու վարկային քարտերուդ պարտքին տոկոսը տասնըութ առ հարիւր է եւ քու վճարագրի հաշիւիդ տոկոսը մէկ առ հարիւր է: Կանխիկ դրամով վարկային քարտերուդ պարտքերը վճարէ: Բայց գիտէ՞ք ինչ: Ճոն ըսաւ, որ չ'ուզեր ատիկա ընել: Ես շուարեցայ եւ իրեն հարցուցի, թէ ինչն: Ան ըսաւ, որ իր վճարագրի հաշիւին մէջ կանխիկ դրամ ունենալը իրեն ապահով եւ ֆինանսապէս աւելի հարուստ կը զգացնէր: Ես պարզապէս իրեն նայեցայ եւ ըսի. «Ինչ ըսել կ'ուզես, թէ քեզի աւելի հարուստ կը զգացնէ: Ասիկա խաբկանք է: Թէեւ դուն քառասուն հազար տոլար ունիս քու վճարագրի հաշիւիդ մէջ, իրականութեան մէջ դուն քառասուն հազար տոլար չունիս, որովհետեւ դուն վարկային քարտի ընկերութիւններուն քառասուն հազար տոլար պարտք ունիս: Դուն սխալ ըմբռնում ունիս եւ մեծ գումարներ կը վճարես՝ խաբկանքի մը հաւատալու համար:

Մենք շուրջ մէկ ժամ խօսեցանք եւ ան երբեք չկրցաւ հասկնալ, թէ ինչն պէտք է մտածէ առնուազն իր վարկային հաշիւին մէջ ունեցած գումարին մեծ մասը իր պարտքը գոցելու համար գործածել, որուն համար ան ինծի յիշեցուց, որ շատ աշխատեք էր: Մէկ ժամ եւս խօսելէ ետք, ես յանձնուեցայ ու տուն գացի: Ան խաբուած էր. այդ գումարը իր վարկային հաշիւին մէջ պահելով ան ապահով չէր: Օ'հ, գիտեմ, որ ան լաւ կը զգար երբ նամակով հաշուեցուցակը կու գար եւ անոր մէջ գրուած կ'ըլլար, որ դրամատան մէջ քառասուն հազար տոլար կար: Բայց իր կացութեան ճշմարիտ պատկերը ունենալու համար, ան պէտք

ունէր վարկային քարտերու վճարումներու թուղթերն ալ բանալու:

Բաւարարուած ըլլալը շատ լաւ բան է եւ ատիկա կրնայ քեզ հրապուրելով քեզի կեղծ ապահովութեան զգացում մը տալ: Պէտք է քիչ մը աւելի հեռու՝ ապագային նայիս եւ գիտնաս, թէ այն ինչ որ գործածեցիր, քանի մը ժամ ետք պիտի չկարենայ քու պէտքերուդ հոգալ: Դուն նորէն պիտի անօթենաս: Եթէ կը փնտռես միայն արագ լուծում մը, դրամականօրէն ապահովուած ըլլալու արագ գոհացումը, պիտի փախցնես միակ բանը, որ իրապէս կրնայ կեանքդ փոխել՝ կրկնապատիկ բաժինը:

Երբ մենք բոլորս կը մեծնայինք երկրի քրտնաջան աշխատանքի անէծքի ֆինանսական համակարգին մէջ, մէկ բան կ'երագէինք՝ կանգ առնել: Ես ասոր մասին խօսեցայ նախորդ գլուխներէն մէկուն մէջ: Մենք չէինք երագեր աւելի աշխատանքի կամ ուրիշ առիթի մը մասին, որովհետեւ անկեղծ ըսած՝ մենք արդէն ծանրաբեռնուած էինք կեանքի ճնշումներով եւ հազիւ կը դիմանայինք մինչեւ մեր յաջորդ արձակուրդը: Ինչպէս գիտէք, ստրուկները աւելի գործ ունենալու մասին չեն երագեր: Ստրուկները մէկ բանի մասին կ'երագեն՝ Ուրբաթ իրիկուան, ոչ թէ՝ Երկուշաբթի առտուան: Ինչո՞ր: Որովհետեւ ստրուկները միայն մէկ բանի մասին կ'երագեն՝ աշխատելէն կենալու: Մտիկ ըրէք, ծանրաբեռնուած եւ «անհամբեր եմ աշխատելէն կենալու» մտայնութիւնը ձեզ ոչ մէկ տեղ պիտի չհասցնէ: Նոյնիսկ եթէ հրեշտակ մը գայ ձեր ննջարանը եւ ձեզի Աստուծմէ գաղափար մը ըսէ, ձեր մտայնութիւնը ձեզ ետ պիտի պահէ: Ձեր քով գրեցէք ասիկա:

**ԴՈՒՔ ԲԱԻԱՐԱՐՈՒԱԾ ԸԼԼԱԼԵՆ ԱՆԴԻՆ ՊԷՏՔ Է  
ՏԵՍՆԷՔ՝ ԿՐԿՆԱՊԱՏԻԿ ԲԱԺԻՆԸ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ  
ՀԱՄԱՐ:**

Այս խօսքը կրկնապատիկ բաժինին բանալին է: Գիտեմ, որ ասիկա հիմա շատ հասկնալի չէ ձեզի համար, բայց հասկնալի պիտի դառնայ: Ձեզի ցոյց տալու համար, թէ ինչ ըսել կ'ուզեմ, կ'ուզեմ

անգամ մը եւս կարդալ հինգ հազարի կերակրումին պատմութիւնը Յովհաննէսի Աւետարանէն փոխանակ՝ Մարկոսի: Յովհաննէսին տեսանկիւնէն դիտուած պատմութեան մէջ մենք կը գտնենք նոյն պատմութիւնը, բայց քանի մը մանրամասնութիւններով, զորս Մարկոսի տարբերակին մէջ չենք գտներ:

*Յիսուս հացերը առաւ ու գոհացաւ եւ աշակերտներուն բաժնեց, աշակերտներն ալ՝ նստողներուն: Նոյնպէս ալ ձուկերէն՝ որչափ որ ուզեցին: Երբ կշտացան, ըսաւ իր աշակերտներուն. «Ժողովեցէք աւելցած կտորուանքները, որպէսզի բան մը չկորսուի»:*

– Յովհաննէսի Աւետարան 6. 11-12

Պատմութեան այս տարբերակին մէջ մենք կը տեսնենք, որ Յիսուսն էր, որ իրենց ըսաւ, որ երթան եւ աւելցածները հաւաքեն, որպէսզի բան մը չվատնուի: Կ'ուզեմ, որ ասիկա հասկնաք: Ան ստիպուած էր իրենց ըսել, որ այդ մէկը ընեն, որովհետեւ անոնք չտեսան այդ առիթը: Դուք ձեզ իրենց տեղը դրէք: Դուք կուշտ էք ու բաւարարուած եւ միայն կ'ուզէք պառկիլ եւ քնանալ: Ձեր ստացած երկրի անէծքին մարզումին պատճառով եւ ձեր ստրկութեան մտայնութեան պատճառով, երբ բաւարարուիք, կը մտածէք, թէ կենալու ժամանակն է: Ինչպէս կը տեսնէք, ստրուկի մտայնութիւնը կը գործէ միայն այն ժամանակ երբ պէտք է եւ երբ ստիպուած չէ այդ մէկը ընելու, երբ բաւարարուած է, կանգ կ'առնէ: Յիսուս իրենց պէտք ունէր ըսելու, որ հաւաքեն այն ինչ որ ճիշդ իրենց աչքին առջեւն էր: Աւելցածները իրենց շուրջը գետինը տարածուած էին, բայց անոնք ոչ մէկ ջանք ըրին զանոնք հաւաքելու համար: Բայց միւս կողմէն, իրենք կը մտածէին, թէ աւելցուցները թռչուններուն համար հոն ձգուելէ զատ արդէն ինչ արժէք ունէին:

Յիսուս կը փորձէր բան մը սորվեցնել իրենց, շատ կարեւոր բան մը: Անոնց թելադրելէ ետք, որ աւելցածները հաւաքեն, Յիսուս դիտողութիւն մը կ'ընէ ըսելով, որ չձգեն, որ բան մը

վատնուի: Բայց ինչ կը նշանակէ ատիկա: Բոլորը կշտացած են, բոլորը բաւարարուած են եւ ոչ ոք ասելի հաց եւ ծուկ կ'ուզէ, լաւ, գոնէ հիմա: Բայց կայ հարց մը՝ չկայ Շաբաթի հանգիստ առանց ձեր պէտքէն ասելի հաւաքելու: Երբ իսրայէլացիները վեցերորդ օրը մանանան հաւաքեցին, իրենց թելադրուեցաւ իրենց պէտքէն ասելի հաւաքել: Այդ օրը իրենց պէտքէն ասելի հաւաքելը եօթներորդ օրուան՝ հանգիստի օրուան իրենց պաշարը դարձաւ: Յիսուս Իր աշակերտներուն կը սորվեցնէր բաւարարուածութենէն անդին նայիլ եւ Թագաւորութեան ամբողջ հայթայթումը (մատակարարումը) տեսնել: Դարձեալ, դուք չէք կրնար կառուցել բաւարարուելով, բայց կրնաք կառուցել կրկնապատիկ բաժինով: Բաւարարուելով այսօրուան հացը սպառած է, բայց ասելցած տասնըերկու կողովները վաղուան համար ձեզի հնարաւորութիւններ կու տան:

Ահա այն հիմնական սկզբունքը, զոր կ'ուզեմ տեսնէք:

Թէեւ աշակերտները ասելցուքները չտեսան մինչեւ որ Յիսուս մատնանշեց զանոնք, բայց Աստուած **արդէն իսկ անոնց տուած էր Շաբաթի հանգիստը**՝ կրկնապատիկ բաժինը: Անոնք պարզապէս չէին տեսած ատիկա: Թագաւորութիւնը արդէն իսկ հայթայթած էր կերակուրը, բազմապատկած՝ հացն ու ծուկը, եւ կերակրած՝ այդ ամբողջ ժողովուրդը: Թագաւորութիւնը միշտ կրկնապատիկ բաժինը կը հայթայթէ: Աստուած երբեք պիտի չհայթայթէ՝ պարզապէս պէտք եղածին չափ. **Ան միշտ պիտի հայթայթէ պէտք եղածէն ասելին:** Հարցը այն է, որ դուք թերեւս չէք տեսներ ատիկա:

*Տուէք ու ձեզի պիտի տրուի: Աղէկ չափով՝ կոխուած, ցնցուած, լեփլեցուն պիտի տրուի ձեր գոգը. քանզի այն չափով՝ որով դուք կը չափէք, ձեզի պիտի չափուի:*

– Ղուկասի Աւետարան 6. 38

Տուէք ու ձեզի պիտի տրուի, աղէկ չափով՝ կոխուած, ցնցուած: Բայց այս համարը հոս կանգ չ'առնէր: Ձեր չափը՝ կոխուած եւ ցնցուած ձեր այդ օրուան մթերքն է: Բայց համարը կը շարունակէ



ըսելով. «լեփլեցուն»: Լեփլեցունը կրկնապատիկ բաժինն է: Աստուած միշտ կրկնապատիկ բաժինը կը հայթայթէ եւ երբեք՝ հազիւ բաւարար բաժինը: Բայց եթէ դուք ասուկէ տեղեակ չէք եւ հատիկը լեփլեցուն է, կրնաք պարզապէս ձգել, որ գետին իյնայ, որովհետեւ դուք ամբողջովին կեդրոնացած էք ձեր առջեւ գտնուող ու ձեզ գոհացնող կամ բաւարարող բաժինին վրայ եւ պատրաստ չէք նշմարելու ու հաւաքելու յորդող բաժինը: Ատիկա ընելով դուք պիտի չկարենաք ձեռք բերել եւ վայելել կրկնապատիկ բաժինը: Բայց եթէ անդրադառնաք, թէ ինչպէս կը գործէ Թագաւորութիւնը, ամբողջ պաշարին մասին գիտնալով եւ զանիկա ակնկալելով, դուք պատրաստ պիտի ըլլաք գործելու եւ ձեռք բերելու Աստուծոյ հայթայթած բոլոր բաները:

Ձեզի ուրիշ օրինակ մը տամ:

*Սիմոն պատասխան տալով՝ ըսաւ անոր. «Վարդապետ, բոլոր գիշերը աշխատեցանք ու բան մը չբռնեցինք. բայց քու խօսքիդ համար ուռկանը կը ձգեմ»:* Երբ ըսուածը ըրին, խիստ շատ ծուկեր ժողվեցին, անանկ որ իրենց ուռկանը կը պատռուէր: Աչք կ'ընէին միւս նաւուն մէջ եղող իրենց ընկերներուն՝ որ գան օգնեն իրենց: Եկան ու երկու նաւերն ալ լեցուցին, գրեթէ ընկղմելու մօտ էին: Սիմոն Պեպրոս երբ տեսաւ, Յիսուսին ծունկերուն ինկաւ ու ըսաւ. «Տէր, իմ քովէս մէկդի գնա, քանզի ես մեղաւոր մարդ մըն եմ»: Վասնզի ապշութիւնը պատեց զանիկա եւ անոր հետ եղող ամէնքը՝ իրենց բռնած ծուկերուն շարութեան համար: Նոյնպէս ալ Ձեքեղէոսի որդիները՝ Յակոբոս եւ Յովհաննէս՝ որոնք Սիմոնին ընկերներն էին:

– Ղուկասի Աւետարան 5. 5-10

Ասիկա հատուած մըն է այն պատմութենէն, որ մենք նախապէս կարդացինք: Պետրոսը ունէր երկու նաւակներ, որոնք ծուկերուն շատութենէն գրեթէ պիտի ընկղմէին՝ Թագաւորութեան շնորհիւ: Ասիկա հակառակ էր ձկնորսութեան իր հասկացողութեան եւ

ատիկա ապշեցուց զինք: Բայց ինչ պիտի պատահէր յաջորդ անգամ երբ Յիսուս ըւէր. «Հէյ, Պետրո՛ս, դէպի խորը գնա՛ եւ պիտի կարենաս որսալ ինչքան ձուկ, որ կ'ուզես»: Կը կարծէք, որ ան երկրո՛ւ նաակ պիտի առնէր: Կը կասկածիմ: Ան ինչքան շատ նաակ կրնար փոխ առնել իր ընկերներէն պիտի հաւաքէր: Ինչո՛ւ: Որովհետեւ ան տարբեր ակնկալութիւն եւ գիտութիւն պիտի ունենար Թագաւորութեան գործելակերպին մասին:

Այս ամբողջ քննարկումին նպատակն է վստահ ըլլալ, որ դուք կը հասկնաք, թէ չէք տեսներ այն ամբողջ պաշարը, զոր Աստուած կը դրկէ ձեզի: Անշուշտ ընդհանրապէս այդ պաշարը տուարի թղթադրամներով պիտի չըլլայ, այլ՝ գաղափարներով, աստուածային ժամադրութիւններով եւ Սուրբ Հոգիին առաջնորդութեամբ: Եթէ մենք պատրաստուած չըլլանք կրկնապատիկ բաժինին մասին լաւ հասկացողութիւն ունենալով, մենք անոնց քովէն պիտի անցնինք առանց անոնց ուշադրութիւն դարձնելու՝ մեր ստացած երկրի գոյատեւման անէծքի մարզումին պատճառով:

Հացի բազմացման պատմութեան մէջ, Յիսուս կը փորձէ Իր աշակերտներուն սորվեցնել, թէ ինչպէս կը գործէ Թագաւորութիւնը, ինչ ակնկալել եւ ինչ կանխատեսել: Որովհետեւ անոնց ստրկական մտայնութիւնը չէր կրնար տեսնել իրենց շուրջը գտնուող հացին կարողականութիւնը, Ան պէտք ունէր զիրենք մարգելու, որպէսզի նային. «Ինչ կը տեսնէք: Նայեցէք: Դուք չէք տեսներ այն բոլոր բաները, զորս Աստուած պատրաստած է ձեզի համար»:

Կ'ուզեմ պահ մը ձեզի յիշեցնել Ելք Գիրքին տասնըվեցերորդ գլուխը, որովհետեւ կայ նաեւ ուրիշ բան մը, զոր կ'ուզեմ նշել:

*Ամէն առօրու կը հաւաքէին անկէ, ամէն մէկը իր կերածին չափ ու արեւը տաքցածքին պէս կը հալէր: Վեցերորդ օրը կրկնապատիկ ուրելիք, այսինքն ամէն մէկուն համար երկու օմէր, հաւաքեցին եւ ժողովուրդին բոլոր իշխանները եկան ու պատմեցին Մովսէսին: Անիկա ըսաւ անոնց. «Այս է Տիրոջ*

*ըսածը. ‘Վաղը հանգստություն սուրբ շաբաթն է Տիրոջ, ուրեմն ինչ որ պիտի եփեք՝ եփեցէք եւ ինչ որ պիտի եռացնէք՝ եռացուցէք ու ինչ որ կ’աւելնայ՝ ձեզի համար յաջորդ օրուան պատրաստեցէք’»: Աւելցածը առօրուան համար թողուցին, Մովսէսին հրամայեածին պէս եւ ի՛նչ հոտեցաւ, ի՛նչ ալ անոր մէջ որդի ինկաւ: Եւ Մովսէս ըսաւ. «Այսօր կերէք զայն, վասնզի այսօր շաբաթ է Տիրոջ. այսօր դաշտին մէջ անկէ պիտի չգնարէք: Վեց օր պիտի հաւաքէք զանիկա. բայց եօթներորդ օրը, որ շաբաթ է, պիտի չգտնուի»: Սակայն եօթներորդ օրը ժողովուրդէն ոմանք հաւաքելու ելան, բայց չգտան: Եւ Տէրը ըսաւ Մովսէսին. «Մինչեւ երբ չէք ուզեր պահել իմ պատուիրանքներս ու օրէնքներս: Նայեցէք, Տէրը փռաւ ձեզի շաբաթը, անոր համար վեցերորդ օրը ինք ձեզի երկու օրուան հաց կու տայ. ամէն մէկդ իր տեղը թող նստի. մէկը իր տեղէն թող չելլէ՛ եօթներորդ օրը»: Ժողովուրդը հանգստացաւ եօթներորդ օրը:*

– Ելք Գիրք 16. 21-30

Ինչպէս արդէն կ’ըսէինք, կրկնապատիկ բաժինն է, որ Շաբաթի հանգիստը հնարաւոր դարձուց: Թէեւ Աստուած արդէն վեցերորդ օրը կրկնապատիկ բաժինը հայթայթած էր, բայց ժողովուրդէն շատերը հաւաքելու ելան, բայց զարմանալիօրէն Շաբաթ օրը ոչինչ գտան: Ոչ թէ Աստուած հաւատարիմ չէր այդ բանը հայթայթելու մէջ: Պարզապէս անոնք այդ մէկը չնշմարեցին, որովհետեւ լաւ չէին ըմբռնած կրկնապատիկ բաժինը, որ արդէն վեցերորդ օրը տրուած էր: Անոնք ինչպէս միշտ միայն մէկ օրուայ համար հաւաքած էին: Հիմա եօթներորդ օրը, անօթի ըլլալով բնաւ չգտան: Թերեւս իրենց տեսանկիւնէն Աստուած յուսախաբած էր զիրենք կամ ձախողած էր: Բայց Աստուած ձախողած չէր. պարզապէս իրենք կրկնապատիկ բաժինին սկզբունքէն տեղեակ չէին: Եթէ գիտնային, տարբեր ձեւով պիտի ծրագրէին:

Ինչքան մարդիկ այսօր կը թափառին՝ փորձելով գտնել իրենց

պէտքերը, առանց անդրադառնալու, թէ Աստուած արդէն դրկած է զանոնք: Այս հաստուածին մէջ իրապէս հետաքրքրական է, որ Աստուած խորքին մէջ իրենցմէ բարկացած է, որովհետեւ բաւարար չեն հաւաքած: Արդեօք աստիկա ինչպէս կը քարոզուի մեր եկեղեցիներուն մէջ:

*Եւ անիկա որ սերմ ցանողին սերմ կը պարգեւէ եւ կերակորի համար՝ հաց, ձեզի սերմանելիք պիտի պարգեւէ եւ աւելցնէ ու ձեր արդարութեան պտուղները շափցնէ. որպէսզի ամէն բանի մէջ հարստանաք ամէն կերպով առապրութիւնով, որ մեր ձեռքով պիտի մղէ գոհութիւն փալ Աստուծոյ:*

– Բ. Կորնթացիներուն 9. 10-11

Պօղոս հոս բաւական պարզութեամբ կը բացատրէ Աստուծոյ Թագաւորութեան ազդեցութիւնը, որ ամէն ձեւով կը հարստացնէ, որպէսզի դուք կարենաք ամէն առիթի առատաձեռն ըլլալ: Բարեկամս, այդ մէկը կրկնապատիկ բաժինին պէտք ունի: Դուք չէք կրնար ամէն առիթով առատաձեռն ըլլալ առանց պէտք եղածէն աւելին ունենալու:

Նախորդ գլուխներէն մէկուն մէջ, ես ձեզի հետ բաժնեկցեցայ, թէ ինչպէս իմ գործս անցաւ տարեկան երեքէն չորս միլիոն տոլարի արտադրութեան մակարդակէն մեր վաճառողներէն մէկուն հետ դէպի տարեկան աւելի քան տասնըմէկ միլիոն տոլարի այդ նոյն վաճառողին հետ: Այս ամբողջ աճը տեղի ունեցաւ ընդամէնը մէկ տարուան մէջ: Ես նաեւ ձեզի ըսի, թէ այդ մէկը ինչպէս կատարուեցաւ՝ Աստուած գիշերով երազ մը տուաւ ինծի եւ ըսաւ, թէ ինչպէս պէտք է ընեմ աստիկա: Բայց հիմա ես ձեզի պէտք է ըսեմ այն ինչ որ Աստուած ինծի ըսաւ, որովհետեւ հիմա ատոր իմաստը պիտի կարենաք հասկնալ: Երագիս մէջ Ան պարզապէս երեք բառ տուաւ ինծի: Այո՛, շատ ճիշդ է, միայն երեք բառ: Այդ երեք բառերը իմ եկամուտս փոխեցին քանի մը հարիւր հազարաւոր տոլարներով

այդ տարի առանց որ սովորականէն անլի վաճառելու ճիգեր, յայտարարութիւններ կամ գովազդներ ընեմ: Իմ ընկերութեանս գործունէութեան վերաբերեալ ոչինչ փոխեցի բացի՝ իմ անձէս: Այդ երեք բառերը ինծի ցուցմունք տուին, որպէսզի փոխեմ իմ գործելակերպս եւ այդ փոփոխութիւնը անլի քան քառապատկեց մեր գործը եւ իմ եկամուտս: «Ինչ են այդ երեք բառերը», կը հարցնէք: Պարզապէս հետեւեալն են՝ Դուն Առիթը Օգտագործէ:

**ՏԵՐԸ ԻՆՏԻ Կ'ՈՍԵՐ, ԹԷ  
ՅՈՐԴԱՌԱՏՈՒԹԻՒՆԸ՝  
ՇԱԲԱԹԻ ՀԱՆԳԻՍՏԸ  
ԱՐԴԵՆ ԻՍԿ ԱՌԿԱՅ ԷՐ:  
ԱՆ ԱՐԴԵՆ ՀԱՅԹԱՅԹԱԾ  
ԷՐ ԱՅԴ ՄԵԿԸ: ԵՍ  
ՊԱՐԶԱՊԵՍ ԶԷԻ ՏԵՍՆԵՐ  
ԶԱՆԻԿԱ:**

Այո՛, դուն առիթը օգտագործէ:  
«Միայն այդքան: Այդ երեք բառերը այդ ամէնը ըրին: Այո՛, ըրին: Երբ հասկնաք, թէ Աստուած Իր նախապատրաստութեամբ ՄԻՇՏ կրկնապատիկ բաժինը կը դրկէ, պիտի հասկնաք այն ինչ որ Ան ինծի կ'ըսէր:

Իմ ընկերութիւնս, ինչպէս բոլոր վաճառքի ընկերութիւնները, իր շահը կ'ապահովէ մարդոց օգնելով: Ինչքան լաւ մարդոց կ'օգնէ ընկերութիւն մը, այնքան անլի դրամ կը շահի: Թէեւ ասիկա ճիշդ է, բայց նաեւ ճիշդ է, որ բազմաթիւ վաճառքի ընկերութիւններ կը ձախողին հոգալ իրենց յաճախորդներուն պէտքերուն կամ վատ հետեւողութեան եւ սպասարկութեան պատճառով, կամ ալ ընկերութեան համար նոր յաճախորդներ չհետապնդելու եւ չապահովելու պատճառով:

Մեր պարագային, մենք չափազանց զբաղած էինք եւ թէեւ ատիկա վատ բան չէր, բայց մենք երբեմն իմ փափաքածիս չափ արագ ձեռով չէինք պատասխաներ մեր յաճախորդներուն: Իմ պարագայիս, ես ներդրումներ կատարող յաճախորդներուն հետ կ'աշխատիմ եւ կը սիրեմ ատիկա: Սակայն իմ բազմազբաղ ժամացուցակիս պատճառով, երբ ներդրում կատարելու համար

հաւանական յաճախորդ մը կը հեռաձայնէ եւ զայն ինծի կը յանձնեն, որպէսզի անձամբ իրեն դիմեմ, երբեմն ես քսանչորս ժամուան մէջ չեմ հեռաձայներ իրեն: Իմ մտադրութիւններս բարի են (մասնաւոր չեմ ըներ ատիկա), բայց պարզապէս այդ մէկը չեմ յաջողցներ:

Ինչպէս գիտէք, երբ մարդիկ հարցումներ կը հարցնեն, ընկերութիւնն է, որ պատասխանները կու տայ, որպէսզի անոնք իրենց գործը ունենան: Երբեմն հաւանական յաճախորդի մը անձնական ներդրումներու պէտքերը քննարկելու համար անոնց ետ հեռաձայնելու ուշանալը կրնայ շատ ուշ ըլլալ: Անոնք կրնան ուրիշի մը հեռաձայնել, որպէսզի իրենց հարցումներուն արագ պատասխան տայ: Կան շատ բաներ, որոնք կրնան լաւ չընթանալ, բայց անոնց լուծումը պիտի ըլլայ՝ մարդոց հարցումներուն ժամանակ հոն ըլլալ պատասխաններով :

Ուրեմն երբ Տէրը ինծի այդ երեք բառերը տուաւ, գիտցայ, թէ ատիկա ինչ կը նշանակէր: Ես պէտք ունէի տարբեր ձեռով նայելու հարցերուն եթէ իրապէս այդ բեմին վրայ լաւագոյն տասէն մէկը պիտի ըլլայի եւ հարիւր հազար տոլար նուէր պիտի շահէի: Պէտք է առիթը օգտագործէի: Ուրեմն փոփոխութիւն մը մտցուցի իմ գործելակերպիս մէջ: Այնպիսի կանոն մը սահմանեցի, որ եթէ ոեւէ մէկը հեռաձայնէ ներդրումային ծրագիրներու մասին խորհրդատուութեան համար, եթէ կարենամ, քանի մը վայրկեանէն անոր պիտի պատասխանեմ եւ անմիջապէս անոր պիտի այցելեմ: Ես երկրին բոլոր կողմերէն յաճախորդներ ունիմ եւ այս կանոնին նուիրուած մնալը դժուար պիտի ըլլար: Բայց ես նուիրուած մնացի ատոր: Ես հեռաձայնեցի իմ ընկերութեանս ղեկավարին եւ ըսի այն ինչ որ Աստուած ինծի ըսած էր եւ իրեն ըսի, որ իմ բոլոր ներկայացուցիչներուս ըսէ, որ ունենան նոյն վերաբերումը՝ ամէն առիթէ օգտուիլ երբ առիթը ներկայանայ: Երբ տարին վերջացաւ, մենք շահեցանք աւելի քան տասնըմէկ միլիոն տոլար, որ այդ վաճառողին նախապայմանն էր՝ առաջին տասին մէջ ըլլալու համար: Բայց անկէ զատ՝ մենք միլիոններ արժող ուրիշ գործարքներ ալ ապահովեցինք մեր միւս վաճառողներուն համար:

Ահա մեծ բացայայտման պահը: Մենք որեւէ տարբեր բան չըրինք, պարզապէս արագ պատասխանեցինք ու շարժեցանք երբ յաճախորդ մը կ'ուզէր մեզի հետ խօսիլ: Ինչպէս կը տեսնէք, Տէրը ինծի կ'ըսէր, թէ յորդառատութիւնը՝ Շաբաթի հանգիստը, արդէն իսկ առկայ էր. ան արդէն իսկ հայթայթած էր ատիկա: Ես պարզապէս չէի տեսներ այդ մէկը:

Ուրեմն Թագաւորութեան մէջ օրէնք մը չկայ կրկնապատիկ բաժինին մասին, որ կ'ըսէ, թէ ինչպէս պէտք է գործադրել կրկնապատիկ բաժինը: Կրկնապատիկ բաժինը միշտ առկայ է: Աստուած միշտ կրկնապատիկ բաժինը կը հայթայթէ:

**ԱՍՏՈՒԱԾ ԵՐԲԵՔ ՊԱՇԱՐ ՉԻ ՂՐԿԵՐ ՄԻԱՅՆ  
ԱՅՍՕՐՈՒԱՅ ՀԱՄԱՐ: ԱՆ ՄԻՇՏ ԿՐԿՆԱՊԱՏԻԿ ԲԱԺԻՆԸ  
ԿԸ ՂՐԿԷ ԱՆՈՐ ՀԵՏ:**

Դարձեալ մեր հարցը այն է, որ մենք պարզապէս չենք տեսներ կրկնապատիկ բաժինը:

**Բայց աւելի մեծ հարցը այն է, որ մենք նոյնիսկ չենք  
գիտցած զանիկա փնտռել:**

Ես կը սիրեմ Յիսուսի ըսածը. «Բան մը չկորսուի»: Աստուած ղրկեց այդ ամէնը եւ կ'ուզէ, որ դուն ունենաս ատիկա: Ան նեղացաւ, որովհետեւ մարդիկ եօթներորդ օրը մանանա կը փնտռէին երբ Ան արդէն ղրկած էր այդ մէկը: Ան Մովսէսին յիշեցուց, որ Ինք այդ մէկը վեցերորդ օրը ղրկած էր, որպէսզի մարդիկ զանիկա հաւաքեն եւ Շաբաթի հանգիստը վայելեն: Ան հիմնականօրէն իրենց կ'ըսէր. «Շաբաթը ինծի համար չէ, ձեզի համար է: Անոր համար Ես ձեզի կրկնապատիկ բաժինը ղրկեցի»: Յիսուս նոյն բանը կ'ըսէ, կարծես կ'ըսէ. «Տղամբ, այդ բոլոր ատելցութիւնները հաւաքեցէք: Աստուած ղրկեց, որպէսզի հաւաքէք եւ կրկնապատիկ բաժինը վայելէք ու հանգստանաք»:

Յիսուսի հինգ հազարը հինգ հացով եւ երկու ձուկով կերակրելու

պատմութեան մէջ աշակերտները անելցութիւնները չտեսան: Անոնք նոյնիսկ չէին փնտռեր զանոնք: Սակայն Յիսուս իրենց ըսաւ, թէ ինչը պէտք է հաւաքեն եւ հունձըը չփախցուցին: Այսօր Սուրբ Հոգին մեզի պէտք է օգնէ, որպէսզի բաւարարուածութենէն անդին տեսնենք եւ կրկնապատիկ բաժինը ձեռք բերենք: Եթէ Իրմէ խնդրենք, Ան մեզի ցոյց պիտի տայ բաներ, որոնք մենք չենք տեսներ: Բանալին, զոր յուսամ մինչեւ հիմա սորվեցաք այն է, որ կրկնապատիկ բաժինը արդէն իսկ տրուած է ձեզի. դուք միայն պէտք է առնէք:

Քանի որ կրկնապատիկ բաժինը ՄԻԱԿ փախուստի միջոցն է երկրի քրտնաջան աշխատանքի անէծքի համակարգէն, Սատանան կ'ատէ զանիկա: Օ՛հ, ան կրնայ փորձել համոզել քրիստոնեաները, որ եթէ անոնք միայն իրենց վճարումները կը կատարեն, երկու գործ կ'աշխատին ծախսերուն հոգալու համար, իրենք լաւ վիճակի մէջ են: Բայց այն քրիստոնեան, որ դրամ ունի Աստուծոյ Թագաւորութեան նեցուկ կանգնելու եւ դրամական վախէն ու մտահոգութենէն ազատ կ'ապրի, մէկն է, որուն Սատանան կ'ուզէ արգելք ըլլալ կամ կեցնել: Սատանային մտադութիւնն է ձեր կեանքին բոլոր օրերուն մէջ ձեզ պահել սնանկացած եւ ստրուկ՝ գոյատեւման խեղճ ապրելակերպի մը, ուր դուք ոչ մէկ ազդեցութիւն ունիք: Դրամ ունենալ կը նշանակէ ազդեցութիւն ունենալ: Սատանան անշուշտ շատ կ'ուզէ քեզ զրկել Աստուծոյ օրհնութիւններէն: Ատոր համար շատ կարեւոր է, որ հասկնաք այն ինչ որ հիմա ձեզի պիտի ըսեմ:

### **Կրկնապատիկ բաժինը պահուած է:**

Լաւ, ժամանակն է, որ աշակերտներուն հանգիստ ձգենք: Անոնք պատճառ ունէին յորդառատութիւնը չտեսնելու: Անշուշտ ինչպէս կ'ըսէինք՝ անոնք չէին նայեր, բայց իրապէս ուրիշ գործօն մը կար: Դուք ընդհանրապէս փշրանքները չէք հաւաքեր: Այսինքն իրենց կարծիքով իրենց շուրջը ինկած հացի եւ ձուկի կտորները պարզապէս փշրանքներ էին:

Ինչո՞ւ այն դրամը, զոր Պետրոսը պէտք ունէր՝ իր տուրքերը



վճարելու համար, ծուկին բերանին մէջ պահուած էր: Ո՞վ պիտի մտածէր այդտեղ նայիլ: Ո՞վ կը մտածէր, որ վարպետ ձկնորսներ, որոնք ամբողջ գիշերը ծուկ փորձած էին որսալ եւ ոչ մէկ բան բռնած էին, վարդապետի մը խօսքին հետեւելով իրենց երկու նաւակներով իրենց կեանքին ամենամեծ որսը պիտի բռնէին: Ո՞վ կը մտածէր, որ Դ. Թագաւորներուն չորրորդ գլուխին մէջ գտնուող կինը, որ բնաւ դրամ չունէր, իր տան մէջ ոչ մէկ բան ունէր բացի՝ քիչ մը իւղէ եւ կը պատրաստուէր իր սնանկութիւնը յայտարարելու, ձեւով մը այնքան շատ իւղ պիտի ունենար,

որ իր բոլոր պարտքերը պիտի վճարէր եւ առանց պարտքի պիտի ապրէր: Ոչ ոք այս բաները պիտի մտածէր: Ո՞վ կը մտածէր, որ Կէրի Քիսին, որ իր դասարանին վերջընթերն էր երբ աւարտեց, այսօր միլիոնատէր պիտի ըլլար եւ աշխարհի շուրջ գտնուող հազարաւորներու պիտի խօսէր ամէն օր: Ո՞չ ոք: Այս բոլոր պատմութիւններուն մէջ, Աստուած անսպասելի գործածեց՝ իրավիճակը յեղաշրջելու համար:

Եթէ յորդառատութիւնը՝ կրկնապատիկ բաժինը շատ յստակ ըլլար բոլորին աչքին առջեւ, Սատանան պիտի տեսնէր զանիկա եւ պիտի փորձէր արգելք ըլլալ ու զանիկա գողնալ: Այդ պատճառով ալ Աստուած իր գանձերը բացայայտօրէն երեւան չի հաներ: Անոնք պահուրտած են: Սատանան կ'ատէ երբ դուն գոհանաս եւ պաշարը վայելես, բայց ան մասնաւորապէս կ'ատէ երբ դուն յորդառատութիւնը վայելես եւ Շաբաթի հանգիստը մտնես:

Ձեզի ցոյց տամ երկրի վրայ Աստուծոյ գործելակերպին վերաբերեալ բան մը, զոր պէսք է հասկնաք:

**ՍԱՏԱՆԱՅԻՆ  
ՄՏԱԴՐՈՒԹԻՒՆՆ Է  
ՁԵՐ ԿԵԱՆՔԻՆ ԲՈԼՈՐ  
ՕՐԵՐՈՒՆ ՄԷՋ ՁԵՋ  
ՊԱՀԵԼ ՄՆԱՆԿԱՅԱԾ ԵՒ  
ՍՏՐՈՒԿ՝ ԳՈՅԱՏԵՒՄԱՆ  
ԽԵՂՃ ԱՊՐԵԼԱԿԵՐՊԻ  
ՄԸ, ՈՒՐ ԴՈՒՔ ՈՉ ՄԷԿ  
ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆ ՈՒՆԻՔ:**

*Հապա Աստուծոյ ծածուկ իմաստութեան մասին կը խօսինք խորհրդով, որ աշխարհի ստեղծուելէն առաջ սահմանեց Աստուած մեր փառքին համար. որ այս աշխարհի իշխաններէն մէկը չճանչցաւ. քանզի եթէ ճանչցած ըլլային, ալ փառքերուն Տէրը խաչ չէին հաներ:*

– Ա. Կորնթացիներուն 2. 7-8

Այս հատուածը յստակօրէն մեզի ցոյց կու տայ, թէ եթէ Սատանան գիտնար Աստուծոյ ծրագիրը, ան կը փոխէր իր ռազմավարութիւնը: Այս է պատճառը, որ Աստուած պէտք է ծածուկ ձեւով աշխատի: Սատան պիտի հակազդէ ամէն բանի, որ բացայայտ է: Նոյն պատճառով ձեր առատ մատակարարումն ալ չի կրնար բացայայտ ըլլալ մինչեւ այն պահը երբ դուք ձեռք բերէք կամ հնձէք զանիկա: Իսօք մը կայ, որ ես տարիներէ ի վեր կ'ընեմ՝ Աստուծոյ գանձերը պահուած են ոչ թէ ձեզմէ, այլ՝ ձեզի համար:

### **Պահուած ձեզմէ ձեզի համար:**

Շատեր ինծի կ'ըսեն, թէ կը փափաքէին, որ Աստուած մինչեւ կէս-գիշեր (վերջին վայրկեանին) չսպասէր՝ Իր պատասխանները հասցնելու համար: Բայց բարեկամս, Աստուած իրար անցած կամ մտահոգ չէ: Ան գիտէ վճարումին ժամկէտը եւ ձեր օգուտին համար Ան շատ կանուխէն Իր ձեռքը ցոյց չի տար, որպէսզի Սատանան արգելք չկենայ ու չխափանէ իր ըրածը:

*Եւ խաւարի մէջ ծածկուած գանձերը ու պահուած հարստութիւնները քեզի պիտի տամ, որպէսզի գիտնաս, թէ ես եմ Տէրը՝ Իսրայէլի Աստուածը՝ որ քեզ անունովդ կը կանչես:*

– Եսայեայ 45. 3

Պահուած հարստութիւններ: Ասիկա ասելի լաւ է քան Հոլիուտի ամենահիանալի թատերագրութիւնը: Ձեզի օրինակ մը տամ, թէ

Աստուած ինչպէս ինծի օգնեց, որպէսզի իմ գործի կեանքիս մէջ կրկնապատիկ բաժինը ձեռք բերեմ: Տարիներ առաջ, ես նստած այդ տարուայ իմ ֆինանսական ծառայութիւններու ընկերութեանս շահի եւ վնասի հաշեցուցակիս կը նայէի: Թէեւ բաւարարուած էի (գոհ էի), պարտք չուէնի եւ որոշ գումար մը ունէի դրամատան մէջ, բայց գիտէի, որ աւելին կար: Ես տեսայ շատ ծրագիրներ Թագաւորութեան մէջ, զորս կ'ուզէի ֆինանսաւորել, շատ բան կար ընելու եւ այդ ամէնը դրամի կը կարօտէր:

Երբ այդ մասին կ'աղօթէի, Տէրը սկսաւ ինծի հետ քննարկել կտորներ եզրը: Սկիզբը չհասկցայ ինչ կ'ըսէր, բայց երբ այդ մասին աւելի երկար աղօթեցի եւ մտիկ ըրի, հասկցայ: Կտորները, ինչպէս մեր նոր կարդացած պատմութեան մէջ տեսանք, անտեսուած էին: Անոնք անարժէք կը համարուէին կամ որովհետեւ մարդոց տեսանկիւնէն՝ չէր արժեր զանոնք հաւաքելու համար ջանք թափել կամ որովհետեւ անոնց արժէքը հիմնուած էր հինգած արժէքներու համակարգի մը վրայ, կամ ալ որովհետեւ անոնց հաւանական գործածութեան մասին հաւանաբար սխալ եւ սահմանափակ համոզում մը կը սահմանափակէր իրենց հասկացողութիւնը անոնց արժէքին հաւանական բարձրացումին մասին՝ նայած իրենց ներկայի համոզումներուն:

Վստահ եմ, որ դուք բազմաթիւ անգամներ լսած էք ասիկա. «Մենք միշտ այսպէս ըրած ենք»: Ձեզի ըսեմ, որ կրկնապատիկ բաժինը հաւանաբար այդ ձեւով պիտի չգայ:

Երբ տուեալներուն կը նայէի, Աստուած իմ աչքերս բացաւ, որպէսզի տեսնեմ այն բազմաթիւ կտորները, զորս ես սեղանին վրայ կը ձգէի եւ պէտք ունէի զանոնք հաւաքելու: Առաջնահերթ բաներէն մէկը, որ մեր բոլոր յաճախորդներուն հետ կ'ընենք, իրենց տուեալներուն հիման վրայ ամբողջական պատկեր (ցուցակ) մը կը կազմենք, որպէսզի տեսնենք, թէ ինչ գոյքեր կամ ստացուածք եւ ինչ պարտքեր ունին: Վերջը վերլուծում մը կ'ընենք՝ փնտռելու համար այն բոլոր գումարները, զորս կրնանք գործածել իրենց պարտքերը

գոցելու համար: Անշուշտ մենք կը ցանկագրենք իրենց ներկայի կալուածագրաւին (mortgage) իրավիճակն ու տոկոսի սակը, ինչպէս նաեւ վերցուած տունի պարտքին պայմանները տուեալներու էջին վրայ: Այն ատեն մենք մեր յաճախորդներուն խորհուրդ կու տայինք, որ իրենց տան ներկայ արժէքին համաձայն դրամատունէն պարտք վերցնեն (home equity line of credit), ինչ որ իրենց կ'արտօնէր, որ դրամ փոխ առնեն՝ իրենց բարձր տոկոսով վարկային քարտերու պարտքերը գոցելու համար: Այդպիսով անոնք կը պակսեցնէին իրենց ընդհանուր տոկոսի սակը՝ այդ ժամանակուայ սովորական քսանմէկ առ հարիւրէն՝ վեց առ հարիւրի: Միայն այս քայլին շնորհիւ ձեռք բերուած խնայողութիւնները տուեալ ընտանիքի մը համար ամսական հինգ հարիւրէն վեց հարիւր տոլար կը խնայէին իրենց կանխիկ դրամի հոսքէն: Երբ այսպիսի կացութիւն մը կը ներկայանար, մեր յաճախորդները կը զրկէինք իրենց սեփական դրամատուները, որպէսզի իրենց այլազան պարտքերը միացնելով ամսական մէկ վճարումի վերածեն (consolidation loan):

Երբ տուեալներս կ'ուսումնասիրէի, Սուրբ Հոգին այս կալուածագրաւի հարցը մատնանշեց ինձի: «Ինչո՞ւ այդ կալուածագրաւի գործը յանձն չես առներ»: Երբ այդ մասին մտածեցի, այդ մէկը տրամաբանական գտայ: Մենք մեր յաճախորդներուն վստահութիւնը արդէն շահած էինք, անոնց տուեալները արդէն ունէինք եւ վերջապէս, առաջին հերթին մենք էինք, որ իրենց կ'առաջարկէինք, որ վերաֆինանսաւորեն (refinance) իրենց պարտքը:

Գործին այս բաժինը կառավարելու համար, բոլորովին նոր գործ մը պէտք էր սորվէի, արտօնագրութիւնը ձեռք բերելու համար դասընթացքներու պէտք էր հետեւէի եւ ուրիշ շատ բաներ: Ես պարզապէս ժամանակ չունէի այդ ամէնը ընելու: Բայց երբ շարունակեցի այդ մասին աղօթել, Տէրը զիս մղեց, որ ուրիշ մէկը գործի առնեմ, որպէսզի իմ կալուածագրաւի ընկերութիւնս հիմնէ ու ղեկավարէ եւ այդպէս ալ ըրի: Կալուածագրաւի գործերը անձամբ կառավարելը միայն առաջին տարուան մէջ մեզի բերաւ յաւելեալ

հարիւր վաթսուն հազար տոլարի զուտ շահ: Այս դրամը երբեք պիտի չունենայի եթէ Սուրբ Հոգին չարտօնէի, որ ինծի մատնանշէր բաժին մը, որուն կը նայէի, բայց երբեք չէի տեսներ:

Ես շարունակեցի ձեռք բերել ուրիշ շատ բաներ, որոնք կտորներ էին, զորս Սուրբ Հոգին ցոյց տուած էր ինծի: Կտոր մը, զոր կ'անտեսէի իմ նախապաշարումներուս պատճառով, զորս սորված կամ լսած էի ուրիշ մարդոցմէ, որոնք կ'ըսէին, թէ չ'արժեր այս մարզին մէջ մտնել, մեծ յաջողութեան առիթ եղաւ մեզի համար: Երբ վերջապէս նստայ եւ նայեցայ անոր, անդրադարձայ, որ այն բոլոր տեղեկութիւնները, զորս լսած էի այս արտադրանքի մարզին մասին, սխալ էին եւ խորքին մէջ անիկա հիանալի կերպով կը յարմարէր մեր ընկերութեան: Այդ կտորը իրապէս անելի եկամուտ բերաւ քան իմ հիմնական գործս միլիոնաւոր տոլարներու շահ բերելով: Անիկա բառացիօրէն բազմամիլիոն տոլար արժող կտոր մըն էր:

Ուրեմն իրապէս յստակացնեմ ձեզի համար: Կրկնապատիկ բաժինը կրնաք ձեռք բերել յայտնութեան միջոցաւ: Յայտնութիւնը պարզապէս բան մըն է, զոր Սուրբ Հոգին ցոյց կու տայ ձեզի եւ դուք առաձին այդ մէկը պիտի չկարենայիք գիտնալ: Ուստի Սուրբ Հոգին կը յայտնէ կամ ձեր աչքերը կը բանայ բանի մը, զոր դուք առանց Իրեն չէիք գիտեր: Ասիկա կը կոչուի յայտնութեան գիտութիւն:

### **Յայտնութիւնը կրկնապատիկ բաժինին բանալին է:**

Յետոյ մարդիկ ինծի կը հարցնեն. «Ինչպէս կը լսեմ Սուրբ Հոգիին ձայնը: Ինչպէս կը լսեմ, թէ ինչպէս պէտք է ձեռք բերեմ այս թաքնուած գաղափարները եւ առիթները»: Շատ լաւ հարցումներ են: Ես ժամանակ չունիմ այս գիրքին մէջ, Աստուծոյ ձայնը լսելու նիւթին մէջ խորանալու: Ուստի ձեզի պիտի առաջարկեմ ուրիշ գիրք մը, զոր ես գրած եմ եւ որուն խորագիրն է՝ «Սուրբ Հոգիին Մկրտութիւնը»: Կրնաք զանիկա գնել «Ամազոն»-էն կամ մեր կայքէջէն: Այդ գիրքին մէջ, դուք անելի տեղեկութիւն պիտի գտնէք գիտնալու համար, թէ Սուրբ Հոգին ինչպէս կը գործէ Աստուծոյ ծածուկ ծրագիրները մեզի

յայտնելու համար, որպէսզի մենք բարգաւաճինք հոս՝ երկրի վրայ՝ ճիշդ Սատանային քիթին տակ եւ Սատանան ոչինչ կրնայ ընել այդ մէկը արգիլելու համար: Բայց ձեզ ճիշդ ուղղութեամբ տանելու համար, եկէք կարդանք **Ա. Կորնթացիներուն 14. 2-ը:**

*Վասնզի ան որ օտար լեզուով կը խօսի, ո՛չ թէ մարդոց կը խօսի, հապա Աստուծոյ. վասնզի մէկը չկայ որ իմանայ, բայց անիկա հոգիով խորհուրդները կը յայտնէ:*

**Չորրորդ համարը կ'ըսէ.**

*Ան որ օտար լեզուով կը խօսի՝ իր անձին շինութիւն կ'ընէ:*

Շինութիւն ընել կը նշանակէ սորվեցնել կամ հասկցնել: Ես այդ մէկուն պէտք ունիմ եւ դուք ալ: Երբ Աստուածաշունչը հոս կը խօսի լեզուներով խօսելու մասին կամ ինչպէս Պօղոս կը նկարագրէ՝ Հոգիով աղօթել, կ'ուզեմ ձեզ քաջալերել անկախ անկէ, թէ ինչ լսած էք Սուրբ Հոգիին այս դերին մասին, թէ անոր ժամանակը անցած է առաքելներուն հետ կամ թէ ասիկա Սատանայէն է, ձեր Աստուածաշունչը կարդացէք: Հոգիով աղօթելը պարզապէս Սուրբ Հոգին է, որ ձեր միջոցաւ կ'աղօթէ՝ երկրի վրայ իր կամքը կատարելու համար առանց Սատանային գիտնալուն, թէ ինչ կը պատահի: Հոգիով աղօթելը հիմնական բանալի մըն է երկինքէն յայտնութիւն ստանալու համար եւ ես կը քաջալերեմ ձեզ, որ իմ ըսածս սերտեք (ուսումնասիրէք): Եթէ հարցումներ ունիք, գնեցէք իմ գիրքս եւ ես գիտեմ, որ անիկա ձեզի պիտի օգնէ, որպէսզի մեր կեանքերուն մէջ Սուրբ Հոգիին տարած այս հիանալի աշխատանքին մասին ատի խորաթափանցութիւն ունենաք:

Կ'ուզեմ այս գիրքը եզրափակել երկու աստուածաշնչական համարներով, որոնք հիմնականօրէն կ'ամփոփեն այս գլուխը:

*Ան որ կարող է ատի առաջացնել ամէն բան քան որ մենք*

*Կը խնդրենք կամ կը խորհինք, այն զօրութիւնովը որ մեր մէջ կը ներգործուի, Իրեն փառք եկեղեցիին մէջ Քրիստոս Յիսուսով բոլոր դարերուն մէջ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:*

– Եփեսացիներուն 3. 20-21

Երբեք չէք կրնար խնդրել բան մը, որուն մասին չէք մտածած: Ներկայիս ես ունիմ երկու օդանաւ, աւելի փոքր օդանաւ մը, որուն հետ կը ճամբորդեմ զուարճանալու համար եւ գործի օդանաւ, որմով կը ճամբորդեմ ո՛ր որ երթամ երկրին մէջ: Երբ կը մտածէի գործի համար օդանաւ մը գնել, ես գինէն ցնցուեցայ: Օդանաւները աժան չեն: Ես սկսայ ետ քաշուիլ եւ մտածել. «Գործի օդանաւը անհրաժեշտ չէ ինձի համար: Վերջապէս ատիկա շատ մեծ գումար կը պահանջէ»: Բայց ես ամէն շաբաթ կը ճամբորդէի սովորական օդանաւային ընկերութեան մը միջոցաւ եւ ամիս մը քսաներեք անգամ ճամբորդեցի: Շատ յոգնեցուցի էր: Այո՛, կրնամ ըսել, որ մատակարարում ունէի: Իմ բոլոր ճամբորդութիւններուս համար ուրիշներ վճարած էին. ճամբորդութիւններս վճարելու համար դրամական հարցեր չկային: Բայց օդանաւային ընկերութիւններու հետ ճամբորդելը բնաւ հանգիստ չէր: Թոհիչքներ կը ջնջուէին կամ կ'ուշանային եւ շատ իրար անցում կ'ըլլար: Ասիկա Շաբաթի հանգիստը չէր, որուն ես պէտք ունէի:

Վերջապէս ընդունեցի, որ այս բանին մէջ զԱստուած կը սահմանափակէի: Ան կրկնապատիկ բաժինին Աստուածն է: Կը ցաւիմ ըսելու, թէ Տրենտան եւ ես մէկ տարիէն աւելի տատանեցանք այդ օդանաւը գնելու: Վերջապէս Աստուած մեր ուշադրութիւնը գրաւեց այդ օդանաւին համար եւ մեզի ըսաւ, թէ Ան երկու տարիէ ի վեր կը փորձէր այդ օդանաւը մեզի հասցնել: Մենք զոջացինք եւ մեր որոշումը առինք: Մենք մեր սերմը ցանեցինք ճիշդ այն օդանաւին համար, զոր կ'ուզէինք եւ որուն պէտք ունէինք. երբ ատիկա ըրինք, երկու ամսուայ մէջ զանիկա ստացանք: Այդ ընթացքին Աստուած ինձի խորաթափանցութիւն եւ շնորհք տուաւ որոշ գործի

համաձայնութիւններու համար եւ ես անհրաժեշտ դրամը ունեցայ երբ ատոր պէտք եղաւ:

Այո՛, Աստուած կրկնապատիկ բաժինին Աստուածն է: Արդեօք ատիկա տարբերութիւն ըրամ: Իմ կեանքիս մէջ սեփական օդանաւովս ճամբորդելը բաղդատած օդանաւային ընկերութիւններու թռիչքներով ճամբորդելուն կը նմանի բաղդատելու, թէ հեծանիւովդ կամ ինքնաշարժով երթաս հանդիպման մը, որ յիսուն մղոն հեռու է: Աստուած երկու տարի շարունակ կը փորձէր ինձի հասկցնել ատիկա, մինչ ես պարզապէս բաւարարուածութեան կը նայէի եւ կոյր կը մնայի կրկնապատիկ բաժինին, զոր Աստուած արդէն հայթայթած էր ինձի համար: Ես պարզապէս պէտք էր ատիկա տեսնէի:

Թերեւս դուք կը քշէք ինքնաշարժ մը, որ այնքան պէտք ունի նորոգութեան, որ կ'աղօթէք, որ առտուն աշխատի: Դադրեցէք դատարկ դրամատան հաշիւին նայելէն եւ անոր հիման վրայ գոյատեւման որոշումներ կայացնելէ: Այդ մէկը ընելու փոխարէն, արտօնեցէք, որ կրկնապատիկ բաժինին Աստուածը ձեզի ցոյց տայ այն կտորները, պահուած բաները, զորս դուք պէտք է գիտնաք՝ ազատ ըլլալու եւ Շաբաթի հանգիստին խաղաղութիւնն ու հանգիստը վայելելու համար: Եթէ միայն Իրմէ խնդրէք, Ան ձեզի պիտի տայ ծրագիրը եւ ձեզի ցոյց պիտի տայ ինչպէս այդ մէկը իրագործէք: Ինչպէս Յիսուս ըսաւ. «Թող բան մը չկորսուիք»: Կրկնապատիկ բաժինը արդէն իսկ հայթայթուած է ձեզի համար:

*Ուրեմն Աստուծոյ ժողովուրդին դեռ հանգիստ մը կը մնայ:  
Վասնզի ան որ անոր հանգիստը մտաւ, ա՛յլ հանգչեցաւ իր  
գործերէն, ինչպէս Աստուած ալ իրեններէն:*

– Եբրայեցիներուն 4. 9-10



Կը հաւատամ, որ այս գիրքը օրհնութիւն եղաւ ձեզի եւ Տէր Յիսուս Քրիստոսի հետ ձեր ապրած կեանքին համար: Ինչպէս գիրքին մէջ ըսի, ասիկա երկրորդ գիրքն է «Ձեր Ֆինանսական Յեղափոխութիւնը» խորագիրով գիրքերու շարքին: Ընդամէնը հինգ գիրքեր պիտի ըլլան, ուրեմն սպասեցէք յաջորդ գիրքին մեր կայքէջին հետեւելով: Նաեւ մտածեցէք մեր խորհրդատուութեան ծրագիրին՝ «Թիմ Ռեվոլյուշըն»-ին անդամ դառնալ: «Թիմ Ռեվոլյուշըն»-ին մասին յաւելեալ տեղեկութիւններ կրնաք գտնել նաեւ մեր կայքէջին վրայ:

Կէրի եւ Տրենտա Քիսիները սեփականատէրերն են «Ֆորուլըտ Ֆայնենշըլ Կրուպ»-ին եւ զանիկա կը ղեկավարեն Նիւ Ալպընի, Օհայոյի մէջ, 1-(800)-815-0818:

Կէրի եւ Տրենտա Քիսիները կը հովուեն «Ֆէյթ Լայֆ Չըրչ»-ը (Հաւատքի Կեանք Եկեղեցի) Նիւ Ալպընի, Օհայոյի մէջ:

Կէրի եւ Տրենտա Քիսիներուն կողմէ գրուած յաւելեալ աղբիւրներու համար այցելեցէք՝ [FaithLifeNow.com](http://FaithLifeNow.com), [GaryKeese.com](http://GaryKeese.com) կամ [Drenda.com](http://Drenda.com) կայքերը:

Կէրի Քիսիի  
«Ձեր ֆինանսական Յեղափոխութիւնը»  
գրքաշարի գիրքերը

Համաձայնութեան զօրութիւնը  
Մարտավարութեան զօրութիւնը  
Մատակարարման զօրութիւնը  
Առատաձեռնութեան զօրութիւնը

Այցելե՛ք **FLNFree.com** կայքէջը՝  
ներբեռնելու համար  
յաւելեալ ձրի ուսուցումներ  
քու լեզուովդ:



Կը փափաքիս ունենալ յաւելեալ ՁՐԻ ուսուցումներու  
աղբիւրներ քու լեզուովդ: Այցելե՛ք **FLNFree.com** կայքէջը:

# ԶԵՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ ՀԱՆԳԻՍՏԻՆ ՉՕՐՈՒԹԻՒՆԸ

Յոգևանձ ես:

Յոգևանձ ես առնետավագքեն:

Յոգևանձ ես անելանելիության զգացումեն:

Յոգևանձ ես անհանգստանալեն:

Յոգևանձ ես երջանիկ չըլլալեն:

Դուևն պետք չէ շարունակ այդպես ապրիս:

Միացիր Կերի Քիսին՝ մինչև անհաւատալի բացայայտումներ կ'ընէ, եւ ԻՄԱՏԻՐ այն ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՄԱՍԻՆ, որ լիովին կը յեղափոխէ կեանքդ, ինչպես անիկա յեղափոխեց իր կեանքը ինը երկար տարիներ տեւող յոգևածութիւնէն եւ ֆինանսական, ֆիզիքական եւ զգացական անելանելի վիճակէն ետք:

Բացայայտէ.

1. Ինչպես Կերին կեանքին մէջ ամէն բան փոխուեցաւ. ինչպես ան անցում կատարեց ֆինանսական եւ ֆիզիքական լիակատար ակյուտութենէն դէպի առողջ եւ լիարժէք կեանք. ինքնաշարժներ գնեց՝ կանխիկ գումարով, կառուցեց իր տունը՝ առանց պարտքերու, հիմնադրեց բազմաթիւ ընկերութիւններ, եւ այժմ հարիւր հազարաւոր մարդոց կը սորվեցնէ Աստուծոյ Թագաւորութեան մէջ ապրելու մասին. հանգստի մէջ ապրելու մասին:
2. Ինչպես կրնայ ամէն ինչ փոխուիլ նաեւ ՔՈՒ կեանքիդ մէջ. ինչպես ԴՈՒՆ կրնաս ապրիլ հանգստի մէջ:

Նույնիսկ եթէ բոլոր անոնք, որոնք կը ճանչնաս, յոգևած են եւ իրենց ամբողջ ոյժը կը լարեն՝ պարզապէս գոյատեւելու համար, դուևն պետք չէ այդպես ապրիս:

Հասկնալով Շաբաթ օրուայ հանգստի բանալի սկզբունքը՝ դուևն կրնաս տեսնել իրական արդիւնքներ քու կեանքիդ մէջ: Դուևն կրնաս ապրիլ այնպիսի պայմաններու մէջ, ուր քու պետքերդ հոգացուած են, դուևն ազատ ես առնետավագքեն, ազատ ես գտնելու քու նպատակդ եւ անով բարգաւաճելու: Կը բարգաւաճիս՝ դադրելով գոյատեւելէն, եւ այս աշխարհին ցոյց կու տաս այնպիսի արդիւնքներ, որոնք տարբեր են անոնց սովորական պատկերացումէն:

Մի մար անելանելի վիճակի մէջ: Մի ապրիր յոգևածութեան մէջ:

Բացայայտէ նոր կեանքը:



Կերի Քիսին հեղինակ է, քարոզիչ, գործարար, ֆինանսական մասնագետ եւ հովիւ: Անոր նպատակն է մարդոց օգնել, որ կեանքի մէջ յաղթեն, յատկապէս՝ հաւատքի, ընտանիքի եւ ֆինանսներու բնագաւառներուն մէջ: Կերին եւ անոր կինը՝ Տրենտան, ստեղծած են բանի մը յաջողակ ձեռնարկութիւններ: Անոնք «Հաւատքի Կեանք՝ Հիմն» ծառայութեան հիմնադիրներն են, որ կը սփռէ երկու հեռատեսիլային հաղորդում՝ «Ֆինանսներու Կարգաւորում» եւ «Տրենտա» անուններով, կը կազմակերպէ համաժողովներ ամբողջ աշխարհի տարածքին եւ կը ներկայացնէ գործնական նիւթեր: Քիսիները կը հովուեն նաեւ «Հաւատքի Կեանք» եկեղեցին, որ կը գտնուի Օհայո նահանգին Քոլումպոս քաղաքին մօտակայքը: